

Կլիմայի փոփոխության չափումների, հաշվետվայնության և հավաստագրման (ՉՀՀ) հարթակի նախագծման համար նախապատրաստական տեղեկատվության մշակում

Վերջնական հաշվետվություն ՄԱՉԾ-ԳԷՀ ծրագրի համար (CBIT ծրագիր)



CARBON LIMITS

Սույն հաշվետվությունը պատրաստվել է ՄԱՉԾ հայաստանյան գրասենյակի անունից, Carbon Limits AS ընկերության կողմից՝ Spherical ընկերության հետ համագործակցությամբ:

Ծրագրի անվանումը՝

Կլիմայի փոփոխության չափումների, հաշվետվայնության և հավաստագրման (ՉՀՀ) հարթակի նախագծման համար նախապատրաստական տեղեկատվության մշակում

Հաճախորդներ.

ՄԱՉԾ Հայաստան

Ծրագրի ղեկավար.

Ֆրանսուա Սամուլթ

Ծրագրի անդամներ.

Պաուլա Մաքիաս Դիագ
Դիանա Գուզման
Տիգրան Սուքիասյան
Միքայել Վարդանյան

Ենթակապալառու
ընկերություններ.

Spherical

Հաշվետվության
վերնագիր.

Կլիմայի փոփոխության չափումների, հաշվետվայնության և հավաստագրման (ՉՀՀ) հարթակի նախագծման համար նախապատրաստական տեղեկատվության մշակում. վերջնական հաշվետվություն

Տարբերակ.

2.0

CARBON LIMITS

CJ Համբրոս Պլասս 2

NO-0164 Օսլո

Նորգե

carbonlimits.no

NO 988 457 930

Carbon Limits-ը համագործակցում է պետական մարմինների, մասնավոր ընկերությունների, ֆինանսական հաստատությունների և հասարակական կազմակերպությունների հետ՝ մի շարք ոլորտներից ջերմոցային գազերի արտանետումները կրճատելու ուղղությամբ: Մեր թիմն աջակցում է իր հաճախորդներին կլիմայի փոփոխության մեղմման և տնտեսական արժեք գոյացնող ծրագրերի բացահայտման, մշակման և ֆինանսավորման ուղղությամբ՝ ի լրումն կլիմայի և էներգետիկայի ոլորտի քաղաքականության և կանոնակարգերի նախագծման և իրականացման վերաբերյալ խորհրդատվության:

Երախտիքի խոսք

Խորհրդատուների թիմը ցանկանում է շնորհակալություն հայտնել Հայաստանի շահագրգիռ կողմերին այս ծրագրերի հետազոտական փուլում իրենց արժեքավոր ներդրման համար, մասնավորապես՝ Շրջակա միջավայրի նախարարության Կլիմայական քաղաքականության և անտառային քաղաքականության բաժիններին, Հայաստանի վիճակագրական կոմիտեին, Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն ՊՈԱԿ-ին, Էկոնոմիկայի նախարարության Գյուղատնտեսության առաջնային արտադրանքի վարչությանը և բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը՝ խորհրդատուների Երևան կատարած այցի ընթացքում իրենց հատկացրած ժամանակի համար:

Մենք նաև ցանկանում ենք մեր երախտագիտությունը հայտնել Հայաստանում ՄԱԶԾ Կլիմայի փոփոխության ծրագրին և մասնավորապես Դիանա Հարությունյանին (Ծրագրի համակարգող) և Դավիթ Շինդյանին (Թիմի ղեկավար) Խորհրդատուների աշխատանքի ընթացքում ցուցաբերած աջակցության և Էական ներդրման համար:

Ամփոփագիր

«Կլիմայի փոփոխության չափման, հաշվետվայնություն և հավաստագրման (ՉՀՀ) հարթակի նախագծման համար նախապատրաստական տեղեկատվության մշակում» ծրագիրը նպատակ ունի ապահովել Փարիզի համաձայնագրի 13-րդ հոդվածում սահմանված կարգով Հայաստանին ներկայացվող թափանցիկության ընդլայնված պահանջների կատարումը՝ արտանետումների, մեղմման և հարմարվողականության միջոցառումների և ստացված աջակցության չափման և ներկայացման ուղղությամբ ինստիտուցիոնալ և տեխնիկական կարողությունների հզորացման միջոցով: Սույն ամփոփագիրը ներկայացնում է Carbon Limits AS ընկերության (Նորվեգիա) ղեկավարությամբ գործող խորհրդատուների թիմի կողմից, Spherical ընկերության հետ համագործակցությամբ (գտնվում է Գերմանիայում) և տեղական փորձագետ՝ Տիգրան Սուքիասյանի աջակցությամբ իրականացված աշխատանքների արդյունքում կատարված բացահայտումները և առաջարկությունները: Ծրագիրն իրականացվում է ՄԱՉԾ-ի և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ) կողմից:

համաձայն վերոնշյալի, Հայաստանի կողմից թափանցիկության ընդլայնված պահանջների կատարումն ապահովելու նպատակով անհրաժեշտություն կա մշակելու Կլիմայի փոփոխության չափումների, հաշվետվայնության և հավաստագրման (ԿՓՉՀՀ) հարթակ: ԿՓՉՀՀ հարթակը կօժանդակի երկրի ջերմոցային գազերի կադաստրի կազմմանը, հնարավորություն կստեղծի ամփոփելու և արձանագրելու կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման և հարմարվողականության գործողությունները, ինչպես նաև կօգնի բացահայտել այդ գործողություններն ու քաղաքականությունը խթանելու նպատակով ստացված և անհրաժեշտ աջակցությունը՝ ֆինանսավորման, տեխնոլոգիաների փոխանցման կամ կարողությունների զարգացման միջոցով: Այս առաջադրանքի ընդհանուր նպատակն է՝ իրականացնել կլիմայի ՉՀՀ-ում մասնակցող տվյալների և կառույցների մանրամասն գույքագրում, ձևակերպել առաջարկվող ԿՓՉՀՀ հարթակի համակարգային կառուցվածքը և դրա բարեհաջող գործունեությունը ապահովելու համար անհրաժեշտ օրենսդրական և կարգավորող միջոցառումները:

Այս հաշվետվությամբ ներկայացվում է խորհրդատուների աշխատանքից բխող հիմնական բացահայտումների և առաջարկությունների սեղմ ամփոփագիրը: Հասանելի է նաև համապարփակ հաշվետվությունը («Հիմնական հաշվետվություն»), որը ներկայացնում է կատարված վերլուծության նախապատմությունը և առաջարկությունների առավել խորացված նկարագրությունը:

Հիմնական բացահայտումները

Առաջադրանքի իրականացման ընթացքում վերհանվել են ԿՓՉՀՀ հարթակի արդյունավետ ներդրման ուղղությամբ առկա մարտահրավերները, որոնք առաջ են գալիս ինչպես Հայաստանում գործող օրենսդրական դաշտի բացերի, այնպես էլ Փարիզի համաձայնագրով միջազգային պահանջներին համապատասխանությունն ապահովելու ուղղությամբ իրականացվող ներկայիս գործելակերպերի հետևանքով: Այս մարտահրավերների հիմնական աղբյուրը նպաստավոր իրավական դաշտի բացակայությունն է, որով պաշտոնապես սահմանված կլիներ համագործակցային հիմունքով գործող ինստիտուցիոնալ հիմք՝ ՉՀՀ գործողությունների իրականացումը խթանելու համար: Այնուամենայնիվ, կան այլ մարտահրավերներ, որոնք պետք է լուծվեն միասնաբար, որպեսզի երկարաժամկետ հեռանկարում ՉՀՀ համակարգը գործի հուսալի, ճշգրիտ, արդյունավետ հիմունքով և օգտակար լինի միջազգային հանձնառությունների կատարման համար և, մասնավորապես, ճշգրիտ տվյալներ

տրամադրի ԱՍԳ-ի առաջընթացի վերաբերյալ: Նման մարտահրավերի օրինակ է, մասնավորապես, համակարգում տվյալների մուտքագրման որակի բարելավումը: Բացահայտվել են ՉՀՀ համակարգը կազմող հետևյալ մոդուլները կամ բաղադրիչները, ելնելով Հայաստանի կարիքներից.

- ՋԳ կադաստր (ազգային արտանետումների գնահատման մոդուլ).
- Մեղմման և հարմարվողականության գործողություններ (արտանետումների կրճատման ներդրում ծրագրի կազմակերպում և ծրագրերի հաշվարկման մոդուլ).
- Աջակցություն (անհրաժեշտ և ստացված) (արտանետումների նվազեցման կրճատման կազմակերպում և ծրագրերի հաշվարկման մոդուլ).

Եթե ավելի պարզ՝ ՉՀՀ համակարգը կազմված կլինի երկու հիմնական բաղադրիչներից.

- 1 ՋԳ արտանետումների արձանագրման բաղադրիչ, և
- 2 արտանետումների կրճատման արձանագրման, ներառյալ մեղմման ծրագրերի հաշվարկման բաղադրիչ, որտեղ կարող է ներառվել նաև աջակցության (անհրաժեշտ և ստացված) հետ կապված տեղեկատվությունը:

Հարկ է նշել, որ Հայաստանի հարմարվողականության ազգային ծրագիրը (ՀԱԾ) ներկայացնում է երկրում իրականացվելիք հարմարվողականության քաղաքականությունն ու միջոցառումները, իսկ վերը նշված երկրորդ բաղադրիչը (արտանետումների կրճատման արձանագրման և մեղմման ծրագրերի հաշվարկման համար) կարող է օգտագործվել նաև որպես շտեմարան՝ համապատասխան հարմարվողականության գործողությունների և միջոցառումների արձանագրման նպատակով: Թեև հարմարվողականության գործողություններն ու միջոցառումները պարտադիր չէ, որ հանգեցնեն արտանետումների կրճատման, այնուամենայնիվ արտանետումների կրճատումն արձանագրելու համար նախատեսված բաղադրիչը կարող է օգտակար լինել հարմարվողականության առումով իրականացվող «ծրագրերի» հաշվարկման և վերահսկողության համար: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ որոշ երկրներում գործում է հարմարվողականության ծրագրերի մոնիտորինգի և գնահատման (ՄԳ) առանձին համակարգ, թեև Հայաստանը թե մեղմման, թե հարմարվողականության նպատակներով կարճաժամկետ հեռանկարում կարող է ընտրել ԿՓՉՀՀ հարթակի արտանետումների նվազեցման բաղադրիչը՝ հետագայում նպատակ ունենալով մշակել առանձին Մոնիտորինգի և գնահատման համակարգ՝ միայն հարմարվողականության գործողությունների և միջոցառումների համար, որն այնուհետև կհանդիսանա առանձին բաղադրիչ ԿՓՉՀՀ հարթակում:


Համաձայն այս խորհրդատվության շրջանակներում իրականացված վերլուծության՝ բացահայտվել են 5 հիմնական առաջարկություններ, որոնց ներքո ներկայացվում են այլ կոնկրետ առաջարկություններ.

- Ա1 - Հանրագրկուն իրավա կա ն դա ռա ի ստ ե դ ծ ու մ .
- Ա2 - ՉՀՀ համակարգի համար համընդգրկուն ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորում .
- Ա3 - Կլիմայի փոփոխության քաղաքականության կառավարում կենտրոնացված համակարգի միջոցով .
- Ա4 - Հավաստագրման համակարգի ներդրում մեղմման ծրագրերի արդյունքում արտանետումների կրճատումները և մասնավոր հատվածի ՋԳ արտանետումները հավաստագրելու նպատակով .

Ա5 - Տվյալների որակի բարելավում:

Չնայած հարթակի արդյունավետ գործունեությունը ապահովելու համար պետք է իրականացվեն ներկայացված բոլոր առաջարկությունները, այնուամենայնիվ համընդգրկուն իրավական դաշտի ձևավորումը (Ա1) և ՉՀՀ համակարգի համար համընդգրկուն ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորումը (Ա2) էական նախադրյալներ են՝ բոլոր առաջարկությունների արդյունավետ և կանոնավոր ընդունումն ապահովելու և դյուրացնելու համար: Գծապատկեր 1-ը ներկայացնում է ՉՀՀ համակարգի արդյունավետ ներդրման համար անհրաժեշտ առաջարկվող իրավական կառուցվածքը, որը բաղկացած է հետևյալ տարրերից. «ԱՍԳ վերաբերյալ» որոշում,¹ որը ծառայում է որպես երկարաժամկետ հեռանկարում արտանետումների կրճատմանը հանգեցնող գործողությունների հիմք և իրենից ներկայացնում է վավերացված միջազգային հանձնառություն: Կլիմայի փոփոխության մասին օրենք՝ որպես ազգային մակարդակում սահմանված հիմնական իրավական հիմք. որոշում, որով կսահմանվեն ՉԳ կադաստրի նախապատրաստման հիմունքները. ցածր ջերմոցային զգաճի արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարություն (LT-LEDs, ԵԺ-ՉԳՑԱՉն)² որպես ազգային մեղմման քաղաքականությանն աջակցող և ջանքերը համակարգող գործիք (ի լրումն գործող ԱՍԳ-ի՝ հարմարվողականության քաղաքականության մասով). և մասնավոր հատվածի արտանետումների գրանցամատյանի վերաբերյալ որոշում (առանցքային չէ, սակայն խորհուրդ է տրվում ունենալ): Նմանապես, այն ցույց է տալիս այն տարրերը, որոնք բխում են այս իրավական կառուցվածքից (ներքևի «տող»), և որոնք պետք է ապահովեն ԿՓՉՀՀ հարթակի գործարկումը:

Գծապատկեր 1 ԿՓՉՀՀ հարթակի համար անհրաժեշտ իրավական դաշտը



Այս հիմնական առաջարկություններից յուրաքանչյուրը հետագայում բաժանված է կոնկրետ առաջարկությունների, որոնք մանրամասն ներկայացված են սույն

¹ ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի N 610 – Լ որոշումը Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունները (2021-2030թթ. ԱՍԳ-երը) հաստատելու մասին

CARBON LIMITS

հաշվետվության Բաժին 2-ում: Դրանցից յուրաքանչյուրի համապարփակ նկարագրությունը կարելի է գտնել Հաշվետվության 6-րդ գլխում:

Առաջարկություններ

Այս հաշվետվության մեջ ներկայացված առաջարկությունները նպատակ ունեն խթանել ԿՓԶՀ-ի իրականացումը վերը նշված բաժնում նկարագրված բաղադրիչներով՝ հիմնվելով միջազգային փորձի վրա և ելնելով Հայաստանին բնորոշ համատեքստից՝ հաշվի առնելով ընթացիկ ֆազաբազմաբարձր և վերջին ուսումնասիրությունները, ինչպես նաև 2021թ. դեկտեմբերին Երևանում շահագրգիռ կողմերի հետ անցկացված խորհրդակցությունների արդյունքները:

Հարկ է նշել, որ առաջարկությունները փոխկապակցված են, ուստի պահանջվում է, որ երկարաժամկետ հեռանկարում դրանք բոլորն իրականացվեն՝ համակարգի պատշաճ գործունեությունն ապահովելու համար: Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ ներկայացված առաջարկություններն անպայմանորեն պետք է իրականացվեն հաջորդաբար (այսինքն՝ Ա1-ից մինչև Ա5), ավելին, յուրաքանչյուր առաջարկության մի շարք բաղադրիչներ կարող են իրականացվել միաժամանակ:

Բացեր	Առաջարկվող լուծում	Հարակից առաջարկություն	Հաջորդ քայլերը
Կարիքներ և նպատակներ			
<p>Բացակայում հաշվետվայնության համակարգը, հնարավորություն արձանագրել տնտեսության բոլոր ճյուղերի արտանետումների կրճատման գծով ԱՍԳ-ի առաջընթացը, ԱՍԳ-ի շրջանակում գտնվող ոլորտների արտանետումների՝ ըստ ոլորտների և ըստ գազերի կրճատումները, վերականգնվող էներգիայի ստեղծումը, հզորությունը, արտադրության համակարգում վերականգնվող էներգիայի մասնաբաժինը, էներգաարդյունավետության</p>	<p>Է ԶՀՀ հարթակի մշակում և ներդրում (ԿՓԶՀՀ)</p> <p>Հայաստանի համար արդիական կարիքները բավարարելու համար խորհուրդ է տրվում, որ համակարգը ներառի</p> <p>1. ՋԳ կադաստր</p> <p>2. Մեղմման հարմարվողականության գործողություններ</p> <p>• Ներառել տարբեր ոլորտների քաղաքականություններ՝ համաձայն ԵԺ-ՋԳՑԱԶռ-ի</p>	<p>Այս ծրագրի նպատակն է՝ խորհրդատվություն տրամադրել ԶՀՀ հարթակի (Ա0) մշակման վերաբերյալ:</p>	<p>Առաջարկությունները խորհուրդ է տրվում ներդնել հետևյալ կերպ.</p> <p>1. Կանոնակարգային բնույթի (Ա1 և Ա2)</p> <p>Ստեղծել աշխատանքային խմբեր՝ նոր կանոնակարգեր մշակելու համար</p> <p>Ներառել ԶՀՀ գործառնությունները համապատասխան կանոնակարգերում</p> <p>Փոփոխություն կատարել N719-Ա որոշման մեջ՝ տարբեր ոլորտների գծով լուծման ենթակա կոնկրետ խնդիրները արտացոլելու նպատակով:</p> <ul style="list-style-type: none"> • Ստորագրել միջգերատեսչական համագործակցության համաձայնագրեր տվյալների տրամադրման մեխանիզմների վերաբերյալ <p>2. Հետամուտ լինել նախորդ գնահատումների արդյունքում տրված</p>

<p>գործողությունների պլանը և ազգային անտառային պաշարների գույքագրումը, ՋԳ կլանումները, պահեստավորման հզորությունը և անտառային ծածկույթը և այլն:</p>	<p>3. Աջակցություն</p> <ul style="list-style-type: none"> Անհրաժեշտ ստացված աջակցության հաշվառում և <p>Բացի վերը նշվածից, ներառել նաև մասնավոր հատվածից (արդյունաբերություն, բայց հնարավորության դեպքում այլ աղբյուրներ ևս) արտանետումների գրանցամատյան:</p>	<p>առաջարկությունների և մեղմման գործողությունների իրականացմանը (Ա5 – տվյալների որակի բարելավում)</p> <p>3. Մեղմման և հարմարվողականության գրանցամատյանի հետ կապված որոշումների կայացում (Ա3.1)</p> <p>4. Մեղմման և հարմարվողականության (ՄԱՀ) քաղաքականության ներկառուցում ՉՀՀ համակարգում (Ա3.2)</p> <p>5. Հավաստագրման կարողությունների շրջանակում հավաստարմագրման համակարգի մշակում (Ա4)</p>
---	---	---

Ա1 – Համընդգրկուն իրավական դաշտի ստեղծում

<p>Չկա որևէ կոնկրետ իրավական ակտ կամ կանոնակարգ, որը իրենից կներկայացնի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ մեղմման և հարմարվողականության քաղաքականություն, և իրավական հիմք կծառայի ազգային մակարդակում մեղմման և հարմարվողականության գործողությունների, ներառյալ ջերմոցային գազերի կադաստրի և ֆինանսավորման հետ կապված տեղեկատվության մշակման համար:</p>	<p>Մշակել պաշտոնական հրահանգ, կլիմայի փոփոխության մասին օրենք կամ կանոնակարգ, որը հիմք կծառայի կլիմայի քաղաքականության համար, ինչպես նաև մշակել ռազմավարություն, որը սահմանում է կոնկրետ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ մեղմման և հարմարվողական գործողությունները: Սա կհանդիսանա համակարգի բաղադրիչի իրավական հիմքը:</p>	<p>(Ա1.1) Կլիմայի փոփոխության մասին օրենքի մշակում և գործադրում</p> <p>(Ա1.2) Ցածր արտանետումային զարգացման երկարաժամկետ ռազմավարության (ԵԺ-ՋԳՑԱՁՁ) մշակում և գործարկում կլիմայի փոփոխության մասին նոր օրենսդրության մշակման և ընդունման անհրաժեշտությունը հիմնավորելու և ընդունման օժանդակելու նպատակով:</p>	<p>ՄԳՀԽ-ի միջոցով ներգրավել տարբեր նախարարությունների անհրաժեշտ քաղաքական դերակատարներին՝ կլիմայի փոփոխության մասին օրենքի նախագծի և երկարաժամկետ ռազմավարության մշակման համար, համաձայն Հայաստանում հաստատված քաղաքականության ձևավորման մեխանիզմների:</p> <p>Կլիմայի փոփոխության մասին օրենքը պետք է նպատակաուղղված լինի կլիմայի ազգային քաղաքականության համար անհրաժեշտ բաղադրիչների սահմանմանը և սահմանի նախարարությունների և կազմակերպությունների պարտականությունների շրջանակը, մինչդեռ ռազմավարությունը պետք է սահմանի կոնկրետ քաղաքականություններ</p>
---	---	---	---

		<p>և գործողություններ երկարաժամկետ հորիզոնում:</p>
<p>Բացակայում է ՋԳ կադաստրի մշակման կոնկրետ կանոնակարգը: ՋԳ կադաստրի համար բացակայում են իրավական հիմքերը, ինչը դժվարացնում է մոնիտորինգի, հաշվետվողականության (հատկապես տվյալների տրամադրման մեխանիզմների վերաբերյալ) և որակի վերահսկման գործողությունների իրականացումը տարբեր մասնակիցների համար:</p>	<p>Պաշտոնական հրահանգի, կլիմայի փոփոխության մասին օրենքի կամ կանոնակարգի մշակումը կարող է օրինական հիմք ձևավորել տեղեկատվական ռեսուրսների ստացման պահանջների համար, ինչպես նաև նպաստել բարեփոխումների գործարկմանը և նոր պարտականությունների ձևակերպմանը: (ՄԱԿ ԿՓՇԿ, 2020թ.):</p>	<p>ՋԳ կադաստրի վերաբերյալ որոշման և ուղեցույցների մշակում հիմնված ներկայումս կիրառվող գործելակերպերի վրա, որոնք համահունչ են ՄԱԿԿՓՇԿ սկզբունքներին:</p> <p>Այնուհետև անհրաժեշտ է աշխատել տարբեր ոլորտների և ենթաօլորտների համար կոնկրետ ՉՀՀ գործընթացների սահմանման ուղղությամբ (ըստ արտանետումների կատեգորիաների), որոնք արտացոլված կլինեն ոլորտային ուղեցույցներում:</p>
<p>Հայաստանում չկա կադաստրի կազմման մշտապես նշանակված թիմ, ինչը կարող է հանգեցնել կադաստրի ցիկլերի միջև բացերի և վերանայման հնարավոր հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ տեղեկատվության արխիվացման գործում թերացումների (EU4Climate, 2021):</p>	<p>ՋԳ կադաստրի կազմման գործընթացի կանոնակարգման միջոցով (որոշման տեսքով), կարող է ձևավորվել կադաստրի մշտական աշխատախումբ, որի համար կսահմանվի աշխատախմբի կազմը, աշխատանքային բնութագրերը, դերերը և գործողությունները՝ այս բացը լրացնելու համար:</p>	<p>Ստորագրել միջգերատեսչական համագործակցության համաձայնագրեր տարբեր կառույցների միջև տվյալների տրամադրումը խթանելու և ոլորինացնելու համար:</p> <p>Ստորագրել միջգերատեսչական համագործակցության համաձայնագրեր՝ տարբեր կառույցների միջև տվյալների տրամադրումը խթանելու և ոլորինացնելու համար:</p>
<p>Չկա ՈԱ/ՈՎ ընդհանուր պլան (EU4Climate, 2021)</p> <p>Մասնավոր ընկերությունները պատրաստակամ չեն ներկայացնել տեղեկատվությունը՝ գաղտնիության նկատառումներից, ինչը</p>	<p>ՈԱ/ՈՎ պլանի մշակումը պետք է սահմանվի օրենքով (Ա1.1); Այս պլանի տեխնիկական մանրամասները (բնութագիրը) կարող են</p>	<p>(Ա1.3) ՋԳ կադաստրի համար հատուկ կանոնակարգի (որոշման) և ուղեցույցների մշակում</p> <p>(Ա1.4) Ստորագրել միջգերատեսչական համագործակցության համաձայնագրեր տվյալների տրամադրման վերաբերյալ</p> <p>(Ա1.5) ՉՀՀ գծով պարտականությունների սահմանում մասնավոր հատվածի համար (դա կարող է իրականացվել կլիմայի փոփոխության մասին օրենքի միջոցով)</p> <p>Առաջարկվում է նաև սահմանել ՉՀՀ հանձնառություններ մասնավոր հատվածի համար՝ ներառելով Հայաստանի տնտեսության բոլոր ճյուղերի ջերմոցային գազերի արտանետումները (կարող է ներառվել նաև գործարար ոլորտը): Մասնավոր հատվածի համար հանձնառությունները կարող են ամրագրվել Ա.1.1-ում, իսկ գնահատումների իրականացման մեթոդաբանությունները և հաշվետվայնության և հավաստագրման գործողությունների համար նախատեսված այլ ընթացակարգերը կարող են սահմանվել տեխնիկական ուղեցույցներում:</p>

<p>դժվարացնում է տվյալների հավաքագրումը:</p>	<p>սահմանվել ՋԳ կադաստրի վերաբերյալ որոշմամբ:</p>		
<p>Շրջակա միջավայրի նախարարության, ինչպես նաև այլ նախարարությունների, գերատեսչությունների, կոմիտեների կամ պետական կամ մասնավոր ձեռնարկությունների համար, որոնք իրականացնում են տեղեկատվության տրամադրում, հաշվետվությունների ներկայացում կամ տեղեկատվության հավաստագրում՝ կապված մեղմման և հարմարվողականության գործողությունների ֆինանսավորման հետ, սահմանված չեն ՉՀՀ-ի հատուկ գործառնություններ:</p> <p>ՋԳ կադաստրի գծով իրականացվող գործուղությունների վերաբերյալ տվյալների շարունակական հիմունքներով հավաքագրման պաշտոնական հիմքեր առկա չեն (EU4Climate, 2021թ.):</p> <p>Գոյություն չունի տվյալների հավաքագրման համար իրավական և պայմանագրային որևէ պարտավորեցնող մեխանիզմ, և խնդիրներ կան</p>	<p>Առաջարկվում է սահմանել իրավական հիմքեր կլիմայի փոփոխության մասին օրենքում, և յուրաքանչյուր նախարարության կամ գերատեսչության կամ գործառնությունները սահմանել համապատասխան կանոնակարգերի միջոցով (կանոնակարգում անհրաժեշտ է իրականացնել փոփոխություններ): Նմանապես, կարող են ստորագրվել միջգերատեսչական համագործակցության համաձայնագրեր՝ հեշտացնելու համար անհրաժեշտ ժամկետներում բարձրորակ տեղեկատվության տրամադրումը և տեղեկատվության տրամադրման համար անհրաժեշտ պայմանները: Այնուամենայնիվ, կարևոր է, որ այս համաձայնագրերի իրավական հիմքը ձևավորվի ՋԳ կադաստրի վերաբերյալ որոշման միջոցով (Ա1.3), որը կապահովի անհրաժեշտ</p>	<p>(Ա1.1) Կլիմայի փոփոխության մասին օրենքի մշակում և գործադրում</p> <p>Ա1.3) ՋԳ կադաստրի հատուկ կանոնակարգի կամ ուղեցույցների մշակում</p> <p>(Ա1.4) Ստորագրել միջգերատեսչական համագործակցության համաձայնագրեր տվյալների տրամադրման վերաբերյալ</p> <p>(Ա1.5) ՉՀՀ հանձնառությունների սահմանում մասնավոր հատվածի համար</p> <p>(Ա1.6) ՉՀՀ գործառնությունների սահմանում գործընթացի բոլոր ներգրավված մասնակիցների համար:</p>	<p>Մշակել միջգերատեսչական համաձայնագրերի նախագծեր յուրաքանչյուր նախարարության համար, որը տվյալներ է տրամադրում կադաստրի համար՝ սահմանելով հաշվետվությունների ներկայացման ժամկետները, տվյալների տրամադրման ձևանմուշները (օրինակ՝ excel ֆայլերում), տեխնիկական աջակցությունը և տրամադրված տվյալների հիմնավորումները:</p> <p>Կլիմայի փոփոխության վերաբերյալ յուրաքանչյուր նախարարության դերերի և իրավասությունների սահմանում կլիմայի փոփոխության մասին օրենքի միջոցով, ինչպես նաև մասնավոր հատվածի համար ՉՀՀ հանձնառությունների սահմանում (օրինակ՝ արտանետումների գծով հաշվետվությունների ներկայացում և հավաստագրում):</p> <p>Կլիմայի փոփոխության մասին օրենքում սահմանել ՉՀՀ հարցերով իրավասությունները ինչպես Շրջակա միջավայրի նախարարության համար՝ որպես ՉՀՀ համակարգի համակարգողի, այնպես էլ տեղեկատվություն տրամադրողների և վավերացնողների, ներառյալ պետական և մասնավոր ձեռնարկությունների, ինչպես նաև վիճակագրության պետական կոմիտեի և ՄԳՀԽ-ի համար, և խթանել դրա ինտեգրումը յուրաքանչյուր ներգրավված</p>

CARBON LIMITS

<p>մասնավոր ընկերությունների հետ (EU4Climate, 2021):</p>	<p>համընդգրկունության մակարդակը:</p>	<p>Նախարարության ակտերում: Ենթաօրենսդրական (ՉՀՀ-ի գծով առաջարկվող գործառույթները ներկայացված են հիմնական հաշվետվության հավելվածներում)</p>
--	--------------------------------------	--

Ա2 - ՉՀՀ համակարգի համար կառուցված ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորում.

<p>Դեռևս անհրաժեշտ են իրավական/պաշտոնական մեխանիզմներ՝ համապատասխան հաստատությունների որոշակի պարտավորությունները հստակեցնելու համար՝ կլիմայի հետ կապված տվյալների տրամադրման և որակի ապահովման, ինչպես նաև քաղաքականության, ծրագրերի և միջոցառումների հաշվետվությունների առումով:</p> <p>Կլիմայի հետ կապված տվյալների ներկայացման, հավաքագրման, պահպանման և փոխանակման համար նշանակված տարբեր կառույցների պարտականությունները չեն կարգավորվում որևէ իրավաբանորեն պարտավորեցնող փաստաթղթով(EU4Climate, 2021թ.):</p>	<p>Ինստիտուցիոնալ մեխանիզմները, ինչպես նաև ներգրավված տարբեր մասնակիցների կոնկրետ պարտավորությունները պետք է սահմանվեն օրենքով (Ա1.1): Խորհուրդ է տրվում հիմք ընդունել այս ծրագրի շրջանակներում կատարված ինստիտուցիոնալ մեխանիզմների քարտեզագրումը՝ ինստիտուցիոնալ մեխանիզմներ ստեղծելու համար:</p>	<p>(Ա2.1) Ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորում Ա1.1-ի միջոցով:</p> <p>(Ա1.6) ՉՀՀ գործառույթների սահմանում գործընթացի բոլոր ներգրավված մասնակիցների համար:</p>	<p>Օրենքում ներառել տարբեր ինստիտուցիոնալ մեխանիզմներ՝ համաձայն Հավելված 2-ում ներկայացված ինստիտուցիոնալ մեխանիզմների քարտեզագրման:</p> <p>Ներգրավված տարբեր մասնակիցների համար ՉՀՀ գործառույթները առաջարկվում են 6-րդ գլխում: Օրենքում ներառել այս գործառույթները՝ որպես ուղեցույց այն նախարարությունների և գերատեսչությունների գործունեությունը, ովքեր կարևոր ներդրում ունեն ՉՀՀ առումով:</p>
--	---	---	--

<p>Համարվում է, որ ՄԳՀԽ-ն բավականաչափ համընդգրկուն չէ կլիմայական</p>	<p>Առաջարկվում է ներառել ոլորտային աշխատանքային ենթախմբեր, որոնք</p>	<p>(Ա2.2) Սահմանել ՄԳՀԽ-ի դերը Ա1.1 կանոնակարգում որպես</p>	<p>Քննարկել և որոշել աշխատանքային խմբերը և դրանց անդամների, որոնք պետք է ներգրավվեն այս խորհրդի</p>
--	--	---	---

<p>քաղաքականության հարցերի լայն շրջանակին անդրադառնալու համար, ինչպես նաև սահմանված չեն համապատասխան միջոցառումները՝ ինդիքները համարժեքորեն լուծելու համար: Որոշումը չի սահմանում ներգրավված մասնակիցների ՉՀՀ առաջադրանքները: Թեմաների մեծ մասը կներառվեր 2-րդ աշխատանքային խմբի շրջանակում, սակայն, ոլորտային աշխատանքային խմբեր չստեղծվելու դեպքում, որոշումը համարվում է սուբյեկտիվ, և դա կարող է խոչընդոտ հանդիսանալ նպատակների իրագործման առումով:</p>	<p>փոխգործակցության հիմունքով կանդրադառնան մեղմման, հարմարվողականության և ֆինանսավորման հարցերին: Խմբերը պետք է նաև ԱՍԳ-ի համապատասխանության շրջանակներում դիտարկեն կադաստրի որակի վերահսկման մոնիտորինգի գործառնությունները: ՄԳՀԽ-ն պետք է կարողանա հետամուտ լինել ՉՀՀ համակարգի աշխատանքին: Կարևոր է, որ ՄԳՀԽ-ն մշտական հիմունքներով ինտեգրի փորձագետներին՝ ոլորտային ինդիքները լուծելու համար, և որ հաշվի առնվի քաղաքացիական հասարակությունը, գիտական համայնքը և մասնավոր հատվածը, քանի որ նրանք կարող են արժեքավոր ներդրում ունենալ համակարգում և բացահայտել կլիմայական քաղաքականության բացերն ու կարիքները, ինչպես նաև օժանդակել դրանց լուծմանը: Դրա համար կարևոր է որոշել, թե ինչ է իրենից ներկայացնելու «իրավիրվածների»</p>	<p>ազգային հիմնական ինստիտուցիոնալ կառույց, որը պատասխանատու է այդ համակարգի գործունեության մեկնարկումը և գործարկումն ապահովելու համար: (Ա2.3) ՄԳՀԽ-ի վերակառուցում և գործառնությունների սահմանում (որոշման փոփոխություն՝ ներառելով ՉՀՀ-ի կոնկրետ գործառնությունները):</p>	<p>ՉՀՀ-ի աշխատանքներում՝ ակնկալվող արդյունքները ստանալու համար՝ հաշվի առնելով նրանց հավաստագրման գործառնությունները: Փոփոխություն կատարել գործող որոշման մեջ (N719-Ա որոշում)՝ նշելով աշխատանքային ենթախմբերը (թեմաները և անդամները), անդամների դերերն ու լիազորությունները և գործողությունները, որոնք պետք է իրականացվեն ՉՀՀ համակարգի հուսալիությունը և գործունեության անընդհատությունն ապահովելու համար: ՄԳՀԽ-ի գործառնությունները ներառված են Հաշվետվության 6-րդ գլխում): Կլիմայի փոփոխության մասին օրենքում (Ա1.1) խորհուրդ է տրվում ներառել ՄԳՀԽ-ը՝ որպես ՉՀՀ համակարգի կառավարման համար պատասխանատու հիմնական ինստիտուցիոնալ կառույց: Կարևոր է ընդգծել որակի վերահսկման և հավաստագրման գործառնությունները, որոնք համակարգում վերապահված է ՄԳՀԽ անդամներին, ինչը ենթադրում է, որ այդ գործառնությունները կարող են սահմանափակվել ոչ միայն կադաստրով, այլ բոլոր բաղադրիչներով (սա պետք է քննարկվի. արտաքին հավաստագրում իրականացնող 3րդ կողմի ներգրավման պայմաններում, ՄԳՀԽ-ն կարող է հիմնականում կենտրոնանալ կադաստրի, և մասամբ՝ առաջընթացի արձանագրման քաղաքականության ուղղությամբ):</p>
---	--	--	---

մասնակցությունը (համաձայն N719-Ա որոշման), նույնիսկ այն դեպքում, եթե նրանք խորհրդի անդամ չեն հանդիսանում:

Ա3 - Կլիմայի փոփոխության ֆոնդի ֆակտացիայի և ներառում կենտրոնացված համակարգում.

<p>Մեղման գործողությունների և դրանց ազդեցության գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրում և որակի վերահսկում:</p>	<p>Կլիմայի քաղաքականությունը անհրաժեշտ է կենտրոնացնել մեկ պլանավորման գործիքի միջոցով (LT-LEDS՝ մեղմման համար, ՀԱԾ՝ հարմարվողականության համար), որպեսզի կլիմայի փոփոխության բոլոր քաղաքականություններն արտացոլեն մեկ համընդհանուր մոտեցում՝ մեղմման և հարմարվողականության գործողությունների մոնիտորինգին օժանդակելու նպատակով:</p>	<p>(Ա3.1) Ծրագրերի գրանցամատյանի ներդրում՝ արտանետումների կրճատման ֆինանսական տեղեկատվության արձանագրման նպատակով և</p> <p>(Ա3.2) Մանրամասն վերլուծել քաղաքականությունների և դրանց նպատակների ներկառուցումը համակարգում (գրանցամատյանում)</p>	<p>Մեղմման գրանցամատյանի հիմնական ասպեկտների վերաբերյալ որոշումների կայացում: Տե՛ս Գլուխ 6՝ հարակից առաջարկությանը ծանոթանալու համար:</p>
<p>Բազմաթիվ կողմեր են ներգրավված տարբեր մակարդակներում իրականացվող մեղմման գործողություններում՝ ինչը զուգորդված է երկրում իրականացվող մեղմման միջոցառումների ընդհանուր համակարգման/մոնիտորինգի բացակայության հետ:</p>	<p>Այն պետք է ներառի ՉՀՀ համակարգում մեղմման և հարմարվողականության գործողությունների գրանցամատյանի ներդրում՝ նպատակ ունենալով հետևել առաջընթացին և դրա հետ կապված արտանետումների կրճատմանը:</p>	<p>Դա ենթադրում է իրավական ակտի, օրինակ, որոշման մշակում:</p> <p>Ապահովել ՇՄՆ-ի կողմից «ծրագրային պորտֆելի համակարգի» ընդունումը ԾՊՀ՝ մշակվ ԼՍԳ գործընկերների աջակցությամբ): ԾՊՀ-ը</p>	<p>Որոշումները կայացնելուց հետո որոշել օգտատերերի տեսակը և ԿՓՉՀՀ հարթակի հասանելիությունը (այսինքն՝ հավաստագրողներին և ծրագրի մշակողներին):</p>
<p>Կա ռիսկ, որ որոշ հիմնական գործողություններ կարող են անտեսվել կամ կրճատումները կարող են հանդիսանալ կրկնակի հաշվառման արդյունք:</p>	<p>Այն պետք է ներառի ՉՀՀ համակարգում մեղմման և հարմարվողականության գործողությունների գրանցամատյանի ներդրում՝ նպատակ ունենալով հետևել առաջընթացին և դրա հետ կապված արտանետումների կրճատմանը:</p>	<p>Դա ենթադրում է իրավական ակտի, օրինակ, որոշման մշակում:</p> <p>Ապահովել ՇՄՆ-ի կողմից «ծրագրային պորտֆելի համակարգի» ընդունումը ԾՊՀ՝ մշակվ ԼՍԳ գործընկերների աջակցությամբ): ԾՊՀ-ը</p>	<p>Պատրաստել տվյալների տրամադրման ձևանմուշներ:</p>
<p>Աջակցության վերաբերյալ ՉՀՀ-ի միջոցով սահմանված պաշտոնական համակարգի բացակայությունը թույլ չի տալիս ապահովել կլիմայի ուղղությամբ</p>	<p>Այն պետք է ներառի ՉՀՀ համակարգում մեղմման և հարմարվողականության գործողությունների գրանցամատյանի ներդրում՝ նպատակ ունենալով հետևել առաջընթացին և դրա հետ կապված արտանետումների կրճատմանը:</p>	<p>Դա ենթադրում է իրավական ակտի, օրինակ, որոշման մշակում:</p> <p>Ապահովել ՇՄՆ-ի կողմից «ծրագրային պորտֆելի համակարգի» ընդունումը ԾՊՀ՝ մշակվ ԼՍԳ գործընկերների աջակցությամբ): ԾՊՀ-ը</p>	<p>Մշակել հրամանագիր, որտեղ հստակ սահմանված են գրանցամատյանի նպատակը, ծրագրի առաջարկողների պահանջները և գրանցամատյանի գործունեության կանոնները:</p>
<p>Այն պետք է ներառի ՉՀՀ համակարգում մեղմման և հարմարվողականության գործողությունների գրանցամատյանի ներդրում՝ նպատակ ունենալով հետևել առաջընթացին և դրա հետ կապված արտանետումների կրճատմանը:</p>	<p>Այն պետք է ներառի ՉՀՀ համակարգում մեղմման և հարմարվողականության գործողությունների գրանցամատյանի ներդրում՝ նպատակ ունենալով հետևել առաջընթացին և դրա հետ կապված արտանետումների կրճատմանը:</p>	<p>Դա ենթադրում է իրավական ակտի, օրինակ, որոշման մշակում:</p> <p>Ապահովել ՇՄՆ-ի կողմից «ծրագրային պորտֆելի համակարգի» ընդունումը ԾՊՀ՝ մշակվ ԼՍԳ գործընկերների աջակցությամբ): ԾՊՀ-ը</p>	<p>Մինևույն ժամանակ, վերլուծել կլիմայի հետ կապված քաղաքականությունները, որոնք կարող են ներառվել գրանցամատյանում, յուրաքանչյուր գրանցված ծրագիր «պիտակավորել»՝ կապակցելով համապատասխան քաղաքականությանը (եթե կիրառելի է):</p>
<p>Այն պետք է ներառի ՉՀՀ համակարգում մեղմման և հարմարվողականության գործողությունների գրանցամատյանի ներդրում՝ նպատակ ունենալով հետևել առաջընթացին և դրա հետ կապված արտանետումների կրճատմանը:</p>	<p>Այն պետք է ներառի ՉՀՀ համակարգում մեղմման և հարմարվողականության գործողությունների գրանցամատյանի ներդրում՝ նպատակ ունենալով հետևել առաջընթացին և դրա հետ կապված արտանետումների կրճատմանը:</p>	<p>Դա ենթադրում է իրավական ակտի, օրինակ, որոշման մշակում:</p> <p>Ապահովել ՇՄՆ-ի կողմից «ծրագրային պորտֆելի համակարգի» ընդունումը ԾՊՀ՝ մշակվ ԼՍԳ գործընկերների աջակցությամբ): ԾՊՀ-ը</p>	<p>Կարևոր է նշել, որ արտանետումների կրճատմանը հետևելու համար անհրաժեշտ</p>

ստացված ֆինանսավորման ճշգրիտ արձանագրում:	ՄԱՀ գործողությունների բաղադրիչն ուղղակիորեն կապված է ֆինանսավորման բաղադրիչի հետ, որտեղ կառավարող մարմինները, ծրագրեր մշակողները և ստուգող մարմինները կհանդիսանան տեղեկատվություն տրամադրողներ:	համարվում արդյունավետ հիմք ԿՓԶՀ համակարգի մեղմման աջակցության բաղադրիչների համար, սակայն լիարժեք իրականացման համար կպահանջվի հետագա աջակցություն:	Ե Ե հավաստագրման կարողությունների առկայությունը (տես առաջարկություն Ա4): Վերանայել և գնահատել ԾՊՀ-ն՝ հաշվի առնելով այս հաշվետվությամբ ներկայացված առաջարկությունները, և անհրաժեշտության դեպքում մշակել դրա հետագա զարգացման և իրականացման ծրագիր:
---	---	---	---

Ա4 - Հավաստագրման համակարգի ներդրում մեղմման ծրագրերի արդյունքում արտանետումների կրճատումները և մասնավորապես հատկապես ՔԳ արտանետումները հատկապես ստացվելու նպատակով.

Հայաստանում առկա չեն հավաստագրման իրականացման արտաքին երրորդ կողմեր, որոնք կօժանդակելին արտանետումների կրճատման հավաստագրման առաջադրանքի իրականացմանը, հավաստագրման մեխանիզմների անաչառությունը: Այս մեխանիզմն անհրաժեշտ է առանձին ծրագրերի իրականացման արդյունքում արտանետումների կրճատումների հավաստագրման ժամանակ, սակայն այս կարողությունների առկայությունը կարող է նաև աջակցել կառավարության կողմից իրականացվող	Չարգացել արտանետումների հավաստագրման ազգային կարողությունները, ինչը ենթադրում է հավաստագրող մարմինների հավատարմագրման համակարգի մշակում: Բացի այդ, պետք է խթանվի հավաստագրողների համար ծրագիրը, ստեղծելով հավաստագրման բաց շուկա, որի համար պետք է սահմանվեն պահանջներ և գործունեության կանոններ, իսկ հավաստագրողներն անցնեն տեխնիկական վերապատրաստում: Եվ ի վերջո, պետք է մշակվեն հավաստագրման ուղեցույցներ, ձևանմուշներ, գործիքներ և այլ մեխանիզմներ, որոնք	Այս կարողությունների զարգացումը կտևի մի քանի տարի, բայց երկարաժամկետ հեռանկարում այն արդիական է ՉՀՀ համակարգի արդյունավետության ապահովման համար, քանի որ արտաքին հավաստագրողները կարող են ապահովել մեղմման ծրագրերի արդյունքում առաջացած կրճատումների ճշգրտությունը՝ կրճատումների տեղի ունենալու փաստի հավաստիության արձանագրման միջոցով: 1. Վերանայել հավատարմագրման պահանջները՝ համաձայն Հայաստանում գործող կանոնակարգերի 2. Ստեղծել շահագրգիռ կողմերից բաղկացած աշխատանքային խումբ՝ հավատարմագրման համակարգը մշակելու համար: Այս համակարգի նախագծման առանցքային կետը հստակ նպատակների սահմանումն է (այն, ինչին Հայաստանը հավակնում է հասնել հավատարմագրման համակարգի միջոցով) և համապատասխանության ապահովումը
--	---	--

CARBON LIMITS

<p>հավաստագրման գործողություններին:</p>	<p>անհրաժեշտ հավաստագրումների իրականացման համար:</p>	<p>են</p>	<p>հավաստագրման միջազգային ստանդարտների հետ, ինչպիսիք են ISO-14064, 14065 և 14066:</p> <p>3. Ձևավորել նյութական և մարդկային ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ են հավատարմագրման համակարգի ներդրման համար</p> <p>4. Սահմանել հավաստագրողին ներկայացվող պահանջները</p> <p>5. Սահմանել հավաստագրման գործընթաց (խորհուրդ է տրվում կազմել ուղեցույց կամ ստանդարտ)</p> <p>6. Իրականացնել հավաստագրողների վերապատրաստում՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով հետաքրքրություն ներկայացնող ոլորտների վրա:</p> <p>7. Ներդնել հավատարմագրման ծրագիրը.</p>
---	--	-----------	---

Ա5 - Տվյալների որակի բարելավում

<p>Չկա անտառների ազգային կադաստր, որը կտրամադրեր հուսալի վիճակագրական տվյալներ երկրում առկա կլանիչների և հեռացումների վերաբերյալ, ինչն անհրաժեշտ է ազգային կադաստրում ներառելու, անտառնկառավարման կայուն գործելակերպեր ձևավորելու և քաղաքականության մշակման ընթացքում կայացվող որոշումների համար հիմք ծառայելու նպատակով</p>	<p>Փաստաթուղթը ներկայացնում է մի շարք և բացահայտումներ՝ առաջարկություններ՝ երկրում անտառների մոնիտորինգի համակարգի բարելավման և ստանդարտացման ուղղությամբ: Համարվում է, որ այս առաջարկությունների իրականացումը պետք է դիտարկվի որպես առաջնահերթություն՝ ԳԱՏԱՀՕ հատվածի ավելի</p>	<p>(Ա5.1) Շարունակել Հայաստանում անտառների հաշվառման համակարգի զարգացման ճանապարհային քարտեզի ներդրումը.</p>	<p>Ներդնել՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Անտառների կադաստրի վիճակագրական համակարգ 2. Անտառային տնկարկների կադաստրի համակարգ 3. Անտառների պետական հաշվառման և կադաստրի համակարգ 4. Անտառների մոնիտորինգի համակարգ՝ կապակցված ԿՓԶՀՀ հետ 5. Համակարգչային հիմունքով անտառների կառավարման համակարգ – ՏԲԿՀ (տվյալների բազայի կառավարման
--	--	--	--

CARBON LIMITS

<p>(համաձայն կադաստրի ռազմավարության):</p> <p>Անտառների հաշվառման, անտառների սահմանագծման, սահմանագատման, անտառների գնահատման և հողագործության աշխատանքների կառավարման սահմանման գործում հմուտ տեղական մասնագետների բացակայությունը անտառների առումով առանցքային խնդիրն է:</p>	<p>որակյալ կազմման համար՝ այդպիսով նպաստելով կադաստրի մեծացմանը:</p> <p>կադաստրի ազգային ճշգրտության</p>	<p>համակարգ) «Հայաստանի անտառային ռեսուրսներ».</p> <p>Քայլ առ քայլ գործողությունները ներկայացված են հիմնական հաշվետվության 4-րդ գլխում՝ 2-ամյա ժամկետի ընթացքում այդ բաղադրիչների ներդրման համար:</p>
<p>Մի անհամապատասխանություններ անտառային տվյալների չափորոշիչների տարբեր տվյալների աղբյուրների միջև, որոնք հիմնականում հիմք են ծառայում ՀՕՀՕՓԱՏ կադաստրի մարտին հրապարակված «Հողօգտագործման, հողօգտագործման փոփոխության և անտառային տնտեսության ոլորտի ներուժի գնահատումը կլիմայի ազդեցության նպատակների առումով» հաշվետվության մեջ:</p>	<p>հրականացնել ուսումնասիրության սահմանված միջոցառումները՝ կադաստրի համար:</p> <p>Տեխնիկական հաշվետվության բաժինը ներկայացնում է Հայաստանի հատվածի 26 մեղմման գործողությունների ակնարկ՝ բաժանված 4 հիմնական հողօգտագործման փոփոխություն՝ գործողություն, անտառներ՝ 3 գործողություն, գյուղատնտեսություն՝ 13 գործողություն և տորֆի</p>	<p>կազմել ճանապարհային քարտեզ այս միջոցառումների աստիճանական իրականացման համար՝ սահմանելով առաջնահերթություններն ըստ այդ միջոցառումների առավել արդիական բնույթի:</p> <p>Առաջարկվում է այս միջոցները ներառել ԵԺ-ՁԳՑԱԶն -ում (Ա1.2) և դրանց համար պարտադիր բնույթ սահմանել կլիմայի փոփոխության մասին օրենքի ուժով (Ա1.1), այդպիսով դրանք դառնում են պարտադիր իրականացման համար, և արտացոլվում են արտանետումների կադաստրում:</p> <p>Անհրաժեշտ է մանրամասն վերլուծել այն պարտականությունները, որոնք տարբեր կառույցների/գերատեսչությունների համար բխում են այդ միջոցառումների իրականացման արդյունքում, ապահովելով այդ պարտականությունների ամրագրումը</p>

CARBON LIMITS

<p>Անորոշության բարձր աստիճան՝ հաշվի առնելով երկրում անտառային հողերի և հողօգտագործման մոնիտորինգի առկա սահմանափակումներն ու մարտահրավերները:</p> <p>Դժվար է գնահատել անտառային կլանիչների փաստացի ազդեցությունը, որը կադաստրում հաճախ թերագնահատվում է՝ հաշվի առնելով փայտանյութի ապօրինի արդյունահանման, մոնիտորինգի տեխնոլոգիաների սահմանափակ բնույթի և անտառտնտեսության ոլորտում քանակական տվյալների գնահատման առումով առկա ընդհանուր մարտահրավերները:</p> <p>Ինչ վերաբերում է արտանետումների ցուցանիշներին, ապա հաշվետվությունում նշվում է, որ զով, չափավոր չորային կլիմայական պայմաններում խոտածածկ տարածքների, ցանքատարածությունների և ցածր ակտիվությամբ կավահողերի արտանետումների համար ԿՓՓՄԽ-ի կանխադրված արժեքները չափազանց ցածր են՝ հաշվի առնելով երկրին բնորոշ պայմանները:</p>	<p>արդյունահանում 1 գործողություն: Հայաստանի ՀՀ համակարգի համար խորհուրդ է տրվում ներառել այս 26 կատեգորիաները 4 հիմնական ենթաօլորտներում՝ հաշվետվայնության, հաշվառման և արձանագրման և հարթակներում և առաջնահերթություն տա մեղմման առավելագույն ներուժ ունեցող գործողություններին:</p>	<p>համապատասխան կարգավորող ակտերում (նախարարությունների որոշումների, կլիմայի փոփոխության դաշտի կանոնակարգման և ջերմոցային գազերի կադաստրի և նույնիսկ համակարգման վերաբերյալ համաձայնագրերի միջոցով):</p>	
<p>Հայաստանում բացակայում են ածխածնի չափման</p>	<p>Անտառային պաշարների</p>	<p>ածխածնի (Ա5.3) չափման պաշարների</p>	<p>Ածխածնի չափման</p>

CARBON LIMITS

<p>համընդհանուր, հուսալի և օգտագործողի համար հարմար մեթոդաբանությունները՝ համաձայն Անտառային ածխածնի պաշարների չափման ուղեցույցների (2020թ.):</p>	<p>ուղեցույցները մշակվել են 2020թ. աշխատանքային համար, սակայն դրանք փաստացիորեն չեն գործադրվել:</p> <p>Առաջարկվում է ՋԳ կադաստրի կանոնակարգի կամ ուղեցույցների մեջ ներառել այս ուղեցույցների գործադրումը՝ ԳԱՏԱՅՕ հատվածի ՋԳ ազգային և տեղական կադաստրի մշակման համար:</p>	<p>ուղեցույցների գործադրում:</p> <p>Այս ուղեցույցները առանցքային են ԱԿՀ-ում ներկայացված՝ ազգային ՋԳ-ների կլանիչների և հեռացումների գնահատումների ճշգրտությունը մեծացնելու համար, քանի որ դրանք ուղեցույց են հանդիսանում Կլիմայի Փոփոխության Փորձագետների Միջկառավարական խմբի (ԿՓՓՄԽ) կողմից սահմանված պահանջներին և դրույթներին համապատասխան կարգով ածխածնի պաշարների գնահատման համար:</p>	<p>Կիրառել այս ուղեցույցները ազգային կադաստրի, ԳԱՏԱՅՕ հատվածի, ինչպես նաև տեղական անտառների կադաստրերի կազմման համար:</p> <p>Ներառել այս ուղեցույցների օգտագործումը կանոնակարգում (Ա1.1 և Ա1.3)՝ սահմանելով դրանց կիրառման պարտադիր բնույթը:</p>
<p>Թափոնների ոլորտ. կադաստրում ներկայացվում է կոնկրետ ոլորտային արտանետումների վերաբերյալ տեղեկատվություն, ներառյալ հանրամատչելի հաշվետվություններից որոշ ընդհանուր տեղեկություններ, որոնք ոչ միշտ են պարբերաբար արդիականացվում:</p>	<p>Առաջարկվում է այս կադաստրը դիտարկել որպես թափոնների կադաստրի անմիջական գործողությունների վերաբերյալ տվյալներ՝ համաձայն Թափոնների մասին օրենքի: Այս տեղեկատվությունը կարող է օգտագործվել նաև թափոնների ոլորտում արտանետումների</p>	<p>(Ա5.4) Թափոնների հատվածի արտանետումների գնահատման տվյալների որակի բարելավում՝ թափոնների գոյացման կադաստրային տվյալների գեներացման միջոցով.</p>	<p>Վերլուծել կադաստրի տվյալները որպես գործողությունների վերաբերյալ տվյալներ դիտարկելու նպատակահարմարությունը այն դեպքերում, երբ դրանք ավելի ճշգրիտ և արդիականացված են:</p> <p>Այն դեպքում, երբ որոշվում է այս տեղեկատվությունը օգտագործել ջերմոցային գազերի գնահատման համար, այն պետք է սահմանվի կադաստրի վերաբերյալ որոշման և թափոնների ոլորտի</p>

	<p>նվազեցման քաղաքականության խթանման համար:</p>		<p>վերաբերյալ հարակից ուղեցույցների միջոցով:</p>
<p>Վիճակագրական տվյալներ</p> <p>Բնակչության մարդահամարներն և գյուղատնտեսական գույքագրումն օրենքով իրականացվում են 10 տարին մեկ անգամ:</p> <p>Կարող են ավելի հաճախակի պարբերականությամբ իրականացվել նաև այլ տեսակի գույքագրումներ՝ 2-ամյա պլանավորմամբ:</p> <p>Այնուամենայնիվ, համարվում է, որ կադաստրի ավելի մեծ ճշգրտության հասնելու առումով, այդպիսի գույքագրումները՝ հանդիսանալով կադաստրին անմիջականորեն մասնակցող տվյալներ, պետք է կատարվեն ավելի պակաս պարբերականությամբ:</p> <p>Հարցազրույցների արդյունքում պարզվել է, որ կատարվում են էքստրապոլյացիաներ, որոնք քիչ են համապատասխանում իրականությանը, և որ ընտրանքները ներկայացուցչական չեն:</p>	<p>Ա1.1-ի միջոցով կարող են սահմանվել արդիականացված տեղեկատվության ստեղծման ժամկետներ:</p> <p>Սակայն այդ նպատակով կարող է նաև պահանջվել փոփոխություններ կատարել վիճակագրության մասին օրենքում:</p> <p>Հարցումների հաճախականությունները, ինչպես նաև ներկայացուցչական ընտրանքները պետք է սահմանվեն օրենքով:</p> <p>Մյուս կողմից, արդիական է վիճակագրական ճանապարհային քարտեզի միջոցառումների իրականացումը (սահմանված է 9 առաջնահերթություն):</p>	<p>(Ա5.5) Վիճակագրական տվյալների որակի բարելավման պահանջը ներառել կանոնակարգերում (Ա1, Ա3): Այդ նպատակով կարող է պահանջվել փոփոխություն կատարել վիճակագրության մասին օրենքում:</p> <p>Առաջարկվում է խթանել որոշակի վիճակագրական տվյալների թարմացումը առնվազն 5 տարին մեկ պարբերականությամբ՝ առաջադեմ փորձը արտացոլելու և հաշվետվություններում օգտագործման նպատակով Հայաստանի վիճակագրական տվյալների հոսսալիությունը մեծացնելու համար:</p>	<p>Մշակել ՎԿ-ից ստացվող ելակետային տվյալների ցանկը և սահմանել պատշաճ պարբերականություն: Ելնելով կարիքներից՝ սահմանել այն մարդահամարները/գույքագրումները, որոնք պետք է առաջնահերթ համարվեն, համաձայն Վիճակագրության մասին օրենքի:</p> <p>Ընդունել կլիմայի փոփոխության մասին օրենք (և հնարավորության դեպքում փոփոխել վիճակագրության օրենքը)՝ պաշտոնական հիմքերով որպես ՉՀՀ համակարգի համար ելակետային տվյալների աղբյուր ընդունելով վիճակագրական տվյալների օգտագործումը, սահմանել տվյալների արդիականացման պարբերականությունը, ինչպես նաև ՎԿ-ի համար (ինչպես մնացած տվյալների մատակարարների համար) հաշվետվողական պարտավորությունները:</p> <p>Ընդունել կադաստրի վերաբերյալ կանոնակարգ. որոշել տեղեկատվության աղբյուրները, բացահայտել վիճակագրությանը համապատասխանող տեղեկատվությունը, կիրառելիության դեպքում սահմանել հարցումների պարբերականությունը, ներկայացուցչականությունը և այլն:</p> <p>Ստորագրել համագործակցության պայմանագրեր վիճակագրական կոմիտեի հետ:</p>

Իրականացնել գործողություններ, որոնք բխում են Կլիմայի փոփոխությանն առնչվող վիճակագրության մշակման ճանապարհային քարտեզից, հատկապես #2 (բարձրացնել վիճակագրական կոմիտեի դերը ՋԳ կադաստրի կազմման համակարգում) և #9 (կատարել կազմակերպչական փոփոխություններ վիճակագրական կոմիտեում, ավելի լայն՝ ազգային վիճակագրական համակարգում և ազգային համակարգում՝ նպատակ ունենալով օժանդակել Կլիմայի փոփոխության հետ կապված վիճակագրական տեղեկատվության գեներացմանը):

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս հիմնական հաշվետվության Աղյուսակ 8-ը:

Բովանդակություն

Հապավումներ	27
1. Ներածություն	28
1.1. Նախապատմություն.....	28
1.2. ՉՀՀ-ի կարիքները ազգային և միջազգային հաշվետվողականության պահանջների համար.....	30
1.3. Նպատակը և մոտեցումը.....	39
1.3.1. Կարգավորող շրջանակի վերլուծություն.....	39
1.3.2. Համապատասխան շահագրգիռ կողմերի նույնականացում.....	40
1.3.3. ՉՀՀ բաղադրիչների նույնականացում.....	42
1.3.4. Տվյալների քարտեզագրում.....	45
1.3.5. Առաջարկություններ.....	45
2. Կարգավորող շրջանակ	47
3. Ինստիտուցիոնալ քարտեզագրում՝ ի աջակցություն ԿՓՉՀՀ հարթակի նախագծման	52
3.1. Հաստատությունների և շահագրգիռ կողմերի նույնականացում.....	52
3.2. Տվյալների փոխանակման և հաշվետվողականության ինստիտուցիոնալ մեխանիզմները.....	65
3.2.1. ՋԳ կադաստր.....	65
3.2.2. Մեղմման/հարմարվողականության գործողություններ և ֆինանսավորում..	69
3.3. Ինստիտուցիոնալ մեխանիզմներ SS առումով.....	70
4. ՉՀՀ հայեցակարգի մշակում (ԿՓՉՀՀ)	74
4.1. ՉՀՀ համակարգի բաղադրիչներ.....	74
4.1.1. ՋԳ կադաստր.....	76
4.1.2. Մեղմման և հարմարվողականության գործողություններ.....	80
4.1.3. Կլիմայի ֆինանսավորում / Աջակցություն / Իրականացման միջոցներ.....	85
4.1.4. ԱՍԳ-ի գծով առաջընթացի արձանագրում.....	92
5. SS բնութագրերը և պահանջները	93
5.1. Մասնակից համակարգեր.....	93
5.1.1. ՎԿ ներքին ռեսուրսներով մշակված համակարգ.....	93
5.1.2. armstatbank.am.....	94
5.1.3. Հիդրոմետ ծառայության տվյալների բազա.....	94
5.1.4. Էներգետիկ հաշվեկշիռ.....	95
5.1.5. Ծրագրի պորտֆելի համակարգ.....	95

5.2. Անկախ զարգացման ծրագրեր	96
5.2.1. ՎԿ համակարգերի արդիականացում	96
5.2.2. Հիդրոմետ ծառայության համակարգի արդիականացում	96
5.2.3. SS կառավարման ուղեցույցների ներդրում	96
5.3. Ընդհանուր բիզնես գործելաոճեր	97
5.4. Ֆունկցիոնալ բաղադրիչներ	98
5.5. Սերվերի և ցանցի կառուցվածք	98
5.6. Տվյալների նախագծում	99
5.7. Վեբ միջերեսներ	99
6. Առաջարկություններ ՉՀՀ գործելակերպերի և ԿՓՉՀՀ-ի հարթակի ներդրման վերաբերյալ	101
6.1. Ա1 – Համընդգրկուն իրավական դաշտի ստեղծում	102
6.1.1. Ա1.1 Կլիմայի փոփոխության մասին օրենքի մշակում և գործադրում	102
6.1.2. Ա1.2 Ցածր արտանետումային զարգացման երկարաժամկետ ռազմավարության (ԵԺ-ՑԱՁՌ) մշակում և գործարկում	104
6.1.3. Ա1.3 ՋԳ կադաստրի հատուկ կանոնակարգի կամ ուղեցույցների մշակում	106
6.1.4. Ա1.4 Ստորագրել միջգերատեսչական համագործակցության համաձայնագրեր տվյալների տրամադրման վերաբերյալ	113
6.1.5. Ա1.5 ՉՀՀ հանձնառությունների սահմանում մասնավոր հատվածի համար	116
6.1.6. Ա1.6 ՉՀՀ գործառնությունների սահմանում գործընթացի բոլոր ներգրավված մասնակիցների համար:	118
6.2. Ա2 - ՉՀՀ համակարգի համար կայուն ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորում	127
6.2.1. Ա2.1 Ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորում Ա1.1-ի միջոցով:	127
6.2.2. Ա2.2 ՄԳՀԽ-ը ներառել որպես ազգային ՉՀՀ-ի հիմնական ինստիտուցիոնալ կառույց և նրա իրավասությունները սահմանել Ա1.1-ով առաջարկվող կանոնակարգում:	132
6.2.3. Ա2.3 ՄԳՀԽ-ի վերակառուցում և գործառնությունների սահմանում (որոշման փոփոխություն՝ ներառելով ՉՀՀ-ի կոնկրետ գործառնությունները):	133
6.3. Ա3 - Կլիմայի փոփոխության քաղաքականության կառավարում կենտրոնացված կառավարման միջոցով	140
6.3.1. Ա3.1 Ծրագրերի գրանցամատյանի ներդրում՝ արտանետումների կրճատման և ֆինանսական տեղեկատվության արձանագրման նպատակով	142
6.3.2. Ա3.2 Մանրամասն վերլուծել քաղաքականությունների և դրանց նպատակների ներկառուցումը համակարգում (գրանցամատյանում)	152

6.4. Ա4 - Հավաստագրման համակարգի ներդրում մեղմման ծրագրերի արդյունքում արտանետումների կրճատումները և մասնավոր հատվածի ՋԳ արտանետումները հավաստագրելու նպատակով. 152

6.4.1. Ա4.1 Հավատարմագրման համակարգի մշակում 152

6.4.2. Ա4.2 Հավաստագրման ազգային կարողությունների զարգացում 153

6.4.3. Ա4.3 Հավաստագրման գործողությունների համար անհրաժեշտ գործիքների և մեխանիզմների մշակում..... 155

6.5. Ա5 - Տվյալների որակի բարելավում..... 156

6.5.1. Ա5.1 Շարունակել Հայաստանում անտառների հաշվառման համակարգի զարգացման ճանապարհային քարտեզի ներդրումը. 156

6.5.2. Ա5.2 Հայաստանի ՀՕՀՕՓԱՏ ոլորտի համար 26 մեղմման գործողությունների իրականացում: 157

6.5.3. Ա5.3 Ածխածնի պաշարների չափման ուղեցույցների գործադրում: 159

6.5.4. Ա5.4 Թափոնների հատվածի արտանետումների գնահատման տվյալների որակի բարելավում՝ թափոնների գոյացման կադաստրային տվյալների գեներացման միջոցով. 160

6.5.5. (Ա5.5) Վիճակագրական տվյալների որակի բարելավման պահանջը ներառել կանոնակարգերում (Ա1, Ա3): 161

Գծապատկերներ

Գծապատկեր 1 ԿՓՉՀՀ հարթակի համար անհրաժեշտ իրավական դաշտը.....	6
Գծապատկեր 2 ՄԱԿԿՓՇԿ-ի ներքո ներկայացվող հաշվետվություններ՝ Փարիզի համաձայնագրի ներքո ներկայացվող հաշվետվությունների համեմատ	31
Գծապատկեր3 Ծրագրի կարիքների բավարարման ուղղությամբ կիրառվող ընդհանուր մոտեցում	39
Գծապատկեր4 Հանրային քաղաքականության գործիքները, որոնք պետք է վերլուծվեն Հայաստանի համատեքստում.....	40
Գծապատկեր5 Կլիմայի քաղաքականության հետ կապված իրավական ակտեր և հաշվետվություններ	47
Գծապատկեր6 Ներկայիս ինստիտուցիոնալ մեխանիզմները՝ կլիմայի փոփոխության ազգային քաղաքականության ուղղությամբ.....	53
Գծապատկեր7 ՉՀՀ համակարգի ինստիտուցիոնալ և տվյալների քարտեզագրում (ամփոփում).....	54
Գծապատկեր8 Շրջակա միջավայրի նախարարության վարչություններ/բաժիններ.....	56
Գծապատկեր9 Միջգերատեսչական համակարգող խորհրդի կառուցվածքը	60
Գծապատկեր 10 ՋԳ կադաստրի ինստիտուցիոնալ կառուցվածքը.....	65
Գծապատկեր 11 ՋԳ կադաստրի համար տվյալների տրամադրման ինստիտուցիոնալ մեխանիզմները.....	66
Գծապատկեր 12 ՉՀՀ բաղադրիչները ըստ Հայաստանի կարիքների	75
Գծապատկեր 13 ՉՀՀ կառուցվածքը	76
Գծապատկեր 14 ՋԳ կադաստրի նպատակով տվյալների հավաքագրման գործընթացում ներգրավված հիմնական մասնակիցները	78
Գծապատկեր 15 ՋԳ կադաստրի տվյալների հետ կապված գործընթացներ	79
Գծապատկեր 16 Մեղմման ծրագրերի գրանցում ՉՀՀ համակարգում.....	84
Գծապատկեր 17 Անհրաժեշտ և ստացված ֆինանսական աջակցության վերաբերյալ ներկայացման ենթակա տեղեկատվություն.....	87
Գծապատկեր 18 ԿՓՉՀՀ հարթակի համար անհրաժեշտ իրավական դաշտը.....	101
Գծապատկեր 19 ՋԳ կադաստրի համար անհրաժեշտ շրջանակ	107
Գծապատկեր 20 Ներգրավված մասնակիցների ՉՀՀ գործառույթները սահմանելու նպատակով ձեռնարկվելիք քայլեր.....	119
Գծապատկեր 21 Ինստիտուցիոնալ փոխգործակցության ընդհանուր կառուցվածքը.....	131
Գծապատկեր 22 ՋԳ կադաստրի մշակման ինստիտուցիոնալ կառուցվածքը (ամփոփ)	131
Գծապատկեր 23 Առաջարկվող աշխատանքային ենթախմբեր ՄԳՀԽ-ի համար (այլընտրանք 1).....	136

Գծապատկեր 24 Առաջարկվող աշխատանքային ենթախմբեր ՄԳՀԽ-ի համար (այլընտրանք 2).....137

Գծապատկեր 25 Կլիմայի փոփոխության հետ կապված քաղաքականության կենտրոնացման համար անհրաժեշտ քայլեր.....140

Գծապատկեր 26 Մեղման ծրագրերի գրանցում ՉՀՀ համակարգում.....143

Գծապատկեր 27 ՉՀՀ համակարգի իրավական շրջանակը155

Աղյուսակներ

Աղյուսակ1 Երկամյա թափանցիկության զեկույցների հետ կապված ՉՀՀ պահանջները բոլոր երկրների համար32

Աղյուսակ2 Տարբեր տեսակի հաշվետվությունների գծով պահանջներ.....34

Աղյուսակ3 Վերլուծության համար դիտարկված քաղաքականության գործիքները, դերակատարները և համակարգերը41

Աղյուսակ4 ՉՀՀ համակարգի ներդրման ուղղությամբ առաջարկությունների մշակման համար կիրառված մոտեցում.....46

Աղյուսակ5 Շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցական հանդիպումներ55

Աղյուսակ6 Խորհրդի խնդիրներն ու գործառույթները.....61

Աղյուսակ7 SS ուղղությամբ առաջարկություններ ինստիտուցիոնալ մեխանիզմների համար.....70

Աղյուսակ8 ՋԳ կադաստրում ընդգրկված ոլորտները.....77

Աղյուսակ9 Հայաստանում նախատեսված կամ իրականացվող մեղման գործողություններ.....81

Աղյուսակ10 Հաշվետվությունների օրինակներ90

Աղյուսակ11 ՋԳ կադաստրի շրջանակի համար անհրաժեշտ տարրեր.....109

Աղյուսակ12 Ինստիտուցիոնալ փոխգործակցության հիմնական բաղադրիչները.....127

Աղյուսակ13 Հայաստանում մեղման ծրագրերի հնարավոր մեթոդաբանությունները145

Աղյուսակ14 ՉՀՀ-ում մեղման գործողությունների արձանագրման կանոնակարգումն ապահովող նվազագույն պահանջներ.....147

Աղյուսակ15 ՀՕՀՕՓԱՏ ոլորտի մեղման նախատեսվող գործողություններ.....157

Հապավումներ

ՀՄԳ	Հաշվետվողականություն, մոնիտորինգ և գնահատում
ԵԹՁ	Երկամյա թափանցիկության զեկույց
ԵԱՁ	Երկամյա առաջընթացի զեկույց
CBIT	Կարողությունների հզորացման նախաձեռնություն թափանցիկության համար
CO ₂ համարժեք	Ածխածնի երկօքսիդի համարժեք
ԿՓԶՀՀ	Կլիմայի Փոփոխության Չափման, Հաշվետվայնության և Հավաստագրման հարթակ
ԿԿՏՀ	Էներգիայի կառավարման տեղեկատվական համակարգեր
ԹԸՇ	Թափանցիկության ընդլայնված շրջանակ
ԶԳ	Ջերմոցային գազեր
ՀՀ կառավարություն	Հայաստանի Հանրապետության կառավարություն
ՄԳՀԽ	Միջգերատեսչական համակարգող խորհուրդ
ԱԳԱՕ	Արդյունաբերական գործընթացներ և արտադրանքի օգտագործում
LT-LEDS (ԵԺ-ՑԱՁՌ)	Երկարաժամկետ ցածր արտանետումային զարգացման ռազմավարություն
ՄԱՀ	Մեղմում և հարմարվողականություն
ՀԷԿՀ	Համայնքային էներգետիկ կառավարման համակարգ
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՉՀՀ	Չափում, հաշվետվայնություն և հավաստագրում
ՀԱԾ	Հարմարվողականության ազգային ծրագիր
ԱՀ	Ազգային հաղորդակցություն
ԱՍՆԳ	Ազգային մակարդակով սահմանված նախատեսված ներդրումներ
ԱՍԳ	Ազգային մակարդակով սահմանված ներդրում
ԱԿՓ	Ազգային կադաստրի հաշվետվություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ԾՊՀ	Ծրագրի պորտֆելի համակարգ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ ԿՓՇԿ	Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա

1. Ներածություն

1.1. Նախապատմություն

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Միացյալ ազգերի կազմակերպության Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիան (այսուհետ՝ ԿՓՇԿ) 1993 թ. մայիսին: 2002 թ. դեկտեմբերին Հայաստանը վավերացրել է Կիոտոյի արձանագրությունը, իսկ 2017թ.՝ Փարիզյան համաձայնագիրը: Միջազգային բազմակողմ փաստաթղթերի շրջանակներում Հայաստանի պարտավորությունները բխում են զարգացող երկրի կարգավիճակից, որը հանդես է գալիս որպես ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ի Հավելված I-ում չընդգրկված կողմ: Կոնվենցիայով և Փարիզյան համաձայնագրով երկրի դիրքորոշումը ամրագրված է «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող ներդրումներում» (ԱՍՆԳ), որը հաստատվել է Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 41 որոշմամբ և 2015թ. սեպտեմբերի 22-ին ներկայացվել է ՄԱԿ ԿՓՇԿ-ին: Փարիզի համաձայնագրի վավերացմամբ Հայաստանի ԱՍՆԳ-ն վերածվել է երկրի ԱՍԳ-ի՝ 2015-2050թթ. համար:

Ըստ ԱՍԳ-ի (Armenia, 2021) 2015-2050 թվականների ընթացքում երկրի ընդհանուր արտանետումները չպետք է գերազանցեն 633 միլիոն տոննա ածխածնի երկօքսիդի համարժեքը (CO₂ համարժեք տոննա): Հայաստանի Հանրապետությունը նպատակադրվել է մինչև 2050 թվականը հասնել Եկոհամակարգային չեզոք ջերմոցային գազերի արտանետումների (տարեկան 2,07 տոննա/մեկ շնչին)՝ համապատասխան միջազգային ֆինանսական, տեխնոլոգիական և կարողությունների զարգացման աջակցության պայմանով:

Մինչև 2021 թվականը՝ ԱՍԳ-ների իրագործման ցիկի մեկնարկային տարին, երկրներին ժամանակ է տրվել մշակելու իրենց իրագործման շրջանակները և վերանայելու կամ կատարելագործելու իրենց առաջին ԱՍԳ-ները: Հայաստանը նախաձեռնել է իր ԱՍԳ-ի վերանայումը 2020թ. հունվարին՝ «EU4Climate» ՄԱԶԾ-ԵՄ տարածաշրջանային ծրագրի աջակցությամբ, որի միջոցով հնարավորություն ստեղծվեց գործընթացում ներգրավել տեղական և միջազգային փորձագետների: Արդիականացված ԱՍԳ-ն հաստատվել է Կառավարության կողմից 2021 թվականի ապրիլի 22-ին և ներկայացվել ՄԱԿ-ի ԿՓՇԿ քարտուղարություն մայիսի 5-ին: Արդիականացված ԱՍԳ-ում իրագործման ժամկետը վերանայվել և համապատասխանեցվել է Փարիզի համաձայնագրի պահանջին, հիմք ընդունելով Կատովիցեում կայացած Կողմերի 24-րդ համաժողովում ընդունված ԱՍԳ ուղեցույցները, ինչպես նաև ներդաշնակեցվել է երկրների մեծամասնության, մասնավորապես, ԵՄ-ի և Նրա անդամ պետությունների կողմից սահմանված ժամկետներին՝ 10 տարի՝ 2021-ից մինչև 2030 թվականը:

Հայաստանը պահպանում է իր 2050 թվականի մեղմման նպատակը՝ իր ջերմոցային գազերի արտանետումները նվազեցնել մինչև առավելագույնը 2,07 տCO₂ համ/մեկ շնչի հաշվով, ինչն արտացոլվելու է Նրա երկարաժամկետ՝ ցածր արտանետումային զարգացման ռազմավարությունում (LT-LEDS): Մեղմման Նոր նպատակը, որը պետք է ձեռք բերվի 2030 թվականին, համարժեք է 1990 թվականի արտանետումների մակարդակից 40%-ով ցածր մակարդակի կրճատման:

Գործողությունների և աջակցության թափանցիկության շրջանակի համար Հայաստանն իր թարմացված ԱՍԳ-ում ընդգծում է ազգային ՉՀՀ համակարգի ներդրումը, որը պետք է արտացոլի Փարիզյան համաձայնագրի 13-րդ հոդվածում նշված եղանակները, ընթացակարգերը և ուղեցույցները (որոշում 18/CMA.1): Այդ գործընթացը ներառում է.

- Ջերմոցային գազերի արտանետումների ազգային կադաստրի մշակում երկամյա պարբերականությամբ.
- Ազգային հաղորդագրությունների և երկամյա առաջընթացի/երկամյա թափանցիկության զեկույցների մշակում և ներկայացում ՄԱԿ ԿՓՇԿ-ի ԲԱՍՈՂԱՐՈՒՄԻՆ (2024 թվականից).
- ԱՍԳ-ի վերանայման և հանրային քննարկումների մեխանիզմում մասնակցային գործընթացի ապահովում հաջորդ ԱՍԳ-ների պատրաստման ընթացքում, գեներային համապատասխան եղանակով.
- Բաց և մատչելի տեղեկատվական համակարգ՝ ապահովված հանրային ծառայություններ մատուցողների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև համագործակցության ամրապնդման միջոցով:

Ի լրումն, ազգային հարմարվողականության պլանավորման (ՀԱԾ) հաշվետվողականության, մոնիտորինգի և գնահատման (ՀՄԳ) գործընթացի ստեղծումը նախատեսված է 2021-2030թթ. Կլիմայի փոփոխության ազդեցության նկատմամբ հարմարվողականության ազգային շրջանակային ռազմավարությամբ (ընդունված ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի 749-Լ որոշմամբ), որով նախանշվում է Հայաստանում ՀԱԾ գործընթացի համակարգված մեկնարկը և իրականացումը, որի միջոցով հարմարվողականության պլանավորումը նախատեսվում է գործարկել բոլոր մակարդակներում, շարունակական և պարբերական հիմունքներով:

Համաձայն Հայաստանի 2021թ. մայիսի 17-ի Երրորդ երկամյա առաջընթացի զեկույցի (ԵԱԶ3) (Environment, 2021), երկրում արդեն ձևավորվել է ՉՀՀ ազգային հիմնական համակարգը՝ միջգերատեսչական համակարգման և հավաստման հորիզոնական մեխանիզմով, որի ընդհանուր պաշտոնական համակարգում իրականացվում է Շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ) կողմից: Այնուամենայնիվ, դեռևս կա իրավական/պաշտոնական մեխանիզմների անհրաժեշտությունը՝ կլիմայի հետ կապված տվյալների տրամադրման և որակի ապահովման առումով համապատասխան գերատեսչությունների պարտավորությունները հստակեցնելու համար: Նման մեխանիզմները կհստակեցվեն արդեն իսկ նախաձեռնված «Կարողությունների զարգացման նախաձեռնություն թափանցիկության համար» (CBIT) ծրագրի շրջանակներում հիմնվելով ԵԱԶ-ների մշակման արդյունքում ձեռք բերված փորձի և քաղված դասերի վրա և Կիճակագրական կոմիտեի հետ խորհրդակցությունների արդյունքում, որը հանդիսանում է տվյալների հիմնական մատակարարը ԿՓՄԻՄ-ով նախատեսված ոլորտների ջերմոցային գազերի արտանետումների գնահատման համար պահանջվող գործողությունների վերաբերյալ և, հետևաբար, առանցքային դեր ունի ՋԳ կադաստրի ներքին ՉՀՀ համակարգում:

Ի վերջո, արդյունավետ ՉՀՀ շրջանակ կառուցելու առումով ոչ պակաս կարևոր է կլիմայի հետ կապված մեղմման և հարմարվողականության միջոցառումների մշակման/իրականացման համար ստացված ազգային և միջազգային ֆինանսական աջակցության համակարգի ձևավորումը, որն ընդգրկում է հաշվետվողականության բոլոր չորս հիմնական ոլորտները (այսինքն՝ կադաստր, մեղմում, հարմարվողականություն և աջակցություն):

1.2. ՉՀՀ-ի կարիքները ազգային և միջազգային հաշվետվողականության պահանջների համար

ԶԳ արտանետումների կրճատման քանակական գնահատումը ՉՀՀ-ի համընդգրկուն շրջանակի միջոցով նախապայման է ածխածնային ակտիվների գնորոշման և ածխածնի շուկաներում մասնակցության համար: Այն նաև ունի ածխածնի գնագոյացման գործիքների օժանդակումից զատ նաև այլ, առանձին առավելություններ, ինչպիսիք են հաշվետվայնությունը և ԱՍԳ նպատակների իրագործման առաջընթացի արձանագրումը: Հայաստանը գիտակցում է արտանետումների և արտանետումների նվազեցման առումով երկրում առկա մոնիտորինգի և հաշվետվության համակարգերի առկա բարդությունները և դրանց տարանջատումը ապահովելու, ինչպես նաև ՉՀՀ ենթակառուցվածքների կառուցման անհրաժեշտությունը, որպեսզի հնարավոր լինի ապահովել արտանետումների և արտանետումների նվազեցման պատշաճ բնութագրերը ԱՍԳ-ի բոլոր հիմնական ոլորտներում՝ գյուղատնտեսություն, արդյունաբերություն և թափոնների կառավարում, ապահովել ԱՍԳ-ի ուղղությամբ առաջընթացի արձանագրման մոնիտորինգ և հաշվետվողականություն, ներդնել մեղմման և հարմարվողականության գործողությունների, ինչպես նաև կլիմայի ֆինանսավորման և աջակցության այլ մեխանիզմների գծով առաջընթացի արձանագրման հարթակ:

Ինչ վերաբերում է ազգային պահանջներին, Հայաստանում ՉՀՀ շրջանակի հիմնական նպատակն է աջակցել կլիմայի փոփոխության ՉՀՀ հարթակի (ԿՓ ՉՀՀ) ներդրմանը, որը իրենից կներկայացնի կլիմայի հարցերով թափանցիկության ազգային հարթակ, և որի միջոցով հնարավոր կլինի հետևել կլիմայի քաղաքականությանը և ԱՍԳ-ների առաջընթացին:

Ինչ վերաբերում է միջազգային պահանջներին, մինչև Փարիզի համաձայնագիրը, զարգացող երկրների համար ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ի ներքո հաշվետվությունները ներառում էին երկու հիմնական բաղադրիչ՝ ազգային հաղորդագրություն (ԱՀ) և երկամյա առաջընթացի զեկույցներ (BUR, ԵԱԶ): Վերջիններս ներդրվել են 2010 թվականին և նախատեսված էին զարգացող երկրների կողմից ներկայացվող հաշվետվությունների պարբերականությունը ավելացնելու համար: Հավելված I-ում չընդգրկված Կողմերը պետք է ներկայացնեին իրենց առաջին ԵԱԶ-ը մինչև 2014 թվականի դեկտեմբեր, իսկ այնուհետև՝ յուրաքանչյուր երկու տարին մեկ: Իրականում, սակայն, շատ երկրներ միայն վերջերս են ներկայացրել իրենց առաջին ԵԱԶ-ը, և մինչ այժմ միայն 6 երկիր է ներկայացրել բոլոր 4 ԵԱԶ-ները, որոնք պետք է ներկայացվեին մինչև ընթացիկ ամսաթվի դրությամբ: Հայաստանն իր առաջին ԵԱԶ-ը ներկայացրել է 2016թ. ապրիլին և մեկն է այն 18 երկրներից, որոնք ներկայացրել են իրենց երրորդ ԵԱԶ-ը՝ 2021 թվականի մայիսին: Մեղմման գործողությունների և դրանց ազդեցությունների թափանցիկությունը բարձրացնելու նպատակով ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ի հովանու ներքո ստեղծվել է միջազգային խորհրդատվության և վերլուծության (ICA) գործընթացը: ICA գործընթացը բաղկացած է երկու քայլից, որոնք սկսվում են ԵԱԶ-ների ներկայացմամբ. (i) ԵԱԶ-ի տեխնիկական վերլուծություն փորձագետների թիմի կողմից (SSՓ, TTE) և (ii) օժանդակող հիմունքով տեսակետների փոխանակում SBI-ի (ՍՄՆ) ներքո կազմակերպված աշխատաժողովի միջոցով: Հայաստանն արդեն մասնակցել է ԵԱԶ-երի տեխնիկական վերլուծության երեք փուլերին:

Թեև ԱՀ-ների ներկայացման պաշտոնական պահանջը սահմանված է քառամյա պարբերականությամբ, գործնականում շատ երկրներ դրանք ներկայացնում են ավելի պակաս պարբերականությամբ: Հայաստանի առաջին Ազգային Հաղորդագրությունը

CARBON LIMITS

հրապարակվել է 1998 թվականին, որին հաջորդել է Երկրորդ ազգային հաղորդագրությունը ավելի քան տաս տարի անց (2010թ.): Երրորդ ազգային հաղորդագրությունը հրապարակվել է 2015 թվականին, իսկ չորրորդ ազգային հաղորդագրությունը ներկայացվել է 2020 թվականին (ԱՅ4): Փարիզի համաձայնագրից հետո բոլոր զարգացող երկրներից ակնկալվում է Ազգային կադաստրի հաշվետվությունների (ԱԿՅ), ինչպես նաև երկամյա թափանցիկության զեկույցների (ԵԹԶ) ներկայացում: Ինչպես ցույց է տրված Գծապատկեր 1-ում, ԵԱԶ-ը ներառում է ՋԳ ազգային կադաստրի, մեղմման գործողությունների և դրանց ազդեցությունների, ինչպես նաև ստացված ֆինանսական, տեխնիկական և կարողությունների զարգացման վերաբերյալ հաշվետվություններ: Այս գծապատկերից նաև ակնհայտ է դառնում, որ ԱԿՅ-ներում և ԵԹԶ-ներում հաշվետվության պահանջների արդյունքում ի հայտ են գալիս ՉՀՀ պահանջներ, որոնց շրջանակը գերազանցում է ԱՅ-ների և ԵԱԶ-ների համար անհրաժեշտ պահանջների շրջանակը:

	Ներկայիս ՄԱԿ ԿՓՇԿ	Փարիզի համաձայնագիր	
ԵԱԶ (2 տ.)	<ul style="list-style-type: none"> Անհրաժեշտ/ստացված աջակցություն Մեղմման գործողություններ ՋԳ կադաստր ՉՀՀ Հարմարվողականության գործողություններ 	<ul style="list-style-type: none"> ՋԳ կադաստր Մեղմման գործողություններ Արտանետումների կանխատեսումներ ԱՍԳ առաջընթաց 	ԱԿՅ (2 տարի)
ԱՅ (4 տարի)	<ul style="list-style-type: none"> Այլ (տեխնոլոգիաների փոխանցում, կարողությունների զարգացում և այլն) 	<ul style="list-style-type: none"> Ներքին ՉՀՀ Անհրաժեշտ/ստացված աջակցություն [Հարմարվողականության գործողություններ] 	ԵԹԶ (2 տարի)

Գծապատկեր2 ՄԱԿԿՓՇԿ-ի ներքո ներկայացվող հաշվետվություններ՝ Փարիզի համաձայնագրի ներքո ներկայացվող հաշվետվությունների համեմատ

Ծանոթագրություն. ԵԱԶ. Երկամյա թափանցիկության զեկույց. ԱՅ. Ազգային հաղորդագրություն; ԱԿՅ. Ազգային Կադաստրի Հաշվետվություն. ԵԹԶ. Երկամյա Թափանցիկության Ջեկույց; Թավատեսումները տեքստը ցույց է տալիս Փարիզի համաձայնագրի ներքո նոր պահանջները. Զառակուսի փակագծերում ներառված տեղեկատվությունը պարտադիր բնույթի չէ:

Ինչպես ցույց է տրված Աղյուսակ 1-ում, ԵԹԶ բաժիններից յուրաքանչյուրն ունի ՉՀՀ-ի կոնկրետ պահանջներ, որոնք ազդեցություն կունենան Հայաստանի ինտեգրված ՉՀՀ շրջանակի և նպատակների վրա:

Աղյուսակ 1 Երկամյա թափանցիկության զեկույցների հետ կապված ՉՀՀ պահանջները բոլոր երկրների համար

ԵԹ2 բաժին	ՉՀՀ պահանջներ	Մեկնաբանություններ Հայաստանի համար
ԶԳ կադաստր	Նույնը, ինչ ներկայիս ԶԳ կադաստրը՝ 2006թ. ԿՓՓՄԽ ուղեցույցներով և հետևողական ժամանակային շարքերով	Հայաստանը արդիականացրել է ԶԳ կադաստրը (1990-2017թթ. շարքը) և այն ներկայացվել է ԵԱՉ3-ի միջոցով:
Արտանետումների կանխատեսումներ	ՉՀՀ-ն կիրառելի չէ արտանետումների կանխատեսումների համար, քանի որ դրանք արտանետումների ապագա կանխատեսումներ են, որոնք հնարավոր չէ մոնիտորինգի ենթարկել, այլ հնարավոր է միայն մոդելավորել, սակայն արտանետումների կանխատեսումները պետք է հիմնված լինեն ջերմոցային գազերի կադաստրի վրա (տես վերևում):	Պետք է համապատասխանեցնել ԶԳ և ԱՍԳ կադաստրի ոլորտները՝ արտանետումների ելակետային կանխատեսումները և պարբերական հիմունքով թարմացումները մշակելու համար: Հայաստանն արդեն ներկայացրել է ջերմոցային գազերի արտանետումների կանխատեսումներ իր ԵԱՉ-ներում՝ օգտագործելով LEAP-Armenia ծրագրաշարը: Այս գործելակերպը պետք է փոխադրվի նաև ԵԹ2 պատրաստման գործընթաց
ԱՍԳ առաջընթաց (ցուցանիշներ, հաշվառում)	Ընտրված ցուցանիշների ՉՀՀ՝ ԱՍԳ թիրախների հետ կապակցմամբ, այդ ցուցանիշների հղումային ելակետերի հետ միասին	ԱՍԳ-ի թիրախներն իրենցից ներկայացնում են արտանետումների կրճատումներ՝ բնականոն գործունեության՝ BAU համեմատ, ըստ ոլորտների, ուստի ՉՀՀ-ի համար պահանջվում է

ունենալ մեթոդաբանություններ՝ այս ոլորտներում արտանետումների ելակետային հետազոծերի ձևավորման համար: Բնականոն գործունեության վրա քաղաքականության ազդեցությունների արտացոլումը կարող է հատկապես ինդրահարույց լինել

Մեղման գործողություններ

ՋԳ-ի ազդեցությունները, ծախսերը և բոլոր գործողությունների մեղման օգուտները, որոնք նպաստում են ԱՍԳ-ի իրականացմանը

Հայաստանը բացահայտել է մի շարք մեղման միջոցառումներ, որոնք ներկայացված են ԵԱԶ3-ի Աղյուսակ 3.1-ում, որոնցից մի քանիսը շարունակական բնույթ ունեն: Այս միջոցառումների համար սահմանվել են համակարգման, աջակցության և ֆինանսավորման ասպեկտներ՝ ի լրումն CO₂ հոմ. -ի մեղման ներուժի՝ արտահայտված Գգ-ով:

[Անհրաժեշտ և ստացված աջակցություն]	Ստացված ուղղությամբ ֆինանսավորման մոնիտորինգ	կլիմայի	Պարտադիր անհրաժեշտ և կառավարության որոշում չէ. Ե Ներառված լինելու դեպքում անհրաժեշտ է սահմանել կլիմայի ուղղությամբ ֆինանսավորում հասկացությունը և ստացված կլիմայի ֆինանսավորմանը հետևող պատասխանատու գերատեսչությունը:
---	--	---------	--

[Հարմարվողականության գործողություններ]	Կոնկրետ հարմարվողականության ուղղությամբ մոնիտորինգի գնահատման պահանջներ	Պարտադիր կառավարության որոշումն անհրաժեշտ է.
---	---	--

Ծանոթագրություն. Աջակցության և հարմարվողականության գործողությունների վերաբերյալ հաշվետվությունը պարտադիր չէ զարգացող երկրների համար:

ՉՀՀ համակարգի կարիքները տվյալ ծանուցման պահանջի կամ քաղաքականության նպատակի համար կարող են սահմանվել հետևյալ տիրույթներում.

- Ի՞նչ. սա մշտադիտարկման ենթակա ոլորտների, գործողությունների և ջերմոցային գազերի տեսակների ամբողջությունն է:
- Ո՞վ. Սա ներառում է հիմնական շահագրգիռ կողմերի դերերն ու պարտականությունները, որոնք ոչ միայն պատասխանատու են տարբեր մակարդակների տվյալների հավաքագրման համար, այլ պատասխանատու են նաև որակի վերահսկման, տվյալների համախմբման, տվյալների բազայի կառավարման, հաշվետվությունների և քաղաքականության մշակման համար:
- Ինչպե՞ս. Սա վերաբերում է արտանետումները և արտանետումների կրճատումները հաշվարկելու և/կամ չափելու նպատակով մեթոդաբանությունների, տվյալների աղբյուրների և ենթադրությունների (ներառյալ ելակետային ենթադրությունները) և որակի վերահսկման ընթացակարգերի ընտրությանը:
- Ե՞րբ. Սա ներառում է ՉՀՀ-ի գործունեության վերջնաժամկետներ և ուղեկիշային ամսաթվեր, ներառյալ հաշվետվության ժամկետները:

Աղյուսակ2 ավելի կոնկրետ բացատրում է ազգային ՉՀՀ համակարգին ներկայացվող հիմնական պահանջները՝ կապված հիմնական պահանջների և հաշվետվողականության նպատակների հետ, մասնավորապես՝ i) Ազգային կադաստրի հաշվետվություն, ii) ԵԹ2. ԱՍԳ-ի առաջընթացի ցուցանիշները, iii) ԵԹ2. Մեղմման գործողություններ և iv) Անհրաժեշտ և ստացված աջակցություն.

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Փարիզի համաձայնագրի Թափանցիկության շրջանակը «*Չարգացող երկիր հանդիսացող Կողմերին, որոնք ճկուն մոտեցման կարիք ունեն՝ հաշվի առնելով իրենց կարողությունները*», թույլ է տալիս պահանջել ճկուն մոտեցում: Այս երկրները «*հստակորեն պետք է նշեն այն դրույթը, որի վրա կիրառվում է ճկուն մոտեցումը, հակիրճ կերպով պարզաբանեն կարողությունների սահմանափակումները՝ նշելով, որ որոշ սահմանափակումներ կարող են տարածելի լինել տարբեր դրույթների վրա և սահմանեն իրենց կողմից որոշված գնահատված ժամկետներ՝ այդ կարողությունների սահմանափակումների բարելավման ուղղությամբ*»: Ստորև բերված նկարագրություններում պահանջվող ճկուն մոտեցումը ցուցադրվում է փակագծերում (օրինակ՝ «3 [4] տարի» նշանակում է, որ պահանջը երեք տարի է, սակայն զարգացող երկրները կարող են պահանջել ճկուն մոտեցում և որպես նորմ ընդունել չորս տարին):

Աղյուսակ2 Տարբեր տեսակի հաշվետվությունների գծով պահանջներ

<p>Ազգային կադաստրի հաշվետվություն</p>	<p>Ի՞նչ՝ ՋԳ ոլորտներ, գործողություններ և ՋԳ տեսակներ.</p> <ul style="list-style-type: none"> • ՋԳ կադաստրի բոլոր ստանդարտ կատեգորիաները (ինչպես Չորրորդ ազգային հաղորդագրության մեջ) - «հիմնական կատեգորիաներ» [1], որոնք նպաստում են ՋԳ ազգային կադաստրի 95%-ին [85%-ին] • Երեք գազեր (CO_2, CH_4, N_2O), ևս չորս գազ (ՅՖԱ, ՊՖԱ, ՏՖ6, ՆՖ3) [չի պահանջվում, եթե պահանջվում է ճկուն մոտեցում], կամընտիր հաշվետվություններ պրեկուրսորների վերաբերյալ (CO, NO_x, ՈՄՑՈՄ) • Ոլորտներ՝ համաձայն ԿՓՓՄԽ ուղեցույցների՝ Էներգիա, արդյունաբերական գործընթացներ և արտադրանքի օգտագործում, գյուղատնտեսություն, ՀՕՀՕՓԱՏ և թափոններ: Միջազգային ավիացիայի և ծովային բունկերային վառելիքը որպես ծանոթագրության հոդված: • Ժամանակային շարքի հաշվետվություն 1990 թվականից ի վեր [2020թ.] • Վառելիքի և ցանցի արտանետումների գործակիցները <p>Ո՞վ՝ դերեր և պարտականություններ.</p> <ul style="list-style-type: none"> • Նշանակել ընդհանուր պատասխանատվություն կրող ազգային գերատեսչություն կամ համակարգող կենտրոն • Պարզաբանել կադաստրի պատրաստման գործընթացը, ներառյալ ներգրավված բոլոր կառույցների պարտականությունները: • Պարզաբանել կադաստրի պաշտոնական դիտարկման և հաստատման գործընթացը <p>Ինչպե՞ս՝ մեթոդաբանություններ, տվյալների աղբյուրներ և ենթադրություններ</p> <ul style="list-style-type: none"> • 2006թ. ԿՓՓՄԽ ուղեցույցներ՝ օգտագործելով առաջաբերվող մակարդակը հնարավորության դեպքում [պահանջել ճկուն մոտեցում ստորին մակարդակի համար] • Օգտագործել 100 տարվա GWP՝ բոլոր արժեքները CO_2 հա մ. - ի փոխարկելու համար (ի տարբերություն ԱՅ-ների և ԵԱՉ-ների) • Վերահաշվարկել նախորդ տարիների տվյալները, մեթոդաբանությունը Էականորեն փոփոխված լինելու դեպքում • Ընդհանուր հաշվետվությունների աղյուսակների (CRT) և ընդհանուր աղյուսակային ձևաչափերի (CTF) օգտագործում ԱԿՀ-ում տեղեկատվության էլեկտրոնային եղանակով ներկայացման համար <p>Ե՞րբ. վերջնաժամկետներ և հիմնական ուղենիշային ժամկետներ</p> <ul style="list-style-type: none"> • Չեկույցը պետք է ներառի հրապարակման ամսաթվից առաջ 2 [3] տարվա տվյալներ (օրինակ, 2024թ. հասվեա վոլյումը պետք է պարունակի 2022թ. [2021թ.] կադաստրի տվյալներ) • Պահանջվում է ներկայացնել յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ, առաջին ներկայացումը նախատեսվում է 2024 թվականին
--	---

<p>ԵԹՁ. ԱՍԳ-ի առաջընթացի ցուցանիշներ</p>	<p>Ի՞նչ՝ ՋԳ ոլորտներ, գործողություններ և ՋԳ տեսակներ.</p> <ul style="list-style-type: none"> • ԱՍԳ-ի հանձնառությունների նկարագրությունը. թիրախային ցուցանիշ (օրինակ՝ արտանետումներ, արտանետումների կրճատումներ, արտանետումների ինտենսիվություն), թիրախային տարի և ժամանակաշրջան (մեկամյա կամ բազմամյա), ուղենիշ (մակարդակ, բազային տարի, ուղենիշեր), կիրառման ժամկետ, շրջանակ/ծածկույթ (ոլորտներ, կատեգորիաներ, գործողություններ, աղբյուրներ, կլանիչներ, գազեր) • Առաջընթաց ԱՍԳ ցուցանիշների ուղղությամբ. ընտրված ոլորտներ, գործողություններ և ցուցանիշներ ըստ երկրների (օր. ՋԳ արտանետումներ, արտանետումների կրճատումներ, արտանետումների ինտենսիվություն, այլ ոչ ՋԳ թիրախներ). ցուցանիշի հղումային մակարդակը (մակարդակը, տարին) և ցուցանիշի վերաբերյալ առավել արդիական տեղեկատվությունը՝ համեմատած ԱՍԳ-ի հանձնառության հետ. հանձնառության ժամկետի վերջում, եթե ցուցանիշը համահունչ է ԱՍԳ-ի թիրախին. և ցուցանիշների ճշգրտումներ 6-րդ հոդվածի փոխանցումների համապատասխան ճշգրտումների հիման վրա • Այն նաև ներառում է համապատասխան ազգային պայմանների վերաբերյալ տեղեկատվության ներկայացման պարտավորություն (օրինակ՝ կառավարության կառուցվածքը, բնակչությունը, աշխարհագրությունը, տնտեսությունը, կլիման և ոլորտային բնութագրերը), քանի որ դրանք ազդում են ՋԳ արտանետումների և կլանումների վրա: <p>Ո՞վ՝ դերեր և պարտականություններ.</p> <ul style="list-style-type: none"> • Այն պետք է ներառի ՍԱԳ-ի առաջընթացի համար ՉՀՀ-ի ինստիտուցիոնալ մեխանիզմների նկարագրությունը • Այն պետք է ներառի իրավական, ինստիտուցիոնալ, վարչական և ընթացակարգային դրույթների նկարագրությունը ներքին իրականացման համար, ՉՀՀ-ն և ԱՍԳ-ի իրականացման ընթացքում շահագրգիռ կողմերի մասնակցությունը: <p>Ինչպե՞ս՝ մեթոդաբանություններ, տվյալների աղբյուրներ և ենթադրություններ</p> <ul style="list-style-type: none"> • ԱՍԳ նկարագրությունը. Չկան հատուկ պահանջներ, սակայն անհրաժեշտության դեպքում պետք է ներկայացվեն նախորդ հաշվետվությունների տեղեկատվության թարմացումներ • ԱՍԳ ցուցանիշների առաջընթաց. Բացատրեք ելակետի սահմանման և փաստացի կատարողական արդյունքի հաշվարկման մեթոդաբանությունը և/կամ հաշվապահական հաշվառման մոտեցումը, ներառյալ հիմնական պարամետրերը, ենթադրությունները, սահմանումները, տվյալների աղբյուրները (համապատասխան ԿՓՓՄԽ-ի ուղեցույցներին) և մոդելները, օգտագործված կոնկրետ ԿՓՓՄԽ ուղեցույցները, օգտագործված չափման միավորները, քաղաքականության և միջոցառումների ազդեցության գնահատման մեթոդաբանությունները. և 6-րդ հոդվածի համագործակցային մոտեցումների հետ կապված մեթոդաբանությունները.
--	---

	<p>հիմնավորել ցուցանիշների ներկայացման հետևողական մոտեցումը ԱՍԳ-ի համեմատ, և կրկնակի ստուգումից խուսափելու եղանակները:</p> <p>Ե՞րբ. վերջնաժամկետներ և հիմնական ուղենիշային ժամկետներ</p> <ul style="list-style-type: none"> • ԵԹՁ-ի ներկայացումը պարտադիր է երկամյա պարբերականությամբ՝ սկսած 2024 թվականից
<p>ԵԹՁ. Մեղման գործողություններ</p>	<p>Ի՞նչ՝ ՋԳ ոլորտներ, գործողություններ և ՋԳ տեսակներ.</p> <ul style="list-style-type: none"> • Պետք է ներկայացվեն այն գործողությունները, քաղաքականությունները և միջոցառումները, որոնք նպաստում են ԱՍԳ-ի իրագործմանը՝ դասակարգված ըստ ԿՓՓՄԽ ոլորտների և կենտրոնանալով արտանետումների վրա ամենամեծ ազդեցություն ունեցող միջոցառումների վրա: • Յուրաքանչյուր գործողության, քաղաքականության և միջոցառման համար անհրաժեշտ է ներկայացնել դրա նկարագրությունը, նպատակները, իրավական ակտի տեսակը, կարգավիճակը, ոլորտը և ազդակիր գազերը, մեկնարկային տարին, կատարող կառույցը. խրախուսվում է ներկայացնել ծախսերը, ջերմոցային գազերի հետ չառնչվող մեղման օգուտները և գործողությունների միջև փոխազդեցությունը, ինչպես նաև գործողությունների ազդեցությունը ՋԳ արտանետումների և կլանումների ավելի երկարաժամկետ միտումների վրա: • Եթե ճկուն մոտեցման պահանջը չի կիրառվում, անհրաժեշտ է պարտադիր ներկայացնել արտանետումների ակնկալվող և ձեռք բերված կրճատումների գնահատումները <p>Ո՞վ՝ դերեր և պարտականություններ.</p> <ul style="list-style-type: none"> • Հատուկ պահանջներ չկան <p>Ինչպե՞ս՝ մեթոդաբանություններ, տվյալների աղբյուրներ և ենթադրություններ</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայացնել մեթոդաբանությունները և ենթադրությունները, որոնք օգտագործվում են յուրաքանչյուր գործողության, քաղաքականության կամ միջոցառման գծով ՋԳ արտանետումների կրճատման կամ կլանումների գնահատման համար (կոնկրետ ուղեցույցներ չկան) <p>Ե՞րբ. վերջնաժամկետներ և հիմնական ուղենիշային ժամկետներ</p> <ul style="list-style-type: none"> • ԵԹՁ-ի ներկայացումը պարտադիր է երկամյա պարբերականությամբ՝ սկսած 2024 թվականից <p>Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ԵԹՁ-ը ներառում է նաև ՋԳ արտանետումների և կլանումների ամփոփման և ՋԳ արտանետումների և կլանումների կանխատեսումների ներկայացման համար նախատեսված բաժիններ:</p>

<p>Անհրաժեշտ և ստացված աջակցություն</p>	<p>Ի՞նչ - ֆինանսական, տեխնոլոգիաների փոխանցման և կարողությունների զարգացման գծով անհրաժեշտ և ստացված աջակցություն: Այն կարող է ներառել.</p> <ul style="list-style-type: none"> • ազգային պետական և մասնավոր (ֆինանսական) կազմակերպություններ • երկկողմ և բազմակողմ զարգացման ֆինանսական կազմակերպություններ <p>Ո՞վ՝ դերեր և պարտականություններ.</p> <ul style="list-style-type: none"> • Հատուկ պահանջներ չկան <p>Ինչպե՞ս</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայումս ուղեցույցներ չկան այն մասին, թե ինչպես պետք է ներկայացնել անհրաժեշտ աջակցությունը, սակայն տարբեր գերատեսչություններ մշակել են տարբեր մոտեցումներ՝ կլիմայի ուղղությամբ հանրային ֆինանսավորման քանակային ներկայացման համար, այդ թվում՝ <ul style="list-style-type: none"> - ՏՀԶԿ-ի Չարգացման Աջակցության Կոմիտեի Դոկորների Հաշվետվության Տվյալների Բազա - «Կլիմայական ուղղությամբ ֆինանսավորման մոնիտորինգի ընդհանուր սկզբունքներ»՝ մշակված MDB-IDFC-ի կողմից - ՄԱԶԾ-ի կլիմայական ուղղությամբ ֆինանսավորման տարբեր գործիքներ, ներառյալ «Կլիմայական ուղղությամբ հանրային ծախսերի և ինստիտուցիոնալ դիտարկումներ (CPEIR) և «Կլիմայական բյուջեի պիտակավորում» <p>Ե՞րբ. վերջնաժամկետներ և հիմնական ուղենիշային ժամկետներ</p> <ul style="list-style-type: none"> • Երկամյա պարբերականությամբ՝ ԵԱԶ-ի և ԵԹԶ-ի հետ (սկսած 2024թ. -ից)
---	---

Հարկ է նաև նշել, որ ՉՀՀ համակարգը կծառայի նաև տարբեր նպատակների՝ ի լրումն ազգային կամ միջազգային հաշվետվողականության պահանջների ապահովմանն օժանդակելը: Համակարգը կծառայի որպես հաստատված հաշվարկային գործակիցների տվյալների բազա, ինչպիսիք են վառելիքի արտանետումների գործակիցները և ազգային/տարածաշրջանային ցանցերից արտանետումների գործակիցները: Համակարգը կարող է նաև օժանդակել մեղմման գործողությունների համատեղ օգուտների մոնիտորինգի և հաշվետվողականության գործողություններին, ինչպիսիք են՝ ստեղծված աշխատատեղերը, առողջապահական օգուտները, սոցիալ-տնտեսական օգուտները և բնապահպանական օգուտները (օրինակ՝ օդի աղտոտիչների նվազեցումը): Համակարգը կարող է օգտվողին հնարավորություն տա մուտքագրելու այս տեղեկատվությունը՝ առկայության դեպքում, և այն հետագայում ընդլայնել կամ արդիականացնել, եթե առկա են ազգային կամ միջազգային մակարդակով համապատասխան մեթոդաբանություններ և արձանագրություններ:

Նախորդ բաժինները նկարագրում են առկա կամ առաջարկվող ազգային և միջազգային մոնիտորինգի և հաշվետվողականության պահանջները, որոնք հնարավոր կլինի

իրագործել ազգային ՉՀՀ համակարգի միջոցով: Այնուամենայնիվ, համակարգը պետք է ճկուն լինի և հնարավոր լինի կատարել տվյալների արդիականացում/ընդլայնում՝ ՋԳ արտանետումների վերաբերյալ հաշվետվությունների հետագա կարիքների համար: Այս հաշվետվողական կարիքները կարող են առնչվել, օրինակ, ածխածնի գնագոյացման գործիքներին, ինչպիսիք են ածխածնի հարկը կամ արտանետումների առևտրային փոխանակման համակարգերը:


1.3. Նպատակը և մոտեցումը

Հայաստանի իրավասու գերատեսչություններին ՉՀՀ համակարգի կառուցվածքի զարգացման ուղղությամբ խորհրդատվություն տրամադրելու նպատակով՝ հաշվի առնելով ներկա համատեքստը և երկրի կարիքները, այս ծրագրի նպատակներն են.

- 1) ՉՀՀ ուղղությամբ ազգային կառույցների հզորացում և թափանցիկության գործողությունների համապատասխանեցում երկրի առաջնահերթությունների հետ.
- 2) Ապահովել, որ կազմակերպությունները և անհատները ստացել են անհրաժեշտ վերապատրաստում և ունեն անհրաժեշտ գործիքներ՝ ՉՀՀ գործունեությունն իրականացնելու համար. և
- 3) Տվյալների հավաքագրման, վերլուծության և հաշվետվությունների ներկայացման գործընթացի անցում ծրագրահենք ցիկլից դեպի շարունակական գործընթացի:

Կիրառված մոտեցումը իրենից ներկայացնում էր կարգավորող դաշտի վերլուծություն (առկա իրավական դաշտի գրասենյակային ուսումնասիրություն), ՉՀՀ-ում ներգրավված համապատասխան դերակատարների, ինչպես նաև հանձնաժողովների գործառույթների և ներկայումս գործող այլ համակարգերի հետ ԿՓՉՀՀ-ի հնարավոր կապերի ուսումնասիրություն: Այնուհետև, որոշվել են ՉՀՀ համակարգի բարեհաջող գործադրման համար անհրաժեշտ բաղադրիչները՝ ելնելով ազգային կարիքներից, և իրականացվել է համակարգի մուտքային և ելքային տեղեկատվության ինստիտուցիոնալ և տվյալային քարտեզագրում, որտեղ ցուցադրված են ինչպես տեղեկատվության տեսակները, այնպես էլ դրանց հոսքը ներգրավված տարբեր գերատեսչությունների միջև (տես Գծապատկեր 3):

Գծապատկեր3 Ծրագրի կարիքների բավարարման ուղղությամբ կիրառվող ընդհանուր մոտեցում




1.3.1. Կարգավորող շրջանակի վերլուծություն

Այս առաջադրանքը նպատակ ուներ բացահայտել երկարաժամկետ հեռանկարում արդյունավետ ՉՀՀ համակարգի ներդրման խոչընդոտները և կարիքները, հիմնավորել

միջազգային պարտավորություններից և ազգային քաղաքականությունից սկզբնավորվելու և այնուհետև՝ տվյալների հավաքագրման և կառավարման, ՋԳ հաշվետվությունների և ՈԱ/ՈՎ գործողություններում, ինչպես նաև ԿՓԶՀ հարթակի հետ հնարավոր կապեր ունեցող առկա համակարգերում ներգրավված մասնակիցներին անդրադառնալու անհրաժեշտությունը:

Գծապատկեր4 Հանրային քաղաքականության գործիքները, որոնք պետք է վերլուծվեն Հայաստանի համատեքստում



Սույն հաշվետվության 2-րդ բաժինը ներկայացնում է Հայաստանում կարգավորող դաշտի վերլուծության ուսումնասիրության արդյունքները:

1.3.2. Համապատասխան շահագրգիռ կողմերի նույնականացում

Կատարվել է համապատասխան մասնակիցների վերլուծություն՝ ներառյալ հիմնական գերատեսչությունների, հաստատությունների և ինստիտուցիոնալ մեխանիզմների սահմանում, որոնք դեր են խաղում ազգային ՉՀՀ համակարգի գործարկման աշխատանքներում՝ հաշվի առնելով ՋԳ կադաստրը, ընթացիկ և պլանավորված մեղմման և հարմարվողականության գործողությունները, ինչպես նաև օժանդակության կարիքները:

Բացի այդ, համապատասխան կարգավորող և պլանավորման իրավական ակտերի գրասենյակային ուսումնասիրությունից հետո անցկացվել է շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցություն՝ նպատակ ունենալով հիմնական շահագրգիռ կողմերից անմիջականորեն տեղեկատվություն ստանալու տվյալների հավաքագրման և որակի վերահսկման գործընթացներում առկա խոչընդոտների, տարբեր գերատեսչությունների միջև տեղեկատվության հոսքերի, ինչպես նաև այն կարիքների վերաբերյալ, որոնք, իրենց տեսանկյունից, պետք է կարողանա ապահովել ԿՓԶՀ հարթակը: Հիմնական օւ հ ա գր գ ի ու կ ող մ եր ի հ ե տ ա յս ի ու ի հ ղ ա կ ց ու թ յ ու ն ը ա ե ղ ի է ու ն ե ց ե լ 2021թ . ն ո յ ե մ ք եր ի ն , և նրանց կողմից տրամադրած տեղեկատվությունն օգնել է խորհրդատվական թիմին առաջարկություններ մշակել համընդգրկուն ՉՀՀ համակարգի նախագծման ուղղությամբ, որը հնարավորություն կտա բավարարելու վերհանված կարիքները:

Կարգավորող և պլանավորման իրավական ակտերի հանրամատչելի փաստաթղթերի ուսումնասիրությամբ, ինչպես նաև շահագրգիռ կողմերի խորհրդակցությունների արդյունքներով, բացահայտվել են ազգային ՉՀՀ համակարգի ներդրման հայեցակարգային և գործառնական խոչընդոտները, որոնց հետ միասին ներկայացվել են բարելավման մանրամասն առաջարկություններ՝ հիմնված միջազգային պահանջների, ազգային քաղաքականության, համաշխարհային լավագույն փորձի և գործելակերպերի վրա: Այս առաջարկությունները ներկայացված են սույն հաշվետվության 6-րդ գլխում և ներառում են անհրաժեշտ քայլերը՝ ոլորտային գործընթացների հետ ազգային ՉՀՀ համակարգի ինտեգրումն ու համապատասխանեցումը ապահովելու և առաջնային տվյալների հավաքագրումն իրագործելու ուղղությամբ:

Աղյուսակ 3 ներկայացնում է իրավական ակտերը, տեխնիկական հաշվետվությունները, գերատեսչությունները, հանձնաժողովները և համակարգերը, որոնք հաշվի են առնվել սույն վերլուծության նպատակների համար: Այնուամենայնիվ, գործնական նպատակահարմարությունից ելնելով՝ այս իրավական ակտերի ուսումնասիրության ամփոփումը ներկայացված է Հավելված 1-ում:

Աղյուսակ 3 Վերլուծության համար դիտարկված քաղաքականության գործիքները, դերակատարները և համակարգերը

<p>Քաղաքականության գործիքներ և հաշվետվություններ</p>	<p>ԱՍԳ-ն և դրա իրականացման պլանը 3-րդ ԵԱՁ Քաղաքապետերի դաշնագիր Կառավարության 2017 – 2022թթ. ծրագիր Չորրորդ ազգային հաղորդագրություն (ԱՀ4) Մթնոլորտային օդի պաշտպանության մասին օրենք «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» օրենք. «Թափոնների մասին» օրենքը և կադաստրերի վերաբերյալ կանոնակարգերը Վիճակագրության մասին օրենք Կառավարության N49-8 որոշումը «Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումներ» 955-Ա որոշում ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» Շրջանակային կոնվենցիայի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդի կազմը և աշխատակարգը հաստատելու մասին</p>
---	--

	<p>Կլիմայի փոփոխության ազդեցության նկատմամբ հարմարվողականության 2021-2030 թթ. ազգային շրջանակային ռազմավարություն</p> <p>Անտառային կադաստրի ազգային ռազմավարություն</p> <p>Անտառային ածխածնի պաշարների չափման ուղեցույցներ</p> <p>Կլիմայի փոփոխության մեղմացման նպատակների իրագործման ուղղությամբ ՀՕՉՕՓԱՏ ներուժի գնահատում</p> <p>Ազգային էներգետիկ հաշվեկշիռ, 2021թ.</p> <p>Հողի հաշվեկշիռ, Կառավարություն Որոշում – N1732-Ն 21.10.2021թ.</p> <p>ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (CEPA) իրականացման ճանապարհային քարտեզ</p> <p>Կլիմայի փոփոխության հետ կապված վիճակագրության զարգացման ճանապարհային քարտեզ</p>
<p>Պետական կառույցներ</p>	<p>Շրջակա միջավայրի նախարարություն</p> <p>Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</p> <p>Ֆինանսների նախարարություն</p> <p>Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Պետական եկամուտների կոմիտե</p> <p>Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով</p>
<p>Կոմիտեներ</p>	<p>Միջգերատեսչական համակարգող խորհուրդ</p> <p>Վիճակագրական կոմիտե</p>
<p>Համակարգեր</p>	<p>Էներգետիկ հաշվեկշիռ</p> <p>CEPA հաշվետվություն</p> <p>Ազգային վիճակագրական համակարգ</p>

Այս հաշվետվության 3-րդ բաժինը ներկայացնում է ինստիտուցիոնալ պայմանների առաջին անգամ կատարված քարտեզագրում՝ ԿՓՀՀՀ հարթակի նախագծմանն օժանդակելու նպատակով:

1.3.3. ՀՀՀ բաղադրիչների նույնականացում

Հիմք ընդունելով Հայաստանի կողմից կիրառվող կարգավորող և պլանավորման իրավական ակտերի ուսումնասիրությունը, ինչպես նաև կլիմայի փոփոխության վերաբերյալ երկրի ներկայացրած միջազգային զեկույցները/հաշվետվությունները

(այսինքն՝ ԵԱԶ3, ԱՅեր), բացահայտվել են ազգային ՉՀՀ համակարգի գծով առկա կարիքները, և համակարգի կազմաձևը առաջարկվել է Գլուխ 4-ում, որը պետք է քննարկվի և հետադարձ կապ ստացվի ՄԱԶԾ-ի և Շրջակա միջավայրի նախարարության կողմից: Ի լրումն, ճշգրտվել է ՉՀՀ-ի կառուցվածքը, համաձայն շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների արդյունքների:

Հայաստանի կառավարությունը ծավալուն աշխատանք է կատարել ՉՀՀ ուղղությամբ կարողությունների զարգացման, ինչպես նաև գործընթացների և գործիքների ներդրման ուղղությամբ՝ որոնք ծառայում են տարբեր ոլորտներում իրականացվող աշխատանքների օժանդակմանը և ջանքերի կենտրոնացմանը: Այնուամենայնիվ, մինչ այժմ ՉՀՀ գործողությունները իրենցից ներկայացնում են ոչ լիակատար կառուցվածք ունեցող համակարգ, քանի որ այն կոնկրետ ջանքերի արդյունք է, և չի կառուցված մեկ ընդհանուր առանցքի շուրջ, ինչը թույլ կտար արդյունավետորեն օժանդակել խնդիրների ձևավորմանը, պարզեցմանը և կատարման ավտոմատացմանը:

Առայժմ ազգային ՉՀՀ-ի իրականացման ուղղությամբ կարելի է առանձնացնել հետևյալ ընթացքի մեջ գտնվող կամ կարճաժամկետ պլանավորված գործողությունները (ԵԱԶ3):

- Հայաստանում միջազգային ֆինանսավորմամբ իրականացվող մի քանի ծրագրերի շրջանակներում կոնկրետ ոլորտներում ներդրվել են ՉՀՀ համակարգի հիմնական տարրերը.
- Շինարարության ոլորտում մեղմման գործողությունների համար ՉՀՀ համակարգի ներդրում
 - Վերջնականացվել են և ԲԾԻԳ-ին են ներկայացվել հանրային շենքերում Էներգիայի կառավարման տեղեկատվական համակարգերը (EMIS, ԷԿՏՀ), ինչպես նաև Էներգախնայողության և ջերմոցային գազերի կրճատման հաշվարկի նպատակով մոնիտորինգի մեթոդաբանության հաշվետվությունը և հավաքագրված տվյալների հաշվարկի, նորմավորման և վավերացման մեթոդների մանրամասն համակարգը.
- Համայնքային Էներգետիկ կառավարման համակարգի (ՀԷԿՀ) ստեղծումը նախաձեռնված է որպես տեղական ՄՀՀ համակարգի մաս: Քաղաքային համայնքներից մեկի հետ արդեն պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀԷԿՀ-ի ներդրման վերաբերյալ.
- «2021-2030 թվականների Կլիմայի փոփոխությանը հարմարվողականության ազգային շրջանակային ռազմավարության և 2021-2025 թվականների գործողությունների ծրագրի հաստատում»,
- 27 հայկական համայնքների մասնակցությամբ ստեղծվել է մոնիտորինգի և հաշվետվության համակարգ մոնիցինգայալ մակարդակով ջերմոցային գազերի հաշվառման և կլիմայական գործողությունների համար 2՝ ԵՀ-ի «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և Էներգիայի» նախաձեռնության շրջանակներում:

Ի հավելումն վերը նշվածին, բացահայտվել են հետևյալ կարիքները, որոնք անհրաժեշտ է լուծել ՉՀՀ համակարգի ներդրման ուղղությամբ.

² 2021 թվականի հունվարի դրությամբ

- Տվյալների մատակարարների նույնականացում և մեղմման գործողությունների մշակման և իրականացման մեջ ներգրավված բազմաթիվ շահագրգիռ կողմերի դերերի և պարտականությունների հստակեցում:
- Վերլուծություն առ այն, թե ինչպես են այլ գոյություն ունեցող քաղաքականությունները կապակցվում կամ կենտրոնացվում համակարգում (օրինակ՝ համայնքների մոնիտորինգի հաշվետվությունների ներկառուցելիությունը ազգային ՉՀՀ-ում, հարմարվողականության գործողությունները, Զաղաքապետերի դաշնագրի գործողությունների ծրագրերը և այլն):
- Հարմարվողականության համար ՀԱԾ հաշվետվողականության, մոնիտորինգի և գնահատման (ՀՄԳ) գործընթացի ձևավորում:
 - ՀՄԳ համակարգի միջոցով կձևավորվեն հարմարվողականության գծով հաշվետվողականության գործընթացներ և մեխանիզմներ. կիրականացվի միջուրտային, ենթազգային և ոլորտային մակարդակներում հարմարվողականության գործընթացների համար միջոցառումների մշտադիտարկում և առաջընթացի արձանագրում. կխրախուսվի հետադարձ կապի հավաքագրումը՝ քաղաքականության և դրա կառավարման շարունակական բարելավմանը նպաստելու համար. և կգնահատվի միջամտությունների ազդեցությունը խոցելիության նվազեցման վրա.
- Աջակցություն. կլիմայի փոփոխության ծախսերի նույնականացման, պիտակավորման և հաշվարկման մեթոդաբանության, ձևաչափի և մեխանիզմի մշակում, ինչպես նաև կլիմայի փոփոխության հետ կապված ծախսերի նույնականացման, կոդավորման, գնահատման և հաշվետվայնության առումով ֆինանսների նախարարության դերի գնահատում և ընդլայնում:
 - Կարևոր է ուսումնասիրել քաղաքապետարանների, ոչ պետական կազմակերպությունների, մասնավոր հատվածի և դոնորների կողմից իրականացվող մեղմման և հարմարվողականության ուղղությամբ տրամադրված ֆինանսավորումն արձանագրելու հնարավորությունները՝ որպեսզի Հայաստանում կլիմայի հետ կապված ցանկացած ֆինանսավորման գործողություն հաշվի առնվի և արդյունքում ներկայացվի ՉՀՀ համակարգի շրջանակներում:
 - Կարևոր է գերծ մնալ ազգային ՉՀՀ համակարգում ստացված աջակցության գերազնահատումից:

Հարկ է նշել, որ Հայաստանում Կլիմայի գործողությունների բարելավման փաթեթի (CAEP) ծրագրի շրջանակներում մշակվել է «Ծրագրերի պորտֆելի համակարգ» (ԾՊՀ, PPS) գործիքը, որի նպատակն է՝ արձանագրել երկրում իրականացվող կլիմայի մեղմման և հարմարվողականության ծրագրերը, ինչը կօգնի պատկերացում կազմել առկա կարիքների վերաբերյալ՝ ունենալով արտանետումների նվազեցման և կլիմայի հարմարվողականության ծրագրերի և ֆինանսավորման պլանավորված և իրականացվող տվյալների բազա, տեղեկանալ ֆինանսավորում ստացած նախագծերի/ծրագրերի, ֆինանսավորման տեսակների (վարկ, սեփական կապիտալ և այլն) վերաբերյալ,

Ֆինանսավորման չափի և ներդրողների/դոնորների վերաբերյալ, ինչպես նաև հավաքագրել այլ անհրաժեշտ տեղեկություններ:

Սույն հաշվետվության 4-րդ բաժինը ներկայացնում է ՉՀՀ ազգային համակարգի հիմնական բաղադրիչների վերաբերյալ ընդհանուր կառուցվածքային պատկերացում, մասնավորապես՝ ՋԳ կադաստրի, մեղմման և հարմարվողականության գործողությունների և աջակցության ուղղություններով:

1.3.4. Տվյալների քարտեզագրում

Հաշվի առնելով կանոնակարգային դաշտի և պլանավորման իրավական ակտերի վերանայման անհրաժեշտության բացահայտումը, ինչպես նաև շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների հիման վրա կազմավորված ՉՀՀ համակարգի հայեցակարգը, ուսումնասիրվել են տվյալների տեսակներն ըստ բաղադրիչի՝ առանձնահատուկ ուշադրությամբ քարտեզագրելով այն տվյալները, որոնք անհրաժեշտ են որպես մուտքային/ելակետային տվյալներ (օրինակ՝ գործողությունների վերաբերյալ տվյալները և արտանետումների գործակիցները) և համակարգում որպես արդյունք ստացվող տվյալները (օրինակ՝ արտանետումներ): Վերոնշյալ գործողության արդյունքում պարզ դարձավ, թե որ կոնկրետ տվյալների ստացումն է դժվարություն ներկայացնում: Գլուխ 5-ում ներկայացված են առաջարկություններ գործիքների տեսակների և դրանց գործածության վերաբերյալ՝ նպատակ ունենալով պարզեցնել կադաստրի կազմման գործընթացները, բացահայտելով համոզուտ արդյունքները ինչպես տեղեկատվության մատակարարների, այնպես էլ այլ համակարգերի հետ (օրինակ՝ վիճակագրության ազգային համակարգ):

Տվյալների քարտեզագրումը ներկայացված է գծապատկերի տեսքով (Հավելված 2), որը ցույց է տալիս տվյալների տեսակը և հոսքերը տվյալների մատակարարի, ՉՀՀ համակարգի համակարգողի, ոլորտային փորձագետների և ՄԳՀԻ-ի միջև: Այն նաև իրենից ներկայացնում է ինստիտուցիոնալ մեխանիզմների քարտեզագրում, քանի որ կոնկրետ ցույց է տալիս կադաստրի կազմմանը մասնակցող և համակարգի բաղադրիչ հանդիսացող յուրաքանչյուր ոլորտի դերակատարներին:

1.3.5. Առաջարկություններ

Կանոնակարգային դաշտի, համապատասխան դերակատարների գործառնությունների և տեղեկատվության և տվյալների փոխանակման կարիքների վերլուծության հիման վրա մշակվել են ՉՀՀ առաջարկություններ համակարգի յուրաքանչյուր բաղադրիչի համար (այսինքն՝ ՋԳ կադաստր, մեղմման և հարմարվողականության գործողություններ, աջակցություն)՝ դրանց բարեհաջող իրականացումը ապահովելու նպատակով: Առյուսակ 4 ցույց է տալիս այն հարցերը, որոնք կդիտարկվեն որպես ելակետ՝ մի շարք առաջարկությունների տրամադրման համար:

Հարկ է նշել, որ վերլուծության արդյունքում սույն հաշվետվության 6-րդ գլխում ներկայացվել և մշակվել են 5 հիմնական առաջարկություններ.

1. Հա մ ը ը ղ գ ր կ ու ն ի ր ա վ ա կ ա ն դ ա տ ի ս տ ե ղ ու մ .
2. Ջ Հ Հ հ ա մ ա կ ա ր գ ի հ ա մ ա ր կ ա յ ու ն ի ն ս տ ի ս ու ճ ի ռ ն ա լ կ ա ու ճ վ ա ծ ֆ ի ձ և ա վ ո թ ու մ .
3. Կ ի մ ա յ ի փ ո փ ո խ ու թ յ ա ն ք ա ղ ա ք ա կ ա ն ու թ յ ա ն ն եր ա ռ ու մ կ ե ն տր ո ն ա ճ վ ա ծ հ ա մ ա կ ա ր գ ու մ .
4. Արտանետումների կրճատման հավաստագրման համակարգի ներդրում

5. Տվյալների որակի բարելավում

Առաջարկություններ են ներկայացված ՉՀՀ համակարգի ներդրման, արդյունավետության և երկարաժամկետ շահագործման համար անհրաժեշտ գործիքների և միջոցառումների վերաբերյալ:

Աղյուսակ4 ՉՀՀ համակարգի ներդրման ուղղությամբ առաջարկությունների մշակման համար կիրառված մոտեցում


	Մշտադիտարկում	Հաշվետվողականություն	Հավաստագրում
ՌՎ	Տեղեկատվության ստեղծման, հավաքագրման և կառավարման պատասխանատու մարմիններ: Մոնիտորինգի գործունեության համար պատասխանատու հիմնական շահագրգիռ կողմերը տվյալների մատակարարներն են՝ ՎԿ, ՏԿԵՆ, ՀԾԿՀ, ՊԵԿ, ԷՆ:	Արտանետումների գնահատման և կլիմայի փոփոխության հետ կապված հաշվետվությունների պատասխանատու մարմինները՝ համաձայն ազգային և միջազգային պարտավորությունների Հաշվետվողականության գործունեության համար պատասխանատու հիմնական շահագրգիռ կողմերը տվյալների մատակարարներն են՝ ՎԿ, ՏԿԵՆ, ՀԾԿՀ, ՊԵԿ, ԷՆ:	ՈԱ/ՈՎ ընթացակարգերի համար պատասխանատու մարմինները: ԶԳ կադաստրի համար այս գործողության պատասխանատուն ՄԳՀԽ-ն է. մեղմման գործողությունների համար խորհուրդ է տրվում ներգրավել երրորդ կողմ՝ արտաքին հավաստագրողի:
Ինչպե՞ս	Տվյալների ստեղծման, հավաքագրման, կառավարման և գրառումների վարման գործընթացներ: Տվյալների տրամադրման ներկայիս գործելակերպերը կարող են կատարելագործվել միջգերատեսչական համակարգման համաձայնագրերի ստորագրմամբ:	Տարբեր տեսակի հաշվետվությունների կատարման համար պահանջվող գործողություններ, ժամանակացույցեր Հաշվետվության գործունեությունը պետք է կարգավորվի Կլիմայի փոփոխության մասին օրենքով և ԶԳ կադաստրի վերաբերյալ որոշմամբ:	ՈԱ/ՈՎ ներքին և արտաքին ընթացակարգեր ՈԱ/ՈՎ գործողությունները (ԿՓՓՄԽ ուղեցույցների համապատասխան) պետք է կարգավորվեն Կլիմայի փոփոխության մասին օրենքով և ԶԳ կադաստրի վերաբերյալ որոշմամբ:

			Առաջարկվում է արտաքին հավաստագրողների համար մշակել և ներդնել հավատարմագրման համակարգ մեղմման ծրագրերի հավաստագրման նպատակով:
Ե՞րբ	Տվյալների հավաքագրման ընթացակարգերի հաճախականությունն ու ժամկետները պետք է կարգավորվեն միջգերատեսչական համակարգման համաձայնագրերով:	Ազգային և միջազգային հաշվետվությունների ներկայացման պարբերականությունը և վերջնաժամկետները պետք է սահմանվեն ՋԳ կադաստրի վերաբերյալ որոշման մեջ:	ՈԱ/ՈՎ գործողությունների հաճախականությունը և ժամկետները պետք է սահմանվեն ՋԳ կադաստրի վերաբերյալ որոշման մեջ

2. Կարգավորող շրջանակ

Կատարվել է ԶՀՀ համակարգին առնչվող կարգավորման շրջանակը կազմող իրավական ակտերի վերանայում, որոնց թվում են՝ ԱՍԳ-ն (միջազգային հանձնառություն), ԵԱՉ3, ԱՀ4, Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը, ինչպես նաև կլիմայի փոփոխության քաղաքականությանն առնչվող ազգային օրենքներն ու ռազմավարությունները: Նմանապես, ուսումնասիրվել են որոշ հաշվետվություններ, ինչպիսիք են Էներգետիկ հաշվեկշիռը, անտառային ոլորտի գնահատումները և վերջին ճանապարհային քարտեզները, որոնք արդիական են տվյալ հաշվետվության նպատակների համար: Ուսումնասիրված իրավական ակտերի և հաշվետվությունների ամփոփագիրը ներկայացված է Գծապատկեր 5-ում: Բացի այդ, այս իրավական ակտերի նկարագրությունը և դրանց կապը համակարգի հետ ներկայացված է Հավելված 1-ում:

Գծապատկեր5 Կլիմայի քաղաքականության հետ կապված իրավական ակտեր և հաշվետվություններ



ՉհՀ համակարգի առումով անհրաժեշտ է հաշվի առնել, որ կան նպատակներ և թիրախներ, որոնք բխում են տարբեր պլանավորման իրավական ակտերից, ուստի համակարգը կարող է ծառայել որպես այդ նպատակների շտեմարան և պետք է օգտագործելի լինի ոչ միայն ԱՍԳ-ի, այլև այդ նպատակների իրագործման ուղղությամբ առաջընթացի արձանագրման համար: Իրավական դաշտի ուսումնասիրության ընթացքում բացահայտված համապատասխան նպատակներից և բացահայտումներից մի քանիսը հետևյալն են.

- Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիր (մինչև 2040 թվականը) որտեղ արևային և հողմային Էներգիային առանցքային ուշադրություն է դարձվում՝ որպես տնտեսապես կենսունակ և տեխնիկապես մատչելի վերականգնվող Էներգիայի հզորությունների ընդլայնման աղբյուր: Այս ռազմավարական ծրագրի միջոցով Հայաստանը մտադիր է մինչև 2030 թվականը ավելացնել արևային Էներգիայի իր տեղակայված հզորությունը ներկայիս 59,5 ՄՎտ-ից հասցնելով մինչև 1000 ՄՎտ՝ Էներգետիկ անվտանգության մեծացման նպատակով, ինչպես նաև 2030թ. կանաչ Էներգիայի մասնաբաժինը հասցնելով առնվազն 15%-ի:
- Էներգաարդյունավետության և վերականգնվող Էներգիայի 2021-2030 թվականների ազգային ծրագիրը, որով կսահմանվեն նոր ոլորտային թիրախներ:
- Անտառի ազգային ծրագիրը (2021թ.), որով նախատեսում է մինչև 2030 թվականը անտառածածկի ավելացում՝ Հայաստանի տարածքի 12.9% չափով:
- Հայաստանի Հանրապետության կառավարությունը (մինչև 2022 թվականը) մտադիր է մինչև 2030 թվականն ավելացնել արևային Էներգիայի

արտադրության տեսակարար կշիռը՝ հասցնելով Էներգիայի ընդհանուր արտադրության առնվազն 15%-ի կամ 1,8 մլրդ կՎտժ-ի: Ի լրումն, Հայաստանի կառավարությունը նաև հիմնական առաջնահերթությունների շարքում ընդգծում է միջուկային Էներգիայի, Էներգաարդյունավետության ծրագրերի, Էկոլոգիապես մաքուր ավտոմեքենաների և վառելիքի մատակարարման շղթաների դիվերսիֆիկացման մտադրությունը, որոնք ներկայացված են ԵԱԶ3-ում:

- Ինչպես սահմանված է ԱՍԳ-ում, կառավարությունը, որպես 2021 թվականին հրապարակված Անտառի ազգային ծրագրի մաս, մտադիր է մինչև 2030 թվականը հասնել անտառածածկույթի 12,9%-ի: Անտառածածկույթը ներկայումս կազմում է երկրի ընդհանուր տարածքի միայն 11%-ը, ըստ Ազգային ռազմավարության:
- Զաղաքապետերի դաշնագիրը՝ հանուն կլիմայի և Էներգիայի առաջին անգամ ստորագրվել է Հայաստանի տեղական կառավարման մարմնի կողմից 2009 թվականին: Մինչև 2050թ. սահմանված ընդհանուր տեսլականին հասնելու համար՝ այն է՝ ածխաթթու գազից զերծ և դիմակայուն տարածքներ, բլուրի համար ապահով, կայուն և մատչելի Էներգիայի ծառայությունների համընդհանուր հասանելիություն, քաղաքապետերը հանձնառել են մինչև 2030 թվականը իրենց համայնքներում նվազեցնել CO₂ արտանետումները առնվազն 40%-ով, հիմնականում՝ ավելացնելով Էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործումը, հիմնականում՝ Էներգաարդյունավետության բարելավման և «առանց ափսոսանքի», ճկուն միջոցառումների իրականացման միջոցով:
- Ստորագրող կողմերը նաև հանձնառություն ունեն ներկայացնել ելակետային արտանետումների գույքագրում, կլիմայի փոփոխության ռիսկի և խոցելիության գնահատում, Կայուն Էներգիայի և կլիմայի գործողությունների ծրագիր (ԿԷԿԾ, SECAP), որով նրանք պետք է ներկայացնեն, թե ինչպես է ստորագրող երկիրը մտադիր իրագործել իր հանձնառությունները, Դաշնագրի ներքո հանձնառությունները ստանձնելուց հետո երկու տարվա ընթացքում, ինչպես նաև երկամյա պարբերականությամբ ներկայացնեն առաջընթացի մասին զեկույց:

Ավելին, քանի որ ԱՍԳ-ի շրջանակը ներառում է ՀՖԱ-ները, որոնք նաև ԵՄ-ի հետ CEPA-ի շրջանակի մաս են կազմում, հատկապես օգտակար կլինի, եթե ՉՀՀ բաղադրիչները և հաշվետվական հարթակները կարողանան արձանագրել արտանետումները՝ տարանջատված կերպով, և արտանետումների նվազեցման ծրագրերն ըստ ՀՖԱ տեսակի, որոնք ներառում են հետևյալ ՀՖԱ-ները՝ ՀՖԱ-32, ՀՖԱ- 125, ՀՖԱ-134ա, ՀՖԱ-152ա, ՀՖԱ-143ա, ՀՖԱ-227եա: Նոր ԹԸՇ-ի համաձայն՝ ըստ գազի տեսակների տարանջատված ՀՖԱ-ների գծով սահմանված է ճկուն հաշվետվողականության պահանջ: Այնուամենայնիվ, Հայաստանն արդեն ունի ինստիտուցիոնալ մեխանիզմ՝ ՀՖԱ-երը ըստ քիմիական և կիրառական նյութերի տարանջատված ներկայացման համար, և ներկայացնում է այդ տեղեկատվությունը Ազգային Կադաստրի Հաշվետվությամբ:

Որպես այդպիսին, համակարգը պետք է կարողանա բացահայտել նոր արևային ՖՎ և այլ վերականգնվող էներգիայի տեղակայված հզորությունները, ինչպես նաև դրանց ներդրումը արևային էներգիայի ընդհանուր մասնաբաժնում՝ Հայաստանում արտադրված ընդհանուր էներգիայի կազմում: Այս տվյալները կօգնեն արձանագրել այս նպատակների իրագործման ուղղությամբ առաջընթացը, եթե Հայաստանը որոշի ներառել այդ ցուցանիշները ԹԸՇ-ի շրջանակներում իրենց պարտադիր հաշվետվությունների կազմում, ինչպես նաև կապահովի ազգային էներգետիկ անվտանգության բարձրացման և ներկրվող վառելիքից կախվածության նվազեցման որակական նպատակների առաջընթացի ցուցանիշը, ինչը նաև արտացոլված է ԵԱԶ23-ում:

Նմանապես, Ազգային պայմաններ բաժինը ներկայացնում է կոնկրետ ցուցանիշներ ՋԳ արտանետումների և համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) էներգատարության վերաբերյալ՝ հաշվի առնելով գնողունակության համարժեքությունը (ԳՈՒՀ)՝ հիմնվելով հիմնական սոցիալական ցուցանիշների և ՀՆԱ-ի կառուցվածքի վրա, որոնք նույնպես ներկայացված են ԱՀ Բաժին 1-ում: ԵՎ CO₂ -ի արտանետումները ՀՆԱ-ի մեկ միավորի հաշվով ըստ ԳՈՒՀ-ի, և՛ ՀՆԱ-ի (ԳՈՒՀ) էներգատարությունը 2016 թվականից ի վեր գրանցվել է նվազման միտումով: Այս ցուցանիշները, որոնք ստացվում են ընթացիկ տվյալների հավաքագրման գործընթացներից, կարող են օգտագործվել նոր ԹԸՇ-ի շրջանակներում՝ որպես ԱՍԳ-ի ուղղությամբ առաջընթացի ցուցանիշներ, եթե Հայաստանը որոշի ներառել դրանք պարտադիր հաշվետվողականության կազմում:

Ինչ վերաբերում է օգոնային շերտը քայքայող նյութերին, մաքսային մարմինները (պետական լիազորված մարմին, որը տիրապետում է օգոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման, արտահանման և տարանցման վերաբերյալ տեղեկատվությանը) պետք է ներկայացնեն տվյալներ ներմուծման, արտահանման կամ տարանցման, օգոնային շերտը քայքայող նյութերի քանակի և արտահանող և ներմուծող երկրների անվանումների վերաբերյալ: Այս նյութերի ռեեստրը ներառում է տարեկան հաշվետվություններ դրանց ներմուծման ժամանակ առանձին քվոտաների օգտագործման վերաբերյալ:

Էներգետիկ հաշվեկշիռը էներգիայի ոլորտում շերմոցային գազերի արտանետումների վերաբերյալ նախնական տվյալների հավաքագրման հիմնական աղբյուրներից մեկն է և կարևոր գործիք է ոչ միայն ազգային ՉՀՀ համակարգի, այլ նաև կլիմայի քաղաքականության և մեղմման միջոցառումների ուղղությամբ զարգացման հիմնական ոլորտների բացահայտման համար: Էներգետիկ հաշվեկշիռը տրամադրում է հաշվետու ժամանակահատվածում Հայաստանում արտադրված և սպառված վերականգնվող էներգիայի, էլեկտրաէներգիայի, բնական գազի, ջերմային էներգիայի, նավթամթերքի, ածուխի, փայտի և այլ կենսավառելիքի արդիականացված կառուցվածքը հաշվեկշիռի տեսքով: Այն շատ արժեքավոր գործիք է յուրաքանչյուր հատվածում տարատեսակ վառելանյութերի սպառման ծավալների և երկրի էներգետիկ անկախության և անվտանգության աստիճանի գնահատման համար: Այն նաև շատ արժեքավոր միջոց է էներգիայի մատակարարման դիվերսիֆիկացվածության աստիճանի, ընդհանուր էներգիայի արտադրության մեջ վերականգնվող էներգիայի մասնաբաժնի և շերմոցային գազերի արտանետումների միտումների գնահատման առումով:

Հետևաբար, էներգետիկ հաշվեկշիռը առանցքային գործիք է Փարիզի համաձայնագրերի ներքո ՄԱԿԿՓՇԿ-ին ներկայացվող ազգային փաստաթղթերով սահմանված որակական և քանակական թիրախների իրագործման ուղղությամբ առաջընթացը գնահատելու համար, ընդ որում այդ տեղեկատվությունը Հայաստանը

կարող է իր ընտրությամբ ներառել ԹԸՇ-ի շրջանակներում ներկայացման համար պարտադիր հաշվետվությունների կազմում:

Մյուս կողմից, Անտառների կադաստրի ազգային ռազմավարությունը հատկապես կարևոր է մշակվող ազգային ՉՀՀ համակարգի համար, քանի որ ԱԿՀ-ի ԳԱԱՀՕ հատվածի հաշվառման և հաշվետվայնության ուժեղացումը Հայաստանի համար հնարավորությունների առանցքային ոլորտ է:

Անտառից վառելիքայտի հավաքման և բաշխման կառավարման ռազմավարությունն առաջարկում է անտառներից վառելիքայտի արդյունահանման այլընտրանք, որը կբավարարի տեղի բնակչության կարիքները: Էներգիայի այլընտրանքային աղբյուրների տեխնիկատնտեսական հիմնավորման վերլուծության մեջ դիտարկվում են տեխնիկական, տնտեսական և սոցիալական ասպեկտները, և ներկայացվում է ճանապարհային քարտեզ՝ հետագա առաջընթացի ուղու վերաբերյալ առաջարկություններով: Այս ռազմավարության իրագործումը կնպաստի երկրի անտառներում փայտի կենսազանգվածի պահպանմանը, որը այլապես արդյունահանվում է որպես կենցաղային վառելիք, և կբարձրացնի անտառային տարածքների միջոցով ՋԳ-երի պահեստավորման և կլանման կարողությունը՝ նպաստելով ԱՍԳ-ի իրականացմանը:

Հետևաբար, Հայաստանում ներդրվող ՉՀՀ համակարգը պետք է հնարավորություն տա տարանջատել և հետամուտ լինել արտանետումների նվազեցման նախատեսվող համատեղ միջոցառումներին, մասնավորապես՝ երկրում ՄԱԿ ԿՓՇԿ Փարիզի համաձայնագրերի 6-րդ հոդվածի ներքո իրականացվող պոտենցիալ պիլոտային ծրագրերին, որոնց արդյունքում ստացված արտանետումների կրճատումները չեն մասնակցում Հայաստանի ստանձնած ԱՍԳ հանձնառությունների կատարմանը, առևտրային նպատակներով ածխածնային կրեդիտներ տրամադրող ծրագրերին, ինչպես նաև CEPA-ի շրջանակներում ԵՄ-ից ստացված ամբողջ ֆինանսավորմանը, որը պետք է ներկայացվի նոր ԹԸՇ-ի շրջանակներում:

Բացի այդ, CEPA-ի 54-րդ հոդվածը նաև նախատեսում է աշխատանքների իրականացում օգնել քայքայող կյուլերի և ֆտորացված գազերի (F-գազերի) հետ կապված միջոցառումների ուղղությամբ, որոնք հանդիսանում են Հայաստանի ԱՍԳ-ի շրջանակի մաս, հետևաբար՝ ՉՀՀ համակարգը պետք է կարողանալ հետևել այս միջոցառումների ազդեցությանը՝ ըստ գազի տեսակների տարանջատման (ՕԶՆ-եր և F-գազեր):

Ինչ վերաբերում է «Հողօգտագործման, հողօգտագործման փոփոխության և անտառային տնտեսության ոլորտի ներուժի գնահատումը Հայաստանում կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման նպատակների իրագործման առումով» հաշվետվությանը, որը հրապարակվել է 2021թ. մարտին, այն ներկայացնում է Հայաստանի ՀՕՀՕՓԱՏ ոլորտի 26 հնարավոր մեղմման գործողությունների ընդհանուր պատկերը՝ բաժանված 4 հիմնական ենթաոլորտների՝ հողօգտագործման փոփոխություն՝ 3 գործողությամբ, անտառներ՝ 9 գործողությամբ, գյուղատնտեսություն՝ 13 գործողությամբ, տորֆի արդյունահանում՝ 1 գործողությամբ: Հայաստանի ՉՀՀ համակարգի համար խորհուրդ է տրվում ներառել այս 26 կատեգորիաները 4 հիմնական ենթաոլորտներում՝ հաշվետվայնության, հաշվառման և արձանագրման հարթակներում և առաջնահերթություն տա մեղմման առավելագույն ներուժ ունեցող գործողություններին: Հնարավոր մեղմման գործողությունները գնահատելու համար այս ուսումնասիրության նպատակով կրկնօրինակվել է ՀՕՀՕՓԱՏ ոլորտի ազգային կադաստրը՝ պարզեցնելով, փոփոխելով կամ շտկելով որոշակի

առանձնահատկությունները՝ նպատակ ունենալով առավել ճշգրիտ գնահատական ստանալ վերլուծության համար առկա արտանետումների և կլանումների վերաբերյալ:

Համաձայն վերոհիշյալի, կոնկրետ պարամետրերի արդիականացումն էականորեն կփոխի անտառների ածխածնային հաշվեկշիռը և Հայաստանի կառավարությանը հնարավորություն կտա ավելի հստակ պատկերացում կազմել փայտի արդյունահանման ներկայիս ծավալների, ազգային անտառների՝ որպես կլանիչ հանդես գալու փաստացի ներուժի, և ՀՅՄՍ հատվածի մեղմման գործողությունների իրական ներուժի վերաբերյալ, որը ԱԿՀ-ում թերագնահատված է՝ ԳԷՀ-ՄԱՉԾ-ի տվյալների հետ համեմատ:

Աջակցության առումով ՀՀ-ն նախատեսում է Էապես և կտրուկ ավելացնել օտարերկրյա ներդրումներ/ՅՆԱ հարաբերակցությունը: Հարմարվողականության և մեղմման միջոցառումների հետ կապված ծրագրերում ցանկացած օտարերկրյա ներդրում, որոնց մի մասը կարող է լինել Փարիզյան համաձայնագրի 6-րդ հոդվածի համաձայն համագործակցային մոտեցումների արդյունք, կարող են արձանագրվել որպես անհրաժեշտ և ստացված աջակցություն և ոչ պարտադիր կարգով բացահայտվել Նոր ԵԹՉ-ում:

Ինչ վերաբերում է հարմարվողականությանը, ապա աղետների ռիսկի նվազեցման հետ կապված որոշ միջոցառումներ, ինչպիսիք են շենքերում սեյսմիկ ռիսկի նվազեցումը, սեյսմիկ դիմակայունության բարձրացումը և խոցելիության գնահատումը, հնարավոր է արձանագրել և ներկայացնել հարմարվողականության գործողությունների հետ մեկտեղ՝ դրանց իրականացմանը զուգընթաց, քանի որ դրանք հանդիսանում են ավելի ուժեղ և հաճախակի բնական աղետների ենթակա մարդկային բնակավայրերի՝ փոփոխվող միջավայրի պայմաններին հարմարեցնելու գործընթացի մաս:

Ուսումնասիրված պլանավորման և կարգավորող իրավական դաշտի և հաշվետվությունների վերաբերյալ առավել մանրամասն ներկայացված է Հավելված 1-ում:

3. Ինստիտուցիոնալ քարտեզագրում՝ ի աջակցություն ԿՓՀՀ հարթակի նախագծման


3.1. Հաստատությունների և շահագրգիռ կողմերի նույնականացում

Հայաստանում կլիմայի փոփոխության ազգային քաղաքականությունը հիմնված է Գծապատկեր 6-ում ներկայացված կազմակերպչական կառուցվածքի վրա, որով սահմանվում է, որ Շրջակա միջավայրի նախարարությունը պատասխանատու է այս ուղղությամբ իրականացված գործողությունների և ձեռք բերված առաջընթացի վերաբերյալ ՄԱԿ ԿՓՇԿ-ին տեղեկացնելու համար, Միջգերատեսչական համակարգող խորհրդի (ՄԳՀԽ) աջակցությամբ, որի հիմնական գործառույթներն են՝ ապահովելու ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ի ներքո ՀՀ ստանձնած հանձնառությունների կատարումը, 2021-2030 թվականների համար Փարիզի համաձայնագրի ներքո Հայաստանի ԱՍԳ-ների համակարգումը և ՄԱԿ-ի 2030 թվականի Կայուն զարգացման օրակարգի 13-րդ նպատակի իրականացումը (Կլիմայի գործողություն): Նմանապես, կա փորձագիտական աշխատակազմ, որը պատասխանատու է ՄԱՉԾ-ի աջակցությամբ ազգային կադաստրի մշակման համար, որն ուղղակիորեն հաշվետու է Շրջակա միջավայրի նախարարությանը, և որը ենթադրաբար պետք է սերտորեն փոխգործակցի

Միջգերատեսչական համակարգող խորհրդի (ՄԳՀԽ) հետ, քանի որ կադաստրի աշխատանքային խումբը հաշվետվությունները տրամադրում է այդ մարմնին՝ ՈԱ/ՈՎ նպատակներով: Այնուամենայնիվ, փորձագետների թիմի և ՄԳՀԽ-ի համատեղ աշխատանքը դեռևս արդյունավետ չի իրականացվում:

Հարկ է նշել, որ ներկայումս բացակայում են կլիմայի քաղաքականության ուղղությամբ պաշտոնապես հաստատված ինստիտուցիոնալ մեխանիզմները: Որպես կանոն, փոխադրեցություններ տեղի են ունենում ՇՄՆ-ի՝ որպես համակարգող մարմին, ՋԳ կադաստրի տեղեկատվություն տրամադրողների և ՄԳՀԽ-ի՝ որպես հավաստագրող մարմնի, միջև: Կադաստրի կազմման աշխատանքների իրականացման համար ՇՄՆ-ն ներգրավում է ոլորտային տեխնիկական փորձագետների, որոնք հավանական է, որ փոխգործակցում են ՄԳՀԽ-ի հետ՝ կադաստրի հավաստագրման նպատակներով: Հետևաբար, Գծապատկեր 6 ցույց է տալիս ներկայիս ընդհանուր ինստիտուցիոնալ կառուցվածքը:

Գծապատկեր 6՝ Ներկայիս ինստիտուցիոնալ մեխանիզմները՝ կլիմայի փոփոխության ազգային քաղաքականության ուղղությամբ




Աղբյուր. Սեփական մշակում ԵԱՀԳ-ի հիման վրա

CARBON LIMITS

Նշենք, որ ինչ վերաբերում է կադաստրի համար պահանջվող տեղեկատվությանը, ապա կան նաև այլ գերատեսչություններ, որոնք տեղեկատվություն են ներկայացնում Շրջակա միջավայրի նախարարությանը կամ կադաստրի 4 ոլորտների փորձագիտական խմբերի ղեկավարներին (Էներգիա, ԱԳԱՕ և արտադրանքի օգտագործում, ԳԱԱՀՕ և թափոններ), որոնց գծով առավել կարևոր տվյալների մատակարարն է Վիճակագրական կոմիտեն, և Էներգետիկ հաշվեկշիռը՝ Հայաստանի Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿՏՆ) կողմից:

Կադաստրի գնահատումների համար անհրաժեշտ ելակետային տվյալների տեսակը և մշակման գործընթացում տեղի ունեցող փոխազդեցությունները ներկայացված են Հավելված 2-ում ներկայացված ինստիտուցիոնալ և տվյալների քարտեզագրման միջոցով: Այս քարտեզագրումը ըստ կադաստրի ոլորտի ցույց է տալիս մուտքային տվյալները, տվյալների մատակարարներին, համակարգողին (ՇՄՆ), տեխնիկական աջակցության և ՈԱ/ՈՎ գործողությունների պատասխանատուին՝ ինչպես կադաստրի (առկա ՉՀՀ-ի միակ բաղադրիչը), այնպես էլ՝ մեղմման և հարմարվողականության ծրագրերի ռեեստրի վարման համար (համաձայն համակարգի՝ 4-րդ գլխում առաջարկված կազմաձևի): Ամփոփելով, պետք է նշել, որ ինստիտուցիոնալ քարտեզում տարանջատված տեսքով ներկայացված է հետևյալ տեղեկատվությունը.

Գծապատկեր7 ՉՀՀ համակարգի ինստիտուցիոնալ և տվյալների քարտեզագրում (ամփոփում)



Հարկ է նշել, որ այս քարտեզագրումն իրականացվել է առկա տեղեկատվության և շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցության արդյունքների հիման վրա:

Այս խորհրդակցությունն իրականացվել է 2021 թվականի դեկտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում՝ հետևյալ ոլորտներում.

Աղյուսակ 5 Շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցական հանդիպումներ

Ամսաթիվ	Նախարարություն և վարչություն	Կազմակերպիչ
30.11.2021 թ.	Մեկնարկային հանդիպում ՄԱՉԾ Կլիմայի փոփոխության ծրագրի հետ	Դիանա Հարությունյան – Ծրագրի համակարգող Դավիթ Շինյան – Փորձագետ Հեղինե Գրիգորյան – Իրավաբանական փորձագետ
30.11.2021 թ.	Հանդիպում Ազգային վիճակագրական ծառայությունում	Նելլի Բաղդասարյան – Խորհրդի անդամ (Բնապահպանական բաժնի համակարգման պատասխանատու)
01.12.2021 թ.	Հանդիպումներ վիճակագրական կոմիտեում	Լուսինե Մարկոսյան, տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ. Արսեն Ավագյան, գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ . Անահիտ Ավետիսյան, արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ .
01.12.2021 թ.	Հանդիպում Էկոնոմիկայի նախարարությունում	Լևոն Տեր-Իսահակյան, Էկոնոմիկայի Նախարարության գյուղատնտեսության առաջնային վարչության պետ.
01.12.2021 թ.	Հանդիպում Շրջակա միջավայրի նախարարությունում	Նոնա Բուդոյան, Կլիմայական

		քաղաքականության վարչության պետ
02.12.2021թ.	Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	Աննա Չատիկյան, Տեղեկատվության վարչության պետ
02.12.2021թ.	Հանդիպում Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունում	Արշակ Զերոբյան, Թվայնացման բաժնի պետ
03.12.2021թ.	Անտառային քաղաքականության վարչության ներկայացուցիչներ	Արամ Սահակյան, վարչության պետ Արթուր Գևորգյան, բաժնի վարիչ
03.12.2021թ.	Ամփոփիչ հանդիպում ՄԱԶԾ Կլիմայի փոփոխության ծրագրի հետ	Դիանա Հարությունյան – Ծրագրի համակարգող Դավիթ Շինոյան – Փորձագետ

Ներկայում Հայաստանում ՉՀՀ գործողություններում ներգրավված հիմնական գերատեսչությունների և մասնակիցների գործառնություններն ու դերերը նկարագրված են ստորև: Այնուամենայնիվ, ինստիտուցիոնալ քարտեզագրումը ներկայացված է Հավելված 2-ում:

Շրջակա միջավայրի նախարարություն (ՇՄՆ)

Պատասխանատու է կլիմայի փոփոխության հիմնախնդիրներին առնչվող պետական քաղաքականության մշակման և իրականացման և ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ի ներքո ստանձնած հանձնառությունների կատարման համար, ներառյալ ազգային հաղորդագրությունների մշակումը, երկամյա պարբերականությամբ առաջընթացի զեկույցների ր և ՋԳ կադաստրերի ներկայացումը: ՇՄՆ հանդես է գալիս որպես ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ի ազգային համակարգող մարմին (Ministry of Environment of the Republic of Armenia, 2021):

Գծապատկեր 8 ներկայացնում է շրջակա միջավայրի նախարարության կազմում գտնվող տեխնիկական ստորաբաժանումները:

Գծապատկեր 8 Շրջակա միջավայրի նախարարության վարչություններ/բաժիններ



Իր բնույթով Կլիմայական քաղաքականության վարչությունը հետաքրքրություն է ներկայացնում ԿՓՀՀ հարթակի նպատակների համար. Այնուամենայնիվ, ևս մի քանի ստորաբաժանումներ կարող են ազդեցություն ունենալ կլիմայի փոփոխության հարմարվողականության խնդիրների վրա, հետևաբար կարելի է ուսումնասիրել համոզուտ արդյունքների հնարավորությունը՝ ՀՀ համակարգի արդյունավետության համար:

Համաձայն երրորդ ԵԱԶ-ի՝ 2015թ. ստեղծվել է Կլիմայի փոփոխության ֆոնդային կառուցվածքը, իսկ 2020թ. հունիսից՝ առանձին վարչություն՝ օժտված ՄԱԿ ԿՓԿ-ի իրականացումը համակարգելու հիմնական գործառնությունով, ներառյալ ազգային հաղորդագրությունների մշակումը և երկամյա պարբերականությամբ առաջընթացի զեկույցների պատրաստումը:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (ՏԿԵՆ)

Համաձայն N 633 որոշման N 1 Հավելվածի (2005թ. մայիսի 19-ի) ՏԿԵՆ-ի հիմնական խնդիրն է՝ երկրում տարածքային քաղաքականության մշակումը և իրականացումը:³ Ի լրումն՝ ՏԿԵՆ-ն իրականացնում է պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման և անվտանգ օգտագործման ապահովումը. ջրային համակարգերի կառավարման քաղաքականության մշակման և իրականացման ապահովումը. միգրացիոն քաղաքականության գործընթացների պետական կարգավորման ապահովումը. Հայաստանի Հանրապետությունում համայնքային ծառայության համակարգի ներդրման ու հետագա կատարելագործման ապահովումը, ի թիվս այլ գործառնությունների:

Այս պետական գերատեսչության կարևորությունը կայանում է նրանում, որ նախկին Էներգետիկայի և տրանսպորտի նախարարությունները միավորվել են այս նախարարության հետ, և այն տրամադրում է արտադրական ոլորտների կողմից

³ <http://www.mtd.am/en/charter/>

Էներգիայի սպառման, ինչպես նաև բնական գազի վերաբերյալ տեղեկատվություն ՋԳ կադաստրի համար:

Ֆինանսների նախարարություն

Ֆինանսների նախարարությունը մշակում և իրականացնում է հարկաբյուջետային՝ պետության եկամուտների ձևավորման և ծախսման, հանրային ֆինանսների կառավարման, այդ թվում՝ բյուջետային գործընթացի կազմակերպման, ներքին ֆինանսական հսկողության (ներառյալ՝ ներքին աուդիտի), գնումների գործընթացի պետական կարգավորման և համակարգման, ֆինանսաբյուջետային վերահսկողության, պետական պարտքի կառավարման, հաշվապահական հաշվառման, աուդիտորական գործունեության, խաղային գործի, ինչպես նաև ֆինանսատնտեսական, վարկային, ֆինանսական շուկայի միասնական քաղաքականության մշակման և իրականացմանն ուղղված աշխատանքների կատարման ապահովման, թանկարժեք մետաղների ոլորտում գործունեության կարգավորման, համայնքային բյուջեների եկամուտների ձևավորման ոլորտներում ՀՀ կառավարության քաղաքականությունը:⁴

Էկոնոմիկայի նախարարություն

Էկոնոմիկայի նախարարությունը գործադիր իշխանության կենտրոնական մարմին է, որը մշակում է կառավարության տնտեսական քաղաքականությունը և պատասխանատու է տնտեսական քաղաքականության իրականացման և գնահատման համար: Այս նախարարությունն իր գործառույթների շարքում անդրադառնում է գյուղատնտեսության ոլորտին առնչվող հարցերին, այդ իսկ պատճառով այն հանդիսանում է ջերմոցային գազերի կադաստրի համար օգտակար տեղեկատվության կարևոր մատակարար:

Ինչ վերաբերում է ագրարային քաղաքականությանը, Էկոնոմիկայի նախարարությանը վերապահված են հետևյալ գործառույթները.

1. Օժանդակել կոոպերատիվ գյուղատնտեսության զարգացմանը և սահմանել կոոպերատիվների կայացման համար անհրաժեշտ նվազագույն նախադրյալներ,
2. Ստեղծել կրթական, գիտահետազոտական, արդյունաբերական կլաստերներ և նպաստել գյուղատնտեսության և ագրարային ոլորտի կրթական, գիտական, գիտաարտադրական և խորհրդատվական կենտրոնների համագործակցության խորացմանը,
3. Աջակցել ագրոպարենային համակարգի սարքավորումների, նոր տեխնոլոգիաների, ինչպես նաև մենդի անվտանգության համակարգերի ներդրմանը,
4. Իրականացնել տեղական սերմնաբուծության և սերմնարտադրության, ինտենսիվ գյուղատնտեսության, անասնաբուծության զարգացմանն ուղղված

⁴ https://minfin.am/en/page/the_mission/

- պետական աջակցության ծրագրեր, ինչպես նաև աջակցել տոհմաբուժարանների ստեղծմանը,
5. Նպաստել գյուղական համայնքներում ոչ գյուղատնտեսական գործունեության ընդլայնմանը և ագրոտուրիզմի զարգացմանը,
 6. Ապահովել կենդանիների և բույսերի հիվանդությունների կանխարգելման արդյունավետ համակարգի ներդրումը,
 7. Ապահովել գյուղատնտեսական արտադրողների շրջանում գյուղատնտեսությանն առնչվող գիտելիքների և փորձի տարածման ու տեղեկատվության հասանելիության համակարգի ներդրումը,
 8. Ապահովել գյուղատնտեսության ոլորտի ապահովագրության համակարգի ներդրումը,
 9. Սահմանել գյուղատնտեսությանն աջակցության հիմնական սկզբունքները, մեթոդաբանությունը և ռազմավարությունը:

Պետական եկամուտների կոմիտե

Պետական եկամուտների կոմիտեն հարկային և մաքսային մարմին է, որը ձևավորված է «Հարկային ծառայության մասին», «Մաքսային կարգավորման մասին» և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքների համաձայն:

Այս կառույցի կարևորությունը ՀՀ շրջանակներում կայանում է նրանում, որ այն հանդիսանում Օգոնը քայքայող կյուլթերի օգտագործման հետ կապված տվյալների մատակարար ՋԳ կադաստրի համար:

Կադաստրի կոմիտե

Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեն վարում է անշարժ գույքի և աշխարհատարածական տեղեկատվական համակարգերի պետական ռեգիստրը, նպաստում է անշարժ գույքի շուկայի զարգացմանը, ինչպես նաև հողային քաղաքականության մշակմանը և իրականացմանը:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

ՀԾԿՀ-ն ապահովում է սակագնային քաղաքականության իրականացում և լիցենզիա ներքին տրամադրում, ռադիոհաճախակա նույնիմեների բաժնուն. ջրային ռեսուրսների ոլորտում՝ իրականացնում է սակագնային քաղաքականություն և տալիս է ջրային համակարգերի օգտագործման թույլտվություններ. փոստային ոլորտում՝ իրականացնում է ունիվերսալ ծառայությունների սակագնային կարգավորում. երկաթուղային տրանսպորտի ոլորտում՝ հաշվարկում և հաստատում է ենթակառուցվածքից օգտվելու վճարները, տրանսպորտային միջոցների տեխնիկական ոլորտում՝ սահմանում է ծառայությունների մատուցման սակագները.⁵

⁵ <https://erranet.org/member/psrc-armenia/>

Այս կազմակերպության կարևորությունը ՉՀՀ-ի շրջանակում կայանում է նրանում, որ այն հանդիսանում է բնական գազի վերաբերյալ տվյալների մատակարար ՋԳ կադաստրի համար:


Միջգերատեսչական համակարգող խորհուրդ

Խորհուրդը ստեղծվել է «ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» Շրջանակային կոնվենցիայի պահանջների ու դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդի կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012թ. հոկտեմբերի 955-Ա որոշմամբ, և օժտված է կլիմայի փոփոխության վերաբերյալ հաշվետվությունների համակարգման, և ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ի շրջանակներում Հայաստանի ստանձնած հանձնառությունների իրագործման ուղղությամբ համահունչ քաղաքականության ապահովման լիազորություններով, հանդիսանում է որոշում կայացնող մարմին, որը հաստատում է վերջնական հաշվետվությունների նախագծերը, ինչպիսիք են ՋԳ ազգային կադաստրերը, ԱՀ-ները, ԵԱԶ-երը:

Նշված որոշումը վերջերս հանաչվել է անվավեր և փոխարինվել 2021թ. հունիսի 6-ի N719-Ա որոշմամբ, որի հիման վրա ստեղծվել է ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ի և Փարիզի համաձայնագրի պահանջների և դրույթների կատարման նպատակով Միջգերատեսչական համակարգող խորհուրդ («Խորհուրդ»), և սահմանվել է մի կողմից, Խորհրդի կազմը, իսկ մյուս կողմից՝ ներքին աշխատակարգը: Տվյալ Խորհրդի նպատակն է՝ ապահովել ՄԱԿ ԿՓՇԿ և Փարիզի համաձայնագրի ներքո Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարումը, 2021-2030թթ. ժամանակահատվածի համար սահմանված ԱՍԳ-երի համակարգումը և 2030թ. օրակարգի 13-րդ նպատակի իրականացումը:

ՄԳՀԽ-ի կազմը ցուցադրված է Աղյուսակ6, մինևույն ժամանակ որոշման հիման վրա ամփոփ ներկայացված է ՄԳՀԽ համապատասխանության և աշխատակարգի ամփոփագիրը:

Գծապատկեր9 Միջգերատեսչական համակարգող խորհրդի կառուցվածքը



Աղյուսակ 6 Խորհրդի խնդիրներն ու գործառույթները

<p>Խորհրդի խնդիրներն են՝</p>	<ol style="list-style-type: none"> 1) Կոնվենցիայից և Փարիզյան համաձայնագրից բխող՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման համակարգումը. 2) Կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի ազգային համակարգողի հաշվետվությունների պարբերաբար քննարկումը. 3) Կոնվենցիայից և Փարիզյան համաձայնագրից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը և խորհրդատվություն տրամադրելը՝ ներառյալ կլիմայի փոփոխության ոլորտում նորարարական ֆինանսական գործիքների մշակման վերաբերյալ. 4) Կոնվենցիայից և Փարիզյան համաձայնագրից բխող՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների և դրույթների կատարման գործընթացի և արդյունքների գնահատումը. 5) Կոնվենցիայի ներքո Հայաստանի Հանրապետության ազգային մակարդակով սահմանված գործողություններից բխող կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ազգային գործընթացների համակարգումը և հսկողությունը. 6) Կոնվենցիայից և Փարիզյան համաձայնագրից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման առկայությամբ համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ակադեմիական կազմակերպություններին, հասարակական
------------------------------	---

	<p>կազմակերպություններին, համապատասխան ոլորտներում ներգրավված իրավաբանական անձանց առաջարկություններ ներկայացնելը.</p> <p>7) խորհրդի աշխատանքների տարեկան հաշվետվության հաստատումը.</p> <p>8) մշտական և ժամանակավոր միջգերատեսչական աշխատանքային խմբերի գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների ընդունումը:</p>
<p>Գործառույթներ</p>	<p>Որոշմամբ սահմանվել են նախագահի, նախագահի տեղակալի, անդամների և քարտուղարության դերերն ու պարտականությունները: Աշխատանքային խմբերի կազմերն ու աշխատակարգը սահմանվել են փոփոխարչապետի 2021 թվականի նոյեմբերի 04-ի N 894-Ա որոշմամբ:</p>
<p>Աշխատանքային խմբեր</p>	<p>1) կոնվենցիայի ներքո երկրի հաշվետվայնության հարցերով միջգերատեսչական աշխատանքային խումբը.</p> <p>2) կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության հարցերով միջգերատեսչական աշխատանքային խումբը.</p> <p>3) ֆինանսավորման հարցերով միջգերատեսչական աշխատանքային խումբը:</p>
<p>Նիստեր</p>	<ul style="list-style-type: none"> • Մեկ նիստ առնվազն՝ յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ • Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին: • Խորհրդի նիստերին կարող են հրավիրվել պետական այլ մարմինների ներկայացուցիչներ, խորհրդի նիստի օրակարգում ընդգրկված հարցերին առնչվող մասնագետներ, միջգերատեսչական աշխատանքային խմբերի փորձագետներ, գիտական, կրթական, միջազգային, հասարակական և առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ: • Զարտուղարությունը նիստից առնվազն 5 աշխատանքային օր առաջ խորհրդի անդամներին և հրավիրված այլ անձանց ուղարկում (տրամադրում) է նիստի օրակարգի նախագիծը և քննարկվելիք հարցերին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթեր ու այլ տեղեկատվություն: • Զարտուղարությունը խորհրդի նիստերի արձանագրությունները կամ արձանագրության քաղվածքները նիստից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում (տրամադրում) է խորհրդի բոլոր անդամներին:
<p>Հրապարակայնությունը</p>	<p>Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքերում տեղադրվում են՝</p> <ul style="list-style-type: none"> • Խորհրդի կողմից ընդունված որոշումները և խորհրդի նիստի օրակարգում ընդգրկված հարցերի քննարկման ամփոփ արդյունքները նիստից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

	<ul style="list-style-type: none"> • Խորհրդի գործունեության տարեկան հաշվետվությունը՝ մինչև յուրաքանչյուր հաջորդ տարվա հունվարի 31-ը:
--	---

Համաձայն վերոհիշյալի, պարզ է դառնում, որ սույն որոշմամբ չեն մանրամասնված ՉՀՀ գործառույթները կամ աշխատանքային խմբերի անդամները: Կարելի է նպատակահարմար դիտարկել ավելի կոնկրետ թեմատիկ ենթախմբերի ստեղծումը, մասնավորապես՝ ըստ ՋԳ-ի և հարմարվողականության առումով կիրառելի ոլորտների: Բացի այդ, համարվում է, որ ելնելով Խորհրդի բնույթից, որի կենտրոնական խնդիրը կլիմայի փոփոխությունն է, անհրաժեշտ է այլ մասնակիցների, մասնավորապես՝ քաղաքացիական հասարակության, գիտական համայնքի, մասնավոր հատվածի ներգրավումը, որոնք կարող են ներկա լինել որպես ըստ անհրաժեշտության հրավիրվող դիտորդների կարգավիճակում:

Համարվում է, որ Խորհուրդը կարևոր ինստիտուցիոնալ կառույց է՝ կոնկրետ ՉՀՀ գործողություններ իրականացնելու ներուժով, և որ այն ծառայում է որպես առանցքային կապող օղակ կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրների համար պատասխանատու անձանց միջև, ինչի համար կարևոր է ստեղծել հատուկ աշխատանքային ենթախմբեր և գործառույթներ՝ ձևավորելով համօգուտ արդյունքներ, որոնց միջոցով կապահովվի արդյունավետ ներդրում և տեղեկատվության փոխանցում, կպարզեցվեն ներգրավված կառույցների և մասնակիցների միջև փոխգործակցությունը և կերաշխավորվեն որակի վերահսկողության անաչառ գործընթացներ:

Ա2 առաջարկությունը վերաբերում է ՄԳՀԻ-ի սահմանմանը որպես առանցքային ինստիտուցիոնալ կառույց՝ ՉՀՀ համակարգի հետ աշխատելու, այն կառավարելու և փոփոխություններ իրականացնելու առումով, որոնք կարող են անհրաժեշտ համարվել համակարգի գործունեությունը կատարելագործելու առումով:

Վիճակագրական կոմիտե

Վիճակագրական կոմիտեն Հայաստանի Հանրապետությունում հիմնական պաշտոնական վիճակագրության մշակող մարմինն է: Կոմիտեն համակարգում է ազգային վիճակագրական համակարգում պաշտոնական վիճակագրության մշակմանը, արտադրությանը և տարածմանն ուղղված ամբողջ գործունեությունը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի. Ըստ իր կայքում ներկայացված տեղեկատվության (<https://armstat.am/am/?nid=51>), Վիճակագրական կոմիտեն ունի հետևյալ գործառույթները.

- վիճակագրական ծրագրերին համապատասխան իրականացնում է պաշտոնական վիճակագրության մշակումը, արտադրությունը և տարածումը.
- պետական խորհրդի կողմից սահմանված մեթոդների, ընտրանքի և անցկացման կարգին համապատասխան իրականացնում է ընտրանքային հետազոտություններ.
- օրենքով սահմանված կարգով իրականացնում է համատարած հաշվառումները.
- պետական խորհրդի կողմից սահմանված վիճակագրական փաստաթղթերի միջոցով հավաքում է վիճակագրական տվյալներ (այդ թվում՝ վարչական ռեստրներից).

- վարում է վիճակագրական, այդ թվում՝ բիզնես ռեեստրներ.
- վարում է վիճակագրական տվյալների շտեմարաններ.
- հավաքում է անհրաժեշտ վիճակագրական տվյալներ քաղաքացիներից՝ նրանց կենսապայմանների, սոցիալ-ժողովրդագրական վիճակի, տնային տնտեսությունների և այլնի վերաբերյալ.
- օրենքով սահմանված կարգով յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացված միջոցների հաշվին իրականացնում է Վիճակագրական տեղեկատվության հավաքման ծրագիրը.
- կնքում է համագործակցության պայմանագրեր, փոխըմբռնման հուշագրեր, ընդունում է համատեղ հրամաններ այլ պետությունների պաշտոնական վիճակագրություն իրականացնող մարմինների, միջազգային կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով.
- պետական խորհրդի կողմից սահմանված կարգով պաշտոնական վիճակագրության այլ արտադրողների համար սահմանում է համակարգված տարածման քաղաքականությունը՝ թափանցիկ ընթացակարգերով ազգային վիճակագրական համակարգում կիրառման համար, ինչպես նաև պաշտոնական վիճակագրության տարածման համար մեկ ընդհանուր տերմինաբանությունը.
- համակարգում է ազգային վիճակագրական համակարգում պաշտոնական վիճակագրության մշակմանը, արտադրությանը և տարածմանն ուղղված ամբողջ գործունեությունը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի.
- օրենքով սահմանված կարգով քննում է վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

Ելնելով իր իրավասություններից և քաղաքականության վրա ազդեցությունից՝ համարվում է, որ այս կառույցը, որպես հիմնական տեղեկատվության մատակարարներից մեկը, Էական նշանակություն ունի ՋԳ արտանետումների կադաստրի ուղղությամբ ՇՄՆ-ի կողմից իրականացվող աշխատանքներում, և հաշվի առնելով օրենքով այդ մարմինն վերապահված լիազորությունների շրջանակը, այդ կառույցի աջակցությունը կարող է ավելի մեծ լինել: Այնուամենայնիվ, կա շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցության անհրաժեշտություն՝ պարզելու այն տեղեկատվական բացերը, որոնք կարող են ծածկվել Վիճակագրական կոմիտեի աջակցությամբ, ինչպես նաև՝ պատկերացում կազմելու, թե ինչպես այդ մարմինը կարող է բարելավել տեղեկատվության հավաքագրման գործընթացները:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (ՀԾԿՀ) իր գործունեության բնույթով աշխատում է երկրի մի քանի ոլորտների հետ⁶

- Էներգետիկա և հեռահաղորդակցություն. ապահովում է սակագնային քաղաքականության իրականացում և լիցենզիաներ տրամադրում, ռադիոհաճախականությունների բաշխում.
- ջրային ոլորտ. իրականացնում է սակագնային քաղաքականություն և տալիս է ջրային համակարգերի օգտագործման թույլտվություններ.
- փոստային ոլորտ. իրականացնում է ունիվերսալ ծառայությունների սակագնային կարգավորում.
- երկաթուղային տրանսպորտի ոլորտ. հաշվարկում և հաստատում է ենթակառուցվածքի օգտագործման վճարը
- տրանսպորտային փոխադրամիջոցներ. կատարում է տեխնիկական զննում և սահմանում ծառայությունների մատուցման սակագները.

Հաշվի առնելով վերը նշվածը և այն, որ տվյալ կառույցը մեծ քանակությամբ տեղեկատվություն գեներացնող գործող գերատեսչություն է, այն հանդիսանում է ջերմոցային գազերի կադաստրի համար պահանջվող տեղեկատվության կարևոր մատակարար:

3.2. Տվյալների փոխանակման և հաշվետվողականության ինստիտուցիոնալ մեխանիզմները

Ներկայիս ինստիտուցիոնալ մեխանիզմները թեև պաշտոնապես սահմանված չեն, սակայն մինչ այժմ հնարավորություն են տվել համակարգված կերպով իրականացնել ՋԳ ճշգրիտ կադաստրի կազմում միջազգային հանձնառությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով: Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ ՀՀ համակարգը, ի լրումն կադաստրի, ներառելու է նաև տեղեկություններ մեղմման և հարմարվողականության գործողությունների մոնիտորինգի, ինչպես նաև կլիմայի քաղաքականության իրականացման համար պահանջվող և ստացված ֆինանսավորման վերաբերյալ:


3.2.1. ՋԳ կադաստր

Սովորաբար, կադաստրի կազմումն իրականացվում է տարբեր նախարարություններից, կոմիտեներից և կոնկրետ տնտեսության ճյուղերից տեղեկատվության հավաքագրման միջոցով, որը իրականացնում է ՇՄՆ-ն, որն իր հերթին ուղարկում է տեղեկատվությունը ոլորտային փորձագետներին, այնուհետև վերջնական վավերացումը կատարվում է ՄԳՀԽ-ի կողմից:

Գծապատկեր 10 ՋԳ կադաստրի ինստիտուցիոնալ կառուցվածքը

⁶ <https://erranet.org/member/psrc-armenia/>

CARBON LIMITS




Կան հիմնական շահագրգիռ կողմեր, որոնք տեղեկատվություն են տրամադրում արտանետումների տարբեր ոլորտների և կատեգորիաների համար, ինչպիսիք են ՏԿԵՆ-ը և վիճակագրության կոմիտեն: Այնուամենայնիվ, կա նաև տեղեկատվություն, որը ստացվում է ուղղակիորեն հանրամատչելի հաշվետվություններից կամ վիճակագրությունից: Հետևյալ գծապատկերները ցույց են տալիս տարբեր մասնակիցների կողմից տրամադրվող կոնկրետ տվյալները, ինչպես նաև տեղեկատվության հոսքերը դեպի ՇՄՆ:


Գծապատկեր11 ՋԳ կադաստրի համար տվյալների տրամադրման ինստիտուցիոնալ մեխանիզմները

Էներգիա


CARBON LIMITS




ԱԳԱՑ



ԳԱԿՐՕ



Թափոններ



Ինչպես նշվեց, թեև տեղեկատվության աղբյուրները պարզ են, սակայն շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցության ընթացքում հաստատվեց, որ տեղեկատվության փոխանակման գործընթացը շատ դեպքերում տեղի է ունենում տարբեր կառույցներից բացահայտ կերպով տեղեկատվության հարցման միջոցով: Այնուամենայնիվ, ով է տեղեկատվության ստեղծման և տարածման համար պատասխանատու անձանց շրջանակը, ինչպես նաև արձագանքման ժամկետները, կանոնակարգված չեն: Տեղեկատվության որակը երաշխավորելու մեկ այլ կարևոր ասպեկտն այն է, որ ՇՄՆ-ին հասանելի լինի տվյալների հիմքում ընկած տեխնիկական բնույթի տեղեկատվությունը, որպեսզի հնարավոր լինի հետազոծել այդ տվյալների ծագման աղբյուրը, հատկապես հաշվի առնելով, որ բացահայտվել են մի շարք տեղեկատվական բացեր և անհամապատասխանություններ տեղեկատվության տարբեր աղբյուրների միջև (տես Գլուխ 6-ի Ա1.4 առաջարկությունը):

Համարվում է, որ այդ գործողությունը պետք է կարգավորվի կանոնակարգի միջոցով, որով պետք է սահմանվի տեղեկատվություն տրամադրողների դերը կադաստրի կազմման և տեղեկատվական հոսքերում (Ա1.3), ինչպես նաև այդ տեղեկատվությունը ներկայացնելու հստակ ժամկետները (Ա1.1): Որպես մեկ այլընտրանք՝ առաջարկվում է կնքել միջգերատեսչական համաձայնագրեր (Ա1.4)՝ հնարավորություն տալով ամրապնդել և, իր հերթին, արագացնել տարբեր գերատեսչությունների միջև տեղեկատվության փոխանակման գործընթացները:

Մյուս կողմից, Հայաստանում առաջարկվում է ներդնել արդյունաբերության ոլորտի համար ՋԳ տարեկան հաշվետվությունների ներկայացման պարտավորություն (Ա1.5), ներառյալ արտաքին հավաստագրման մեխանիզմ (Ա4): Սա թույլ կտա ստանալ ավելի ճշգրիտ տվյալներ գործունեության տարբեր տեսակների վերաբերյալ և կադաստրում արտացոլել արտադրության բոլոր ճյուղերը կամ դրանց մեծ մասը, ինչը համապատասխան բաղադրիչներ կապահովի ոլորտային արդյունավետ քաղաքականության ձևակերպման համար, քանի որ կադաստրում այժմ թեև տեղ են գտած որոշ արդյունաբերության ճյուղեր, բայց երկրի բոլոր արդյունաբերության ճյուղերի ներառումը ոչ պարտադիր բնույթի է: Բացի այդ, համարվում է, որ տվյալների գաղտնիության հետ կապված խնդիրների պատճառով արդյունաբերական ձեռնարկություններից տվյալների ստացումը դժվար իրագործելի է, հատկապես երբ խոսքը վերաբերում է առաջնային աղբյուրներից տեղեկատվության ստացմանը: Այս խնդիրը կարող է լուծվել, եթե ճյուղերի համար սահմանվեն ՉՀՀ պարտավորություններ, ինչպես առաջարկվում է Ա1.5-ում (տես. Գլուխ 6), հստակ տարանջատելով հանրամատչելի և գաղտնի տեղեկատվության շրջանակը:

3.2.2. Մեղման/հարմարվողականության գործողություններ և ֆինանսավորում

ՉՀՀ համակարգի այս բաղադրիչը ներկայումս գոյություն չունի Հայաստանում, սակայն այն մեծապես կարևոր է երկարաժամկետ հեռանկարում ԱՍԳ-ի ուղղությամբ առաջընթացի արձանագրման համար: Ավելին, առկա են տարբեր մեղմման և հարմարվողականության գործողություններ, որոնք ներկայումս իրականացվում են:

Անհրաժեշտ է ներդնել մեղմման և հարմարվողականության ծրագրերի ռեեստր՝ կոնկրետ մեղմման և հարմարվողականության գործողությունների վերաբերյալ գրառումներ վարելու համար, ինչպես նաև համապատասխան տեղեկատվական օժանակության համար այն դեպքերում, երբ CAEP ծրագրով նախատեսված ԾՊՀ մոտեցումը կիրառելի է: Այս ռեեստրը կունենա հետևյալ նպատակները.

- Հանդես գալ որպես երկրում իրականացվող մեղմման և հարմարվողականության գործողությունների վերաբերյալ տեղեկատվության շտեմարան:
- Ապահովել Հայաստանում կլիմայական քաղաքականության իրականացման մոնիտորինգի բաղադրիչներ՝ հնարավորություն տալով իրական ժամանակում հետևել իրականացման ընթացքին
- Նպաստել արտանետումների և խոցելիության կրճատմանը երկրի բոլոր արտադրողական ոլորտներում
- Հաստատել նվազեցումները, որոնք կարող են օգտագործելի լինել ածխածնի շուկաներում
- Արձանագրել ծրագրերի նոր գաղափարները
- Վերանայել և հաստատել հեռանկարային ծրագրերը
- Գրանցել իրականացված ծրագրերը
- Հետևել ծրագրի կատարմանը, ներառյալ՝ ստեղծել հ m c վ ե ո վ ու թ յ ու ն ն եր .
- Հետազոծել ֆինանսական ռեսուրսների օգտագործումը
- Առաջարկվող ծրագրերի միջոցով հետազոծել արտանետումների հնարավոր կրճատումները
- Կազմել Ծրագրին առնչվող տվյալների, կատարողական ցուցանիշների և թափանցիկության հաշվետվություններ (Փարիզի համաձայնագրով նախատեսված ընդլայնված թափանցիկության շրջանակի (ԹԸՇ) պահանջների ուղղությամբ):

Ռեեստրը կօգնի կենտրոնացնել և ավտոմատացնել տեղեկատվությունը, և կունենա այլ համապատասխան մասնակիցներ, ինչպիսիք են ծրագրի հեղինակներին և հավաստագրողներին, քանի որ արտաքին հավաստագրման համակարգ ունենալը կարևոր է՝ ծրագրի պայմանները վերանայելու և համապատասխան կրճատումները հաստատելու համար: Տե՛ս 6-րդ գլխի Ա3 առաջարկությունը:

3.3. Ինստիտուցիոնալ մեխանիզմներ SS առումով

Հայաստանի համար տվյալների կառավարման համակարգերի ստեղծման հիմնական խնդիրը SS համակարգերի համար պատասխանատվությունների վերապահումն է: Պատասխանատու կառույցը պետք է ինստիտուցիոնալ առումով մոտ լինի ԿՓԶՀՀ հաշվետվողականության լիազորություններին, ունենա բավարար SS գործառնական կարողություններ և բյուջե՝ անհրաժեշտ առաջադրանքները կատարելու համար, ճանաչված լինի որպես տվյալների հուսալի պահառու և լինի տրամաբանական ռազմավարական ընտրություն պոտենցիալ զարգացող լիազորությունների շրջանակը սպասարկելու համար:

Աղյուսակ7 SS ուղղությամբ առաջարկություններ ինստիտուցիոնալ մեխանիզմների համար

Գերատեսչություն	Ինստիտուցիոնալ առնչությունը ԿՓԶՀՀ իրավասություններին հետ	SS գործառնական կարողություններ/բյուջե	Ներկայումս ճանաչված է որպես տվյալների պահառու	Տրամաբանական ռազմավարական ընտրություն
-----------------	--	---------------------------------------	---	---------------------------------------

<p>Շրջակա միջավայրի նախարարություն</p>	<p>Լավագույն ընտրություն. Նախարարությունը պատասխանատու է համապատասխան միջազգային պարտավորության կատարման համար</p>	<p>Գործնականում գոյություն չունի: Նախարարության SS գործառույթը ներկայումս ապահովում է մեկ անհատ՝ բարձր մասնագիտական կարողություններով, որի հիմնական խնդիրները ներառում են վերջնական օգտագործողների, ստացիոնար համակարգիչների և ցանցի սպասարկումը: Դժվար է պատկերացնել առաջիկա տարիների համար SS առումով զարգացած կազմակերպական աճի ելակետի ստեղծումը</p>	<p>Նախարարությունը ճանաչված է տվյալների մշակման և տրամադրման կարողությամբ, սակայն տվյալների աղբյուրը հիմնականում այլ կազմակերպություններ են և դրանք ներկայացվում են այլ կազմակերպություններ: Տվյալների պահպանման խնդիրների մեծ մասը վերապահված է այլ գերատեսչությունների կամ, ԿՓԶՀՀ-ի դեպքում, ՄԱՉԾ-ին:</p>	<p>Լավագույն ընտրությունը կլինեք, եթե այն ունենար գործող SS կազմակերպություն կամ բյուջե՝ այդպիսին ձևավորելու համար:</p>
<p>Հիդրոմետ ծառայություն</p>	<p>Հիդրոմետ ծառայությունը Շրջակա միջավայրի նախարարության կառույց է և հետևաբար ինստիտուցիոնալ առումով ունի մոտ լիազորություններ</p>	<p>Հիդրոմետը տիրապետում է գործառնական որոշակի կարողությունների, սակայն SS առումով կազմակերպական զարգացումը խիստ անբավարար մակարդակի է: Այդ կառույցում SS լիազորությունների ֆինանսավորման մոտեցումները (օրինակ՝ ուսանողների ներգրավումը) տեղին չեն կայուն գործունեություն պահանջող համակարգերի համար:</p>	<p>Հիդրոմետ ծառայությունը ներկա պահին հանդես չի գալիս որպես հաշվառման որևէ համակարգի պոտենցիալ. տվյալների բազայի հաշվառման համակարգը, որի համար այն տրամադրում է տվյալներ, վարում է բնապահպանական տեսչությունը</p>	<p>Կարելի է դիտարկել որպես տարբերակ՝ հաշվի առնելով Շրջակա միջավայրի նախարարության հետ ինստիտուցիոնալ առնչությունը, սակայն SS գործընթացների կազմակերպական սահմանափակ զարգացվածությունը թույլ չի տալիս Հիդրոմետ ծառայությունը համարել ռազմավարական ընտրություն:</p>
<p>ՎԿ</p>	<p>Ներկայումս հանդիսանում է ՎԿ-ն</p>	<p>Առկա է բյուջե և լավ</p>	<p>ՎԿ-ն լավ ճանաչված դեր ունի որպես</p>	<p>Լավագույն ընտրությունը՝ հաշվի</p>

	<p>Հայաստանի կլիմայական հաշվետվությունների համար պահանջվող տեղեկատվության մեծ մասի հավաքագրող և տրամադրող. այն ունի բնապահպանական վիճակագրության բաժին և որպես այդպիսին ինստիտուցիոնալ առումով մոտ է ԿՓՉՀՀ լիազորությունների շրջանակին</p>	<p>մասնագիտացած SS թիմ: Կառույցի գործառնական փորձը բավականաչափ զարգացած չէ, սակայն թիմը տեղյակ է և ակտիվորեն աշխատում է այն բարելավելու ուղղությամբ: Անհրաժեշտ գործառույթներն իրականացնելու կարողությունները, ըստ երևույթին, առկա են՝ ցանկացած պահանջվող լրացուցիչ ռեսուրսների համար անհրաժեշտ բյուջեն ապահովելու դեպքում:</p>	<p>պետական կառույցների տվյալների պահառու: Այս կառույցին է նաև վստահված արդյունաբերության ոլորտի կողմից ներկայացվող գաղտնի բնույթի համախառն տվյալների մշակումն ու համախմբումը:</p>	<p>առնելով առկա SS և բնապահպանական վիճակագրության հնարավորությունները</p>
<p>Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և նախարարություն</p>	<p>Ներկայումս ներգրավված չէ և տեղյակ չէ բնապահպանական հաշվետվայնության որևէ լիազորությունների մասին</p>	<p>Ունի մի շարք SS ռեսուրսներ և, հավանաբար, ունի զարգացած SS կարողություններ:</p>	<p>Տեղեկություն առկա չէ:</p>	<p>ԲՏԱՆ-ի լիազորությունների շրջանակը հիմնականում սահմանափակված է SS կառավարման գործառույթներով. այն չունի որևէ կոնկրետ պետական համակարգի գործարկման պլաններ՝ այժմ, կամ երկարաժամկետ հեռանկարում:</p>
<p>ԷԿԵՆԳ</p>	<p>Չեզոք տվյալների միջնորդ Մասնակցում է կլիմայի վերաբերյալ հաշվետվությունների լիազորությունների շրջանակին առնչվող որոշ տվյալների տրամադրմանը, սակայն բոլոր նման տվյալները տրամադրվում են երրորդ կողմերի (հիմնականում ՎԿ)</p>	<p>Ունի լավ ֆինանսավորվող, բարձր զարգացածության մակարդակի SS կազմակերպում</p>	<p>Տվյալների ճանաչված պահառու է շատ կարևոր պետական ծրագրերի համար, ինչպիսիք են հարկային, մաքսային տվյալները, պետական ռեզիստորը և այլն:</p>	<p>Կա առավել խորը հետազոտության անհրաժեշտություն (բավարար տեղեկատվություն չկա/մինչ այժմ ԷԿԵՆԳ-ի հետ հանդիպումներ տեղի չեն ունեցել)</p> <p>Հնարավոր առավելություններ. պետական</p>

	միջոցով:			սեփականություն հանդիսացող, առավել զարգացած SS կարողություններ ունեցող կազմակերպությունը արդեն իրականացնում է ԿՓՉՀ-ի հետ կապված որոշ տվյալների մշակում Հնարավոր թերություններ. ԿՓՉՀ համակարգը սպասարկելու հետաքրքրության բացակայություն, բարձր ծախսեր
Էկոնոմիկայի նախարարություն	Կադաստրի տվյալների մասի մատակարար գգալի	Նախարարության համակարգերի մեծ մասը գործում է Microsoft Office-ի վրա հիմնված պարզ գործիքների, Էլ.փոստի և EDI-ի հիմուն վրա . Նախարարությունը չունի զարգացած SS կարողություններ	Նախարարությունը ճանաչված է տվյալների մշակման և տրամադրման կարողությամբ, սակայն տվյալների աղբյուրը հիմնականում այլ կազմակերպություններ են և դրանք ներկայացվում են այլ կազմակերպություններ:	Ցածր է առնչությունը դիտարկվող լիազորությունների շրջանակին և ունի անբավարար SS կարողություններ:
ՄԱՉԾ Հայաստան	Ներկայումս հանդիսանում է ԿՓՉՀ լիազորությունների փաստացի գործնական տիրապետող և կլիմայի վերաբերյալ բոլոր միջազգային հաշվետվություններն արտադրող մարմինը:	Ունի սահմանափակ, սակայն ողջամտորեն զարգացած SS կարողություններ և տվյալների կառավարման լավ փորձարկված գործելակերպեր և մշակված ՋԳ կադաստրի կազմման գործընթացներ	ՋԳ կադաստրի տվյալների փաստացի պահառուն հաշվետու ժամանակաշրջաններ ի միջև:	Կենսունակ տարբերակ է, եթե կառավարությունը պատրաստ է երկարաժամկետ հեռանկարում շարունակի օգտվել ՄԱՉԾ ծառայություններից:

4. ՉՀՀ հայեցակարգի մշակում (ԿՓՉՀՀ)

4.1. ՉՀՀ համակարգի բաղադրիչներ

Թափանցիկության ընդլայնված շրջանակը (ԹԸՇ) (ներկայացված է Փարիզի համաձայնագրի 13-րդ հոդվածում) սահմանում է Փարիզի համաձայնագրի շրջանակներում հաշվետվողականության մի շարք նոր պահանջներ: Որպես Փարիզի համաձայնագրի կողմ՝ Հայաստանը պետք է 2024 թվականից սկսի զեկուցել իր արտանետումների, ինչպես նաև ԱՍԳ-ի իրագործման ուղղությամբ իր առաջընթացի մասին:

ԹԸՇ-ը ներկայացնում է ինչպես հաշվետվության մեջ արտացոլման ենթակա տեղեկատվությունը (ԶԳ կադաստր, ԱՍԳ-ի առաջընթաց), այնպես էլ հաշվետվություններին ներկայացվող պահանջները: ՄԱԿ ԿՓՇԿ-ի ընթացիկ հաշվետվողականության մեխանիզմի ներքո, երկրի ջերմոցային գազերի կադաստրը ներկայացվում է Ազգային հաղորդագրության միջոցով՝ զարգացող երկրների դեպքում չորս տարին մեկ պարբերականությամբ, ինչպես նաև երկամյա առաջընթացի զեկուցների միջոցով:⁷ ԹԸՇ-ի շրջանակներում խրախուսվում է հաշվետվությունների ներկայացումը երկու տարին մեկ պարբերականությամբ՝ թափանցիկության հաշվետվությունների տեսքով: Հաշվետվությունների նկատմամբ կիրառվում են հետևյալ պահանջները.

- ԶԳ (մարդածին) արտանետումների ազգային կադաստր
- Տեղեկատվություն, որն անհրաժեշտ է երկրի ԱՍԳ-ի առաջընթացի արձանագրման համար
- Կլիմայի փոփոխության ազդեցությունը և կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականությունը
- Անհրաժեշտ և ստացված տեղեկատվություն ֆինանսական, տեխնոլոգիաների փոխանցման և կարողությունների զարգացման աջակցության ուղղությամբ

Կլիմայի փոփոխության հետ կապված տվյալների հավաքագրման նոր գործիքների և ընթացակարգերի մշակման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել Փարիզի համաձայնագրի հաշվետվողականության պահանջները:

ՉՀՀ համակարգի նախագծման համար անհրաժեշտ է տեղյակ լինել ազգային համատեքստին, ինչպես նաև ներկայումս բախվում են Շրջակա միջավայրի նախարարությունում առկա կարիքներին՝ որոշելու համակարգի միջոցով նախատեսվելիք բաղադրիչները և բաղկացուցիչները:


Համաձայն Հայաստանի երրորդ երկամյա առաջընթացի զեկույցի (ԵԱՉ3), հիմնական ազգային ՉՀՀ համակարգը բաղկացած է հորիզոնական միջգերատեսչական համակարգման և հավաստագրման մեխանիզմից, որը պաշտոնապես գործում է Շրջակա միջավայրի նախարարության ընդհանուր համակարգման ներքո: Այնուամենայնիվ, դեռևս կա իրավական/պաշտոնական մեխանիզմների անհրաժեշտությունը՝ կլիմայի հետ կապված տվյալների տրամադրման և որակի ապահովման առումով համապատասխան գերատեսչությունների պարտավորությունները հստակեցնելու համար: Հաշվի առնելով նշվածը՝

⁷ Գործնականում երկրների զգալի մասը հաշվետվությունները ներկայացնում է շատ ավելի պակաս հաճախականությամբ

առանձնացվում են հետևյալ հիմնական բաղադրիչները՝ ՋԳ կադաստր, Մեղման և հարմարվողականության գործողություններ և Աջակցություն/Իրագործման միջոցներ:

Գծապատկեր 12 ներկայացնում է ՉՀՀ համակարգի և դրա ենթաբաղադրիչների կամ տարրերի համար անհրաժեշտ բաղադրիչների կազմաձևը: Խորհրդատվական թիմն առաջարկում է, որ ՉՀՀ համակարգը որպես արդյունք հնարավորություն տա արտածել ԱՍԳ-ի հետ համապատասխանության կարգավիճակը: Այնուամենայնիվ, վերը նշվածի համար անհրաժեշտ է որոշել կապերը համակարգի տարբեր բաղադրիչների և ենթաբաղադրիչների միջև՝ խուսափելու տեղեկատվության կրկնօրինակումից և կրկնակի հաշվառումից՝ ինչպես արտանետումների, այնպես էլ կրճատումների դեպքում:

Գծապատկեր 12 ՉՀՀ բաղադրիչները ըստ Հայաստանի կարիքների




ԱԳԱՕ՝ Արդյունաբերական գործընթացներ և արտադրանքի օգտագործում. ԳԱԱԶՕ՝ Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և այլ հողօգտագործումներ. ՄԱՀ՝ մեղմում և հարմարվողականության գործողություններ. ԿՖ՝ Կլիմայի ֆինանսավորում. ՏՓ՝ Տեխնոլոգիաների փոխանցում. ԿԶ՝ կառավարչական գործողությունների գաղափար. ԱԱՀ՝ Արտանետումների առևտրի համակարգ

Աղբյուր. Սեփական մշակում՝ հիմնված երրորդ ԵԱԶ-ի տեղեկատվության վրա:

ՉՀՀ բաղադրիչների ներկառուցումը ընդհանուր համակարգում պատկերացնելու համար ներկայացվում է հետևյալ գծապատկերը, որն ամփոփում է չափման, հաշվետվայնության և հավաստագրման համապատասխան ասպեկտները և մասնակիցներին՝ հիմնվելով այն փաստի վրա, որ համակարգը պետք է կատարի տեղեկատվության շտեմարանի գործառույթ՝ 1) արտանետումներ (կադաստր), 2) կրճատումներ (ծրագրերի/քաղաքականության հետ կապված) և 3) ֆինանսավորում: Չափման հատվածը ցույց է տալիս հավաքագրվելիք տեղեկատվության ուղղելիքները և տեղեկատվության հիմնական աղբյուրները. հաշվետվության հատվածում ցուցադրվում է, թե որտեղ է արտացոլվելու այս ամբողջ տեղեկատվությունը (օրինակ՝ ԵԱԶ), իսկ

հավաստագրման դեպքում՝ կենտրոնական դերը վերապահված է ՄԳՀԽ-ին, որը հանդես է գալիս որպես տեղեկատվության վավերացնող, ինչը համապատասխանում է հիմնական ինստիտուցիոնալ կառուցվածքին: Այնուամենայնիվ, ծրագրի ռեեստրը համախմբելու գործընթացներին պետք է ներգրավվեն լրացուցիչ այլ մասնակիցներ (արտաքին հավաստագրողներ), ի լրումն այն փաստի, որ կարող են լինել դեպքեր, երբ կոնկրետ տեղեկատվության վավերացնողներն այլ անձինք են (օրինակ՝ ՇՄՆ-ն):

Գծապատկեր 13 ՉՀՀ կառուցվածքը



Հետևյալ բաժիններում սահմանվում է առաջարկվող ՉՀՀ-ի յուրաքանչյուր բաղադրիչի հիմնական բնութագրերը:

4.1.1. ՋԳ կադաստր

ՋԳ ազգային կադաստրն օգտագործվում է երկրի ջերմոցային գազերի արտանետումների քանակային որոշման համար՝ Էներգետիկա, ԱԳԱՕ, ԳԱԱՅՕ և թափոնների ոլորտներում, որն իրականացվել է 1990-ից 2017 թվականներին: Տարբեր կատեգորիաներում, յուրաքանչյուր ոլորտի գնահատականները պահանջում են տարբեր ջանքեր տեղեկատվության ստեղծման, հավաքման, վավերացման, կառավարման և պաշտպանության համար՝ ի լրումն հատուկ մեթոդաբանությունների կիրառման: Հայաստանի դեպքում կադաստրի համար օգտագործվում են ԿՓՓՄԽ 2006թ. ուղեցույցները:

ՋԳ ազգային կադաստրը ներառում է ածխածնի երկօքսիդ (CO_2), մեթան (CH_4), ազոտի օքսիդ (N_2O), հիդրոքլորֆտորածխածիններ (ՀՖԱ) և ծմբի հեքսաֆտորիդ (SF_6), որոնք արտահայտված են զանգվածի միավորներով և ածխածնի երկօքսիդի համարժեքով (CO_2 համ.) օգտագործելով ԿՓՓՄԽ երկրորդ գնահատման զեկույցում (SAR) ներկայացված Գլոբալ տաքացման ներուժը (GWPs):

2017թ. -ին ՁԳ ազգային արտանետումները կազմել են 10624 Գգ CO₂ համ.՝ անտառային տնտեսության և այլ հողօգտագործման) և զուտ արտանետումները, ներառյալ կլանիչները, կազմել են 10,153 Գգ CO₂ համ՝ 3%-ով բարձր նախորդ տարվա համեմատ՝ պայմանավորված հետևյալով.

- Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալների աճ՝ արտահանում
- Ցրտաշունչ ձմեռ (բնակելի հատված)
- Ավելի շատ էներգիայի ծախս տրանսպորտի ոլորտում, ավտոտրանսպորտային պարկի աճի շնորհիվ
- Ավելացում շինարարության ոլորտում. պահանջվում է ավելի շատ ծավալով ցեմենտ

Ներառված կատեգորիաները ներկայացված են Աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8 ՁԳ կադաստրում ընդգրկված ոլորտները

Էներգիա	ԱԳԱՕ	ԳԱԱՅՕ	Թափոններ
<ul style="list-style-type: none"> • Հիմնական գործունեություն. Էլեկտրաէներգիայի և ջերմության արտադրություն • Բնակելի հատված • Առևտրային/հաստիտուցիոնալ • Արտադրական ոլորտներ և շինարարություն • Գյուղատնտեսություն/Անտառային տնտեսություն/ Ձկնորսություն/ Ձկնաբուծություն • Ճանապարհային փոխադրումներ • Այլ փոխադրումներ • Արդյունահանման և փոխադրման ընթացքում արտանետումներ 	<ul style="list-style-type: none"> • Հանքային արդյունաբերություն - ցեմենտի, կրի և ապակու արտադրություն • CO₂ արտանետումներ, որոնք առաջանում են քսանյութերի և պարաֆինների օգտագործումից, F-գազերի (ՀՖԱ-եր) արտանետումները սառնարանային տնտեսությունից, օդորակումից և արտադրանքի այլ օգտագործումից, ինչպես նաև. • SF₆-ի արտանետումներ Էլեկտրական սարքավորումների օգտագործումից: 	<p>Գյուղատնտեսություն</p> <ul style="list-style-type: none"> • Միզանյութի կիրառություն, CO₂ • Կենսազանգվածի այրում, CH₄ • Անուղղակի N₂O արտանետումներ գոմաղբի կառավարումից, N₂O • Գոմաղբի կառավարում, N₂O • Գոմաղբի կառավարում, CH₄ • Կառավարվող հողեր, N₂O • Էնտերիկ խմորում, CH₄ <p>Անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում (հողերի կատեգորիա)</p>	<ul style="list-style-type: none"> • Կոշտ թափոնների հեռացում • Թափոնների այրում և բաց այրում • Թափոնաջրերի վերամշակում և ջրահեռացում:

Կադաստրի գնահատումները հիմնված են հետևյալ մեթոդաբանությունների վրա.

- Ջերմոցային գազերի ազգային կադաստրի վերաբերյալ ԿՓՓՄԽ ուղեցույցներ, 2006թ. Օգտագործվել է ԿՓՓՄԽ կադաստրի կազմման ծրագրաբանության 2.69.7235


տարբերակը՝ տվյալների մուտքագրման, արտանետումների հաշվարկման, արդյունքների վերլուծության և եզրակացությունների համար:

- Լավ գործելակերպի ուղեցույցներ և անորոշության կառավարում ջերմոցային գազերի ազգային կադաստրներում» (ԿՓՓՄԽ 2000թ.)
- «Լավ գործելակերպի ուղեցույցներ հողօգտագործման, հողօգտագործման փոփոխության և անտառտնտեսության համար» (ԿՓՓՄԽ 2003թ.) և
- Ջերմոցային գազերի ազգային կադաստրերի համար 2006թ. ԿՓՓՄԽ ուղեցույցի 2013թ. լրացումը. Ջրաճահճային տարածքները, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, «1996թ. ԿՓՓՄԽ վերանայված ուղեցույցները ջերմոցային գազերի ազգային կադաստրերի համար» նույնպես օգտագործվել են Ազգային կադաստրի պատրաստման ժամանակ՝ որոշակի պարամետրերի կանխադրված արժեքների համար:

ՋԳ կադաստրի ինստիտուցիոնալ կառուցվածքը

Գծապատկեր 14 ցույց է տալիս, որ Շրջակա միջավայրի նախարարությունը կադաստրի նախապատրաստման և տարբեր ոլորտներից հիմնական տեղեկատվության մատակարարների գործողությունների համակարգման համար պատասխանատու կառույցն է: Նմանապես, այն մատնանշում է, որ կադաստրի ինտեգրումը ենթադրում է կոնկրետ գերատեսչությունների և ՄԳՀԽ-ի կողմից վերանայում՝ նախքան ՄԱԿ ԿՓՇԿ ուղարկելը:


Գծապատկեր14 ՋԳ կադաստրի նպատակով տվյալների հավաքագրման գործընթացում ներգրավված հիմնական մասնակիցները



Տվյալների հավաքագրման գործընթացներ

ՇՄՆ-ն, որպես կադաստրի համակարգող, իրականացնում է տարբեր խնդիրներ՝ տեղեկատվության տարբեր աղբյուրներից տեղեկատվության հավաքագրման, կառավարման և պահպանման ուղղությամբ, ինչը ենթադրում է գործողություններ դրանց մշակման, վավերացման և մեթոդաբանական կիրառման համար: Սակայն այդ գործառնությունները պաշտոնապես սահմանված չեն որևէ կանոնակարգում: Տվյալների հավաքագրման և կառավարման հետ կապված հիմնական խնդիրները ներկայացված են Գծապատկեր 15 -ում:

Գծապատկեր 15 ՋԳ կադաստրի տվյալների հետ կապված գործընթացներ



Աղբյուր՝ ԵԱԶ3

Վերջին կադաստրի (2017թ.) ինտեգրման ուղղությամբ իրականացված աշխատանքները նշված են ստորև (ԵԱԶ3-ի հիման վրա):

- «Հարցաթերթերի» մշակում ըստ ոլորտների՝ գործունեության վերաբերյալ ներկայացվող տվյալների պահանջները հստակեցնելու համար:
- Սերտ համագործակցություն է հաստատվել ՋԳ կադաստրի մշակման փորձագիտական թիմի և Վիճակագրական կոմիտեի (ՎԿ) միջև՝ բարելավելու ՎԿ-ի կողմից տնային տնտեսությունների հետազոտության շրջանակներում հավաքագրված տվյալների ճշգրտությունը/որակը և հետևողականությունը:
- Արտանետումների և կլանումների վերաբերյալ գործողությունների տվյալների ճշգրտության բարելավում
- Կադաստրի ամբողջականության բարելավում
- Որակի վերահսկման գործընթացների բարելավում:
- ՋԳ կադաստրի մշակման ազգային կարողությունների զարգացում:

Հայաստանը մեծ ջանքեր է գործադրել ԱԿՀ-ի ներկայացման, անհրաժեշտ գործողությունների իրականացման և անհրաժեշտ տեխնիկական թիմի ներգրավման ուղղությամբ ստանձնած պարտավորությունները կատարելու համար:

Մասնավորապես, Հայաստանը ակտիվ մասնակից է եղել ՄԱԿ ԿՓՇԿ-ի հովանու ներքո ստեղծված միջազգային խորհրդատվությունների և վերլուծության (ICA, ԿԳՆ) գործընթացին: Ինչպես նշվում է ՄԱԿ ԿՓՇԿ-ի կողմից՝⁸ «Փարիզյան համաձայնագրով ընդլայնված թափանցիկության շրջանակը (ԸԹՇ) հիմնված է Կոնվենցիայի ներքո գործող թափանցիկության մեխանիզմների վրա, ներառյալ Կլիմայի Գործողությունների Նախաձեռնությունը (ICA, ԿԳՆ): ICA-ի գործընթացը Կողմերի և շահագրգիռ կողմերի համար էական ուսուցողական հնարավորություն է ընձեռում ԹԸՇ-ին ավելի լավ նախապատրաստվելու համար»: Հայաստանն արդեն մասնակցել է ԵԱԶ-ների տեխնիկական վերլուծության երեք փուլերին (համապատասխանում է երկրի երեք ԵԱԶ-երին), տեխնիկական վերլուծության վերջին փուլը մեկնարկել է 2021թ. նոյեմբերի վերջին/դեկտեմբերի սկզբին: Հետևաբար, ICA-ին ակտիվ մասնակցությունը պետք է արժեքավոր դեր ունեցած լինի Հայաստանի համար ԹԸՇ-ին նախապատրաստվելու առումով:

Այնուամենայնիվ, պահանջվում է, որ գործնականում իրականացվող գործողությունները հաստատվեն կանոնակարգի միջոցով, ինչը թույլ կտա ապահովել կադաստրի պատրաստման համար անհրաժեշտ ընթացակարգերի և ինստիտուցիոնալ միջոցառումների համընդգրկունությունը: Նմանապես, կադաստրի վերաբերյալ կանոնակարգի ընդունումը թույլ կտա գերծ մսալ կանոնակարգային բացերից, որոնք առաջացնում են ուշացումներ կամ ռիսկ են ենթարկում տեղեկատվության հուսալիությունը և հավաստիությունը: Հարկ է նշել, որ կանոնակարգի հաստատումը հնարավորություն կտա ներառել այնպիսի ասպեկտներ, որոնք կհասցեագրեն համապատասխան տեխնիկական խմբերի կողմից բացահայտված կարիքները: Կադաստրի իրավական դաշտն ի մի բերելու համար պահանջվում է ունենալ կլիմայի փոփոխության մասին օրենք և ՋԳ կադաստրի վերաբերյալ կոնկրետ որոշում և տեխնիկական ուղեցույցներ՝ պատշաճ կերպով արտացոլելու տարաբնույթ հարցերի ուղղությունները՝ սկսած ՄԱԿ ԿՓՇԿ նկատմամբ հաշվետվողականության պարտավորությունից մինչև մշակման գործընթացի առանձնահատկությունները: Մանրամասները տես 6-րդ գլխի Ա1.1 և Ա1.3 առաջարկություններում:

4.1.2. Մեղմման և հարմարվողականության գործողություններ

Անհրաժեշտ է ապահովել Հայաստանում իրականացվող մեղմման, և հարմարվողականության գործողությունների հետ կապված տեղեկատվության համակարգում, քանի որ դրանք ընդհանուր առմամբ ձեռնարկված գործողություններ են և ներկայացնում են երկրի ջանքերը՝ կլիմայի փոփոխության հետևանքները մեղմելու և խոցելիությունը նվազեցնելու ուղղությամբ: Ներկայումս մեղմման գործողությունների մեծ մասը իրականացվում է էներգետիկայի ոլորտում, սակայն տեղեկատվությունը կենտրոնացված չէ և ոչ միշտ է տրված դրանց քանակային գնահատականը, և այդ առումով կարևոր է ՉՀՀ համակարգում նախատեսել բաղադրիչ, որը կօգնի հեշտությամբ գտնել տեղեկատվությունը ըստ ծրագրի տեսակի, կարգավիճակի, արժեքի և ֆինանսավորման, ծրագրի բնութագրերի և արդյունքների:

Ըստ ԵԱԶ3-ի՝ երկրում իրականացվող մեղմման միջոցառումների գծով տվյալների հավաքագրումը և որակի վերահսկումը հիմնական մարտահրավերներն են, որոնց առաջանում են ԵԱԶ-ների մշակման ժամանակ, քանի որ այդ միջոցառումները համակարգված չեն, և առկա են մեղմման գործողությունների

⁸ <https://unfccc.int/ICA>

չհաշվառման/բացթողնման կամ կրճատումների կրկնակի հաշվառման ռիսկեր: Այս ռիսկերը հասցեագրելու համար իրականացվել են որակի վերահսկողության ընթացակարգեր, որոնք ներառում են ձեռք բերված տվյալների վերլուծություն և դրանց խաչաձև ստուգում՝ օգտագործելով հանրամատչելի տվյալները, ինչպես նաև գնահատելով ԵԱՀ2-ում ներկայացված մեղմման գործողությունների ուղղությամբ արձանագրված առաջընթացը: Նշվածին հաջորդում են քննարկումները տվյալների մատակարարների հետ և անհրաժեշտության դեպքում՝ տվյալների վերաբերյալ պարզաբանումների ստացումը:

ՉՀՀ համակարգի շրջանակներում այս բաղադրիչը կօգտագործվի որպես մեղմման և հարմարվողականության գործողությունների հետ կապված տեղեկատվության գրանցման միջոց՝ արտացոլելով ազգային կամ միջազգային մեխանիզմների ներքո իրականացվող ծրագրերը, որոնք կլինեն քանակապես որոշելի, հաշվետունակ և ստուգելի, կապահովվի դրանց բնապահպանական ամբողջականությունը, թափանցիկությունը, ճշգրտությունը, լիակատարությունը, համեմատելիությունը և համապատասխանությունը, և թույլ կտա խուսափել կրճատումների կրկնակի հաշվառումից, ներառյալ.

- Զաղաքականությանն առնչվող ծրագրեր, ինչպիսիք են Էներգետիկայի ոլորտի զարգացման ռազմավարական ծրագիրը
- Ազգային մակարդակով ընդունելի Մեղմման Գործողություններ (NAMA, ԱԸՄԳ),
- Անտառահատումների և անտառների քայքայման հետևանքով արտանետումների նվազեցման մեխանիզմի շրջանակներում ծրագրեր և նախագծեր (ԱՀԱԶԱԿ+, REDD +);
- Ծրագրեր, որոնք իրականացվում են Կիոտոյի արձանագրությամբ սահմանված Մաքուր զարգացման մեխանիզմի (CDM, ՄՉՄ) ներքո.
- Ծրագրեր, որոնք իրականացվում են ազգային և միջազգային շուկաների շրջանակներում ինչպես կարգավորվող, այնպես էլ կամավոր.
- Շրջակա միջավայրի նախարարության կողմից ընդունված կրճատման այլ ծրագրեր և գործողություններ՝ ըստ տարբեր ոլորտների, ՉՀՀ համակարգերով:

Մեղմման գործողություններ

Այն ոլորտները, որոնցում ներկայումս երկրում իրականացվում են մեղմման գործողություններ, հետևյալն են.

Աղյուսակ 9 Հայաստանում նախատեսված կամ իրականացվող մեղմման գործողություններ

Ոլորտ	Գործողություն
Էլեկտրաէներգիա	<ul style="list-style-type: none"> • Միջին մասշտաբի կոմունալ նշանակության արևային ՖՎ էլեկտրակայանների կառուցում • Ավելի լայնամասշտաբ կոմունալ նշանակության արևային ՖՎ էլեկտրակայանների կառուցում • Մինչև 5 ՄՎտ հզորությամբ արևային ՖՎ կայանների գործարկում

	<ul style="list-style-type: none"> • Փոքր հիդրոէլեկտրակայանների (ՓՀԷԿ) շահագործում. • «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության կողմից իրականացվող բաշխիչ ցանցերի արդիականացում
<p>Տրանսպորտ</p>	<ul style="list-style-type: none"> • Հասարակական տրանսպորտի օպտիմալացման ռազմավարական ծրագիր (ՀՏ) • Հասարակական էլեկտրական տրանսպորտի (տրոլեյբուսների) պարկի և ենթակառուցվածքների վերազինում • Հասարակական էլեկտրատրանսպորտի (Երևանի մետրոպոլիտեն) վերազինում. • Երևանի հասարակական և մասնավոր տրանսպորտային միջոցների վերակառուցում սեղմված բնական գազով (CNG) շահագործման համար • Ճանապարհային ենթակառուցվածքների բարելավում • Զաղաքային տրանսպորտի օպտիմալացում և կառավարման արդյունավետության բարձրացում (ներառյալ աղբահանության և սանիտարական մաքրման մեքենաների և սարքավորումների ոլորտում) • «Երևանի ավտոբուս» ծրագիր • Տրանսպորտի ոլորտում վառելիքից էլեկտրաէներգիայի անցման խթանում
<p>Շենքեր</p>	<ul style="list-style-type: none"> • «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» ՄԱՉԾ-ԿԿՀ ծրագիր • Երևանի հասարակական շենքերի էներգաարդյունավետության ծրագիր • Տնային տնտեսությունների էներգաարդյունավետության բարձրացման հիփոթեքային վարկեր • Ներդրումներ քաղաքային շենքերի էներգաարդյունավետ արդիականացման և լուսավորության համար • Բազմաբնակարան շենքերի (ԲԲՇ) էներգաարդյունավետության մեծացմանն ուղղված վարկային մեխանիզմներ • Վերականգնվող և արդյունավետ էներգիայի հասանելիությունն Վայք և Սպիտակ համայնքներում (AREEM) ծրագիր
<p>Լուսավորություն</p>	<ul style="list-style-type: none"> • Աջակցություն Հայաստանի համայնքներին՝ կլիմայական խելացի լուծումների ներդրման և իրագործմանն ուղղությամբ, ՄԱՉԾ-ԳԷՀ ծրագիր • Կանաչ քաղաքային լուսավորություն • Երևանի փողոցների լուսավորություն • Գյումրու փողոցների լուսավորություն • ՀՀ կառավարության 2018-2019թթ. պետական սուբվենցիոն ծրագիր • Լուսավոր սահման

<p>Փոքր և միջին ձեռնարկություններ (ՓՄՁ)</p>	<ul style="list-style-type: none"> • Էներգաարդյունավետության ծրագիր ՓՄՁ-ների համար (GAF-EE) • Վերականգնվող Էներգիայի խթանում • Կանաչ տեխնոլոգիաների (ՎԷ և ԷԱ) ներդրումներ փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) և ընկերությունների համար • Աջակցություն առևտրային բանկերում ԷԱ վարկավորման պրոդուկտների զարգացմանը՝ հնարավորություն տալով տնային տնտեսություններին և բիզնես հաճախորդներին վարկեր ստանալ ԷԱ արդիականացման նպատակներով: • «ՓՄՁ մրցունակության բարձրացում կայուն նորարարական տեխնոլոգիաների առավել լայն կիրառման և խթանման միջոցով»
<p>Վերականգնվող Էներգիայի պահանջարկ</p>	<ul style="list-style-type: none"> • Ինքնավար ԷլեկտրաԷներգիայի գեներատորներ (մինչև 500 կՎտ) • Հայաստանի չգազաֆիկացված գյուղական համայնքներում «Էներգետիկ աղքատության» նվազեցում արևային ջրատաքացուցիչների և ՖՎ վահանակների տեղադրման ուղղության աջակցության տրամադրմամբ, ներառյալ «ԿԶՆ-ի իրականացման նորարարական լուծումներ Հայաստանում» ծրագրի «Մատչելի և մաքուր Էներգիա ԿԶՆ 7-ի արագացված իրականացման մոդել» բաղադրիչի միջոցով: • ԵՄ-ն Երևանի արևային համայնքի համար • Համայնքի Էներգաարդյունավետության /ԷԱ/ ծրագիր • «ԵՄ-ն Հայաստանի համար կայուն Էներգետիկան» ծրագիր. Վերականգնվող Էներգիայի խթանման ծրագիր Ապարան և Արթիկ համայնքներում. • ԳԷՀ-ի փոքր դրամաշնորհների ծրագիր, ՄԱԶԾ-ԳԷՀ
<p>Ոլորտ</p>	<ul style="list-style-type: none"> • Նոր տեսակի ցեմենտի արտադրություն • Տեխնոլոգիաների արդիականացում ցեմենտի գործարանում
<p>Գյուղատնտեսություն և հողօգտագործում</p>	<ul style="list-style-type: none"> • ՀՀ-ում անասնաբուծության զարգացման ծրագիր 2019-2023թթ. • Արոտավայրերի կառավարման և կենդանիների այլընտրանքային արածեցման նոր համակարգի կիրառում. • Անտառապատման և անտառվերականգնման աշխատանքներ (անտառատնկում). • Արևային ֆոտովոլտային վահանակների և ջրատաքացուցիչների տեղադրում, Էներգախնայող վառարանների տրամադրում: • Կառավարման համակարգի ներդրում և դեգրադացված արոտավայրերի, խոտհարքների և վարելահողերի վերականգնում.

Թափոններ

- Նուբարաշենի աղբավայրի գազի առգրավման և էլեկտրաէներգիայի արտադրության ՄՁՄ ծրագիր
- Կոտայքի և Գեղարքունիքի կոշտ թափոնների կառավարման ծրագիր
- Երևանի կոշտ թափոնների կառավարում
- Վանաձորի կոշտ թափոնների կառավարման ինտեգրված համակարգ


Աղբյուր՝ ԵԱՁՅ

Հայաստանում մեղմման միջոցառումների իրականացման փորձի արդյունքում բացահայտվել են հետևյալ խոչընդոտները.

- Մեղմման գործողությունների և դրանց ազդեցության գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրում և որակի վերահսկում
- Բազմաթիվ կողմեր են ներգրավված տարբեր մակարդակներում իրականացվող մեղմման գործողություններում՝ ինչը զուգորդված է երկրում իրականացվող մեղմման միջոցառումների ընդհանուր համակարգման/մոնիտորինգի բացակայության հետ:
- Կա ռիսկ, որ որոշ հիմնական գործողություններ կարող են անտեսվել կամ կրճատումները կարող են հանդիսանալ կրկնակի հաշվառման արդյունք:
- Աջակցության վերաբերյալ ՉՀՀ-ի միջոցով սահմանված պաշտոնական համակարգի բացակայությունը թույլ չի տալիս ապահովել կլիմայի ուղղությամբ ստացված ֆինանսավորման ճշգրիտ արձանագրում:

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ մեղմման գործողությունների մեծ մասը վերաբերում է Էներգետիկայի ոլորտին (հիմնականում Էներգաարդյունավետության և վերականգնվող աղբյուրների), թեև դրանք իրականացվում են այլ ոլորտներում: Այս բաղադրիչը ՉՀՀ համակարգում ներդնելու համար անհրաժեշտ է ստեղծել ռեստորի կազմման գործընթաց ծրագրի հեղինակների համար, որը ներառում է հետևյալ փուլերը.

Գծապատկեր16 Մեղմման ծրագրերի գրանցում ՉՀՀ համակարգում



Գործընթացի սկարագրությունը ներկայացված է սույն հաշվետվության 6-րդ գլխի Ա3.1 առաջարկությամբ:

4.1.3. Կլիմայի ֆինանսավորում / Աջակցություն / Իրականացման միջոցներ

ՉՀՀ համակարգում այս բաղադրիչը նպատակ ունի հավաքագրել, արձանագրել, համակարգել կլիմայի փոփոխության դեմ արդյունավետ գործողությունների իրականացմանը, տեխնոլոգիաների զարգացմանը, տարածմանը և կիրառմանը, ֆինանսավորման հասանելիությանը վերաբերող տեղեկատվության պահպանման միջոցները, ինչպես նաև Հայաստանում կրթության, վերապատրաստման հանրային իրազեկման թափանցիկ, ժամանակին և հստակ կազմակերպման ասպեկտներին:

Կլիմայի մեղմման և հարմարվողականության ծրագրերի ֆինանսավորումը հաճախ ընդհանրական առումով բաժանվում է *ածխածնային և կլիմայական ֆինանսավորման* տեսակների: Հաջորդ բաժնում մենք կնկարագրենք ֆինանսավորման այս աղբյուրներից յուրաքանչյուրը և կթվարկենք այս աղբյուրներից յուրաքանչյուրի որոշ օրինակներ:

Ածխածնի և կլիմայական ֆինանսավորում

Ածխածնային ֆինանսավորումը սահմանվում է որպես *«ջերմոցային գազերի արտանետումների հավաստագրված կրճատումների փոխանցման և սեփականության դիմաց վճարում, որը կարող է օգտագործվել գնող երկրի արտանետումների կրճատման պարտավորությունները կատարելու համար»:*(Carbon Limits 2018) Սա նշանակում է, օրինակ, որ արևային նախագիծը կարող է եկամուտ ստանալ ածխածնի շուկա արտանետումների կրճատման մատակարարումից և վաճառքից (կամ երկկողմանի առևտրի միջոցով), ի լրումն էներգիայի արտադրությունից ստացվող եկամուտների:

Կլիմայական ֆինանսավորումն ավելի լայնորեն կարելի է սահմանել է որպես *«ֆինանսական հոսքեր, որոնք ուղղված են ցածր ածխածնային և կլիմայի նկատմամբ դիմակայուն զարգացման միջամտություններին՝ ջերմոցային գազերի մեղմման կամ հարմարվողականության ուղղակի կամ անուղղակի օգուտներով»:*(Carbon Limits 2018): Կանաչ Կլիմայի հիմնադրամը կլիմայական ֆինանսավորում տրամադրող կառույցներից մեկի օրինակ է:

Carbon Finance

Ածխածնի ֆինանսավորման հիմնական աղբյուրը մինչ այժմ եղել է Կիոտոյի արձանագրության **Մաքուր զարգացման մեխանիզմը** (ՄՉՄ): ՄՉՄ առաջին նախագիծը հաստատվել և գրանցվել է 2004 թվականին, և այդ ժամանակվանից ի վեր գրանցվել է մոտ 7500 ծրագիր: Շատ առումներով ՄՉՄ-ն մեծ հաջողություն է ունեցել՝ ծրագրերում իրականացնելով ընդհանուր առմամբ 400 միլիարդ ԱՄՆ դոլարի ներդրում և հասնելով 1500 միլիոն տոննա CO₂ արտանետումների կրճատման: Արտանետումների կրճատման համար վճարվող գինը գազաթանակետին է հասել՝ կազմելով 30 ԱՄՆ դոլարից բարձր մեկ տ CO₂ համ արտանետումների կրճատման համար 2009թ. -ին, այնուհետև աստիճանաբար նվազել է՝ մինչև 2012 թվականին ՄՉՄ ածխածնի շուկայի փլուզումը՝ պայմանավորված պահանջարկի կտրուկ անկմամբ: Կիոտոյի արձանագրության ժամկետը լրացել է 2020թ. , և այդ արձանագրությանը փոխարինելու են եկել Փարիզի համաձայնագիրը և դրա 6-րդ հոդվածի շրջանակներում նոր համագործակցային մոտեցումները: 6-րդ հոդվածի մեխանիզմների շրջանակն ավելի լայն է, քան արտանետումների կրճատման միասնական շուկան (որը ստեղծվել է 6.4 կետի համաձայն՝ որպես մեղմմանը նպաստող և կայուն զարգացմանն աջակցող

մեխանիզմ), այն նաև ներառելու է երկկողմ համագործակցության (կետ 6.2) և ոչ շուկայական մոտեցումների (պարբերություն 6.8) հնարավորություններ:

Ածխածնային ֆինանսավորման սխեմաների մեկ այլ տեսակ, որը դուրս է Փարիզի համաձայնագրի և ՄՉՄ-ի շրջանակից, **ածխածնի կամավոր շուկաներն** են: Դրանք ներառում են արտանետումների կրճատման վաճառքն այն կազմակերպություններին, որոնք կամավոր ընտրում են արտանետումների նվազեցման հաշվանցումային տարբերակը: Ի տարբերություն ՄՉՄ-ի, ծրագրերը և արտանետումների հավաստագրված կրճատումները վերանայվում և հաստատվում են ոչ թե ՄԱԿ ԿՓՇԿ կառույցների կողմից, այլ անկախ կառավարման մարմինների կողմից, որոնք իրականացնում են համապատասխան կամընտիր չափորոշիչներով վերահսկողություն: Կան շուկայի տարբեր հատվածներ կամավոր հաշվանցումների հավաստագրման և չափորոշիչներ⁹ որոնք նմանություններ ունեն ՄՉՄ կանոնների և ընթացակարգերի հետ, բայց, որպես կանոն, ընտրանքային են՝ ելնելով ծրագրի տեսակներից և ոլորտների կիրառելիությունից:

Կլիմայական ֆինանսավորում

Կլիմայական ուղղությամբ ֆինանսավորումը հիմնականում կարելի է բաժանել ՄԱԿ ԿՓՇԿ-ի կլիմայի ֆինանսավորման և կլիմայի ֆինանսավորման այլ տեսակների:

ՄԱԿ ԿՓՇԿ Կլիմայական ֆինանսավորում

Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման և հարմարվողականության համար զարգացող երկրներին ֆինանսական աջակցությունը կարևոր խնդիր է եղել 1994թ.-ից ի վեր՝ ՄԱԿ ԿՓՇԿ-ի ուժի մեջ մտնելուց հետո: 2011թ.-ին ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ի տարեկան համաժողովում կարևոր ուղենիշ է արձանագրվել, ըստ որի սահմանվել է թիրախ՝ մինչև 2020թ. տարեկան 100 միլիարդ ԱՄՆ դոլար փոխանցել զարգացող երկրներին, այդ թվում՝ կլիմայի հետ կապված ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ֆինանսավորման ուղղությամբ: Ստորև ներկայացված են ՄԱԿ ԿՓՇԿ-ի կլիմայական ֆինանսավորման որոշ աղբյուրներ.

Չարգացած երկրների կողմից երկկողմ ֆինանսավորումը կլիմայական ֆինանսավորման զգալի աղբյուր է: Ի լրումն զարգացած երկրների զարգացման ազգային գործակալությունների և ֆինանսական հաստատությունների, այս կատեգորիան ներառում է Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ) և Կանաչ կլիմայի հիմնադրամի (ԿԿՀ) ֆինանսավորումը: ԳԷՀ-ը գործում է ավելի քան 20 տարի՝ 1992թ. կայացած Ռիոյի «Երկրի գազաթափոցի» հետո, և ունի ավելի լայն լիազորությունների շրջանակ, քան կլիմայական ֆինանսավորումը: ԿԿՀ-ի դեպքում, որն ամբողջությամբ կենտրոնացած է կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ուղղությամբ, ֆինանսավորման առաջին քայլերն իրականացվել են 2015թ. և 2021թ. սկզբի դրությամբ ֆինանսավորվել է մոտ 158 ծրագիր՝ 7,2 միլիարդ ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով ԿԿՀ-ի հատկացված միջոցներով՝ ակնկալելով 1,2 միլիարդ տոննա CO₂ հմ մ. արտանետումների կանխում¹⁰: ԿԿՀ-ն առաջարկում է մի շարք ֆինանսական

⁹ Երկու կարևոր չափորոշիչներ են Ածխածնի Հավաստագրված Ստանդարտը (ԱՀՍ, VCS) և Ոսկու Ստանդարտը: Տես՝ <http://www.v-c-s.org/> և <http://www.goldstandard.org/>

¹⁰ <https://www.greencclimate.fund/>

գործիքներ, ներառյալ դրամաշնորհներ, արտոնյալ վարկեր, պարտքի ֆինանսավորում, սեփական կապիտալի ֆինանսավորում և երաշխիքներ:

Չարգացման բազմակողմ բանկերը ներառում են Համաշխարհային բանկի խումբը, Ասիական զարգացման բանկը, Աֆրիկյան զարգացման բանկը, Միջամերիկյան զարգացման բանկը, Վերակառուցման և Չարգացման Եվրոպական Բանկը և Հյուսիսային զարգացման հիմնադրամը:

ՄԱԿ ԿՓՇԿ կլիմայական ֆինանսավորման երրորդ կարևոր կատեգորիան մասնավոր ֆինանսավորումն է, որը հավաքագրվում է կլիմայական ուղղությամբ հանրային ֆինանսավորման միջոցներից:

Կլիմայի ֆինանսավորման այլ աղբյուրներ

Այլ կլիմայական ֆինանսավորում ներառում է ֆինանսավորման աղբյուրների լայն շրջանակ՝ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր, և միջոցներով, որոնք հատկացվում են զարգացած և զարգացող երկրներում:¹¹ Կլիմայի քաղաքականության նախաձեռնության(2019) գնահատմամբ, 2017-2018թթ. կլիմայի հետ կապված համաշխարհային ֆինանսական հոսքերը կազմել են միջինում տարեկան 579 միլիարդ ԱՄՆ դոլար: Վերականգնվող էներգիայի ոլորտում ներդրումների ֆինանսավորումը դրա ամենամեծ բաղադրիչն է և 2017-2018 թվականներին կազմել է մոտ 60%:

Այս կատեգորիային են պատկանում Կանաչ պարտատոմսերը, ինչպես նաև ցանկացած տեսակի պարտատոմսային գործիքներ, որտեղ հասույթը ուղղորդվում է բացառապես նոր և/կամ գոյություն ունեցող հաստատված «կանաչ նախագծերի/ծրագրերի» մասնակիորեն կամ ամբողջությամբ ֆինանսավորմանը կամ վերաֆինանսավորմանը:

Փարիզի համաձայնագրի ներքո կողմերը համաձայնություն են ձեռք բերել ստանդարտ ձևաչափի վերաբերյալ, որով պետք է առաջնորդվեն զարգացած երկրները՝ զարգացող երկրներին տրամադրվող ածխածնի և կլիմայի ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելիս: Նմանապես, զարգացող երկրները պարտավոր են¹² ստացված և անհրաժեշտ ածխածնային և կլիմայական ֆինանսավորման վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել իրենց Երկամյա Առաջընթացի Չեկույցում: Ներկայացման ենթակա տեղեկատվությունը ցույց է տրված Գծապատկեր 17-ում:

Գծապատկեր 17 Անհրաժեշտ և ստացված ֆինանսական աջակցության վերաբերյալ ներկայացման ենթակա տեղեկատվություն

¹¹ Կլիմայի տեղական ֆինանսավորումը զարգացած երկրներում ներկայումս կազմում է կլիմայի ընդհանուր ֆինանսավորման մեծ մասը:

¹² Չարգացող/ստացող երկրների պարտավորություններին անմիջականորեն անդրադարձ չի կատարվում Փարիզի համաձայնագրում, այլ ՄԱԿ ԿՓՇԿ-ի ընդլայնված թափանցիկության շրջանակի ներքո հաշվետվությունների ներկայացման տեխնիկական ձեռնարկում(2020), որտեղ օգտագործվում է «պարտավոր է/են» արտահայտությունը:

<p>Տեստային ձևաչափով՝ անհրաժեշտ ֆինանսական աջակցություն</p> <p>ա) Ոլորտներ, որոնց համար 4-րդը ցանկանում է ներդրվել միջազգային ֆինանսներ, ներառյալ միջազգային ֆինանսներ ներգրավելու համար գոյություն ունեցող խոչընդոտները:</p> <p>բ) Լկարագրություն, թե ինչպես է աջակցությունը նպաստելու իր ԱՄԳ-ին և Փարիզի համաձայնագրի երկարամյակ նպատակներին:</p>	<p>Ընդհանուր աղյուսակային ձևաչափով (քանակական և/կամ որակական տեղեկատվություն) – անհրաժեշտ ֆինանսական աջակցություն</p> <p>ա) Անվանումը (գործողության, ծրագրի կամ նախագծի):</p> <p>բ) Ծրագրի/ծրագրի նկարագրություն, գ) Գնահատված գումարը (ներքին արժույթով և ԱՄՆ դոլարով),</p> <p>դ) Անկախ վիճակում, արտոնյալ վարկ, ոչ արտոնյալ վարկ, սեփական կապիտալ, երաշխիք կամ այլ),</p> <p>զ) Աջակցության տեսակը (մեղմում, հարմարվողականություն կամ համագում),</p> <p>է) Ոլորտ և ենթաոլորտ,</p> <p>զ) Արդյո՞ք գործողությունը կնպաստի տեխնոլոգիաների զարգացմանը և փոխանցմանը և/կամ կարողությունների զարգացմանը, անհրաժեշտության դեպքում,</p> <p>է) Արդյոք գործողությունը խարսխված է ազգային ռազմավարության և/կամ ԱՄԳ-ի հիմքի վրա:</p> <p>ը) Անկախ վիճակում օգտագործումը, ազդեցությունը և գնահատված արդյունքները:</p>	<p>Ընդհանուր աղյուսակային ձևաչափով (քանակական և/կամ որակական տեղեկատվություն) – ստացված ֆինանսական աջակցություն</p> <p>ա) Անվանումը (գործողության, ծրագրի կամ նախագծի):</p> <p>բ) Ծրագրի/նախագծի նկարագրություն,</p> <p>գ) Ուղի,</p> <p>դ) Ստացող կազմակերպություն</p> <p>ե) Իրականացնող անձ,</p> <p>զ) Ստացված գումարը (ներքին արժույթով և ԱՄՆ դոլարով),</p> <p>է) Ժամկետներ</p> <p>զ) Ֆինանսական գործիք (դրամաշնորհ, արտոնյալ վարկ, ոչ արտոնյալ վարկ, սեփական կապիտալ, երաշխիք կամ այլ)</p> <p>է) Կարգավիճակ (կատարված կամ ստացված)</p> <p>ը) Ոլորտ և ենթաոլորտ</p> <p>թ) Աջակցության տեսակը (մեղմում, հարմարվողականություն կամ համագում)</p> <p>ժ) Արդյո՞ք գործողությունը նպաստել է տեխնոլոգիաների զարգացմանը և փոխանցմանը և/կամ կարողությունների զարգացմանը:</p> <p>ի) Գործունեության կարգավիճակը (պլանավորված, ընթացիկ կամ ավարտված),</p> <p>լ) Օգտագործում, ազդեցություն և գնահատված արդյունքներ:</p>
--	---	--

Աղբյուր. Փառիզի համաձայնագրի ԿՓԾԿ-ի կողմից ընդլայնված թափանցիկության շրջանակի ներքո հաշվետվությունների ներկայացման տեխնիկական ձեռնարկ (2020), էջ 44

Հայաստանի կարիքները

Ըստ ԵԱԶ3-ի՝ ստացված միջազգային աջակցությունն ուղղված է նպաստելու երկրի ցածր արտանետումային զարգացմանը՝ ոլորտային քաղաքականության և առաջնահերթ ծրագրերի իրականացման, ինչպես նաև երկրի տնտեսական և բնապահպանական զարգացման նպատակներին լավագույնս համապատասխանող բիզնես լուծումների խթանման միջոցով:

Ստացված աջակցության տեսակը կարող է լինել երկկողմ (հիմնականում դրամաշնորհներ) և բազմակողմ (հիմնականում պարտքային գործիքներ)՝ կլիմայի ֆինանսավորման, տեխնոլոգիաների փոխանցման և կարողությունների զարգացման ուղղություններով: Այսպիսով, ԶՀՀ համակարգը պետք է պարունակի և համակարգի այս տեսակի տեղեկատվությունը:

Մինչ այժմ ստացված աջակցության վերաբերյալ տվյալների հավաքագրման ժամանակ ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվությունը ստացվում էր Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) տվյալների բազայից և հանրությանը հասանելի այլ աղբյուրներից (ծրագրային փաստաթղթեր և հաշվետվություններ, դոկորների պարբերական հաշվետվություններ, ֆինանսական հաստատությունների տվյալներ), ինչպես նաև՝ համապատասխան պետական մարմիններից (ԵԱԶ3):

Հարկ է նշել, որ Էներգետիկ ոլորտը ստացել է կլիմայի հետ կապված զարգացման ֆինանսավորման ամենամեծ ծավալները՝ 2017-2021 թթ. ծրագրված հիմնական մեղմման միջոցառումների ուղղությամբ (հաշվի առնելով, որ Էներգետիկ ոլորտն առավել էական մասնակցություն ունի երկրի ԶԳ արտանետումների ոլորտում):

Այնուամենայնիվ, ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել նաև կոշտ թափոնների վերամշակման, շրջակա միջավայրի պահպանության, գյուղատնտեսության և ջրային ռեսուրսների կառավարման ոլորտներում:

Ելնելով վերոգրյալից՝ ՉՀՀ համակարգում Աջակցման բաղադրիչի ներդրման կարիքները հետևյալն են՝

- Մեղմման և հարմարվողականության գործողությունների իրականացման համար ֆինանսական և տեխնոլոգիական կարիքները բացահայտելու կարողությունների հզորացում:
- Մեղմման և հարմարվողականության միջոցառումների իրականացման համար ֆինանսական կարիքների քանակական գնահատման կարողությունների ընդլայնում
- Կլիմայի փոփոխության ծախսերի նույնականացման, պիտակավորման և հաշվարկման մեթոդաբանության, ձևաչափի և մեխանիզմի մշակում, ինչպես նաև կլիմայի փոփոխության հետ կապված ծախսերի նույնականացման, կողմավորման, գնահատման և հաշվետվայնության առումով ֆինանսների նախարարության դերի գնահատում և ընդլայնում:
- Ուսումնասիրել քաղաքապետարանների, ոչ պետական կազմակերպությունների, մասնավոր հատվածի և դոնորների կողմից իրականացվող մեղմման և հարմարվողականության ուղղությամբ տրամադրված ֆինանսավորումն արձանագրելու հնարավորությունները՝ որպեսզի Հայաստանում կլիմայի հետ կապված ցանկացած ֆինանսավորման գործողություն հաշվի առնվի և արդյունքում ներկայացվի ՉՀՀ համակարգի շրջանակներում:
- Կարևոր է գերծ մնալ ազգային ՉՀՀ համակարգում ստացված աջակցության գերազնահատումից:

Այս բաղադրիչը պետք է կապակցված լինի Մեղմման և Հարմարվողականության Գործողությունների հետ՝ կապված ծրագրերի ֆինանսավորման հետ: Այդ իսկ պատճառով առաջարկվում է դրանք կապակցել մեղմման և հարմարվողականության գործողությունների գրանցման գործընթացի շրջանակներում, որի ընթացքում պետք է մուտքագրվի ֆինանսավորման հետ կապված տեղեկատվությունը: Ռեեստրի նպատակն է լինելու.

- Արձանագրել արտանետումների նվազեցման և կլիմայի հարմարվողականության ծրագրերի առաջընթացը, ինչպես նաև այլ ծրագրերի ֆինանսավորումը.
- Ներգրավել ֆինանսական միջոցներ այս ծրագրերի համար.
- ղյուրացնել Փարիզի համաձայնագրի շրջանակներում հաշվետվությունների ներկայացումը, մասնավորապես անհրաժեշտ և ստացված ֆինանսների վերաբերյալ

Ընդհանուր առմամբ, ռեեստրը կհանդիսանա Հայաստանի տարածքում կլիմայի մեղմման և հարմարվողականության բոլոր ծրագրերի տվյալների բազա՝ ցույց տալով ծրագրերի փուլային կարգավիճակը՝ գաղափարի փուլ, ֆինանսավորվող, կառուցվող կամ կառուցված և շահագործման ընթացքում: Ծրագրերի ռեեստրի ամենակարևոր տվյալները վերաբերելու են հիմնականում կլիմայի փոփոխության ազդեցության

մեղման և հարմարվողականության ծրագրերի համար անհրաժեշտ ֆինանսավորմանը: Երկրորդ՝ ծրագրի արդյունքում արտանետումների (CO₂ տոննա կրճատում) ակնկալվող և/կամ ձեռքբերված ծավալն է:

Ծրագրի հեղինակը պետք է տրամադրի իրենց ծրագրերի հետ կապված բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, ինչպիսիք են ոլորտային դասակարգումը, ծրագրի աշխարհագրական տարածաշրջանը, ծրագրի ժամանակացույցը և, մասնավորապես, արտանետումների ակնկալվող և/կամ ձեռք բերված կրճատումների մեծությունը: Բացի այդ, գործիքը կարող է նաև ստեղծել հաշվետվություններ՝ հիմնվելով օգտատիրոջ (օրինակ՝ Շրջակա միջավայրի նախարարության) որոնման թեմայից: Հաշվետվությունների և տեղեկատվության որոշ օրինակներ, որոնք գործիքը կարող է ստեղծել, և այն նպատակները, որոնց համար այն կարող է օգտագործվել վրայադրված 10:

Աղյուսակ 10 Հաշվետվությունների օրինակներ

Ծրագրերի ռեեստրի օրինակ

Ինչո՞ւ է սա կարևոր:

Արտանետումների *հնարավոր* կրճատումներ. Սա համարժեք է ռեեստրում *բոլոր* ծրագրերի վերաբերյալ հաշվետվությանը, անկախ ծրագրի կարգավիճակից: Նման հաշվետվություն, օրինակ, կարող է ստեղծվել արտանետումների կրճատումների համար, որոնք ակնկալվում է, որ պետք է տեղի ունենան որոշակի ամսաթվից հետո:

Տվյալների բազայում ներառված ծրագրերի՝ Հայաստանի ԱՍԳ-ի *իրագործման վերաբերյալ ցուցանիշները* կարող են օգտակար տեղեկություն հանդիսանալ կլիմայի քաղաքականության մշակման համար

Ֆինանսական կարիքները չֆինանսավորվող ծրագրերի համար և այդ ծրագրերի մեղման ներուժը

Սա ցույց է տալիս այն ֆինանսական կարիքները, որոնք Հայաստանն ունի ինչպես իր ԱՍԳ-ի իրագործման, այնպես էլ դրա ընդլայնման համար: Սա կարող է օգնել քաղաքականություն մշակողներին՝ խրախուսել այս ոլորտում ներդրումները: Ֆինանսական կարիքների մասին հաշվետվությունը նաև թափանցիկության ընդլայնված շրջանակի (Փարիզյան համաձայնագրի հոդված 13) հաշվետվության պահանջ է:

Ծրագրերով սահմանված՝ տարեկան արտանետումների կրճատում այն ծրագրերի շրջանակներում, որոնք արդեն ֆինանսավորվում են, կամ արդեն կառուցված են:

Սա կարող է իրենից ներկայացնել ստացված ֆինանսավորման չափի և արտանետումների կրճատման վերաբերյալ ելակետային տեղեկատվություն, հաշվի առնելով, որ այդ երկուսն էլ հանդիսանում են ընդլայնված թափանցիկության շրջանակի ներքո (Փարիզյան համաձայնագրի հոդված 13) հաշվետվայնության պահանջներ:

Վերոհիշյալ բոլոր տեղեկությունները կարելի է բաժանել ըստ մարզերի կամ ըստ ոլորտների

Սա կարող է տեղեկատվական հիմք ծառայել տարբեր մարզերի և ոլորտների համար կոնկրետ քաղաքականություն մշակողների համար: Այսինքն, եթե տրանսպորտի նախարարը պատասխանատու է տրանսպորտի ոլորտում կլիմայական նպատակների իրագործման համար, նա կարող է օգտագործել գործիքը տրանսպորտի ոլորտին առնչվող կոնկրետ հաշվետվություններ արտածելու համար, ինչպես, օրինակ, տրանսպորտի ոլորտում 2022-2030թթ. ը ն ք ա գ ֆ ու մ մ մ ե ֆ մ մ մ ն պոտենցիալ արդյունքները:

Ծրագիրը նաև տեղեկատվություն է տալիս այն մասին, թե ովքեր են հանդիսանում ներդրողներ/դոնորներ և ովքեր են ծրագրի հեղինակները: Վերջինս կարող է օգտակար լինել, եթե պոտենցիալ դոնորը/ներդրողը ցանկանում է կապ հաստատել ծրագրի հեղինակների հետ՝ ֆինանսական հարցերով հնարավոր համաձայնություն ձեռք բերելու համար:

Նաև, ազգային մակարդակով մեղմման կամ հարմարվողականության գործողություններ նախագծող կամ իրականացնող յուրաքանչյուր պետական կամ մասնավոր անձի խորհուրդ է տրվում ներկայացնել համապատասխան տեղեկատվություն իրենց սեփական միջոցներով կամ միջազգային աղբյուրներից հայթայթված կամ ազգային և տեղական մակարդակներում նախագծված կամ իրականացվող պետական կամ մասնավոր ֆինանսավորման վերաբերյալ, ներառյալ՝ վարկային գործիքների, կարողությունների զարգացման և տեխնոլոգիաների փոխանցման տեսքով, ըստ կիրառելիության:

Այս «Աջակցություն» բաղադրիչում ներառված տեղեկատվությունը հրապարակային և հասանելի կլինի ԿՓԶՀ հարթակում, և պետք է երաշխավորված լինի մուտքագրված տվյալների հասանելիությունը, որպեսզի անհրաժեշտության դեպքում դրանք հնարավոր լինի քննարկել, վերանայել և թարմացնել: Հարկ է նշել, որ համակարգը պետք է ունենա գաղտնի տեղեկատվության պաշտպանության և սահմանափակ հասանելիության անհրաժեշտ մեխանիզմներ՝ չխախտելով Հայաստանի թափանցիկության ուղեցույցները, ընթացակարգերը կամ կանոնակարգերը:

Այս բաղադրիչի համար խորհուրդ է տրվում, որ ամեն անգամ մեղմման կամ հարմարվողականության գործողություն գրանցելիս՝ բացահայտվեն երեք կարևոր ասպեկտներ.

- Մեխանիզմի տեսակը, որին այն պատկանում է. գործողության ճիշտ նույնականացում, նշելով՝ արդյոք այն բխում է կլիմայական քաղաքականությունից, թե առնչվում է վերջինիս: Սա հնարավորություն կտա բացահայտել, և այդպիսով՝ վերահսկել և քանակապես գնահատել արտանետումները և կրճատումները, որոնք ժամանակի ընթացքում առաջանում են այս քաղաքականության գործադրման արդյունքում:

- Սահմանել՝ արդյոք կրճատումները նպաստում են ԱՍԳ-ի հետ համապատասխանության ապահովմանը:
- Որոշել ծրագրի փուլը կամ մեղմման/հարմարվողականության գործողությունը. Համակարգը թույլ կտա ռեեստրի միջոցով սահմանել ծրագրի իրականացման ներկա փուլը՝ նախագծումից մինչև ավարտ: Սա երկարաժամկետ հեռանկարում յուրաքանչյուր միջամտության համար թույլ կտա ապահովել դրա հետագծելիությունը, որի միջոցով հնարավոր կլինի ստեղծել գրանցված ծրագրի նախապատմությունը և առաջընթացը արտացոլող հաշվետվություններ, նույնիսկ երբ այն արդեն ավարտված է: Ծրագրի ռեեստրում հասանելի կլինեն նախագծման, իրականացման և գործարկման փուլերի տարբերակները, ինչը նշանակում է, որ հնարավոր չի լինի գրանցել ավարտված ծրագրերը, բայց հնարավոր կլինի գրանցել դրանց ավարտը, երբ այն տեղի ունենա: Նախագծման տարբերակը հատկապես կարևոր է կարիքների հայտնաբերման գործընթացի համար, թեև կարիքները կարող են բացահայտվել նաև ծրագրերի իրականացման և գործարկման ընթացքում:

4.1.4. ԱՍԳ-ի գծով առաջընթացի արձանագրում

Այս բաղադրիչը պետք է արտացոլի կադաստրում ներկայացված արտանետումների և մեղմման և հարմարվողականության գործողությունների արդյունքում ձեռք բերված կրճատումների հավասարակշռությունը և պետք է կարողանա ապահովել ԱՍԳ-ի համապատասխանության կարգավիճակը:

ԱՍԳ-ի առաջընթացի արձանագրման հիմքում պետք է լինի անվերապահ թիրախը՝ արտանետումների կրճատում 1990թ. մակարդակից ցածր 40%-ով, որը պետք է իրագործվի 2030թ. -ին:

ԱՍԳ-ի առաջընթացի պատշաճ կազմակերպումը կարտացոլվի որպես հարթակի վերջնաարդյունք: Դրա համար անհրաժեշտ է դիտարկել հետևյալը.

Ծրագրի ռեեստրը կարող է հնարավորություն տալ միայն կատարել ծրագրերի գրանցում՝ արտանետումների կրճատումների հաշվարկման համար սահմանված և հաստատված մեթոդաբանությունների կիրառմամբ:¹³ ¹⁴ Նման գործիքը թույլ կտա արձանագրել ԱՍԳ-ի կատարողական արդյունքները, ինչը նաև պահանջ է ընդլայնված թափանցիկության շրջանակում:

Առաջարկվում է Ծրագրի ռեեստրը կապակցել ՋԳ արտանետումների ազգային կադաստրի հետ: Սա թույլ կտա գնահատել, թե ինչպես է ծրագրերի իրականացումն ազդում ՋԳ ընդհանուր ազգային արտանետումների վրա: Անհրաժեշտ է հաշվի առնել,

¹³ Մեթոդաբանությանը և ստուգման ընթացակարգերին ներկայացվող պահանջները կարող են տարբեր լինել՝ կախված ծրագրի փուլից. Գաղափարի փուլում գտնվող նախագծերի համար պարտադիր չէ, որ պահանջվի օգտագործել որոշակի մեթոդաբանություն, քանի որ ծրագրի հեղինակները կարող են այս վաղ փուլում դեռևս շատ մոտավոր պատկերացում ունենալ մեղմման ներուժի մասին: Այն ծրագրերը, որոնք ֆինանսավորվում են, սակայն չեն կազմավորվել, դեռևս չեն ներառվի հավաստագրման շրջանակում, սակայն արտանետումների կրճատումները այնուամենայնիվ կարող են հաշվարկվել՝ օգտագործելով հաստատված մեթոդաբանությունը:

¹⁴ Այս մեթոդաբանությունները պետք է հաստատվեն Հայաստանի կառավարության կողմից, և կարող են, օրինակ, ներառել ՄՉՄ մեթոդաբանությունները, Ոսկու ստանդարտը կամ հայկական համատեքստում հատուկ մշակված մեթոդաբանությունները, որոնք կարող են մասամբ հիմնվել գոյություն ունեցող մեթոդների վրա, ինչպիսիք են ՄՉՄ մեթոդաբանությունները:

որ այս առումով կպահանջվի ծրագրի ռեեստրի և, հնարավոր է, ազգային կադաստրի հետագա զարգացումը՝ ազգային կադաստրում արտանետումների կրճատման և արտանետումների հաշվարկման մեթոդները ներդաշնակությունն ապահովելու համար (սա չի նշանակում, որ մեթոդաբանությունները միշտ պետք է լինեն նույնը, բայց դրանք պետք է հնարավորություն տան արտացոլել արտանետումների կրճատումները ազգային կադաստրում):

Հաջորդ քայլը կլինի գործարքների ռեեստրի ձևավորումը, որը կարող է կապված լինել ծրագրերի ռեեստրի հետ: Ծրագրերի ռեեստրը կներառի ոչ միայն պլանավորված և իրականացվող ծրագրերը, այլ նաև արտանետումների նվազեցման միավորները, որոնք ստեղծվում են այդ ծրագրերի միջոցով եթե արտանետումների կրճատումները հաշվարկվեն՝ օգտագործելով հաստատված մեթոդաբանությունները և հավաստիացում անցնեն իրականացվող ծրագրերի համար, ռեեստրը կարող է այս տեղեկատվությունը «արտամղել» արտանետումների կրճատման միավորների համար ածխածնի ազգային ռեեստր: Ածխածնի ռեեստրը կարող է ներառել տեղեկատվություն գեներացված, վաճառվող, գնված, չեղարկված միավորների ծավալի մասին և այլն: Նման համակարգը շատ լրացուցիչ աշխատանք կպահանջի և պետք է կիրառվի միայն այն դեպքում, եթե Հայաստանը որոշի զարգացնել ածխածնի սեփական շուկաները կամ ներգրավվել միջազգային համագործակցային նախաձեռնություններում:

5. SS բնութագրերը և պահանջները

5.1. Մասնակից համակարգեր

Միակ SS համակարգը, որը անմիջականորեն մասնակցում է ՄԱԿ ԿՓՇԿ-ի հաշվետվություններին, կադաստրի համակարգն է, որը հիմնված է ՄԱՉԾ-ի կողմից վերահսկվող ՄԳՀԽ ծրագրային ապահովման վրա: Շրջակա միջավայրի նախարարությունը ընդհանրական կերպով ՄԱՉԾ-ին պատվիրակում է կլիմայի վերաբերյալ հաշվետվությունների պատրաստումը (ԱՅ-ներ և ԵԱՉ-եր): Նախարարության որոշ աշխատակիցներ մասնակցում են նախապատրաստական աշխատանքներին՝ տրամադրելով տվյալներ, սակայն անմիջականորեն չեն մասնակցում հաշվետվությունների պատրաստմանը:

Այլ համակարգեր, որոնք անուղղակիորեն մասնակցում են տվյալների տրամադրմանը.

- ՎԿ ներքին ռեսուրսներով մշակված համակարգ
- PX-Web համակարգ armstatbank.am-ում
- Հիդրոմետ ծառայության MS Access-ի վրա հիմնված համակարգ
- Համակարգեր, որոնք օժանդակում են էներգետիկ հաշվեկշռի կազմմանը

Ներկա պահին մասնակից համակարգերի և կադաստրի կազմման համակարգի միջև առկա չէ միջհամակարգային հաղորդակցություն:

5.1.1. ՎԿ ներքին ռեսուրսներով մշակված համակարգ

ՎԿ համակարգը կառավարության կողմից օգտագործվող ամենաառաջադեմ համակարգերից է: Դրա backend-ը ներդրված է postgresql տվյալների բազայում: Frontend-ն իրականացվում է XML ֆայլեր արտադրող մի շարք վեբ ձևաչափերով, որոնք

այնուհետև բեռնվում են տվյալների բազա՝ օգտագործելով հատուկ մշակված ETL աշխատանքներ:

ՎԿ-ն տվյալներ է ստանում շուրջ 90 «վարչական ռեսուրսներից», ինչպիսիք են նախարարությունները, պետական այլ գերատեսչություններ, բանկեր, մարզային և քաղաքային կառավարման մարմիններ:

Մարդահամարի տվյալները ներկայումս հավաքվում են «CS Pro» ծրագրաշարի միջոցով: Ծրագրային ապահովումը մշակվել է ԱՄՆ մարդահամարի բյուրոյի կողմից և ՎԿ համակարգերում ներկառուցվում է՝ օգտագործելով հատուկ մշակված ETL աշխատատեղեր: Հաջորդ մարդահամարի համար նախատեսվում է մեկ այլ CAPI ծրագրաշարի ներդրում:

Ավելի մեծ և բարձր անվտանգ պետական համակարգերից, ինչպիսիք են ոստիկանությունը, հարկային մարմինը և պետական ռեգիստրը, ստացվում են API-ի միջոցով, որը տրամադրվում է պետական սեփականություն հանդիսացող Ekeng տվյալների բրոքերի և համակարգի գործառնություններն ապահովող ընկերության կողմից:

Համախմբումը և հաշվետվությունների արտածումը, ինչպես նաև տվյալների պատրաստումը armstatbank.am կայքում ցուցադրելու համար իրականացվում է ներքին մշակված ծրագրային լուծումների միջոցով:

Համակարգի սպասարկողները տեղյակ չեն ՄԱՉԾ-ի կամ Շրջակա միջավայրի նախարարության միջև տվյալների հետ կապված կոնտակտների մասին. ենթադրվում է, որ բոլոր տվյալները ստացվել են կամ հանրային հաշվետվություններից, armstatbank.am կայքից կամ ՀԾ-ի թեմատիկ բաժիններից՝ առանց մասնագիտացված SS աջակցության:

Ընդհանուր առմամբ, ՎԿ համակարգի առումով ստեղծվում է տպավորություն, որ այն պատշաճ սպասարկվում և աջակցվում է SS ոլորտի կոմպետենտ թիմի կողմից: Չհաշված SS ՄՌԿ ռիսկերը (տես ստորև), ՎԿ համակարգերը պետք է հանդիսանան ԿՓՀՀ համակարգերի հուսալի գործընկերները, և ՎԿ-ն կարող է նպատակահարմար լինել ԿՓՀՀ համակարգի հոսթինգի և ապագա աշխատանքային գործընթացների օժանդակման առումով:

5.1.2. armstatbank.am

Armstat.am ծառայությունը ASP.Net-ում մշակված [PX-web ծրագրային ապահովման](#) վրա հիմնված համակարգ է և որպես տվյալների աղբյուր օգտագործում է սեփական մշակման PX ֆայլի ձևաչափը: Ծրագրաշարը գործածում է ընդհանուր զննարկիչ վիճակագրական տվյալների համար, որը վերադարձնում է տվյալները HTML էջերում և կարող է նաև արտահանել CSV և Excel ֆայլեր: Ծրագիրը ստեղծվել է բացառապես մարդկանց օգտագործման համար, այսինքն՝ այն չի առաջարկում JSON էլքեր կամ որևէ API, որը կարող է օգտագործվել համակարգից համակարգ հաղորդակցության համար:

5.1.3. Հիդրոմետ ծառայության տվյալների բազա

Հիդրոմետ ծառայությունը մեծ թվով դիտակետերից տվյալներ է հավաքում աղտոտիչների և ջերմոցային գազերի մասին: Տվյալները հավաքագրվում են ամեն օր 15 ակտիվ մոնիտորինգի կայաններից, որոնք կարող են հաղորդել SO2, NO2, փոշու և օզոնի մակարդակները, ինչպես նաև 220 պասիվ դիտակետերից, որոնցից նմուշառման տվյալներ են հարցվում շաբաթական պարբերականությամբ: Պասիվ դիտակետերից

Նմուշները մշակվում են երկու լաբորատորիաներից մեկում, որոնք տվյալներ են տրամադրում էլեկտրոնային փոստով ուղարկված MS Excel աղյուսակաշարերի տեսքով:

Կան նաև հինգ ավտոմատ մոնիտորինգի կայանքներ, որոնք կարող են հաղորդել CO-ի մակարդակները, սակայն այս կայանքները ներկայումս անցանց են:

Տվյալների բազան պահվում է MS Access տվյալների բազայում: Գլխավոր օրինակի ամբողջականությունն ապահովելու համար հասանելիության իրավունքը պատկանում է բացառապես բնապահպանական տեսչությանը: Հիդրոմետ ծառայությունը հավաքված տվյալները ուղարկում է տեսչություն և վերլուծության համար ստանում MS Access տվյալների բազայի ֆայլի նոր տարբերակները:

Նույն տվյալների բազայի միջոցով են նաև արձանագրվում բնապահպանական թույլտվությունները և իրականացվում են վերլուծություններ և համեմատություններ աղտոտման թույլատրելի նորմերի և մշտադիտարկման տվյալների միջև:

Թույլտվությունների համակարգն աշխատում է ընկերության կողմից « օգտագործված օդի ծավալի» հիման վրա, այսինքն՝ ընկերության կողմից աղտոտված օդի նվազագույն ծավալը, որը դեռևս չի գերազանցում աղտոտիչների թույլատրելի մակարդակը:

Տեսչությունը վարչական ռեեստրի պաշտոնական պահառուն է և ՎԿ-ին հիդրոօդերևութաբանական տվյալների մատակարարը:

Ներկայիս պայմանավորվածությունները և ապագա զարգացման ծրագրերի քննարկումը Հիդրոմետի ներկայացուցիչների հետ ներկայացնում են SS անբավարար զարգացած կազմակերպական պատկերը: Հիդրոմետը կարող է անուղղակիորեն օգուտ քաղել ԿՓԶՀ համակարգի մշակումից, սակայն, առկայության դեպքում, հիդրոմետ ծառայության տվյալների շտեմարանների հուսալիությունը ԿՓԶՀ համակարգի առումով պետք է շատ հիմնավորված և սահմանափակված լինի, կիրառելիության դեպքում հնարավոր պահուստային մեխանիզմների ապահովմամբ:

5.1.4. Էներգետիկ հաշվեկշիռ

<td>

5.1.5. Ծրագրի պորտֆելի համակարգ

Ծրագրի պորտֆելի համակարգը (ԾՊՀ, PPS) մշակվել է NDC Partnership-ի աջակցությամբ՝ օգտագործելով Instigate Mobile՝ հայկական ծրագրային ապահովման ընկերությունը: ԾՊՀ-ի նպատակն է գրանցել, արձանագրել, մշտադիտարկել և հաշվետվությունների միջոցով ներկայացնել մեղմման և հարմարվողականության ծրագրերը, ինչպես նաև անհրաժեշտ և ստացված ֆինանսավորումը: Ընդհանուր առմամբ, համակարգը իրեն ներկայացնում է գործնականում նպատակահարմար ընտրություն ԿՓԶՀ համակարգի ԶՀՀ մեղմման և ֆինանսական բաղադրիչների համար:

Սույն հաշվետվության պատրաստման պահին համակարգը դեռևս չէր ներդրվել կառավարության կողմից: Վաճառողը ապահովում է ուսուցում, իսկ ԱՍԳ գործընկերության կազմակերպիչները աջակցում են կառավարությանը համակարգի գործարկման համար անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու ուղղությամբ: Մինևույն ժամանակ, համակարգի ապագան ներկայումս անորոշ է, և չկան կանոնակարգեր, որոնցով դրա օգտագործումը պարտադիր կլինի որևէ գերատեսչության կողմից:

5.2. Անկախ զարգացման ծրագրեր

Մի շարք խորհրդակցություններ ցույց են տվել, որ կառավարական համակարգերը ներկայումս ենթարկվում են զգալի էվոյուցիայի: Թեև այս առաջարկությունները հետևում են ՄԱՉԾ-ի կողմից տրված առաջարկություններին՝ համակարգերի տեղադիրքային որևէ փոփոխություն չենթադրելու առումով, այնուամենայնիվ տեղի են ունենում կարևոր անկախ զարգացումներ, որոնք պետք է հաշվի առնի ԿՓՉՀՀ համակարգի ցանկացած օգտագործող:

5.2.1. ՎԿ համակարգերի արդիականացում

Պլանավորվում է ՎԿ համակարգերի էական արդիականացման և վերաշարադրման խոշոր նախագիծ, որի համար պետք է իրականացվի գնման գործողություն: ՎԿ-ն ակնկալում է, որ գնման արդյունքում ձեռք կբերվի ավելի ինտեգրված համակարգ, որը կհանգեցնի տվյալների մեխանիկական մուտքագրման կամ էլ փոստի (կամ EDI-ի) միջոցով Excel ֆայլերի փոխանցման ծավալների կրճատման:

<tbl. Նոր համակարգի ԱՆ-ից API-ների վերաբերյալ տվյալները դեռևս առկա չեն>

5.2.2. Հիդրոմետ ծառայության համակարգի արդիականացում

Հիդրոմետն աշխատում է իր համակարգի ներքին արդիականացման վրա: Նոր համակարգը հիմնված կլինի PHP Laravel շրջանակի և MySQL տվյալների բազայի վրա:

5.2.3. SS կառավարման ուղեցույցների ներդրում

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը (ԲՏԱՆ) պատասխանատու է կառավարական համակարգերում SS կառավարման մեխանիզմների համար: Թեև նախարարությունը՝ որպես կառույց, և թե SS կառավարման գծով պատասխանատու թիմը բավականին երիտասարդ են, և ակնկալվում է, որ կառավարման ուղեցույցների ներդրումը կառավարությունում տեղի կունենա աստիճանաբար, և կսկսվի 2022թ. կեսերից մոտ՝ նոյտեմբերի 1-ին և 2023թ. սկիզբն ապրիլի 1-ին ծավալով, ամբողջապես գործարկվում:

Նախարարություններին և պետական այլ գերատեսչություններին որոշակի ժամանակ կտրվի (ներկայումս ներկայացվում է երեքից չորս ամիս, ինչը դժվար է իրատեսական համարել) համապատասխանության ապահովման համար: Մինևույն ժամանակ, ԲՏԱՆ-ը ներկայումս չունի կատարման լիազորությունների շրջանակ կամ համապատասխանության հասնելու համար անհրաժեշտ գործողություններին աջակցելու բյուջե: Դրանց կառավարման ուղեցույցների իրական իրականացումը, հետևաբար, կախված կլինի այլ պետական մարմինների՝ համապատասխանությունն ապահովելու պատրաստակամությունից և բյուջեի առկայությունից՝ իրենց SS համակարգերում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու համար:

Ակնկալվում է, որ կառավարման կանոնակարգերը կմասն բարձր մակարդակի վրա շահագործման սկզբում և ուշադրության կենտրոնում հիմնականում կունենան.

- Կառավարական համակարգերի ճարտարապետությանը ներկայացվող հիմնական պահանջները.

- Մտտելիության և ստանդարտները.
- Անվտանգության հիմնական պահանջները, ինչպիսիք են գաղտնաբառի անվտանգությունը.
- Համակարգի փաստաթղթավորման և շահագործման պահանջները.
- Տվյալների ձևաչափերը և կառավարական համակարգերի միջև տվյալների փոխգործունակությունը:

Տվյալների փոխգործունակության և ձևաչափերի վրա, հավանաբար, մեծ ազդեցություն կունենան գոյություն ունեցող գործելակերպերը, ինչպիսիք են ԷԿԵԼԳ-ի կողմից ավելի ծավալուն կառավարական համակարգերի համար օգտագործվող գործելակերպերը:

5.3. Ընդհանուր բիզնես գործելաոճեր

ԿՓԶՀ համակարգի համար կիրառելի ընդհանուր բիզնես գործելաոճերը նման են այլ բիզնես համակարգերի մեծ մասի գործելաոճերին.

- Հուսալիություն և մատչելիություն. համակարգի՝ առանց հաճախակի խափանումների, շարունակաբար գործելու կարողությունը, ողջամիտ նվազագույնի հասցնելով դրա անհասանելիության տևողությունը և ապահովելով բնականոն մաշվածքը օպտիմալ շահագործման և օգտագործման սցենարների ներքո.
- Սպասարկելիություն. համակարգի՝ սպասարկելիությունը՝ սպասարկման ժամկետներին համարժեք եղանակով, ներառյալ անհրաժեշտ սպասարկման համար գիտելիքների բազայի ապահովումը (փաստաթղթավորումը) և գիտելիքների փոխանցումը (օժանդակող անձնակազմի վերապատրաստումը), ինչպես նաև համակարգը մշտադիտարկելու և սպասարկման անհրաժեշտություն առաջացնող միջադեպերի գեներացման և ներքին և արտաքին պատճառներով առաջացած խափանումների վերականգնման հնարավորությունը:
- Օգտագործելիություն. համակարգի ունակությունը՝ հանդես գալու որպես օգտատիրոջ միջերես (ինտերֆեյս), որը բավականաչափ հեշտ օգտագործելի է, հուշող, համապատասխանում է օգտատերերի գիտելիքների և համակարգը օգտագործելու հետաքրքրության մակարդակին և թույլ է տալիս օգտագործողին կատարել առաջադրված խնդիրները նվազագույն ջանքերի գործադրմամբ:

Այս ընդհանուր բիզնես մոտեցումները կարող են օգտագործվել որպես հիմք ԿՓԶՀ համակարգի ոչ ֆունկցիոնալ պահանջների մշակման համար: Հաշվի առնելով այն փաստը, որ ներկայումս կիրառելի համակարգերի մեծ մասը աշխատեցվում է ձեռքով կամ գրասենյակային պարզ գործիքների կիրառմամբ, բիզնես գործընթացների ավտոմատացման հնարավորությունը պետք է դիտարկել համակարգի հուսալիության, հասանելիության, սպասարկելիության և օգտագործելիության (ՀՀՍՕ, RASU) պահպանման անհրաժեշտության հետ մեկտեղ՝ նույնիսկ ձեռքով աշխատող բաղադրիչների համար:

5.4. Ֆունկցիոնալ բաղադրիչներ

ԿՓԶՀ համակարգը կունենա վեց հիմնական բաղադրիչ.

- ՁԳ կադաստրի համակարգ.
- Բիզնես գործընթացների կառավարման համակարգ (ԲԳԿՀ, BPMS).
- Ծրագրի և աջակցության տվյալների բազա
- Փոխգործունակության շերտ
- Անվտանգության և օգտագործողների կառավարման ենթահամակարգ
- Հաշվետվայնության ենթահամակարգ

Այդ բաղադրիչների նկարագրությունը ներկայացված է SS պահանջների վերաբերյալ Հավելված 4-ում (տես կետ 1):

5.5. Սերվերի և ցանցի կառուցվածք

ԿՓԶՀ համակարգը, առնվազն դրա համացանցային հենքով համագործակցային բաղադրիչների համար, կպահանջի հոսթինգի տեղակայում: Ընտրությունը կատարվում է հետևյալի միջև.

- Տեղում, պետական կառույցներից մեկում հոսթինգի կազմակերպում.
- Հոսթինգ ԷԿՆԳ-ի միջոցով
- Հոսթինգ հայկական առևտրային հոսթինգ մատակարարի տվյալների կենտրոնում.
- Հոսթինգ Հայաստանից դուրս տեղակայված հանրամատչելի ամպային տիրույթում

Սերվերի ենթակառուցվածքի հատուկ կարգաբերումները և պահանջները պետք է մշակվեն զարգացման կապալառուի կողմից՝ կախված ընտրված տեխնոլոգիայի փաթեթից և կոնկրետ բաղադրիչներից:

Վերջնական բնութագրերը պետք է հարմարեցվեն հատուկ բաղադրիչների համակարգի պահանջներին, որոնք պետք է իրականացվեն համակարգի մշակման և ինտեգրման ծառայություններ մատուցող ընկերության կողմից:

Եթե բոլոր օգտագործված բաղադրիչները հասանելի լինեն Linux հարթակում (իդեալական սցենարում), ապա խորհուրդ է տրվում բեռնարկղային տեղակայումը Docker-ում՝ որպես ձեռնարկատիրական մասշտաբի կոնտեյներային հարթակ:

Համակարգի տեղակայելիության պահանջները ենթադրում են, որ համակարգը հեշտ տարածելի է՝ տարբեր սցենարների ներքո: Թեև համակարգի միայն մեկ օրինակ կհամարվի «արտադրություն», և՛ համակարգի զարգացման, և՛ գործառնությունների որակի համար կարևոր է, որպեսզի կարելի լինի հեշտությամբ վերարտադրել համակարգի կարգաբերումները՝ տեղակայման, որակի ապահովման և զարգացման նպատակների համար:

Իդեալական սցենարը ներկայացված է ստորև նկարագրված կարգաբերումներում: Բաժնի վերջում համառոտ քննարկվում են իդեալական սցենարի այլընտրանքները:

Այս ասպեկտների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ նկարագրված են Հավելված 4-ում՝ SS պահանջների վերաբերյալ (տես կետ 2):

5.6. Տվյալների նախագծում

Տվյալների ցուցանիշային կառուցվածքը կարող է կատարվել հարաբերական տվյալների բազայում, ոչ հարաբերական տվյալների բազայում և ֆայլերի պահեստում: Պետք է նախապատվություն տրվի տվյալների բազայի պահեստարանին, մինչդեռ ֆայլերի պահուստը հարմար է միայն առաջնային փաստաթղթերի համար և սովորաբար պետք է անփոփոխ լինի ֆայլերի համար՝ դրանց արխիվացման պահից սկսած:

Տվյալների բազայի ապրանքանիշ(ներ)ի ընտրության ժամանակ խորհուրդ է տրվում առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.

- Տվյալների բազաները պետք է ունակ լինեն արձագանքել բիզնեսի շարունակականության և աղետների վերականգնման բացահայտ կարիքներին.
- Տվյալների բազաները պետք է հեշտ լինեն.
- Տվյալների բազաները պետք է ապահովեն գործարքների ամբողջականությունը, իդեալական տարբերակում՝ նաև բաշխվող գործարքների համար.
- Օգտագործված ապրանքանիշերի և տվյալների շտեմարանների տեսակների քանակը պետք է նվազագույնի հասցվի, ընդ որում իդեալական տարբերակ կլինի՝ ունենալ մեկ տվյալների բազա, որն օգտագործվում է ամբողջ համակարգի համար:

Մանրամասն տվյալների ձևավորումը կհաստատվի իրականացման վաղ փուլերում, երբ մշակվեն տվյալների բոլոր պահանջները, միավորները, հարաբերությունները և տվյալների բազաները: Այս մանրամասները պետք է սահմանվեն մշակողների թիմի կողմից՝ ԿՓՉՀՀ համակարգի զարգացման նախագծի վաղ տարբերակներում: Եթե պահպանվի հարմարեցված կողի նվազագույնի հասցնելու սկզբունքը, ապա տվյալների կառուցվածքների մեծ մասը կներառվեն ինտեգրված լուծումներում և կկառավարվեն իրենց համապատասխան մատակարարների կողմից՝ ազատելով ռեսուրսներ հայկական առանձնահատկություններին հարմարեցված բաղադրիչները կազմակերպելու համար:

Առաջարկվում է, որ PostgreSQL տվյալների բազան ընտրվի որպես տվյալների բազայի հիմնական ապրանքանիշ, քանի որ այն արդեն հաջողությամբ օգտագործվում է ՎԿ-ի կողմից, որը հանդիսանում է ԿՓՉՀՀ համակարգի հիմնական շահագրգիռ կողմերից մեկը:

5.7. Վեբ միջերեսներ

Վեբ միջերեսները կարող են ներդրվել հաճախորդի կողմից ստանդարտ տեխնոլոգիաների միջոցով, ինչպիսիք են HTML 5, CSS և JavaScript տեխնոլոգիաները: Չպետք է պահանջվեն լրացուցիչ պլագիններ, բացի նրանցից, որոնք առկա են ստանդարտ վեբ զննարկիչներում: Վեբ միջերեսները պետք է աջակցեն բոլոր

Ժամանակակից¹⁵ վեբ գնևարկիչների տարբերակները: Ստացիոնար համակարգիչների համար նախատեսված միջերեսները կաշխատեն բոլոր հիմնական ստացիոնար համակարգիչների օպերացիոն համակարգերում:

Հանրային օգտագործման վեբ միջերեսները պետք է ունենան արձագանքող դիզայն և դասավորություն. ներքին օգտագործման միջերեսները կարող են նախատեսված լինել միայն ստացիոնար համակարգիչների համար:

Վեբ միջերեսները պետք է նախագծված լինեն բարձր հասանելիության սկզբունքով՝ համաձայն MHTI-ի կողմից կառավարական վեբ համակարգերի համար սահմանված ստանդարտի:

Բոլոր վեբ միջերեսները հասանելի կլինեն բացառապես HTTPS-ի միջոցով: Անապահով արձանագրություններով համակարգեր մուտք գործելու փորձերը պետք է հանգեցնեն համապատասխան անվտանգ էջի վերահղման:

Ավելի մանրամասն տեղեկությունների համար տես սույն հաշվետվության Հավելված 4-ը (կետ 3):

¹⁵ «Ժամանակակից տարբերակները» տարբերակներն են, որոնք (ա) թողարկվել են համեմատաբար վերջերս (բ) սպասարկվում են համակարգերի մատակարարների կողմից:

6. Առաջարկություններ ՉՀՀ գործելակերպերի և ԿՓՉՀՀ-ի հարթակի ներդրման վերաբերյալ

Համաձայն այս խորհրդատվության շրջանակներում իրականացված վերլուծության՝ բացահայտվել են 5 հիմնական առաջարկություններ, որոնց ներքո ներկայացվում են այլ կոնկրետ առաջարկություններ.

Ա1 - Հա մ ը ն գ ր կ ու ն ի ր ա վ ա կ ա ն դ ա ռ թ ի ս տ ե դ ծ ու մ .

Ա2 - ՉՀՀ համակարգի համար կայուն ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորում .

Ա3 - Կլիմայի փոփոխության քաղաքականության կառավարում կենտրոնացված համակարգի միջոցով .

Ա4 - Հավաստագրման համակարգի ներդրում՝ մեղմման ծրագրերի արդյունքում արտանետումների կրճատումները և մասնավոր հատվածի ՉԳ արտանետումները հավաստագրելու նպատակով .

Ա5 - Տվյալների որակի բարելավում

Չնայած արված բոլոր առաջարկությունները պետք է իրականացվեն՝ ապահովելու ԿՓՉՀՀ-ի արդյունավետ գործունեությունը, ամուր իրավական դաշտի (Ա1) և ՉՀՀ համակարգի (Ա2) համընդգրկուն ինստիտուցիոնալ կառուցվածքի ստեղծումը համարվում են էական նախադրյալներ՝ բոլոր առաջարկությունների արդյունավետ և կանոնավոր ընդունումն ապահովելու և կազմակերպելու տեսանկյունից: Գծապատկեր 18 հետևաբար ներկայացնում է ՉՀՀ համակարգի ներդրման և արդյունավետության համար անհրաժեշտ առաջարկվող իրավական կառուցվածքը. կլիմայի փոփոխության մասին օրենքը՝ որպես հիմնական իրավական բազա, ՉԳ կադաստրի իրականացման հիմքեր ձևավորող որոշումը, ջերմոցային գազերի երկարաժամկետ ցածր արտանետումային զարգացման ռազմավարությունը (LT-LEDs)՝ որպես ազգային մեղմման քաղաքականությանն ուղղված աջակցություն և կենտրոնացնող գործիք (ի լրումն գործող ՀԱԾ-ին՝ հարմարվողականության քաղաքականության համար), և, որոշում՝ մասնավոր հատվածի համար արտանետումների ռեեստրի վերաբերյալ (առանցքային չէ, սակայն խորհուրդ է տրվում ունենալ): Նմանապես, այն ցույց է տալիս այն տարրերը, որոնք բխում են այս իրավական կառուցվածքից, որոնք կապահովեն ԿՓՉՀՀ հարթակի շահագործումը:

Գծապատկեր 18 ԿՓՉՀՀ հարթակի համար անհրաժեշտ իրավական դաշտը



Այս հիմնական առաջարկություններից յուրաքանչյուրը հետագայում բաժանված է կոնկրետ առաջարկությունների և մանրամասն ներկայացված է հաջորդ բաժիններում:

Իրենց արդիականությունից ելնելով, խորհրդատվական թիմի տեսակետից, Ա1-ը և Ա2-ը առնվազն խթան են հանդիսանում մնացած առաջարկությունների պատշաճ և արդյունավետ կերպով կատարման համար:

6.1. Ա1 – Համընդգրկուն իրավական դաշտի ստեղծում

6.1.1. Ա1.1 Կլիմայի փոփոխության մասին օրենքի մշակում և գործադրում

Կլիմայի փոփոխության նկատմամբ Հայաստանի խոցելիությունը և դրա սոցիալ-տնտեսական ազդեցությունները առաջացնում են ներկա և ապագա փոփոխվող կլիմայական պայմանների ներառական պլանավորման անհրաժեշտություն: Հարմարվողականության և մեղմման միջոցառումները ներկայումս իրականացվում են տարբեր վարչական մակարդակներում և ղեկավարվում են Հայաստանում տարբեր կառույցների, այդ թվում՝ կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների և ոլորտային համակարգող մարմինների կողմից: Կլիմայի փոփոխության դեմ պայքարի այս ջանքերը, սակայն, տարանջատված են և հիմնականում կրում են ռեակտիվ բնույթ: Ներդաշնակ, ազգային մակարդակի կառավարման և համակարգման կառույցների ստեղծումը հարկաբյուջետային, կարգավորող և զարգացման քաղաքականություններում և ծրագրերում կլիմայի փոփոխության գործողությունների ինտեգրումը հեշտացնելու նախապայմաններից մեկն է:

Առաջարկվում է մշակել և ընդունել օրենսդրական շրջանակ, որը կուղղորդի ՉՀՀ համակարգի միջոցով հարմարվողականության և մեղմման նպատակների իրագործումը Հայաստանի տարբեր ոլորտներում և պետական և ոչ պետական կառույցներում: Որպես այդպիսին, ավելի կատարելագործված օրենսդրական դաշտի ձևավորումը կարևոր նշանակություն ունի կլիմայի փոփոխության նկատառումները ազգային և ոլորտային զարգացման ռազմավարություններում բավարար մասշտաբայնությամբ ներառելու և ինտեգրելու համար: Կլիմայի փոփոխության մասին կոնկրետ օրենքի մշակումը և ընդունումը հնարավորություն կտա ընդունել և ներդնել ազգային և ոլորտային զարգացման քաղաքականություններ և ռազմավարություններ՝ կլիմայի փոփոխության ավելի ընդգրկուն նկատառումներով:

Օրենքում առաջարկվում է ներառել հետևյալ թեմաները.

- Կլիմայական քաղաքականության նպատակը (օրինակ՝ ՋԳ արտանետումների կարգավորում և Հայաստանի խոցելիության նվազեցում, հետազոտությունների և գիտելիքների փոխանակման խթանում, ինչպես նաև անցում դեպի ցածր ածխածնային տնտեսության): Կոնկրետ նպատակներ ներառել մեղմման և հարմարվողականության շրջանակներում:
- Կլիմայի քաղաքականության սկզբունքները / շարժիչ ուժերը
- Կլիմայական քաղաքականության գնահատման և բարելավման մեխանիզմներ
- Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները կլիմայի փոփոխության համատեքստում (օրինակ՝ ՑԱԶ-ների և ՀԱԾ-ի հրապարակում):

- Շրջակա միջավայրի նախարարության դերը կլիմայական քաղաքականության մեջ¹⁶
- Այլ նախարարությունների և գերատեսչությունների դերը կլիմայական քաղաքականության մեջ
- Կլիմայական քաղաքականության գործառնական ինստիտուցիոնալ կառուցվածք (ՄԳՀԽ-ն կարող է լինել հիմնական, բայց ոչ միակ կառույցը): Առաջարկվում է հիմք ընդունել ինստիտուցիոնալ քարտեզագրումը (Հաշվետվության Հավելված 2). Տվյալների տրամադրման մեխանիզմներ (ԶԳ կադաստր), ծրագրերի ռեեստրի գծով աշխատանքների կազմակերպում, արտանետումների ռեեստրի գծով աշխատանքների կազմակերպում, համակարգման և կառավարման գծով աշխատանքների կազմակերպում և ՄԳՀԽ մեխանիզմ (ընդհանուր համակարգի համար):
- Ցածր արտանետումային զարգացման երկարաժամկետ ռազմավարության (ՑԱՁՌ) ներդրում, դրա արդիականացման և թարմացման պարբերականության սահմանում.
- ԶԳ կադաստր. պատասխանատու նախարարության սահմանում և աշխատախմբի ստեղծում, թարմացման հաճախականություն, հղումներ մեթոդներին և սկզբունքներին (օրինակ՝ համապատասխանեցում ԿՓՓՄԽ-ին), կադաստրի կազմման մշտական աշխատանքային խմբի նշանակում, ՈԱ/ՈՎ պլանի մշակում՝ որպես առանձին լիազորություն/իրավասություն:
- Ոլորտային քաղաքականություններ և ռազմավարություններ, որոնք ներառում են կլիմայական ռիսկերն ու հնարավորությունները
- ՄԱԿ ԿՓՇԿ-ից և Փարիզի համաձայնագրից բխող պարտավորությունների և դրույթների կատարման միջոցառումների ցանկը՝ համապատասխան պետական պատասխանատու գերատեսչությունների նշանակմամբ.
- Միջգերատեսչական համակարգող խորհրդի դերը կլիմայի քաղաքականության մեջ և դերը կլիմայի քաղաքականության մեջ (ներառյալ դերը ՉՀՀ համակարգում)
- ՉՀՀ պարտավորություններ մասնավոր հատվածի համար (խորհուրդ է տրվում պարտավորություններ սահմանել առնվազն արդյունաբերության համար, սակայն կարող են ներառվել նաև այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են տրանսպորտը, թափոնների կառավարումը և հեռացումը, գյուղատնտեսությունը և անասնաբուծությունը, ինչպես նաև առևտուրը և ծառայությունները՝ արտանետումների տվյալների ավելի մեծ ուղղակի և անուղղակի ծածկույթ ապահովելու համար): Սահմանել արտանետումների ռեեստրի բնութագրումը ներկայացվի որոշմամբ:
- Մեղման և հարմարվողականության ծրագրերի ռեեստրի ստեղծում (նույն ռեեստրում ներառել նաև ֆինանսավորման մասին տեղեկատվությունը)
- ՉՀՀ համակարգի ստեղծում՝ մեղման քաղաքականության համար
- ՄԱԳ համակարգի ստեղծում հարմարվողականության քաղաքականության համար
- Երկարաժամկետ շուկայական մեխանիզմների ներդրման ճկունություն (երկարաժամկետ տեսակետ)

Կանոնակարգը ծառայելու է որպես հիմնարար սկզբունքների ամբողջություն, սակայն պարտադիր չէ, որ այն ներառի տեխնիկական մանրամասներ: Նպատակն է՝

¹⁶ Կարգավորվում է «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքով: Հայաստանում կլիմայի փոփոխության ազգային քաղաքականության մշակման և իրականացման համար պատասխանատու պետական մարմինը ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունն է: Այնուամենայնիվ, կարևոր է, որ «Կլիմայի փոփոխության մասին» օրենքը համահունչ լինի նշվածին:

հանձնարարել ՇՄՆ-ին մշակել այլ կանոնակարգեր, որոշումներ, ուղեցույցներ, պլաններ և հատուկ ծրագրեր՝ այդ գերատեսչությանը վերապահելով տվյալ հարցի կարգավորման իրավասություն:

Կլիմայի փոփոխության մասին օրենքից կարող են բխել հետևյալ իրավական գործիքներ.

- Ցածր արտանետումների զարգացման երկարաժամկետ ռազմավարություն (ԵԺ-ՑԱՁՌ, LT-LEDS) (Ա1.2)
- ՋԳ կադաստրի վերաբերյալ որոշում և/կամ ուղեցույց (Ա1.3)
- ՉՀՀ կանոնակարգ մասնավոր հատվածի համար (Ա1.5)
- Ծրագրի ռեեստրի վերաբերյալ կանոնակարգ (Ա3.1)
- Հավաստագրման ուղեցույցներ (Ա4.3)

6.1.2. Ա1.2 Ցածր արտանետումային զարգացման երկարաժամկետ ռազմավարության (ԵԺ-ՑԱՁՌ) մշակում և գործարկում

Ինչպես նշվեց նախորդ կետում, առաջարկվում է օրենքով սահմանել ջերմոցային գազերի ցածր արտանետումների զարգացման երկարաժամկետ ռազմավարության (ԵԺ-ՑԱՁՌ, LT-LEDS) իրապարակման պահանջ: Այս ռազմավարությունը պետք է ուղղորդի կլիմայի քաղաքականությունը կոնկրետ գործողությունների՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ոլորտային թիրախների միջոցով և կծառայի որպես ուղեցույց՝ մեղմման և հարմարվողականության միջոցառումների իրականացման համար միջոցներ հայթայթելու համար: Հայաստանի ԵԺ-ՑԱՁՌ-ը կառավարության համար կծառայի նաև որպես տեսլական՝ հիսունամյա կլիմայական քաղաքականության նպատակների վերաբերյալ, որոնք պետք է իրագործվեն մինչև դարի երկրորդ կեսը ածխածնի չեզոքության հասնելու ճանապարհին, և կօժանդակի Էկոլոգիապես կենսունակ երկարաժամկետ պլանավորմանը ԿՓՄԻՄ-ի հետևյալ ոլորտներում՝ Էներգետիկա, Արդյունաբերություն, Տրանսպորտ, Թափոններ, Գյուղատնտեսություն, Հողօգտագործում, Հողօգտագործման փոփոխություն և Անտառային տնտեսություն: ԵԺ-ՑԱՁՌ-ի հիսունամյա նպատակները կօգնեն ուղղորդել երկրի հաջորդական ԱԱԳ-ները և կորոշեն նրանց հավակնությունները՝ հետընթացի բացառման կանոնին համապատասխան: ԱԱԳ-ների մոնիտորինգը և գնահատումը, մյուս կողմից, ԵԺ-ՑԱՁՌ գործընթացի դիտարկման համար տեղեկատվական հենք կծառայի և տեղեկատվություն կտրամադրի հիսունամյա նպատակներին հասնելու ուղղությամբ ձեռք բերված առաջընթացի մասին: ԵԺ-ՑԱՁՌ-ը կենդանի փաստաթուղթ է, և ռազմավարության շրջանակներում պետք է ներկառուցվեն մոնիտորինգի, գնահատման և արդիականացման մեխանիզմները:

Սա իրավական հիմք կհանդիսանա կոնկրետ մեղմման միջամտությունների համախմբման և խթանման համար, և միևնույն ժամանակ կօգնի կենտրոնացնել կլիմայի փոփոխության քաղաքականությունը՝ հանդիսանալով ՉՀՀ համակարգի ՄևՀ բաղադրիչի հիմքը (ՀԱԾ-ի հետ միասին): Այսպիսով, յուրաքանչյուր գործողություն կամ ծրագիր հնարավոր կլինի նույնականացնել ըստ քաղաքականության և համապատասխանեցնել այս ռազմավարությանը:

Առաջարկվում է ռազմավարության ընդհանուր կառուցվածքը.

- Նպատակը և գործողության ոլորտը

- Ռազմավարության շարժիչ ուժերը
- Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ տեսլական
- Ռազմավարության մշակման գործընթացը
- Ընդհանուր հենասյուներ /միավորներ
- Ախտորոշում, ռազմավարական առանցքեր և գործողությունների ուղղություններ (կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ թիրախներ)
- Վերանայման, գնահատման և թարմացման մեխանիզմ (առաջարկվում է այս գործընթացներում ներգրավել ՄԳՀԽ-ն):

<p>Մեքսիկայի օրինակը՝ Կլիմայի փոփոխության ազգային ռազմավարություն</p> <p><u>Ռազմավարության հենասյուները</u></p> <p>Յ1. Ունենալ համապարփակ, հստակեցված, համակարգված և ներառական կլիմայի քաղաքականություն և գործողություններ</p> <p>Յ2. Հարկաբյուջետային քաղաքականության և տնտեսական և ֆինանսական գործիքների մշակում կլիմայական ուղղվածությամբ</p> <p>Յ3. Հետազոտությունների, նորարարությունների, տեխնոլոգիաների մշակման և հարմարեցման հարթակի ներդրում կլիմայի փոփոխության և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման համար</p> <p>Յ4. Կլիմայական մշակույթի զարգացման խթանում</p> <p>Յ5. Չափման, հաշվետվայնության և հավաստագրման (ՉՀՀ) և մոնիտորինգի և գնահատման (ՄԱԳ) մեխանիզմների ներդրում</p> <p>Յ6. Ռազմավարական համագործակցության և միջազգային առաջնորդության ամրապնդում</p> <p><u>Հարմարվողականության ռազմավարական առանցքեր</u></p> <p>Առ1. Նվազեցնել խոցելիությունը և բարձրացնել սոցիալական հատվածի դիմակայունությունը կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ</p> <p>Առ2. Նվազեցնել խոցելիությունը և բարձրացնել ռազմավարական ենթակառուցվածքների և արտադրական համակարգերի դիմակայունությունը կլիմայի փոփոխության հետևանքների դեմ</p> <p>Առ3. Խնայել և կայուն կերպով օգտագործել էկոհամակարգերը և պահպանել դրանց կողմից տրամադրվող բնապահպանական ծառայությունները</p> <p><u>Մեղմման ռազմավարական առանցքեր</u></p> <p>Մ-առ. 1 Արագ ցնեղ էներգետիկ ոլորտի անցումը դեպի մաքուր էներգիայի աղբյուրների</p> <p>Մ-առ. 2 Կրճատ էներգետաբույրյունը արդյունավետության սխեմաների և պատասխանատու սպառման միջոցով</p> <p>Մ-առ. 3 Անցում դեպի կայուն ֆաբրիկների մոդելներ՝ օբժանահարյուն և համակարգերով, թափոնների համապարփակ կառավարմամբ և ցածր ածխածնի հետքով շենքերով</p> <p>Մ-առ. 4 Խթանել վելիլ լավ գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն վարման գործելու կերպերը՝ բնական ածխածնի կլանիչների ավելացման և պահպանման համար</p> <p>Մ-առ. 5 Կրճատ էլ կլիմայի կարճաժամկետ աղտոտիչներից արտանետումները և նպաստել առողջության և բարեկեցության համատեղ օգուտների ձևավորմանը</p>
--

Այս տեսակի գործիքը կօգնի երկարաժամկետ հեռանկարում խթանել մեղմման գործողությունները և դրանք կապակցել կոնկրետ թիրախների հետ, հետևաբար այն կօգնի արձանագրել առաջընթացը ԱՍԳ-ի հետ համապատասխանության ապահովման ուղղությամբ:

6.1.3. Ա1.3 ՋԳ կադաստրի հատուկ կանոնակարգի կամ ուղեցույցների մշակում

Քանի որ ջերմոցային գազերի կադաստրի կազմումը բավականաչափ բարդ խնդիր է, անհետաձգելի անհրաժեշտություն է առաջանում պարտադիր կանոնակարգելու բոլոր այն գործողությունները, որոնցում ներգրավված են տարբեր տվյալների մատակարարներ և տեղեկատվության հավաստագրողներ, սահմանափակելու շրջանակը և սահմանելու ժամկետներ, որոնք թույլ կտան սահմանված ժամկետներում ավարտել ազգային կադաստրերի մշակումը: Պաշտոնական հրահանգի, կլիմայի փոփոխության մասին օրենքի կամ կանոնակարգի մշակումը կարող է օրինական հիմք ձևավորել տեղեկատվական ռեսուրսների ստացման պահանջների համար, ինչպես նաև նպաստել բարեփոխումների գործարկմանը և նոր պարտականությունների ձևակերպմանը: (UNFCCC, 2020):

Թեև կադաստրի կազմումն իրականացվել է մի քանի տարի որպես համակարգային առաջադրանք, ՄԱՉԾ արտաքին աջակցությամբ, սակայն պահանջվում է առավել համընդգրկուն իրավական կառուցակարգ՝ նպաստելու դրա բարելավմանը և, առաջին հերթին, Շրջակա միջավայրի նախարարությանը վերապահել այս հարցում որոշումների կայացման և առաջնորդություն ստանձնելու լիազորություններ: Կադաստրի գծով պարտավորությունների սահմանումը լիազորությունների շրջանակում կօգնի նաև ռեսուրսներ ձեռք բերել պահանջվող գործողությունները կատարելու համար:


Առաջարկվում է արտանետումների կադաստրի պարտավորությունը, դրա թարմացման պարբերականությունը, այս առաջադրանքի համար պատասխանատու նախարարությունը և կոնկրետ ստորաբաժանումը, ինչպես նաև հաշվարկման մեթոդները և ՈԱ/ՈՎ գործելակերպերը (ՈԱ/ՈՎ պլան) սահմանել կլիմայի փոփոխության մասին օրենքում (Յ1.1):

Բացի այդ, խորհուրդ է տրվում մշակել մեկ այլ կանոնակարգ կամ ուղեցույց (օրինակ՝ որոշում), որտեղ սահմանվում են կոնկրետ պարտականություններ՝ տվյալների տրամադրման, արտանետումների գնահատման ընթացակարգերի, ՈԱ/ՈՎ գործողությունների, տեխնիկական խմբերի անդամների, ինչպես նաև արտանետումների կատեգորիաների սահմանման, դիտարկվող գազերի, մեթոդաբանությունների, և այլ ուղղություններով: Այս որոշման մեջ անհրաժեշտ է մանրամասն նկարագրել կադաստրի կազմման կարգը:

Բացի այդ, առաջարկվում է ոլորտային տեխնիկական ուղեցույցներում ներկայացնել մեթոդաբանությունների կիրառումն ըստ արտանետումների կատեգորիայի, որոնք կարող են հաճախակի թարմացվել առանց խիստ իրավական ընթացակարգերի կիրառման՝ այդպիսով թույլ տալով կիրառել ավելի լավ մեթոդներ, երբ պայմանները թույլ են տալիս՝ համահունչ լավագույն միջազգային մեթոդաբանություններին և գործելակերպերին, և հնարավորության սահմաններում օգտագործել տեղական արտանետումների գործակիցներ:

Հարկ է նշել, որ ոլորտային ուղեցույցները իրենցից կներկայացնեն տեխնիկական փաստաթղթեր, որոնք գործնական նպատակներով կարող են թարմացվել՝ Հայաստանի համատեքստում կիրառելի ավելի որակյալ ելակետային տվյալների և ավելի կիրառելի և ճշգրիտ մեթոդաբանությունների ի հայտ գալուն զուգընթաց:

Գծապատկեր19 ՋԳ կադաստրի համար անհրաժեշտ շրջանակ



Որոշման միջոցով սահմանվելիք կադաստրի մշակման ընթացակարգը պետք է հաշվի առնի հետևյալ փուլերը՝ պլանավորում, տվյալների հավաքագրում և արտանետումների գնահատում, հաշվետվությունների պատրաստում, ոլորտային տվյալների հավաստում, որակի ապահովում, վերջնական ներկայացում և բացահայտում: Առաջարկվում է վարչությունների մակարդակով սահմանել այդ աշխատանքների համար պատասխանատուներին:

Նկատառումներ, որոնք պետք է հաշվի առնել կադաստրի շրջանակը սահմանող որոշման մեջ, ներկայացված են Աղյուսակ11: Հարկ է նշել, որ Հայաստանը 1997 թվականից ի վեր մշակել է ջերմոցային գազերի կադաստրեր և շարունակաբար կատարելագործել իր գործելակերպերը, արդյունքում՝ տեխնիկական աշխատանքների մեծ մասը պատշաճ կերպով կատարվել է, սակայն չի ամրագրվել իրավական ակտով, որը իրավական համընդգրկուն հիմք կծառայեր Շրջակա միջավայրի նախարարության առաջնորդությունը խթանելու, տվյալների տրամադրման արդյունավետ մեխանիզմները դյուրինացնելու, ինչպես նաև տվյալների որակի թարմացմանն ու բարելավմանը նպաստելու համար:

Հարկ է նշել, որ խիստ իմաստով ջերմոցային գազերի կադաստրի հետ կապված բոլոր նկատառումները կարող են ներառվել կլիմայի փոփոխության մասին օրենքում (Ա1.1) կոնկրետ գլխում: Այնուամենայնիվ, խորհրդատվական թիմի տեսակետն այն է, որ երկուսի ընդունումը կայուն կանոնակարգային դաշտ ստեղծելու լավագույն միջոցն է, քանի որ, որպես կանոն, օրենքը նախատեսված է հիմքեր ձևավորելու համար, ինչպես, օրինակ՝ որոշակի կառույցին որևէ բնագավառում լիազորությունների վերապահումը, համապատասխան հայեցակարգերի ներդրումը, նպատակների և դերերի սահմանումը, սակայն տեխնիկական հարցերը լուծվում են առանձին ենթաօրենսդրական ակտերով, որոնք համակարգը դարձնում են ավելի ճկուն և երկարաժամկետ հեռանկարում ավելի

CARBON LIMITS

հեշտ կառավարելի (օրինակ, փոփոխությունների կատարման անհրաժեշտության դեպքում):

Աղյուսակ 11 ՋԳ կադաստրի շրջանակի համար անհրաժեշտ տարրեր

ՋԳ-ի կանոնակարգում ներառման ենթակա նկատառումները	Մեկնաբանություններ և ուղղորդող հարցեր որոշումներ կայացնելու համար
<p>Շրջանակ</p>	<p>Կլիմայի քաղաքականության լիազորությունների շրջանակը սահմանելիս հնարավոր է առաջնորդվել կլիմայի փոփոխության թիրախների և նպատակների ուղղությամբ երկրի ներքին իրավիճակով կամ կարող է սահմանվել ելնելով միջազգային համատեքստից՝ բացահայտորեն հաշվի առնելով ազգային ջանքերի փոխկապակցվածությունը միջազգային թիրախների և մոտեցումների հետ (ՄԱԿ ԿՓՇԿ, 2020թ.): Առաջարկությունը նկարագրված է Ա1.1-ում:</p>
<p>Ոլորտներ, ենթաոլորտներ, գործողություններ</p>	<p>Ի լրումն ջերմոցային գազերի կադաստրում (1990-2017թթ.) ընդգրկված կատեգորիաների և ենթակատեգորիաների, ի՞նչ այլ կատեգորիաներ է նպատակահարմար ներառել Հայաստանի համատեքստում (որը կարող էր գնահատումից դուրս մնացած լինել տեխնիկական խոչընդոտների պատճառով):</p> <p>Արդյո՞ք տեղին է մասնավոր հատվածին (այսինքն՝ արդյունաբերական և առևտրային հատվածներին) և քաղաքապետարաններին որպես տվյալների մատակարարներ ներգրավելը:</p> <p>Որո՞նք են այն խոչընդոտները, որոնք առաջացել են այն պատճառով, որ այս ոլորտները/ենթաոլորտները դեռևս ներգրավված չեն տվյալների ներկայացման աշխատանքներում:</p> <p>Ամբողջականության սկզբունքի ապահովման համար խորհուրդ է տրվում ներառել բոլոր ճյուղերի արտանետումները, քանի որ դրանք ազգային արտանետումներ են: Հակառակ դեպքում դրանցից մի քանիսի չներառումը պետք է տեխնիկապես հիմնավորված լինի: Բավարար տեղեկատվություն չունենալը ենթադրում է այլընտրանքային մոտեցումների կիրառումը՝ տեղեկատվություն հայթայթելու համար, սակայն չի հիմնավորում երկարաժամկետ հեռանկարում այդ տեղեկատվության բացառումը: Տե՛ս Ա1.5 առաջադրանքը՝ մասնավոր հատվածի հաշվետվողական պարտավորությունների վերաբերյալ:</p>

<p>Պատասխանատու է տվյալների ստեղծման, փոխանցման, կառավարման և գրառումների վարման համար</p>	<p>Որքանով են սահմանվել ներգրավված յուրաքանչյուր դերակատարի պարտականությունները:</p> <p>Արդյո՞ք բոլոր համապատասխան մասնակիցները ներգրավված են տվյալների հավաքագրման աշխատանքներում:</p> <p>Ընդգրկված յուրաքանչյուր նախարարության և գերատեսչության ընդհանուր գործառնությունները պետք է կարգավորվեն Ա1.1-ում առաջարկվող իրավական ակտով, մինչդեռ ՋԳ կադաստրի հետ կապված կոնկրետ գործողությունները պետք է կարգավորվեն ՋԳ կադաստրի վերաբերյալ որոշմամբ կամ համանման կանոնակարգով:</p>
<p>ՇՄՆ-ի պարտականությունները արտանետումների գնահատման ուղղությամբ</p>	<p>Ա.1.1-ով առաջարկվող իրավական ակտում ՇՄՆ-ի պարտականությունները պետք է հստակորեն սահմանվեն որպես կադաստրի գործողությունների համակարգող կառույց:</p>
<p>ՋԳ կադաստրի մշակման հաճախականությունը</p>	<p>Սահմանված է, որ ՋԳ կադաստրը պետք է մշակվի երկու տարին մեկ անգամ՝ ՄԱԿ ԿՓՇԿ-ին ներկայացնելու համար: Այնուամենայնիվ, բոլոր գործողությունները, որոնք բխում են այս անհրաժեշտությունից, պետք է նախատեսեն բավարար ժամկետներ՝ պատշաճ ժամանակում կադաստրի մշակումն ավարտելու համար՝ հաշվի առնելով նաև վավերացման համար պահանջող ժամանակը և ռիսկի չենթարկելով գնահատումների ճշգրտությունը:</p> <p>Մշակման հաճախականությունը պետք է սահմանվի օրենքով (Ա1.1):</p>
<p>Հաշվետու ժամանակաշրջաններ (տվյալների տրամադրման մեխանիզմներ)</p>	<p>Սահմանել տվյալների ներկայացման ժամկետները ներգրավված տարբեր մասնակիցների համար՝ տվյալների ստեղծման ժամկետներին համապատասխան:</p> <p>Սա պետք է սահմանվի միջգերատեսչական համագործակցության համաձայնագրերով (տես Ա1.4):</p>
<p>Փորձագետների խմբերն ըստ ոլորտների</p>	<p>Սահմանել յուրաքանչյուր փորձագիտական խմբի կոնկրետ անդամներին և պարտականությունների շրջանակը՝ նրանց կողմից պահանջվող տեղեկությունների տեսակը, ինչպես նաև այդ տեղեկությունները տրամադրող կողմերը և տրամադրման ժամկետները՝ հաշվարկները պատշաճ ժամկետներում կազմակերպելու համար:</p>

	<p>Առաջարկվում է ՋԳ կադաստրի որոշման մեջ սահմանել թիմի անդամների բնութագրերը (Ա.1.3):</p>
<p>Տվյալների շարք</p>	<p>Այս պահին կադաստրի մշակման համար պատասխանատու թիմը նույնականացրել է ԿՓՓՄԽ ոլորտներին առնչվող՝ որպես ելակետային տվյալներ անհրաժեշտ ընդհանուր տվյալները, որոնք կարող են սահմանված լինել որոշման մեջ (Ա1.3):</p>
<p>ՋԳ կադաստրի ինստիտուցիոնալ կառուցվածքը</p>	<p>Սահմանել հատուկ ինստիտուցիոնալ մեխանիզմներ, որոնք անհրաժեշտ են կադաստրի նախապատրաստման համար՝ սկսած ՇՄՆ-ի կլիմայական քաղաքականության բաժնից՝ որպես համակարգող ստորաբաժանում, մինչև տեխնիկական խմբերը՝ հաշվի առնելով կադաստրի յուրաքանչյուր ենթակատեգորիայի ներքո տեղեկատվություն տրամադրողներին:</p> <p>Առաջարկվում է Ա1.1 միջոցով հաստատել ՉՀՀ-ի ընդհանուր կառուցվածքը և ինստիտուցիոնալ մեխանիզմները ՋԳ կադաստրի համար՝ ՇՄՆ-ին վերապահելով տեխնիկական խմբերի անդամներին նշանակելու լիազորությունը: Մյուս կողմից, կադաստրի վերաբերյալ որոշմամբ կարելի է մանրամասն ներկայացնել այդ կառույցները:</p>
<p>Որակի չափորոշիչները, որոնց պետք է համապատասխանի կադաստրը.</p>	<p>Սահմանել որակի չափորոշիչները, որոնց պետք է համապատասխանի կադաստրը. Թափանցիկություն, ամբողջականություն, ներդաշնակություն, համեմատելիություն և ճշգրտություն:</p> <p>Նմանապես, սահմանել որակի վերահսկման գործընթացները, որոնք պետք է կիրառվեն այս պարամետրերին համապատասխանելու համար: Որակի վերահսկման այս գործընթացները պետք է լինեն ներքին և արտաքին: Եթե ՈԱ/ՈՎ վերջնական գործողություններն իրականացվելու են ՄԳՀԽ կողմից, ապա կարևոր է կարգավորել այդ գործընթացը Հ1.1 կանոնակարգի միջոցով (որպես հիմնական ինստիտուցիոնալ մեխանիզմ), իսկ մանրամասն գործառնությունների և տեխնիկական խմբերի հետ փոխգործակցության եղանակները սահմանել որոշման միջոցով:</p> <p>Հարկ է նշել, որ 1990-2017_{թթ.} ՋԳ կադաստրի բարելավումները կատարվել են TACCC սկզբունքներով: Առաջարկվում է այդ սկզբունքները ներդաշնակեցնել որոշման տեսքով:</p>

<p>ՈԱ/ՈՎ ծրագիր</p>	<p>Համաձայն 2006 թվականի ԿՓՓՄԽ ուղեցույցների՝ ծրագրի հիմնական տարրերը պետք է ներառեն.</p> <ul style="list-style-type: none"> • Իրականացվելիք ՈԱ/ՈՎ և հավաստագրման գործողությունների ընդհանուր նկարագիր • Ինստիտուցիոնալ մեխանիզմներ • Գործողությունների իրականացման դերերն ու պարտականությունները • ՈԱ/ՈՎ գործողությունների համար նախատեսված ժամանակացույց, որը հետևում է կադաստրի պատրաստմանը՝ սկսած սկզբնական մշակումից մինչև վերջնական հաշվետվության պատրաստումը՝ որևէ տարվա ընթացքում • Տվյալների որակի գծով նպատակներ (կոնկրետ թիրախներ, որոնք պետք է ձեռք բերվեն կադաստրի նախապատրաստման ժամանակ) <p>ՈԱ/ՈՎ պլանի բնութագրերը (բնութագրերը/պահանջները) պետք է սահմանվեն Հ1.3-ում: Այնուամենայնիվ, պլանը որպես այդպիսին կարող է նաև հանդես գալ որպես ուղեցույցների մաս:</p>
<p>Մեթոդաբանություններ</p>	<p>Հղում կատարել արտանետումների յուրաքանչյուր կատեգորիայի համար կիրառվելիք մեթոդներին՝ ըստ ենթաճյուղերի, որպեսզի արտանետումների գնահատման համար կիրառվի պարզ և թափանցիկ մոտեցում: Սա թույլ կտա կանխել գիտելիքի փոխանակման խոչընդոտները և կնվազեցնի սխալ մեկնաբանության ռիսկը՝ կադրերի հոսքի դեպքում:</p> <p>Բացի այդ, առաջարկվում է որպես ընդհանուր գործելակերպ սահմանել այն, որ մեթոդաբանությունները կարող են փոփոխվել, եթե առկա են նոր, ավելի համընդգրկուն մեթոդաբանություններ, և առկա են անհրաժեշտ պայմանները Հայաստանում դրանք կիրառելու համար:</p>
<p>Ոլորտային ուղեցույցներ</p>	<p>Առաջարկվում է, որ ոլորտային ուղեցույցներն իրենցից ներկայացնեն որոշակի «ընթացակարգային ձեռնարկներ», որոնցով սահմանվում են մոնիտորինգի ընթացակարգերը, տվյալների հավաքագրումը, արտանետումների գնահատումը (մեթոդաբանական խստությամբ), որակի վերահսկման գործընթացները (ՈԱ/ՈՎ պլան), ինչպես նաև այդ խնդիրների իրականացման համար նշանակված պատասխանատուներին և դրանց իրականացման համար սահմանված ժամկետները: Վերը նշվածը՝ ըստ կադաստրի ոլորտի:</p>

<p>Օժանդակ գործիքներ</p>	<p>Էլեկտրոնային հարթակների մշակում/բարելավում, որտեղ կտեղակայվի կադաստրին առնչվող տեղեկատվությունը, ինչպես նաև աղյուսակներ, որոնք կօգտագործվեն գնահատումների և որակի վերահսկման առաջադրանքների համար՝ համաձայն ՈԱ/ՈՎ պլանի:</p>
---------------------------------	---

6.1.4. Ա1.4 Ստորագրել միջգերատեսչական համագործակցության համաձայնագրեր տվյալների տրամադրման վերաբերյալ

Հաշվի առնելով արտանետումների կադաստրի համար մշակվելիք տեղեկատվության մեծ ծավալը, ինչպես նաև հաշվի առնելով մեղմման և հարմարվողականության քաղաքականության առաջընթացի արձանագրման, ներառյալ հարակից թեմաներին աջակցությունն ապահովելու մոտեցումը, անհրաժեշտ է ստեղծել համագործակցության կամ միջգերատեսչական համաձայնագրեր ստորագրելու հնարավորություն՝ ՇՄՆ-ին, որպես համակարգի ընդհանուր համակարգող, տեղեկատվության տրամադրման գործընթացները պարզեցնելու համար:

ՇՄՆ-ին առաջարկվում է խթանել միջգերատեսչական համաձայնագրեր ունենալու մոտեցումը՝ համակարգի յուրաքանչյուր բաղադրիչի համար անհրաժեշտ տեղեկատվության ստեղծման, հավաքագրման, հաշվետվության և կառավարման գծով համագործակցության համար, որպես հղումային ելակետ ընդունելով յուրաքանչյուր գերատեսչության գործառույթները՝ իրեն վերապահված պարտականությունների շրջանակներում: Այս համաձայնագրերի կնքմամբ պետք է որպես առաջնահերթություն դիտարկվի հուսալի տեղեկատվության և թափանցիկ և արդյունավետ գործընթացների ձևավորումը, որոնք նպաստում են երկարաժամկետ հեռանկարում համակարգի անհրաժեշտ հուսալիության մակարդակի ձևավորմանը:

Թեև ներկայումս առկա են որոշ գործընթացներ, որոնք գերատեսչությունների/կառույցների միջև ներկայումս գործնականում կիրառվում են, սակայն դրանք պաշտոնականացված չեն, հետևաբար, դրանք ցանկացած պահի կարող են ընդհատվել՝ ազդելով արտանետումների կադաստրի մշակման և ապագայում՝ ՉՀՀ-ի իրագործման վրա: Այն փաստը, որ այդ ընթացակարգերը համաձայնեցված չեն ինստիտուցիոնալ մակարդակում և պաշտոնականացված չեն, թույլ չի տալիս ապահովել համակարգին անհրաժեշտ համընդգրկունությունը. այս համաձայնագրերը կնպաստեն ընթացակարգերի շարունակականության ապահովմանը՝ վարչարարության միջոցներով, և համապատասխանաբար՝ դրանց շարունակական կատարելագործմանը, այդպիսով ապահովելով համակարգ, որի որակը և հուսալիությունը աճում է ժամանակի ընթացքում:

Համագործակցության համաձայնագրերը գործիքներ են, որոնց միջոցով կարելի է ապահովել ժամանակի ընթացքում որակյալ տեղեկատվության ստացման գործելակերպերի շարունակականությունը, ուստի դրա իրականացումը հրատապ է և կնպաստի ներգրավելու այն կառույցներին, որոնք ունակ են ստեղծել տեղեկատվություն ճշմարտացի և հուսալի աղբյուրներից, և, իր հերթին, թույլ կտա խուսափել ջանքերի կրկնօրինակումից և կնպաստի իրականացվող գործընթացների պարզեցմանը:

Համաձայն 3-րդ երկամյա առաջընթացի զեկույցի՝ քաղած դասերի հիման վրա հետագա քննարկում իրականացնելու նպատակով առաջարկվում է կիրառել հետևյալ մոտեցումը. (i) Շրջակա միջավայրի նախարարության և Վիճակագրական կոմիտեի միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի հիման վրա վերջինս տրամադրում է տեղեկատվությունը նույն շրջանակով, որը ներկայումս տրամադրվում է ՋԳ կադաստրի մշակման համար. (ii) Տվյալների տրամադրման վերաբերյալ առանձին փոխըմբռնման հուշագրերի ստորագրում համապատասխան ոլորտների տվյալների տիրապետող պետական կառույցների հետ (օրինակ՝ Պետական եկամուտների կոմիտե, ՀԾԿՀ, Էկոնոմիկայի նախարարություն և այլն)՝ Վիճակագրական կոմիտեի կողմից չհասցեագրված տվյալներ տրամադրելու համար. (iii) առանձին փոխըմբռնման հուշագրեր կոմունալ ընկերությունների և բնական մենաշնորհների հետ (օրինակ՝ ՀԷՑ ՓԲԸ, Գազպրոմ Արմենիա ՓԲԸ և այլն); (iv) ցանկացած տվյալ մասնավոր հատվածի կազմակերպություններից, որն անհրաժեշտ է երկրի հաշվետվողականության նպատակներով և չի ընդգրկված վերը նշված երեք ուղիներում, վերը նշված օրենքի չընդունման դեպքում, պետք է ձեռք բերվի Վիճակագրական կոմիտեի միջոցով, ինչը կնշանակի ՎԿ կողմից հավաքագրվող տվյալների շրջանակի որոշակի ընդլայնում:

Առաջարկվում է աշխատել շրջանակային համաձայնագրի (ձևանմուշի) վրա, որը թույլ է տալիս գերատեսչությունների միջև իրականացնել տեղեկատվության փոխանակում գաղտնիության հիմունքով՝ ընդգծելով, որ կադաստրի կազմման կամ կլիմայի քաղաքականության հետ կապված այլ նպատակների համար օգտագործվող տեղեկատվությունը պետք է ուղեկցվի համապատասխան տեխնիկական աջակցությամբ, որը թույլ կտա վավերացնել ստացված տեղեկատվությունը:

Համաձայն ՄԱԿ ԿՓՇԿ-ի՝ այս տեսակի համաձայնագրերը կարող են կնքվել տարբեր կազմակերպությունների միջև՝ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար: Շրջանակային պայմանագիր կամ համաձայնագիր մշակելիս կարելի է հաշվի առնել հետևյալ նկատառումները.

- **Նպատակը.** Համաձայնագրի նպատակը բոլոր ներգրավված կողմերի տեսանկյունից.
- **Համագործակցության շրջանակը.** Պետք է սահմանվի ներգրավվածության շրջանակը (օրինակ, թե որոնք են թիրախային վերջնաարդյունքները. հավաքագրման, մշակման և ներկայացման երկարաժամկետ արդյունքները. հավաքագրման, մշակման և ներկայացման երկարաժամկետ արդյունքները).
- **Համագործակցության եղանակները.** Համագործակցության համաձայնագրի «ինչպես» ասպեկտը. տվյալների և տեղեկատվության փոխանակման մեթոդները, հաճախականությունը և առկա որևէ սահմանափակումները և համագործակցային մոտեցումները.
- **Անհրաժեշտ ռեսուրսներ.** Եթե նախատեսվում է, որ առաջարկվող համագործակցային մոտեցումները պահանջելու են ռեսուրսներ, ապա համաձայնագիրը պետք է ներկայացնի, թե ներգրավված կողմերն ինչպես են հասանելիություն ունենալու այդպիսի ռեսուրսներին.
- **Ուժի մեջ մտնելու ամսաթիվը, գործողության ժամկետը և դադարեցումը:** Համաձայնագիրը պետք է սահմանի դրա ուժի մեջ մտնելու ամսաթիվը, սկզբնական գործողության ժամկետը, փոփոխությունների շրջանակը, եթե այդպիսիք կան, և դադարեցման պայմանները.
- **Կոնտակտային անձինք:** Պետք է ներառվեն հիմնական կոնտակտային անձինք (նախընտրելի է՝ կազմակերպությունների անունները կամ պաշտոնների անվանումները, այլ ոչ թե կոնկրետ անձանց անունները՝ շարունակականության ապահովման տեսանկյունից): Համաձայնագիրը պետք է նաև սահմանի այս հիմնական կոնտակտների

ակնկալիքները, ներառյալ ցանկացած ռեսուրսների հանձնառություն և հաղորդակցության և գիտելիքների փոխանակման մոտեցումները:

Տվյալների փոխանակման համաձայնագրեր

Առավելությունները

- Պաշտոնականացնում է փոխգործակցության մեխանիզմները ազգային համակարգող մարմնի կամ նշանակված համակարգողի և տվյալների մատակարար հանդիսացող շահագրգիռ կողմի միջև, և ազգային փորձագետների թիմի կողմից տրամադրված տեխնիկական փորձագիտական խորհրդատվությունը:
- Կարող է նպաստել ապահով տվյալների տրամադրմանը երկարաժամկետ հեռանկարում
- Կարող է օգնել տվյալներ մատակարարող կազմակերպություններին՝ պաշտոնապես ճանաչելով նրանց տվյալների արժեքավորությունը, ինչը կարող է խթանել այդ կազմակերպություններին իրականացնել ներքին ռեսուրսների բաշխում՝ ժամանակին հավաստի տվյալներ տրամադրելու համար:

Բովանդակությունները.

- թափանցիկության համակարգի կարիքների և լիազորության շրջանակի վերաբերյալ ամփոփ հաշտություններ.
- Հղում օրենքներին և տեխնիկական պահանջներին և համագործակցությանը տվյալների մատակարարի և թափանցիկության համակարգի ներկայացուցիչների միջև.
- Համաձայնագրի նպատակները՝ հղում կատարելով հավելվածին, որտեղ ներկայացված են մանրամասները.
- Ձեռնարկ օժանդակության ինստիտուցիոնալ մեխանիզմների վերաբերյալ
- ՉՀՀ/կլիմայի գործողությունների թափանցիկություն և աջակցություն
- Գաղտնիության դրույթներ և հանձնառություններ.
- Ընթացակարգեր, որոնք հնարավորություն են տալիս ստացող կողմին (տվյալների օգտագործողին, օրինակ՝ ազգային համակարգող մարմնին կամ նշանակված համակարգողին) հետադարձ կապ տրամադրել տվյալների մատակարարին տվյալների հավաքածուի հետագա բարելավման առաջնահերթությունների վերաբերյալ.
- Ազգային համակարգողի կամ նշանակված համակարգողի ներկայացուցչի և տվյալների մատակարարի ստորագրությունները, անհրաժեշտության դեպքում.
- Տեխնիկական հավելված, որը պարունակում է տրամադրվող տվյալների մանրամասները, ներառյալ.
 - Տվյալների հավաքածուի եզակի անվանումը (այլ տվյալների հավաքածուների հետ փոքր տարբերից խուսափելու համար).
 - Գաղտնիության հասցրեր.
 - Տվյալների նկարագրությունը, ներառյալ ձևաչափը (էլեկտրոնային ձևաչափը) և շրջանակը (ժամանակային շարքեր, մանրամասներ, անվանակարգեր, կատեգորիաներ, աշխարհագրություններ).
 - Մատակարարող ստորագրության և ամսաթվի համարները.
 - Տվյալների տրամադրման վերջնական ամսաթիվները.
 - ՈԱ/ՈՎ միջոցառումների մանրամասները, որոնք պետք է կիրառվեն տվյալների նկատմամբ մինչև դրանց մատակարարումը.

- Տվյալներում անորոշությունները:

Աղբյուր՝ Փորձագետների խորհրդատվական խումբ ՄԱԿ ԿՓՇԿ քարտուղարություն, 2020թ. Ձեռնարկ ՉՀՀ/ կլիմայի գործողությունների և աջակցության թափանցիկության ապահովման ինստիտուցիոնալ մեխանիզմների վերաբերյալ:

6.1.5. Ա1.5 ՉՀՀ հանձնառությունների սահմանում մասնավոր հատվածի համար

Առաջարկվում է ջանքեր գործադրել Հայաստանի տնտեսության ճյուղերի մեծ մասի արտանետումների վերաբերյալ տեղեկատվությունը ՋԳ ազգային կադաստրի գնահատումներում ներառելու ուղղությամբ՝ ոչ միայն այդ ճյուղերից արտանետումների մակարդակը պարզելու և դրանք կադաստրում ներառելու, այլ նաև ավելի լայն համատեքստում՝ մեղմման ծրագրերի հնարավորությունները բացահայտելու նպատակով: Համարվում է, որ իրավական ակտի միջոցով մասնավոր հատվածի համար հաշվետվայնության պարտավորության սահմանումը կնպաստի արդյունաբերական ոլորտներից տվյալների հավաքագրմանը, հաշվի առնելով, որ արտադրության հետ կապված տվյալների գաղտնիության նկատառումներից ելնելով, ընկերությունները գործնականում պատրաստակամ չեն ներկայացնել տեղեկատվություն: Խորհուրդ է տրվում Ա1.1-ում սահմանել ՉՀՀ պարտավորություն մասնավոր հատվածի համար և դրա գործնական կիրառումը սահմանել առանձին որոշման միջոցով:

Հարկ է նշել, որ կառավարության մի շարք որոշումներ պետք է կայացվեն նման բնույթի իրավական ակտի գործնական իրականացման, մասնավորապես՝ բոլոր ոլորտների (և նույնիսկ առևտրի և բիզնես ոլորտի, անհրաժեշտության դեպքում), կամ հետաքրքրություն ներկայացնող որոշակի տնտեսության ճյուղերի կանոնակարգման նպատակով: Նմանապես, վերլուծել արտանետումների շեմը կանոնակարգելու նպատակահարմարությունը և արդյոք կարող է կիրառելի լինել մի քանի ջերմոցային գազերի կամ միայն CO₂ -ի, մեթանի և ազոտի օքսիդի և/կամ այլ գազերի կանոնակարգումը:

Տարբեր ոլորտները հաշվի առնելու առավելությունն այն է, որ հնարավոր է դառնում աղբյուրից (այսինքն՝ վարից վեր մոտեցմամբ) ավելի մեծ ծավալով տեղեկատվություն հավաքագրել, ինչը երկարաժամկետ հեռանկարում Հայաստանին թույլ կտա ունենալ ավելի ճշգրիտ տեղեկատվություն արտանետումների վերաբերյալ, ինչը կարող է նպաստել ապագայում այլ քաղաքականությունների իրականացմանը, ինչպիսիք են ածխածնի գնագոյացման գործիքները, ի լրումն կոնկրետ ոլորտների արտանետումների նվազեցման հնարավորությունների բացահայտմանը: Հաշվետվայնության այս պարտավորությունը կարող է նույնիսկ ներառել անուղղակի արտանետումներ էլեկտրական և ջերմային էներգիայի սպառումից (շրջանակ 2):

Բացի այդ, պետք է սահմանվի, թե որ մեթոդաբանության միջոցով են ընկերությունները ներկայացնելու իրենց արտանետումների մասին (օրինակ՝ 2006թ. ԿՓՄԽ ուղեցույցներին համապատասխանեցված մեթոդաբանությամբ):

Պետք է նշել, որ մասնավոր հատվածի համար հաշվետվայնության պարտավորությունների ներդրումը ենթադրում է արտաքին հավաստագրողների համար հավատարմագրման համակարգի ստեղծում, քանի որ նպատակահարմար կլինի, եթե ներկայացվող տեղեկատվությունը համապատասխանի որակի և

որոշակիության պարամետրերին (օրինակ՝ ISO 14064 -1:2018 և ISO 14065:2020 ստանդարտներին համապատասխան¹⁷): Տես առաջարկություն Լ4:

Հիմնական ասպեկտները, որոնք պետք է հաշվի առնել այս բնույթի իրավական ակտի ընդունման ժամանակ, ներկայացված են ստորև՝

- Որոշել հետաքրքրություն ներկայացնող տնտեսության ճյուղերը կամ ոլորտները. ուշադրություն դարձնել խոշոր ճյուղերին կամ ներառել երկրում իրականացվող բոլոր գործունեության տեսակները: Առաջարկվում է իրականացնել արտանետումների կազմում մասնակցության վերլուծություն, որը հնարավորություն կտա գնահատել, թե քանիսն են և որն են այն ճյուղերը, որոնց բաժին է ընկնում արտանետումների ամենամեծ քանակը, ինչը թույլ կտա կանոնակարգել քիչ թվով ընկերությունները, որոնց վերագրելի է արտանետումների առավել մեծ ծավալը, եթե որոշվի նման մոտեցում ցուցաբերել:
- Որոշել կանոնակարգվող գազերը՝ CO₂, CH₄, N₂O, ֆտորացված գազեր և այլն:
- Որոշել հաշվետու միավորները՝ տոննա ՋԳ և/կամ տոննա CO₂ համ.
- Որոշել, թե արդյոք գրանցման ենթակա են գործունեության տվյալները. սա ավելի շատ ջանքեր կպահանջի հարթակի առումով, քանի որ յուրաքանչյուր գործողության համար կպահանջվեն տարբեր մուտքային տվյալներ:
- Սահմանել կարգավորվող ընկերություն հանդիսանալու չափանիշները. միայն ոլորտ և ենթաոլորտ, կամ կոնկրետ գործողություն և/կամ հաշվետվողականության շեմ (օրինակ՝ միայն այն ընկերությունները, որոնք արտանետում են ավելի քան 3000 տCO₂ համ):
- Որոշել ներկայացվող տեղեկատվության շրջանակը՝ արտանետումների ընդհանուր քանակը կամ ներառյալ գործողությունների վերաբերյալ տվյալները (խորհուրդ է տրվում նաև պահանջել գործողությունների վերաբերյալ տվյալներ, քանի որ այս տեղեկատվությունը կարող է օգտակար լինել վերահաշվարկներ կատարելու համար): Այս առումով կարևոր է սահմանել, թե որ տեսակի տեղեկատվությունը կհանդիսանա հանրամատչելի, և որ տեսակի տեղեկատվությունը կփոխանցվի ՇՄ-ին բացառապես տեղեկատվական նպատակներով (օրինակ՝ արտադրության հետ կապված տեղեկատվություն):
 - Օրենքով (Լ1.1) կարելի է սահմանել, որ ռեեստրում համախմբված տեղեկատվությունը (ՋԳ արտանետումները տոննա CO₂ համ. արտահայտությամբ կամ յուրաքանչյուր ՋԳ՝ տոննայով) կհանդիսանա հանրամատչելի տեղեկատվություն տարեկան կտրվածքով՝ ըստ ոլորտի կամ ենթաոլորտի (կառավարության կողմից ընդունելի լինելու դեպքում): Նաև, օրենքով կարող է սահմանվել, որ ՋԳ արտանետումների և գործունեության մասին տվյալները ենթակա են ներկայացման ՇՄ-ին (ավելի շատ մանրամասներ ներկայացնելու կարիք չկա):
 - Ռեեստրի որոշման մեջ կարելի է նախանշել ռեեստրում (հարթակում) ներկայացման ենթակա կոնկրետ գործողությունների վերաբերյալ տվյալների և ջերմոցային գազերի արտանետումների վերաբերյալ տվյալները՝ ըստ ոլորտների, ենթաոլորտների և գործունեության տեսակների: Խորհուրդ է տրվում բազմիցս շեշտադրել, որ գործունեության վերաբերյալ տվյալների գաղտնիությունը ապահովված է տվյալների պաշտպանության վերաբերյալ օրենքներով սահմանված հստակ պայմանների և դրույթների համաձայն:

¹⁷ ISO 14064-1:2018 Ձեռնոցային գազեր - Մաս 1. Կազմակերպական մակարդակի մասնագիր և ուղեցույց ջերմոցային գազերի արտանետումների և կլանումների քանակային որոշման և ներկայացման համար: ISO 14065:2020 Ընդհանուր սկզբունքներ և պահանջներ շրջակա միջավայրի մասին տեղեկատվությունը վավերացնող և հավաստագրող մարմինների համար:

- Ստեղծել մեթոդաբանություններ. դրանք կարող են համապատասխանեցվել 2006թ. ԿՓՄԽ ուղեցույցներին: Սա պետք է հաստատվի որոշմամբ, և կարգավորվող ընկերությունների համար արտանետումների գնահատումը հեշտացնելու համար առաջարկվում է մշակել պարզեցված մեթոդական ուղեցույցներ, ներառյալ արտանետումների գործակիցներ, որոնցից կարող են օգտվել կարգավորվող ընկերությունները:
- Մշակել արտանետումների վերաբերյալ տվյալների ներկայացման հարթակ. հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա են մթնոլորտային այլ աղտոտիչների մասին հաշվետվություն ներկայացնելու պարտավորություններ, առաջարկվում է վերլուծել այդ ռեեստրի ընդլայնման ներուժը՝ ավելացնելով համապատասխան դաշտերը, որպեսզի ընկերությունները տվյալներ ներկայացնելիս օգտվեն միևնույն գործիքակազմից, և այդ գործողությունը հնարավորինս պարզեցվի:
- Խորհուրդ է տրվում դիտարկել այս ռեեստրի արտաքին հավաստագրման տարբերակը (տես առաջարկություն Ա4): Հավաստագրման գործընթացը կիրականացվի ընկերությունների կողմից ներկայացված արտանետումների հիման վրա և կնպաստի երկարաժամկետ հեռանկարում տեղեկատվության որակի բարելավմանը, ապահովելով բարձր աստիճանի որոշակիություն, որը թույլ կտա ՇՄՆ-ին ունենալ արտանետումների իրական ախտորոշիչ պատկերը՝ միջազգային պարտավորությունների համատեքստում:


6.1.6. Ա1.6 ՉՀՀ գործառույթների սահմանում գործընթացի բոլոր ներգրավված մասնակիցների համար:

Հայաստանի միջազգային հանձնառությունների համատեքստում յուրաքանչյուր շահագրգիռ կողմի ՉՀՀ գործառույթները առաջնահերթություն են: Այս դեպքում Հայաստանը իրականացնում է մի շարք գործողություններ, որոնք թույլ են տալիս կատարել իր պարտավորությունները՝ այլ պետական կառույցների և արտաքին խորհրդատուների մասնակցությամբ: Այնուամենայնիվ, առաջ են եկել տարբեր մարտահրավերներ՝ հաշվի առնելով ազգային կադաստրի, ազգային հաղորդագրությունների և ԵԱԶ-երի մշակման հետ կապված բարդությունները, որոնք պայմանավորված են պաշտոնականացված ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայությամբ, որոնք կսահմանեն հստակ պարտականություններ տարբեր առաջադրանքների գծով, ժամկետներ, հավաքագրման ենթակա տեղեկատվություն, որակի վերահսկողության նկատառումներ և այլն:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է այդ ինստիտուցիոնալ կարգավորումները սահմանել օրենքի կամ կարգավորող փաստաթղթերի միջոցով, որտեղ հստակորեն սահմանված են իրականացվելիք ՉՀՀ գործառույթները (խորհուրդ է տրվում դրանք սահմանել Հ1.1 կանոնակարգում): Այսպիսով, կհեշտացվեն տեղեկատվության հավաքագրման և որակի վերահսկողության գործընթացները, որոնք ամենակարևորներից մեկն են, այդպիսով վերացնելով տեղեկատվական բացերը, ինչպիսիք են տարբեր տեղեկատվության մատակարար կառույցներում աշխատանքների կրկնօրինակումը: Նմանապես, յուրաքանչյուր ներգրավված մասնակցի ՉՀՀ գործառույթների սահմանումը կնպաստի տեղեկատվության ավելի կատարելագործված հետազոծմանը բոլոր գործընթացներում և կառուցվելով՝ ապահովելով այդ տեղեկատվության նկատմամբ համապատասխան վերահսկողություն:

Կատարվելիք քայլերի հաջորդականությունը հետևյալն է.

Գծապատկեր 20 Ներգրավված մասնակիցների ՉՀՀ գործառույթները սահմանելու նպատակով ձեռնարկվելիք քայլեր



Որպես տեղեկատվություն մատակարար (հիմնականում) ներգրավված յուրաքանչյուր նախարարության աշխատակարգում ՉՀՀ-ի գործառույթները ներառելը կարևոր է երկարաժամկետ հեռանկարում ՉՀՀ-ի կառուցվածքի հիմնավոր կայունությունն ապահովելու և մարդկային և ֆինանսական ռեսուրսների բաշխման առումով, որպեսզի յուրաքանչյուր նախարարությունում պաշտոնապես ներդրվեն համակարգի տարբեր բաղադրիչներում անհրաժեշտ տեղեկատվություն ստեղծելու և տրամադրելու համար անհրաժեշտ գործընթացները և մեխանիզմները: Այնուամենայնիվ, համարվում է, որ միջգերատեսչական համաձայնագրերով առնվազն կարող են բարելավվել տվյալների տրամադրման մեխանիզմները:

Կարևոր է հաշվի առնել, որ ջերմոցային գազերի կադաստրը միակ պատճառը չէ այլ նախարարությունների ներգրավման համար, քանի որ կլիմայի փոփոխության քաղաքականությունները միջուրտային են, և մեղմման և հարմարվողականության հետ կապված այլ տեղեկատվության կարիքները նույնպես պետք է հասցեագրվեն: Վերոնշյալի առումով, առաջարկությունը նպատակ ունի ներգրավել այլ նախարարություններին ՉՀՀ համակարգի շրջանակներում կլիմայական այլ քաղաքականությանն առնչվող գործողություններում՝ ի լրումն կադաստրի համար նախատեսված տվյալների տրամադրումը:

ՉՀՀ գործում է ՉՀՀ համակարգի համատեքստում

Շրջակա միջավայրի նախարարություն

CARBON LIMITS

- ՉՀՀ համակարգի ընդհանուր համակարգող
- Նախատեսվող թափանցիկության համակարգի շրջանակի որոշում
- Օրենսդրական ակտերի և քաղաքականությունների մշակում, ինչպես նաև պետական մարմինների և մասնավոր հատվածի միջև տվյալների հոսքի դյուրինացմանն ուղղված գործիքների մշակում
- Հաշվետվությունների մշակում՝ ԵԱԶ, ԱԿՀ, ԱՀ
- ՄԳՀԽ-ին հաշվետվությունների ներկայացում
- Հայաստանում հավաստագրող մարմինների հավատարմագրման համակարգի մշակում և ներդրում
- Կլիմայի քաղաքականության կանոնակարգի մշակում և ներդրում
- Դիտազնման գործունեություն
- Աջակցություն ՄԳՀԽ-ին նիստերի կազմակերպման հարցում (քննարկվելիք թեմաների առաջնահերթությունների սահմանում)
- ՏՏ համակարգերի, տվյալների բազաների և արխիվների մշակում.
- Որոշել ՈԱ/ՈՎ համակարգի առանձնահատկությունները և ներկայացվող պահանջները
- Բացահայտել և դասակարգել համապատասխան հաստատություններին, փորձագետներին, տվյալների մատակարարներին, համակարգերը և շահագրգիռ կողմերը.

Շահագրգիռ կողմերի ներգրավվածություն

- Բացահայտել և ներգրավել շահագրգիռ կողմերին, ովքեր տիրապետում են, արտադրում են և կարող են տրամադրել տվյալներ (նախարարություններ և գերատեսչություններ, կոմիտեներ, մասնավոր հատված, գիտական համայնք և տեղական կառավարման մարմիններ)
- Թափանցիկության համակարգի համար անհրաժեշտ փորձագետների, ինչպես նաև նրանց ներկայացրած պետական գերատեսչությունների, գիտական հաստատությունների և մասնավոր ձեռնարկությունների նույնականացում:
- Կազմակերպել շահագրգիռ կողմերի ներգրավումը (ներառյալ հանրության, տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքների, տնտեսավարողների և որոշումներ կայացնող այլ անձանց)

Տվյալների կառավարում

- Բացահայտել փաստաթղթավորման բացերը, և/կամ փորձագետների բացակայության դեպքերը.
- Բացահայտել այն դեպքերը, երբ առկա փաստաթղթերը բավարար մանրամասն չեն ինստիտուցիոնալ փոխգործակցության թեմատիկ շրջանակը և դրանց նպատակներն ու արդյունքները լուսաբանելու համար.
- Որոշել տվյալների փոխանակման համաձայնագրերի կարիքները՝
 - Փոխըմբռնման հուշագրեր
 - Տվյալների մատակարարման պայմանագրեր
 - Կազմակերպչական համաձայնագրեր կամ պայմանագրեր (ՓՀ-եր)

CARBON LIMITS

- Տվյալների հավաքագրման աշխատանքներում գերատեսչությունների միջև աշխատանքների համընկնումների բացահայտում
- Տվյալների հավաքագրումը որպես միջանկյալ միջոց ազգային փորձագետների և տվյալների մատակարարների միջև (ԶԳ կադաստրի, մեղմման և հարմարվողականության, ինչպես նաև աջակցության համար):
- Մոնիտորինգի ուղեցույցների մշակում տվյալների մատակարարների համար
- Տվյալների տրամադրման ձևանմուշների մշակում (այսինքն Excel ֆայլ)
 - ԶԳ կադաստրի համար
 - ՄԼՅ գործողությունների համար
 - Աջակցության համար
- Ստանդարտացնել տվյալների հավաքագրման ձևաչափերը
- Տվյալների անհրաժեշտության և գործածության սահմանում
- Տվյալների մի շարք մատակարարներից կանոնավոր կերպով կառավարել անհրաժեշտ տվյալների հավաքածուները և շարունակաբար բարելավել տվյալները և նվազեցնել անորոշությունը:
- Տվյալների հուսալի հոսքերի ապահովում

Ռեսուրսներ

- Արդյունավետ հավաքագրման գործընթացների իրականացում
- Կնքել արտաքին աջակցության պայմանագիր ազգային փորձագետների թիմի վերապատրաստման և մենթորության համար
- Կլիմայի գործողություններին առնչվող թափանցիկության համակարգերի համար մարդկային և ֆինանսական ռեսուրսների հիմնական կարիքների գնահատում
- Կարողությունների զարգացման կարիքների բացահայտում
- Ըստ կարիքների կարողությունների զարգացման միջոցառումների իրականացում

Տվյալների մատակարարներ

- Տվյալների հավաքագրման և ՇՄՆ փոխանցման համար պատասխանատուի նշանակում
- Ժամանակին արձագանքում ՇՄՆ-ից ստացվող տեղեկատվության հարցումներին՝ ԶԳ-ի նպատակներով
- Տեղեկացնել ՇՄՆ-ին հայտնաբերված բացերի և խոչընդոտների մասին, որոնք ազդում են անհրաժեշտ տեղեկատվության ստեղծման կամ հավաքագրման վրա
- Տեղյակ լինել որոշակի տվյալների հավաքածուների առավելությունների և սահմանափակումների մասին և կարողանալ բացահայտել տվյալների հավաքագրման գործընթացում անհրաժեշտ հիմնական բարելավումները, երբ պարզ լինի թափանցիկության համակարգում տվյալների օգտագործման նպատակը:

Միջգերատեսչական համակարգող խորհուրդ

- ԶԳ-ի թափանցիկության շրջանակի վերջնական ՈԱ/ՈՎ-ի պատասխանատուին
- Կազմել ՈԱ/ՈՎ տարեկան պլան

- ՈԱ/ՈՎ գրանցամատյան
- Ապահովել տվյալների առնչությամբ բոլոր ճշգրտության ստուգումները
- Մշակել ՈԱ/ՈԱ բարելավման պլան թափանցիկության շրջանակի համար

ՉՀՀ-ն գործում է ՋԳ կադաստրի համատեքստում

Շրջակա միջավայրի նախարարություն

- ՋԳ կադաստրի վերաբերյալ որոշման (կամ կանոնակարգի) մշակում և ընդունում, ինչպես առաջարկվում է Ա1.3-ում:
- ՋԳ կադաստրի ոլորտային ուղեցույցների մշակում և թարմացում, ինչպես առաջարկվում է Ա1.3-ում:
- Պաշտոնական լրատվամիջոցների կողմից տվյալների մատակարարներին տեղեկատվության հարցումներ, ընդունում և վերանայում (առաջարկվում է ունենալ միջգերատեսչական համաձայնագրեր)
- Տեղեկատվության փոխանցում ոլորտային ազգային փորձագետներին
- Ստեղծել, տարածել և թարմացնել (անհրաժեշտության դեպքում) հատուկ ձևանմուշներ՝ ըստ ՋԳ-երի կադաստրի կատեգորիայի տեղեկատվություն հավաքելու համար
- Ոլորտային փորձագետների թիմերի ընթացիկ վերանայում և համակարգում
- ՋԳ կադաստրի նախագծի ներկայացում ՄԳՀԽ՝ ՈԱ/ՈՎ գործողությունների իրականացման համար
- ՄԳՀԽ-ի մեկնաբանությունների հասցեագրում՝ ոլորտի փորձագետների աջակցությամբ:

Ազգային փորձագետների թիմեր

- Պատասխանատու է թափանցիկության թեմաների վերաբերյալ տվյալների և տեղեկատվության հավաքագրման, մշակման և կազմակերպման համար
- Տվյալների վերլուծություն և հաշվարկներ, և հարակից գիտամեթոդական հիմքեր, ներառյալ ԿՓՓՄԽ ուղեցույցները (մեթոդաբանությունների կիրառում)
- Համապարփակ պատկերացում տվյալների հավաքածուների առավելությունների և սահմանափակումների մասին
- Տվյալների պարբերական հավաքագրում և մշակում՝ համաձայնեցված արդյունքները ժամանակին արտադրելու նպատակով
- Պատասխանատու է համապատասխան պահուստավորման գործողությունների փորձագիտական գիտելիքների և համապատասխան ուսումնական կյուլթերի հասանելիության համար
- Պատասխանատու է գիտելիքների պահպանման և փոխանցման համար
- Կրտսեր փորձագետների վերապատրաստում
- Տրամադրված տեղեկատվության մանրամասն վերանայում, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տեղեկությունների հարցումների կատարում
- Տվյալների հոսքի կառավարում

- ՈԱ/ՈՎ ընթացակարգերի իրականացում
- Տվյալների, գնահատումների և տեխնիկական աջակցության վերաբերյալ գրառումների վարում
- ՇՄՆ-ին հաշվետվությունների ներկայացում
- Գնահատումներում ստանդարտ դասակարգման և անվանացանկի օգտագործում
- Յուրաքանչյուր ֆայլում մետատվյալների ներառում և հաշվարկային ֆայլերի և դրանց տեսակների, հեղինակների և տարբերակների գլխավոր ցուցակի պահպանում.
- Կատեգորիաների և կադաստրի ցիկլերի միջև ֆայլերի անվանման ստանդարտ մոտեցումների կիրառում.
- Գործիքների փաստաթղթավորում՝ ՈԱ/ՈՎ ընթացակարգերի իրականացման աղյուցակներով.
- Գունային կոդավորում կամ այլ տեսանելի ձևաչափի կիրառում՝ տվյալների մուտքագրման, հաշվարկների, ՈԱ/ՈՎ ստուգումների, բացատրությունների և արդյունքների խմբավորումները տարբերակելու համար (օգտակար է աղյուսակների դեպքում).
- Պատմական տվյալների կամ մեթոդների վերանայման փաստաթղթավորում.
- Բարդ մոդելների փաստաթղթավորում.
- Ներկայացված բոլոր տվյալների համար ստանդարտ ելքային ձևաչափերի պահպանում:

Տվյալների մատակարարներ

- Շրջակա միջավայրի նախարարության պահանջով ժամանակին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում
- Բացահայտել և ՇՄՆ-ին տեղեկացնել տվյալների հավաքագրման գործընթացներում առկա բացերի, խոչընդոտների և մարտահրավերների մասին
- Իրեն վերապահված գործողությունների շրջանակներում բացահայտել և ուսուցանել տեղեկատվության ստեղծման և հավաքագրման մեջ ներգրավված անձանց և տեղեկացնել նրանց հանձնարարված գործողությունների կատարման գծով իրենց պատասխանատվության մասին: Առաջարկվում է այս գործողությունների համար կազմել ներքին ուղեցույցներ, որպեսզի գիտելիքների փոխանցումը խնդրահարույց չլինի անձնակազմի փոփոխության դեպքում:
- Ստեղծել տեխնիկական խմբեր, որոնք պատասխանատու են Շրջակա միջավայրի նախարարությանը տրամադրվող տվյալների ստեղծման, հավաքագրման, կառավարման, պահպանման և որակի վերահսկման համար:
- Կազմակերպել ներքին հանդիպումներ՝ տեղեկատվության հաջորդ ներկայացման ուղղությամբ (հետագա արտանետումների կադաստրի նպատակով) առաջընթացը դիտարկելու համար: Զննարկվող հարցերը կներառեն աշխատանքների ժամանակացույցը, բացերը, խոչընդոտները կամ սահմանափակումները, գործընթացներում առաջացած մարտահրավերները, վերապատրաստման կարիքները, ռեսուրսների կարիքները: Ելնելով վերոգրյալից՝ կորոշվի, թե արդյոք անհրաժեշտություն կա ՇՄՆ-ին տեղեկացնել տեղեկատվության ստեղծման խոչընդոտների, տեխնիկական մարտահրավերների և/կամ մարդկային ռեսուրսների և վերապատրաստման կարիքների բացահայտման մասին:

- Տվյալների հավաքագրման խոչընդոտները հայտնաբերելուց հետո, նշանակված թիվը վերլուծություն կիրականացնի՝ տվյալ խոչընդոտը հաղթահարելու համար անհրաժեշտ քայլերը որոշելու համար:
- Հանդիպումները և դրանց արդյունքներին հետամուտ լինելը պետք է իրականացվի յուրաքանչյուր նախարարության թիմի ղեկավարի կողմից: Խորհուրդ է տրվում, որ հանդիպումներն անցկացվեն տարեկան առնվազն 3 անգամ:

Միջգերատեսչական համակարգող խորհուրդ

- Պատասխանատու է ՋԳ-ի ընդհանուր կադաստրի վերջնական ՈԱ/ՈՎ-ի համար, ինչի համար առաջարկվում է մշակել ԿՓՄԽ-ի վրա հիմնված ուղեցույցներ՝ որակի վերահսկման գործունեությունը խթանելու համար (սա թույլ կտա խուսափել անձնակազմի հոսունության հետ կապված մարտահրավերներից):
- Հաստատել ԱԿՀ-ի վերջնական տարբերակը
- Սահմանել կոնկրետ ՈԱ/ՈՎ ընթացակարգեր արտանետումների յուրաքանչյուր կատեգորիայի և ենթակատեգորիայի համար
- Տեղեկացնել ՇՄԼ-ին անհամապատասխանությունների վերաբերյալ և պարզաբանումների համար դիմել տարբեր փորձագիտական խմբերի ղեկավարներին
- Ապահովել ճշգրիտ ստուգումների իրականացումը տվյալների և գրառումների վարման վերաբերյալ
- Պատրաստել համապատասխան ստուգաթերթեր յուրաքանչյուր ոլորտի համար
- Սահմանել կադաստրի վերանայման ուղեցույցներ (այս կերպ կրճատվում է փորձագիտական գիտելիքների կորստի ռիսկը՝ անձնակազմի հոսունության դեպքում):
- Ապահովել բոլոր բացահայտումների պատշաճ հասցեագրումը:
- Տեխնիկական թիմերի հետ քննարկել վիճահարույց ասպեկտները, որոնք բացահայտվել են կադաստրի նախապատրաստման ժամանակ
- Կարծիք հայտնել տվյալների որակի վերաբերյալ
- Տրամադրել առաջարկություններ՝ կադաստրի որակի բարելավման ուղղությամբ:
- Գրանցել կատարված բոլոր վերանայումները՝ փաստաթղթավորելով ներգրավված պատասխանատուներին, վերանայումների կատարման ամսաթվերը և բացահայտված թերությունների հասցեագրումը:
- Հետևել տեղեկատվության ծագմանը բլոգի վերանայման, տվյալների բազայի վերանայման, շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցների և այլնի միջոցով:
- Կարծիքի ներկայացում հետևյալի վերաբերյալ:
 - Արտանետումների կադաստրի նոր լրացումներ
 - Գոյություն ունեցող կադաստրի ճշգրտումներ (օրինակ՝ վերահաշվարկ) (եթե կիրառելի է)
- Անորոշությունների (վերա)գնահատում, ըստ կիրառելիության:

ՉՀՀ-ն գործում է՝ մեղմման և հարմարվողականության գործողությունների ուղղությամբ առաջընթացի արձանագրման համար

Շրջակա միջավայրի նախարարություն

- Հարմարվողականության և մեղմման գործողությունների միջև կապերի բացահայտում
- Տվյալների ընդհանուր աղբյուրների և տվյալների հավաքագրման գործընթացների բացահայտում
- Հասցեագրման ենթակա՝ տվյալների հնարավոր բացերի բացահայտում
- Գործողությունների միասնական ռեեստրի վարում
- Հեշտացնում է հաշվետվության գործընթացը և նվազեցնում հաշվետվությունների բեռը:
- Պատասխանատու է համակարգի տարբեր օգտվողներին հասանելիություն տրամադրելու համար
- Կառուցել հավաստագրման կարողություններ
 - Մշակել հավաստագրման համակարգ արտաքին հավաստագրողների համար (տես առաջարկություն Ա4)
- Մշակել հավաստագրման ուղեցույցներ
 - Սահմանել հավաստագրողին ներկայացվող մասնագիտական պահանջները
 - Որոշել ռեեստրում ընդունելի ծրագրերի տեսակը
 - Որոշել էականության մակարդակը հավաստագրման նպատակով (օրինակ՝ 5%)
 - Սահմանել հավաստագրման գործընթացը
- Մշակել ուղեցույցներ հարմարվողականության ծրագրերի ՄԱԳ-ի համար
- Հարմարվողականության ծրագրերի առաջընթացի արձանագրում և հաշվետվողականություն

Ազգային փորձագետներ

Ա. Մեղմում

- Աջակցել ՇՄՆ-ին համապատասխան մեղմման ծրագրերի/քաղաքականությունների նույնականացման և առաջընթացի արձանագրման ուղղությամբ
- Փորձագետները պետք է պատկերացում ունենան էներգետիկայի, տրանսպորտի, թափոնների, արդյունաբերության, գյուղատնտեսության և անտառային ոլորտների մասին:
- գիտելիքներ գնահատված արտանետումների և կլանումների պատմական և կանխատեսվող ժամանակային շարքերի մշակման վերաբերյալ.
- Տվյալների մշակման և վերլուծության գործիքներ և մոդելներ
- Հստակեցնել բացերը և ռեսուրսների սահմանափակումները, որոնք առաջանում են տվյալների հավաքագրման գործընթացում

Բ. Հարմարվողականություն

- Աջակցել ՇՄՆ-ին համապատասխան հարմարվողականության ծրագրերի/քաղաքականությունների բացահայտման և առաջընթացի արձանագրման ուղղությամբ
- Կատարել կլիմայի միտումների և դրանց ազդեցությունների վերլուծություններ՝ դրանք վերածելով խոցելիության և կլիմայի փոփոխության ազդեցության գնահատումների

- Փոփոխվող կլիմայի պայմաններում ոլորտային կամ ընդհանուր ռիսկերը, խոցելիությունները և ազդեցությունները.
- Գիտելիքներ աղետների արձագանքման, հիդրոօդերևութաբանության և կլիմայի փոփոխության ազդեցության տակ գտնվող թեմատիկ ոլորտների վերաբերյալ, ինչպիսիք են՝ գյուղատնտեսությունը, ջրային ռեսուրսները, քաղաքաշինությունը, առողջապահությունը, տրանսպորտը և էներգետիկ ենթակառուցվածքները.
- Սոցիալական և տնտեսական զարգացման հիմնախնդիրները
- Հիդրո/օդերևութաբանները և կլիմայագետները պետք է լայն գիտելիքներ ունենան կլիմայի և եղանակային ծայրահեղ իրադարձությունների միտումների և ֆիզիկական միջավայրի վրա դրանց ազդեցության մասին.
- Աղետների արձագանքման խմբերը, որոնք զբաղվում են կանխարգելիչ միջոցառումներով, պետք է պատկերացնեն բնական աղետների պատճառները և դրանց ազդեցությունից խուսափելու եղանակները:

Ծրագրի կողմնակիցներ

- ԿՓԶՀՀ հարթակում գրանցման հայտ
- Տրամադրել ծրագրի մասին տեղեկատվություն՝ նկարագրությունը, տեղակայումը, մեթոդաբանությունը, արտանետումների կրճատումները (ակնկալվող և ձեռք բերված), ֆինանսավորումը
- Մոնիտորինգի պլանի հաստատման ներկայացում
- Պատասխանատու է ծրագրի տարբեր փուլերում (նախագծում, իրականացում) հավաստագրման համար
- Տեղեկացնել համապատասխան պաշտոնական մարմինն ծրագրում տեղի ունեցող փոփոխությունների մասին

Երրորդ կողմի հավաստագրողներ (մեղմման ծրագրերի համար)

- Ստացեք հավատարմագրում որպես արտաքին հավաստագրողներ
 - Ապահովել պահանջվող փորձի առկայությունը
 - Մշակել հավաստագրման գործողությունների կառավարման համակարգ (օրինակ՝ ISO 14064 ստանդարտին համապատասխան)
 - Հավաստագրման գործողություններին առնչվող վերապատրաստման պահանջների պահպանում
- Կարող է աջակցել պետական մարմինն՝ մոնիտորինգի ծրագիրը հաստատելու համար
- Պետք է ունենա ԿՓԶՀՀ հարթակի հասանելիություն
- Ծրագրերի հավաստագրում՝ հավաստագրման ուղեցույցների համաձայն
- Տրամադրել ծրագրերի հավաստագրման վերաբերյալ կարծիքներ
- Գրանցել հավաստագրման տվյալները հարթակում

Աջակցության հետ կապված գործողություններ

Շրջակա միջավայրի նախարարություն

- Մեղման և հարմարվողականության գործողությունների իրականացման կարիքների բացահայտում
- ծրագրերի իրականացման համար տրամադրված ռեսուրսների արձանագրում
- Ֆինանսական տեղեկատվության հարցում ծրագրի հեղինակներին և ներգրավված պետական կառույցներին
- Ֆինանսավորման հայտ՝ ըստ կարիքների
- ՄԳՀԽ-ին հաշվետվության ներկայացում տրամադրված ռեսուրսների օգտագործման մասին
- Հաղորդակցության վարում կլիմայի քաղաքականություն իրականացնող նախարարությունների/գերատեսչությունների հետ

Ազգային փորձագետներ

- Աջակցել ՇՄՆ-ին մեղման և հարմարվողականության միջոցառումների իրականացման կարիքների բացահայտման գործում
- Աջակցել ՇՄՆ-ին ծրագրերի իրականացման համար տրամադրված ռեսուրսների օգտագործումն արձանագրելու գործում
- Կլիմայական գործողությունների համար տրամադրվող ֆինանսական, տեխնոլոգիական և կարողությունների զարգացման աջակցության վերաբերյալ պատկերացում (օրինակ, թե որ ծրագրերն են ստացել աջակցություն կամ ֆինանսավորում, որքան աջակցություն է տրամադրվել, որքան միջոցներ են դեռևս անհրաժեշտ, և տրամադրող կողմը) վարից վեր (ըստ ծրագրի) և վերից վար (ըստ ֆինանսական միջոցների) կտրվածքով:

ՄԳՀԽ՝ Ֆինանսների նախարարության աջակցությամբ

- Ստուգել հատկացված ռեսուրսների օգտագործումը
- Բացահայտել ֆինանսական տեղեկատվության մեջ առկա բացերն ու անհամապատասխանությունները և պահանջել համապատասխան պարզաբանումներ:
- Երաշխավորել ԵԱԶ-ում ներկայացվող տվյալների՝ թափանցիկության շրջանակի սկզբունքներին համապատասխանությունը
- Ֆինանսների նախարարություն. վերահսկում է ռեսուրսների օգտագործումը և իրականացնում է ծրագրի հեղինակների հաշվետվությունների կրկնաստուգում

6.2. Ա2 - ԶՀՀ համակարգի համար կայուն ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորում.

6.2.1. Ա2.1 Ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորում Ա1.1-ի միջոցով:

Համաձայն ՄԱԿ ԿՓՇԿ-ի, ինստիտուցիոնալ փոխգործակցությունը կարող է կազմակերպվել հինգ առանձին բաղադրիչների շուրջ. Կազմակերպչական լիազորություններ. Փորձագիտական գիտելիքներ. Տվյալների հոսքեր. Համակարգեր և գործիքներ. Ծախսագրի կողմերի ներգրավվածություն.

Աղյուսակ 12 Ինստիտուցիոնալ փոխգործակցության հիմնական բաղադրիչները

Ինստիտուցիոնալ փոխգործակցության բաղադրիչները	Ինչպես հասցեագրել	Նկարագրություն
Կազմակերպչական լիազորություններ	Կլիմայի փոփոխության մասին օրենքի (Ա1.1) և տվյալների տրամադրման համաձայնագրերի (Ա1.4) միջոցով	Կարևոր է, որ կազմակերպչական կառուցվածքը, ներառյալ կլիմայական քաղաքականության գծով ինչպես ՇՄՆ-ի, այնպես էլ այլ նախարարությունների դերերն ու պարտականությունները, հաստատվեն օրենքով: Այնուամենայնիվ, տեխնիկական ասպեկտները, ինչպիսիք են տվյալների տրամադրումը, կարող են մանրամասնվել միջգերատեսչական համաձայնագրերի միջոցով, ինչպես նշված է 1.4 առաջարկությամբ:
Փորձագիտություն	Արդյունավետ հավաքագրման, պահպանման և իրավահաջորդության ընթացակարգերը	Այս մեխանիզմները կամ ընթացակարգերը պետք է կիրառվեն՝ փորձագետների երկարաժամկետ և ակտիվ ներգրավվածությունը հաշվետվության գործընթացներում խթանելու համար և պետք է ամրագրվեն Ա1.1-ով: Այնուամենայնիվ, մանրամասն բնութագրերը կարող են սահմանվել այլ փաստաթղթերում, ինչպիսիք են ՋԳ-երի կադաստրի վերաբերյալ որոշումը (ոլորտային փորձագետների թիմերի կազմավորման եղանակները և կոնկրետ մասնագիտական բնութագրերը):
Տվյալների հոսքեր	Սահմանված կոնկրետ իրավականա ակտերով (օրինակ՝ Ա1.3, Ծրագրերի ռեեստրի վերաբերյալ որոշում կամ կանոնակարգ, տես Ա3.1):	Օրենքը (Ա1.1) պետք է սահմանի, որ տվյալների հոսքերը կկարգավորվեն համապատասխան իրավական ակտերով: Այնուհետև ՋԳ կադաստրի և ծրագրերի ռեգիստրի վերաբերյալ համապատասխան


		<p>կանոնակարգերում պետք է սահմանվեն կոնկրետ տվյալների հոսքեր:</p> <p>Սա ներառում է տվյալների կարիքների և օգտագործման սահմանում, տվյալների մատակարարների կողմից պահանջվող տվյալների հավաքածուների՝ կանոնավոր հիմունքներով մատակարարման կառավարում, տվյալների որակի շարունակական բարելավում և անորոշությունների նվազեցում:</p>
<p>Համակարգեր և գործիքներ</p>	<p>Օրենքով պետք է սահմանվի, որ ՇՄՆ-ը պատասխանատու է ՉՀՀ համակարգերի և գործիքների թափանցիկության պահանջի ապահովման համար:</p>	<p>Ինստիտուցիոնալ մեխանիզմները պետք է նախատեսեն աշխատանքային պլանների, ներգրավման գործիքների, տվյալների բազաների, տվյալների վերլուծության, ցուցանիշների և հաշվետվությունների մշակում և պահպանում:</p> <p>Համակարգերի և գործիքների տեխնիկական բնութագրերը/մասնագրերը կարող են լինել կանոնակարգի շրջանակից դուրս, սակայն պետք է ապահովեն ազգային փորձագետների թիմի հասանելիությունը տվյալներին և տվյալների հոսքի կառավարմանը, կատարել ՈԱ/ՈՎ գործողություններ և սահմանված ժամկետներում արտադրել բավարար որակի արդյունքներ, որոնք բարելավվում են ժամանակի ընթացքում: .</p>
<p>Շահագրգիռ կողմերի ներգրավում</p>	<p>Օրենքով (Ա1.1) պետք է սահմանվեն հիմնական դերակատարները և նրանց դերը կլիմայի քաղաքականության մեջ:</p> <p>Այլ իրավական ակտերը</p>	<p>Շահագրգիռ կողմերի ուժեղ ներգրավվածությունն ապահովում է թափանցիկության համակարգի հասանելիությունը՝</p> <p>շահագրգիռ կողմերի լայն շրջանակի, այդ թվում՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների համար</p>

	<p>կպարունակեն մանրամասներ ՉՀՀ համակարգում նրանց գործողությունների վերաբերյալ:</p>	<p>կառավարության, մասնավոր հատվածի, գիտական համայնքի, ՀԿ-երի, հասարակական կազմակերպությունների, լրատվամիջոցների և հանրության համար,</p> <p>հետևաբար, տվյալները կարող են հավաքվել ամենահուսալի և համապատասխան աղբյուրներից, և արդյունքները կարող են տեղեկատվական հիմք ծառայել իրենց որոշումների կայացման գործընթացներում:</p> <p>Այս ամենը պետք է հաստատվի օրենքով (Ա1.1.) և արտացոլվի այլ ենթաօրենսդրական ակտերով:</p>
--	--	--

Սույն ծրագրի նպատակների համար առաջարկվում է ՄԳՀԽ սահմանել որպես ՉՀՀ համակարգի գործունեության հիմնական ինստիտուցիոնալ մեխանիզմ, ինչը պետք է հստակ և կոնկրետ սահմանված լինի Ա1.1-ով առաջարկվող կանոնակարգում: Այնուամենայնիվ, համակարգի յուրաքանչյուր բաղադրիչի համար պետք է սահմանված լինեն տարբեր ինստիտուցիոնալ մեխանիզմներ (ՋԳ կադաստր, ծրագրերի ռեեստր և արտանետումների ռեեստր), որոնք կկապակցվեն ՄԳՀԽ-ին, ինչպես ցույց է տրված ինստիտուցիոնալ քարտեզագրման մեջ (Հավելված 1):


Գծապատկեր 21 ցույց է տալիս առաջարկվող ինստիտուցիոնալ կառուցվածքի տարրերը՝ ցույց տալով համակարգի բաղադրիչները (հարկ է նշել, որ օժանդակ բաղադրիչը գտնվում է ծրագրի ռեեստրում), տեղեկատվության հիմնական մատակարարներին, ՇՄՆ-ին՝ որպես յուրաքանչյուր բաղադրիչի համակարգող, ինչպես նաև տարբեր մասնակիցների կողմից տեխնիկական աջակցության, որակի վերահսկման միջոցառումները և ՄԱԿ ԿՓՇԿ՝ որպես այս համակարգի արդյունքների վերջնական հասցեատեր:

Գծապատկեր21 Ինստիտուցիոնալ փոխգործակցության ընդհանուր կառուցվածքը



Հետևյալ գծապատկերը ցույց է տալիս կադաստրի մշակման ընդհանուր ինստիտուցիոնալ մեխանիզմը: Ամբողջ համակարգի ինստիտուցիոնալ մեխանիզմները ներկայացված են Հավելված 1-ի ինստիտուցիոնալ քարտեզում:

Գծապատկեր22 ՋԳ կադաստրի մշակման ինստիտուցիոնալ կառուցվածքը (ամփոփ)



Ինստիտուցիոնալ մեխանիզմները, որոնք պետք է սահմանվեն օրենքով, հետևյալն են՝

- կադաստրի գծով փոխգործակցության մեխանիզմներ

- Տվյալների տրամադրման մեխանիզմներ՝ ըստ ոլորտների
- Ծրագրերի գրանցման մեխանիզմներ
- Արտանետումների ռեեստրի մեխանիզմներ
- Համակարգի ընդհանուր կառուցվածք
 - Այն ներառում է բոլոր մեխանիզմները, համակարգումը, տեխնիկական փորձագիտական աջակցությունը և ՄԳՀԽ-ի մասնակցությունը՝ որպես համակարգի արդյունքների վերջնական վավերացնող:

Այս նպատակների համար որպես հիմք առաջարկվում է ինստիտուցիոնալ քարտեզագրումը (տես Հավելված 2):

6.2.2. Ա2.2 ՄԳՀԽ-ը ներառել որպես ազգային ՉՀՀ-ի հիմնական ինստիտուցիոնալ կառույց և նրա իրավասությունները սահմանել Ա1.1-ով առաջարկվող կանոնակարգում:

Ինստիտուցիոնալ քարտեզագրման միջոցով ցույց են տրվում ՉՀՀ համակարգի համար պահանջվող ինստիտուցիոնալ մեխանիզմներին ներկայացված պահանջները, ընդ որում որպես առաջին հիմնական առաջարկություն խորհուրդ է տրվում՝ Կլիմայի փոփոխության մասին օրենքի միջոցով՝ Ա.1.1 առաջարկությամբ, սահմանել, որ այս կառուցվածքում հիմնարար դերը վերապահված է ՄԳՀԽ-ին:

Սույն օրենքի շրջանակներում պետք է սահմանվի այն դերը, որը կունենա այս խորհուրդը ՉՀՀ համակարգի գործարկման մեջ, որի հիմնական գործառնությունը կլինի որակի հսկողությունը և կադաստրի վերջնական հաստատումը, մեղմման և հարմարվողականության քաղաքականության արդյունավետ խթանումը (ներառյալ տեխնիկական խորհրդատվություն՝ դրա իրականացման համար պատասխանատու նախարարություններին) և այս քաղաքականություններից բխող մեղմման և հարմարվողականության գործողությունների մոնիտորինգը, ինչպես նաև անկախ գործողություններ, որոնք պոտենցիալ նպաստում են ԱՍԳ-ի հետ համապատասխանությանը:

Կլիմայի փոփոխության մասին օրենքում (Ա1.1) անհրաժեշտություն չկա ՄԳՀԽ-ի մասին ավելի շատ մանրամասներ ներառել, բացի ՉՀՀ համակարգում նրա դերից և կարևորությունից: Այնուամենայնիվ, ներկայումս գոյություն ունեցող ՄԳՀԽ-ի մասին որոշման մեջ առաջարկվում է սահմանել որոշակի գործառնություններ և ներդրումներ ինչպես կադաստրի, այնպես էլ ծրագրերի գրանցման և մոնիտորինգի համար, ներառյալ՝ պահանջվող և ստացված աջակցության առնչությամբ:

Ինստիտուցիոնալ փոխգործակցության նկարագրությունը պետք է ներառվի Կլիմայի փոփոխության մասին օրենքում՝ երկարաժամկետ հեռանկարում ՄԱԳԿ արդյունավետությունն ապահովելու համար.

- Լիազորություն տրամադրել ՇՄՆ-ին՝ ՉՀՀ համակարգի համար ինստիտուցիոնալ փոխգործակցություններ ստեղծելու համար
- ՄԳՀԽ-ը ՉՀՀ համակարգի հիմնական ինստիտուցիոնալ մեխանիզմն է
- ՄԳՀԽ-ի վերաբերյալ հատուկ իրավական ակտով կսահմանվի կոնկրետ անդամ, գործունեությունը և գործունեության կանոնները
- ՄԳՀԽ-ի դերը կլիմայի փոփոխության քաղաքականության և ՉՀՀ համակարգում:

Ընդհանուր գործառույթների օրինակներ.

- Տրամադրել խորհրդատվություն կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ազգային քաղաքականության, ինչպես նաև համապատասխան ոլորտային ծրագրերում և գործողություններում դրանց ընդգրկման վերաբերյալ.
- Համակարգել կլիմայի փոփոխության վերաբերյալ միջոլորտային գործողությունները *նախարարությունների և ներգրաված աշխատակազմերի միջև.*
- Նպաստել Կոնվենցիայում և դրանից բխող այլ փաստաթղթերում առաջադրված նպատակները և հանձնառությունները իրագործելու համար անհրաժեշտ գործողությունների իրականացումը.
- Մասնակցել ԵԺ-ՑՁԱՌ-ների և ՀԱԾ-ի ներդրմանը և թարմացմանը.
- Իրականացնել որակի վերահսկողության աշխատանքներ՝ համաձայն հաշվետվողականության միջազգային պարտավորությունների:
- Տարածել իրենց աշխատանքն ու արդյունքները, ինչպես նաև հրապարակել գործունեության տարեկան հաշվետվություն:

6.2.3. Ա2.3 ՄԳՀԽ-ի վերակառուցում և գործառույթների սահմանում (որոշման փոփոխություն՝ ներառելով ՉՀՀ-ի կոնկրետ գործառույթները):

Չնայած այն հանգամանքին, որ ՄԳՀԽ-ի գործառույթները սահմանող որոշման մեջ վերջերս տեղի է ունեցել փոփոխություն, համարվում է, որ այն չի պարունակում տվյալների վավերացման և որակի վերահսկողության վերաբերյալ կոնկրետ գործառույթներ, և որ աշխատանքային խմբերն այնքան ընդհանրական են սահմանված, որ դա կարող է արգելք հանդիսանալ գործողությունների իրականացման համար, ավելին՝ յուրաքանչյուր խմբի համար կոնկրետ խնդիրներ չեն սահմանված:

Համարվում է, որ խորհրդի բնույթից ելնելով՝ պահանջվում է դրանում սոցիալական տարբեր բնագավառների, այլ ոչ միայն կառավարական մարմինների մասնակցությունը, հատկապես, եթե կենտրոնական խնդիրը կլիմայի փոփոխությունն է: Այնուամենայնիվ, կառավարությունից բացի՝ քաղաքացիական հասարակությունը, համալսարանները և գիտահետազոտական ինստիտուտները և մասնավոր հատվածը կարող են հրավիրվել որպես դիտորդներ (ինչպես սահմանված է որոշմամբ): Նրանց մասնակցությունը կարող է պահանջվել բացերի, մարտահրավերների և խնդիրների բացահայտման, ինչպես նաև կլիմայի փոփոխությանը դիմակայելու լուծումներ փնտրելու առումով, ինչի համար խորհուրդ է տրվում, որ թափանցիկության սկզբունքին համաձայն և հաշվի առնելով այդ կողմերի արժեքավոր մասնակցությունը, նրանք հրավիրվեն հաճախ:

Ի լրումն վերը նշվածին, առաջարկվում է ստեղծել թեմատիկ ենթախմբեր, որոնք կարող են կենտրոնանալ տարբեր խնդիրների ուղղությամբ, որոնք բխում են այնպիսի ծավալուն հիմնախնդրից, ինչպիսին է կլիմայի փոփոխությունը: Համարվում է, որ ստեղծված երեք աշխատանքային խմբերը բավարար չեն տեխնիկապես լուծելու առաջադրվող խնդիրների բազմազանությունը, ուստի խորհուրդ է տրվում, որ այդ ենթախմբերը բաժանվեն ըստ ոլորտների և ներառեն արտանետումների ոլորտային փորձագետներ:

ՄԳՀԽ-ին ուղղված խորհրդատվական խմբի առաջարկությունները, որոնք ներկայացնում են պահանջվող փոփոխությունը, նկարագրված են ստորև:

Աշխատանքային խմբեր և խորհրդի անդամներ

- Խորհուրդը ներառում է միայն կառավարության անդամներ, ինչը կարող է սահմանափակել տեսլականը այն հարցերի նկատմամբ, որոնք ազդում են այլ ոլորտների, մասնավորապես՝ մասնավոր հատվածի, գիտական հատվածի և քաղաքացիական հասարակության վրա: Նպատակահարմար է դիտարկվում նրանց՝ դիտորդի կարգավիճակում հրավիրելը և նրանց մասնակցությունը, քանի որ նրանք կարող են օգնել՝ հասարակության այլ ոլորտներին առնչվող բաղադրիչներ ներառել կլիմայական քաղաքականության մեջ: Նրանք կարող են ինտեգրվել որպես ենթախմբերի դիտորդներ, սակայն կարևոր է որոշել նրանց մասնակցության շրջանակը:

Օրինակ՝ արտահայտել կլիմայի փոփոխության հետ կապված տեղական շրջանակների մտահոգությունները. կարծիք հայտնել կլիմայի փոփոխությանն առնչվող քաղաքականության և ծրագրերի վերաբերյալ. առաջարկել իրականացնել հետազոտություններ, ուսումնասիրություններ կամ վերլուծություններ, որոնք նպաստում են կոնկրետ խնդիրների լուծման համար անհրաժեշտ գիտելիքների ընդլայնմանը:

- Որոշման մեջ նշված չեն ոլորտային աշխատանքային խմբերը ստեղծված 3 խմբերի շրջանակներում, ուստի պարզ չէ, թե որն է նրանց կողմից հասցեագրվող խնդիրների շրջանակը: Նպատակահարմար է դիտվում սահմանել այն թեմաները, որոնք պետք է քննարկվեն Խորհրդում, որպեսզի նիստերի ընթացքում անդրադարձ արվի առանցքային թեմաներին, և ներգրավվեն համապատասխան անդամներ:

Թեմաների առումով առաջարկվում է ոլորտային հեռանկարում անդրադառնալ հետևյալին.

- ԶԳ արտանետումներ
- Տեղեկատվության բացեր
- Տվյալների արտադրության և որակի գծով մարտահրավերներ
- Արտանետումների կրճատման հնարավորություններ
- Խոցելիության նվազեցման հնարավորություններ
- Առաջընթաց հարակից քաղաքականության գծով
- Աջակցության կարիքներ (տեխնոլոգիաների փոխանցում, կարողությունների զարգացում, ֆինանսավորում)
- Տվյալների կառավարման գործելակերպերի բարելավում

- Ձևավորել աշխատանքային ենթախմբեր ըստ թեմաների՝ Էներգետիկա, ԳԱԱՅՕ: Խորհրդատուների թիմի տեսանկյունից նպատակահարմար մոտեցում է համարվում ունենալ ենթախմբեր՝ արդյունաբերական գործընթացների, կլիմայի փոփոխության հարմարվողականության, տնտեսական և սոցիալական զարգացման և հետազոտությունների գծով: Նաև, Խորհուրդ է տրվում Կոնվենցիայի խմբերի շրջանակներում ֆինանսավորման և ազգային հաշվետվությունների հանձնառություններում առաջնորդվել միջոլորտային մոտեցմամբ: Կարևոր է ապահովել անկողմնակալություն, հետևաբար առաջարկվում է, որ այս աշխատանքային խմբերի անդամները տարբեր լինեն այն անդամներից, որոնք կարող են աջակցել տեխնիկական կադաստրի թիմերին (օրինակ՝ նախարարությունների ներսում ջերմոցային գազերի հատուկ կատեգորիաների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրողներ): Եթե

հնարավոր չէ կիրառել այս միջոցը, պետք է սահմանվեն հատուկ կանոններ՝ կողմնակալությունից խուսափելու համար, ինչը կարող է վտանգի ենթարկել տարբեր քաղաքականությունների առաջընթացի, ներառյալ ՋԳ կադաստրի, ինչպես նաև մեղմման և հարմարվողականության գործողությունների, որոշակի ժամանակահատվածներում ստացված աջակցության ֆինանսական հաշվեկշռի արդյունքները:

- Առաջարկվում է դիտարկել համայնքների ինտեգրումը տարբեր հարցերի գծով լայնածավալ մասնակցությամբ, մասնավորապես, ըստ կիրառելիության՝ թափոնների և տնտեսական և սոցիալական զարգացման հարցերով: Եթե դա հնարավոր չէ իրականացնել կարճաժամկետ հեռանկարում, անհրաժեշտ է պլանավորել երկարաժամկետ հեռանկարում:
- Գործունեության կանոններ. Հանդիպումների հաճախականություն, ներքին հաղորդակցության եղանակներ, կոնկրետ անդամներ և փոխարինողներ:
- Տվյալների վավերացման գործունեության հատուկ կանոններ. Տեղեկատվության հարցումներ, տեղեկատվության կառավարում, տեղեկատվության գաղտնիության պայմաններ, կոնկրետ տեղեկատվական պահանջների սահմանում ըստ ՉՀՀ համակարգի բաղադրիչի (այն դեպքում, երբ խորհուրդը մասնակցում է ամբողջ ՉՀՀ համակարգում): Կարևոր է սահմանել կոնկրետ տեղեկատվության շրջանակը, որը կմշակվի յուրաքանչյուր աշխատանքային խմբում.՝ 1) ՋԳ կադաստրի, 2) մեղմման և հարմարվողականության միջոցառումների, 3) Կլիմայական ֆինանսավորման, 4) ԱՍԳ արձանագրման ուղղություններով:


Առաջարկվող մոտեցումը ենթադրում է, որ յուրաքանչյուր աշխատանքային ենթախումբ անդրադառնում է ՉՀՀ համակարգի բոլոր բաղադրիչներին, բայց իրեն վերապահված ոլորտի ուղղվածությամբ: Այսպիսով, յուրաքանչյուր խմբի ներգրավված ներկայացուցիչները երկարաժամկետ կտրվածքով ծանոթ կլինեն ոլորտին, ինչը կօգնի պարզեցնել առաջադրանքները և խուսափել կրկնակի հաշվառումից:

- Կոնկրետ կանոնների միջոցով անհրաժեշտ է մանրամասնել տվյալների գնահատման մեթոդները, որոնք կկիրառվեն որակի վերահսկողության գործողությունների համար, ինչպիսիք են խաչաձև ստուգումները, ներքին աուդիտները, դաշտային դիտարկումները կամ այլ մոտեցումներ՝ կախված համակարգի տարբեր հատվածներից և բաղադրիչներից:
- Ձևավորել կոնկրետ թեմատիկ աշխատանքային խմբեր՝ կոնկրետ կարիքների բացահայտման նպատակով (օրինակ՝ քննարկելու մեղմման ծրագրերի տեխնիկական ասպեկտները, ածխածնի գնագոյացման գործիքները, ապագայում ածխածնի ներքին շուկայի ներդրումը և այլն): Առաջարկվում է հրավիրել կոմիտեում չընդգրկված կառույցների ներկայացուցիչներ, ինչպիսիք են մասնավոր հատվածը, հավատարմագրող կազմակերպությունները և այլոք, որոնք կարող են օգտակար լինել՝ կախված քննարկվող հարցերից: Աշխատանքային ենթախմբերը պետք է ղեկավարվեն պետական նախարարությունների և գերատեսչությունների կողմից: Այնուամենայնիվ, կարևոր է այլ փորձագետների մասնակցությունը ինչպես կլիմայական քաղաքականության իրականացման, այնպես էլ համակարգի պատշաճ գործունեության և ԿՓՉՀՀ հարթակի միջոցով հուսալի արդյունքներ ստանալու, մասնավորապես, ԱՍԳ-ի ուղղությամբ առաջընթացի արձանագրման համար:
- Գծապատկեր 23-ում առաջարկվում են հորհրդի կազմում ներառման ենթակա հնարավոր ենթախմբերը: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ կարմիր վանդակները համապատասխանում են հրավիրված ներկայացուցիչներին, որոնք խորհրդատվական

CARBON LIMITS

թիմն առաջարկում է ներառել կանոնավոր հիմունքով¹⁸, և որոնք չեն դիտարկված ՄԳՀԽ-ի ներկայիս կառուցվածքում:

Գծապատկեր 23 Առաջարկվող աշխատանքային ենթախմբեր ՄԳՀԽ-ի համար (այլընտրանք 1)




Այս 6 ենթախմբերը կարող են ներառվել 2-րդ խմբում (կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ուղղությամբ), և առաջարկվում է ԱԽ1-ը (Կոնվենցիայի ներքո ազգային հաշվետվողականության հանձնառությունների գծով) և ԱԽ2 (Ֆինանսական հարցերի գծով) աշխատանքային խմբերը կազմավորել փոխգործակցային հիմունքով: Այնուամենայնիվ, Գծապատկեր 24-ում ներկայացված է կառուցվածքի երկրորդ այլընտրանքը, որտեղ ԱԽ2-ից բխում են 5 ոլորտային ենթախմբեր, իսկ ԱԽ1-ը և ԱԽ3-ը շարունակում են կառավարել ՄԱԿ ԿՓՇԿ-ի ներքո հաշվետվայնության հանձնառությունները և համապատասխանաբար ֆինանսավորման հետ կապված խնդիրները: Ի հավելումս, ներառվում է Հետազոտությունների ենթախումբը, որը փոխգործակցային մասնակցություն կունենա Խորհրդում, քանի որ համարվում է, որ կլիմայի փոփոխությանն ուղղված որոշակի

¹⁸ Նրանց մասնակցությունը կարող է օգտակար լինել նույնիսկ դիտորդի կարգավիճակում: Կարևոր է կանոններ սահմանել դիտորդների համար, որտեղ նրանք կարող են խոսել և արտահայտել իրենց տեսակետները:

հետազոտական աշխատանքների նույնականացումը և իրականացումը կարող են արդիական լինել Հայաստանի բոլոր ոլորտների համար:

Գծապատկեր 24 Առաջարկվող աշխատանքային ենթախմբեր ՄԳՀԽ-ի համար (այլընտրանք 2)



Հարկ է նշել, որ առաջարկվում է միայն 4 հավելյալ մասնակից հրավիրել ի լրումն արդեն դիտարկվածներին (կարմիրով նշված) և ստեղծել աշխատանքային ենթախմբեր՝ ըստ ոլորտների, որպեսզի յուրաքանչյուրն անդրադառնա կոնկրետ խնդիրների՝ յուրաքանչյուր խմբի համար սահմանելով ոլորտային նպատակներ և գործառնություններ: Առաջարկվում է, որ յուրաքանչյուր կառույցում տեխնիկական բնութագրի հիման վրա նշանակվեն խնդիրների լուծման պատասխանատուներ, թեև խորհրդի ղեկավարները նախարարներն են: Այս կերպ խնդիրները կարելի է ավելի արդյունավետ լուծել: Կարևոր է ճշտել հրավիրյալների շրջանակը, հստակեցնել նրանց մասնակցությունը:

Բացի այդ, խորհուրդ է տրվում, որ յուրաքանչյուր խմբի այս փորձագետները տարբերվեն ոլորտային փորձագետներից, որոնք մասնակցում են կադաստրի աշխատանքներին, քանի որ նրանց գործառնությունների մի մասը վերաբերում է որակի վերահսկմանը, այդպիսով նվազում է դիտարկումների անաչառության խաթարման ռիսկը՝ որպես լավագույն միջազգային փորձի մոտեցում:

Միջգերատեսչական համակարգող խորհրդի գործունեությունը

- Առաջարկվում է ՄԳՀԽ-ին վերապահել հետևյալ հիմնական գործառնությունները Հայաստանի կլիմայական քաղաքականության համար.
 - Նպաստել կլիմայի փոփոխության հարցերում պետական մարմինների և կառույցների գործողությունների համակարգմանը.

- Տրամադրել խորհրդատվություն ՇՄՆ-ին կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման և հարմարվողականության ազգային քաղաքականության, ինչպես նաև համապատասխան ոլորտային ծրագրերում և գործողություններում դրանք ներառելու վերաբերյալ:
 - Նպաստել և մասնակցել ԵԺ-ՑԱՁՌ և ՀԱԾ-ի արդիականացման գործընթացներին, որոնք կարգավորում են Հայաստանում երկարաժամկետ հեռանկարում ձեռնարկվելիք գործողությունները, ինչպես նաև Ազգային մակարդակով սահմանված ներդրումներին (ԱՍԳ),
 - Առաջարկել և հաստատել սցենարների, հետազոտողականության կամ նպատակների ճշգրտումները կամ փոփոխությունները, որոնք կատարվել են ԵԺ-ՑԱՁՌ և ՀԱԾ ռազմավարություններում, ինչպես նաև Ազգային մակարդակով ԱՍԳ-ներում՝ Փարիզի համաձայնագրին համապատասխանելու համար:
 - Առաջարկել և աջակցել նորարարության, հետազոտության, զարգացման և տեխնոլոգիաների փոխանցման, վիճակագրության մշակման և այլ ծրագրերին, որոնք նպաստում են կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրների նվազեցմանը և տարածել արդյունքները:
 - Նպաստել արտանետումների մեղմման և կլանումների ասպարեզում մոնիտորինգի, հաշվետվությունների և հավաստագրման կարողությունների զարգացմանը:
 - Հրավիրել սոցիալական և մասնավոր հատվածի կազմակերպություններին՝ արտահայտելու իրենց մտահոգությունները, կարծիքները և առաջարկները կլիմայի փոփոխության դեմ պայքարի առնչությամբ:
 - Կլիմայի փոփոխության ազդեցության վերաբերյալ քաղաքականության, ռազմավարության, գործողությունների և նպատակների վերաբերյալ առաջարկություններ հավաքագրել՝ տարբեր մակարդակներում (տեղական կամ ազգային) որոշումներ կայացնելու համար:
 - Կլիմայի փոփոխության քաղաքականության վերանայում առնվազն 5 տարին մեկ՝ ձեռք բերված արդյունքների հիման վրա անհրաժեշտ ճշգրտումներ առաջարկելու համար:
 - Առաջարկել ռազմավարական ծրագրեր, որոնք պահանջում են ֆինանսավորում:
 - Նպաստել ազգային հավաստագրման կարողությունների ձևավորմանը:
 - Սոցիալական և մասնավոր կազմակերպությունների միջև կնքել համաձայնագրեր՝ խթանելու և իրականացնելու գործողություններ, որոնք ուղղված են խոցելիության նվազեցմանը և կլիմայի փոփոխության ազդեցության մեղմմանը:
- Սահմանել շարունակական բարելավման ընթացակարգեր. Ստացված արդյունքների հիման վրա սահմանել այն հաճախականությունը և գործողությունները, որոնք համակարգված կերպով կիրականացվեն Կոմիտեի գործունեությունը բարելավելու համար: Առաջարկվում է շարունակական բարելավման գործընթաց իրականացնել առնվազն 2 տարին մեկ:
 - Սա ենթադրում է հստակ ժամանակացույցով խորհրդակցություն-քննարկումների անցկացում՝ տարբեր ոլորտների ներկայացուցիչների համար ի հայտ եկած մարտահրավերները հասցեագրելու, և կարճաժամկետ հեռանկարում լուծումների առաջնահերթությունները որոշելու համար:

- Առաջարկվում է ունենալ գրավոր գործընթաց՝ այս խորհրդակցություն-քննարկումներն իրականացնելու, հիմնական մարտահրավերները բացահայտելու և դրանց լուծման այլընտրանքային տարբերակները քննարկելու համար, եթե խոսքը գնում է առաջնահերթ խնդրի մասին (օրինակ, եթե համակարգի հուսալիությունը կարող է վտանգի ենթարկվել):
- Խորհուրդ է տրվում, որ սա կիրառվի առնվազն տարին մեկ անգամ: Կարևոր է այս նիստերը փաստաթղթավորել և առաջնահերթ ճանաչված խնդիրների ընթացքին հետամուտ լինել:
- Տարեկան աշխատանքային պլանների պատրաստում՝ հաշվի առնելով ազգային պլանավորման գործիքները, որպեսզի դրանք համահունչ լինեն ազգային նպատակներին (ազգային գործիքների հիման վրա գործողությունների առաջնահերթությունների սահմանում)
- Խորհուրդ է տրվում նման հանդիպումները անցկացնել առնվազն երեք ամիսը մեկ՝ ապահովելով որ տեղի ունեցող թարմացումները կամ ազգային քաղաքականության կամ առաջնահերթությունների արդիականացումները քննարկվեն այդ ժամկետի շրջանակներում և որևէ կարևոր հիմնախնդրի հետագա ընթացքը դուրս չմաս ուշադրությունից: Բացի այդ, դա կօգնի ավելի լավ հետևել և վերահսկել ՄԳՀԽ-ում նախատեսված գործողությունների առաջընթացը:
- Առաջարկել մեխանիզմներ նոր անդամների ընդգրկման համար. ինչպես ինտեգրել նոր անդամների ՄԳՀԽ-ում այն ժամանակ, երբ պահանջվում է ավելի մեծ տեխնիկական ներդրում այդ հարցերի շուրջ: Ներկայումս ՄԳՀԽ-ն կարող է ժամանակավոր հիմունքներով հրավիրել փորձագետների և խորհրդատուների գիտական և գործարար համայնքից, հասարակական կազմակերպություններից: Այնուամենայնիվ, արժե հաշվի առնել, որ կարող են առաջանալ չնախատեսված կարիքներ, որոնք պահանջում են հիմնական մասնակիցների մշտական ներդրումը, ուստի խորհուրդ է տրվում հաշվի առնել խորհրդի գործունեության այս տեսակի մեխանիզմը:
- Անհրաժեշտության դեպքում տեխնիկական աջակցության վերաբերյալ տեղեկատվություն պահանջելու մեխանիզմներ:
- Հետամուտ լինել Կլիմայի փոփոխության վերաբերյալ բանակցությունների որոշումներին, որոնք քննարկվում են ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ի և ԿՓՄԽ-ի շրջանակներում:
- Նպաստել կոմիտեի աշխատանքների արդյունավետ համակարգմանը, որի համար առաջարկվում է կրճատել հիմնական հարցերի շուրջ գործող կազմակերպությունների կամ խմբի անդամների թիվը:
- Ակտիվորեն համագործակցել Վիճակագրական կոմիտեի հետ՝ Ազգային վիճակագրական համակարգ և ՉՀՀ համակարգ մուտք գործող տեղեկատվությունը որոշելու համար, ինչը թույլ կտա խուսափել ջանքերի կրկնությունից և երկու համակարգերի միջև տվյալների անհամապատասխանություններից:
- Առաջարկել և աջակցել կլիմայի փոփոխության խնդիրների հետ կապված հետազոտությունների, զարգացման և տեխնոլոգիական թափանցիկության գծով ուսումնասիրությունների իրականացմանը և արդյունքների տարածմանը:
- Բացահայտել ՉՀՀ համակարգի ներդրման, շահագործման և գնահատման համար անհրաժեշտ մեխանիզմները, գործիքները կամ կանոնակարգերը և նպաստել դրանց մշակմանը և ն ե ր դ ր մ ա ն քը:

- Խթանել պետական կառույցներում մոնիտորինգի, հաշվետվողականության և հավաստագրման գծով կարողությունների հզորացումը.
- Համոզվել, որ հավաստագրման մեթոդները պատշաճ կերպով կիրառվում են, տեխնիկական փորձագետները ներգրավված են հանձնախմբերի աշխատանքներում և ապահովել կարողությունների զարգացում/ուժեղացում: Ներկայացնել տեղեկություններ հավաստագրման բարեհաջող իրականացման վերաբերյալ: Սահմանել այս կոնկրետ գործընթացները ըստ կադաստրի կատեգորիայի: Օրինակ՝ տեղեկատվության ծագումը, առաջացման համար պատասխանատուն, հավաքագրման համար պատասխանատուն, կատարված վերանայումները (խաչաձև ստուգումներ, աուդիտ և այլն), վերանայումների ամսաթիվը և արդյունքները: Կադաստրի տեխնիկական փորձագետներից ուղղումներ/պարզաբանումներ պահանջելու գործընթացներ


6.3. Ա3 - Կլիմայի փոփոխության քաղաքականության կառավարում կենտրոնացված համակարգի միջոցով.

Առաջարկվում է կլիմայի քաղաքականությունը կենտրոնացնել մեկ պլանավորման գործիքում, որը կազմաձևված է որպես ԵԺ-ՑԱՁՌ (Ա1.2) և ՀԱԾ, որպեսզի ընդհանուր մոտեցման շուրջ համախմբվեն բոլոր այն քաղաքականությունները, որոնք հանգեցնում են ջերմոցային գազերի արտանետումների և կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ Հայաստանի խոցելիության կրճատմանը, ինչը հեշտացնում է մեղմման և հարմարվողականության գործողությունների, ինչպես նաև պահանջվող և ստացված աջակցության մոնիտորինգը, գիտակցելով, որ կլիմայի փոփոխությունը միջուրտային խնդիր է և, հետևաբար, պահանջվում է ոչ միայն ՇՄՆ առաջնորդում, այլև էներգետիկայի, անտառային տնտեսության և այլ հարակից քաղաքականությունների համար պատասխանատու այլ մարմինների մասնակցություն, ինչը, անկասկած, կօգնի ԱՍԳ-ի հետ համապատասխանության ապահովմանը:

Որպես առաջին քայլ պահանջվում է ստեղծել ԵԺ-ՑԱՁՌ, որը պետք է պարբերաբար պարտադիր վերանայվի և թարմացվի, որի հիման վրա հետագայում մշակվի և իրականացվի ռազմավարություն՝ ներգրավելով անհրաժեշտ նախարարություններին, գերատեսչություններին և մասնակիցներին, արդյունքում՝ ստեղծվի մեղմման և հարմարվողականության ծրագրերի ռեեստր, որտեղ կներառվեն աջակցությանը առնչվող հարցերը, և յուրաքանչյուր գործողություն հնարավոր կլինի փոխկապակցել (եթե կիրառելի է) կոնկրետ քաղաքականության հետ, ինչը կհեշտացնի ԱՍԳ-ի հետ համապատասխանության ուղղությամբ առաջընթացի արձանագրումը: Գծապատկեր 25 ամփոփում է այս առաջարկության ներդրման քայլերը.

Գծապատկեր25 Կլիմայի փոփոխության հետ կապված քաղաքականության կենտրոնացման համար անհրաժեշտ քայլեր

CARBON LIMITS



Առայժմ բացահայտվել է հետևյալ քաղաքականությունների՝ համակարգում կենտրոնացման անհրաժեշտությունը.

Է ն եր գ ե տ ի կ ո լ ո Ր տ ի ա ո ն չ ու թ յ ա մ ք .

- Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիր (մինչև 2040 թվականը) որտեղ արևային և հողմային Էներգիային առանցքային ուշադրություն է դարձվում՝ որպես տևտեսապես կենսունակ և տեխնիկապես մատչելի վերականգնվող Էներգիայի հզորությունների ընդլայնման աղբյուր: Այս ռազմավարական ծրագրի միջոցով Հայաստանը մտադիր է մինչև 2030 թվականը ավելացնել արևային Էներգիայի իր տեղակայված հզորությունը ներկայիս 59,5 ՄՎտ-ից հասցնելով մինչև 1000 ՄՎտ՝ Էներգետիկ անվտանգության մեծացման նպատակով, ինչպես նաև 2030թ. կանաչ Էներգիայի մասնաբաժինը հասցնելով առնվազն 15%-ի:
- Էներգաարդյունավետության և վերականգնվող Էներգիայի 2021-2030 թվականների ազգային ծրագիրը, որով կսահմանվեն նոր ոլորտային թիրախներ:
- Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ մտադիր է մինչև 2030 թվականն ավելացնել արևային Էներգիայի արտադրության տեսակարար կշիռը՝ հասցնելով Էներգիայի ընդհանուր արտադրության առնվազն 15%-ի կամ 1,8 մլրդ կՎտժ-ի: Ի լրումն, Հայաստանի կառավարությունը նաև հիմնական առաջնահերթությունների շարքում ընդգծում է միջուկային Էներգիայի, Էներգաարդյունավետության ծրագրերի, Էկոլոգիապես մաքուր ավտոմեքենաների և վառելիքի մատակարարման շղթաների դիվերսիֆիկացման մտադրությունը, որոնք ներկայացված են ԵԱԶ3-ում:
- Քաղաքապետերի դաշնագիր, որտեղ քաղաքապետերը պարտավորվում են իրենց համայնքներում մինչև 2030 թվականը նվազեցնել CO₂ արտանետումները առնվազն 40%-ով, հիմնականում՝ ավելացնելով վերականգնվող Էներգիայի

աղբյուրների օգտագործումը, բարելավելով էներգաարդյունավետությունը և ներդնելով «առանց ափսոսանքի», ճկուն միջոցառումներ: Ստորագրող կողմերը նաև հանձնառություն ունեն ներկայացնել ելակետային արտանետումների գույքագրում, կլիմայի փոփոխության ռիսկի և խոցելիության գնահատում, Կայուն էներգիայի և կլիմայի գործողությունների ծրագիր (ԿԷԿԾ, SECAP), որով նրանք պետք է ներկայացնեն, թե ինչպես է ստորագրող երկիրը մտադիր իրագործել իր հանձնառությունները, Դաշնագրի ներքո հանձնառությունները ստանձնելուց հետո երկու տարվա ընթացքում, ինչպես նաև երկամյա պարբերականությամբ ներկայացնեն առաջընթացի մասին զեկույց:

- Կայուն էներգիա Բոլորի Համար Նախաձեռնություն

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵՆՏԵՍՈՒՅՄ ԱՆՆՆՅՈՒՅՄ ՄԲ.

- Անտառի ազգային ծրագիրը (2021թ.), որով նախատեսում է մինչև 2030 թվականը անտառածածկի ավելացումը Հայաստանի տարածքի 12.9% չափով:
- Հետևաբար, 2020թ. անտառների կադաստրի ազգային ռազմավարությունը հատկապես կարևոր է մշակվող ազգային ՉՀՀ համակարգի համար, քանի որ ԱԿՀ-ի ԳԱԱՀՕ հատվածի հաշվառման և հաշվետվայնության ուժեղացումը Հայաստանի համար հնարավորությունների առանցքային ոլորտ է:
- Անտառից վառելափայտի հավաքման և բաշխման կառավարման ռազմավարությունը, 2021թ.՝ առաջարկում է անտառներից վառելափայտի արդյունահանման այլընտրանք, որը կբավարարի տեղի բնակչության կարիքները: Էներգիայի այլընտրանքային աղբյուրների տեխնիկատնտեսական հիմնավորման վերլուծության մեջ դիտարկվում են տեխնիկական, տնտեսական և սոցիալական ասպեկտները, և ներկայացվում է ճանապարհային քարտեզ՝ հետագա առաջընթացի ուղու վերաբերյալ առաջարկություններով: Այս ռազմավարության իրագործումը կնպաստի երկրի անտառներում փայտի կենսազանգվածի պահպանմանը, որը այլապես արդյունահանվում է որպես կենցաղային վառելիք, և կբարձրացնի անտառային տարածքների միջոցով ՋԳ-երի պահեստավորման և կլանման կարողությունը՝ նպաստելով ԱՍԳ-ի իրականացմանը:

6.3.1. Ա3.1 Ծրագրերի գրանցամատյանի ներդրումը արտանետումների կրճատման և ֆինանսական տեղեկատվության արձանագրման նպատակով

Հաշվի առնելով, որ ԱՍԳ-ն մշակվել է հարմարվողականության գործողություններին անդրադառնալու համար, խորհուրդ է տրվում կիրառել առանձին համակարգեր՝ մեղմման և հարմարվողականության գործողությունների արձանագրման համար. ՉՀՀ համակարգ՝ մեղմման քաղաքականության և գործողությունների համար և ՄԱՀ համակարգ՝ հարմարվողականության քաղաքականության և գործողությունների համար: Հետագայում երկուսն էլ կարող են գործարկվել ԿՓՉՀՀ հարթակներում, եթե անհրաժեշտ ՏՏ պայմանները բավարարված լինեն:

Մեղմման առումով, երբ Հայաստանը ունենա, առնվազն, կլիմայի փոփոխության մասին օրենքը (Ա1.1) և ցանկայի է՝ ԵԺ-ՑԱԶՈ-ը, ՇՄՆ-ին կհանձնարարվի մշակել «ծրագրերի ռեեստրի» գործունեությունը սահմանելու վերաբերյալ որոշում, երկրում մեղմացնող գործողությունների և քաղաքականության առաջընթացին հետևելու նպատակով¹⁹: Վերոնշյալի համար խորհուրդ է տրվում որոշումներ կայացնել հետևյալ ուղղությամբ.

- 1) Ո՞ր ծրագրերը կարող են գրանցվել ԿՓԶՀ-ում, օրինակ՝ NAMA/ԱԸՍԳ, CDM/ՄԶՄ, կամավոր շուկաներ (VCS/ԱՀՍ, GS/ՈՍ), REDD+, ծրագրեր, որոնք ընդգրկված են Էներգետիկ քաղաքականության շրջանակում, կամ այլ ծրագրեր, որոնք կսահմանի Շրջակա միջավայրի նախարարությունը:
- 2) Ինչ հատկանիշների պետք է համապատասխանեն ԿՓԶՀ հարթակում գրանցված ծրագրերը (ունենան ամուր ելակետային հիմեր, հիմնված լինեն մեթոդաբանության վրա՝ համահունչ միջազգայնորեն ճանաչված արձանագրություններին կամ այլ հիմքեր, որոնք ՇՄՆ-ը կհամարի կիրառելի)
- 3) Ինչ պահանջներ պետք է կատարվեն ծրագրերի գրանցման համար
- 4) Սահմանել, թե արդյոք ծրագրերը կընդունվեն ցանկացած փուլում (նախագծում, իրականացում, շահագործում)
- 5) Ի՞նչ նպատակներ ունի այս ռեեստրը (օրինակ՝ մեղմման ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն հավաքել ազգային հաշիվների համար (կապված կոնկրետ քաղաքականության հետ), իրականացնել կրճատման երկարաժամկետ գործարքներ և այլն): Նպատակները պետք է սահմանվեն ՇՄՆ-ի կողմից:
- 6) Գրանցման ընթացակարգ. ինչ գործողություններ պետք է կատարի անձը (ծրագիր մշակողը) իր ծրագիրը գրանցելու համար (օրինակ՝ մոնիտորինգի պլանի ներկայացում և վավերացման կարծիք)

Ծրագրի ռեեստրը որպես ԶՀՀ համակարգի բաղադրիչներից մեկը ներդնելու համար անհրաժեշտ է ստեղծել ռեեստրի կազմման գործընթաց ծրագրի հեղինակների համար, որը ներառում է հետևյալ փուլերը.

Գծապատկեր26 Մեղմման ծրագրերի գրանցում ԶՀՀ համակարգում



- 1) Ծրագրերի նույնականացում ըստ տեսակի, ոլորտի, ենթաօլորտի և հարակից քաղաքականության

Ծրագրի ճիշտ նույնականացումը կարևոր է մեղմման գործողությունների ռեեստրի ամբողջականությունը պահպանելու համար, քանի որ եթե ծրագիրը հնարավոր չէ պատշաճ կերպով նույնականացնել, կառաջանա արտանետումների սխալ հաշվառման,

¹⁹ Այս նպատակների համար խորհուրդ է տրվում ներդնել Ծրագրի պորտֆելի համակարգը (CAEP):

և նույնիսկ կրկնակի հաշվառման ռիսկ, ինչը կարող է հանգեցնել անհամապատասխանությունների կադաստրում և ԱՍԳ առաջընթացում:

Այս քայլում տեղին է հստակեցնել, թե արդյոք ծրագիրը նպաստելու է ԱՍԳ իրագործմանը, ինչպես նաև սահմանել կրճատումների վերջնական օգտագործման եղանակը:

2) Գրանցման գործընթաց

Պետք է սահմանվի մեղմման ծրագրերի գրանցման ընթացակարգ, որը կսահմանի նախագիծը ԿՓՉՀՀ հարթակում գրանցելու պահանջները: Նմանապես, պետք է նախանշել, թե ինչպիսի տեղեկատվություն պետք է տրամադրվի հարթակին՝ գրանցումը հաստատվելուց հետո, և համապատասխան իրավասություն ունեցող անձանց քայլերը այս գործընթացում:

Բացի այդ, պետք է մշակվի արտաքին հավաստագրման և հավատարմագրման համակարգ, որը երաշխավորում է արտանետումների կրճատումների հաշվառման անկողմնակալությունը ազգային ՉՀՀ համակարգի շրջանակներում ընդունելի մեղմման սխեմաներում: Կան միջազգային հավաստագրման հնարավորություններ, սակայն դրանք կարող են ենթադրել ավելի մեծ ծախսեր ծրագրերի մշակողների համար, հետևաբար խորհուրդ է տրվում զարգացնել ազգային հավաստագրման հնարավորությունները:

Հարակից գործողություններ. կազմել ծրագրերի գրանցման ձևանմուշներ, հաստատել/մշակել մեղմման ծրագրերի մեթոդաբանություններ, մշակել արտաքին հավաստագրման մարմինների հավատարմագրման համակարգ. մշակել հավաստագրման ուղեցույցներ: Բացի այդ, խորհուրդ է տրվում պատրաստել ուղեցույց փաստաթղթեր ԿՓՉՀՀ հարթակում մեղմման ծրագրեր գրանցողների համար:

3) Տեղեկատվության գրանցում

Ծրագրի մշակողը/իրականացնողը պետք է տրամադրի անհրաժեշտ տեղեկատվություն մեղմման ծրագրի վերաբերյալ: Պահանջները պետք է սահմանվեն կարգավորող փաստաթղթում, իսկ հարթակի մշակման համար պետք է դիտարկվեն ծրագրի գրանցման համար անհրաժեշտ դաշտերը (SS պահանջներ): Տեղեկատվության պահանջները կարելի է բաժանել 5 կատեգորիայի.

<p>a. Մշակողի կողմից</p> <p>Իրավական տեղեկատվություն ծրագրի հեղինակի/մշակողի մասին՝ անհատ կամ կազմակերպություն:</p> <p>b. Ծրագրի առնչությամբ</p> <p>Ծրագրի նկարագրությունը, ծրագրի փուլը ծրագրի գրանցման պահին, աշխարհագրական դիրքը, օգտագործված տեխնոլոգիան, ծրագիրը/սխեման, որում ընդգրկված է տվյալ ծրագիրը (եթե կիրառելի է), կրճատումների օգտագործումը.</p> <p>c. Ֆինանսավորում</p> <p>Ծրագրի ֆինանսավորման սխեման, ֆինանսավորող կազմակերպությունը՝ պետական կամ մասնավոր կապիտալ, ֆինանսավորման ժամկետը, ֆինանսավորման պայմանները, աջակցության տեսակը (հարմարվողականություն, մեղմում, համօգուտ), ոլորտ և ենթաօլորտ, գնահատված գումարը (որոշակի</p>

արժույթով), ակնկալվող ժամկետը, ակնկալվող ֆինանսական գործիքը (դրամաշնորհ, արտոնյալ վարկ, ոչ արտոնյալ վարկ, սեփական կապիտալ, երաշխիք կամ այլ). արդյո՞ք գործունեությունը կնպաստի տեխնոլոգիաների զարգացմանը և փոխանցմանը և/կամ կարողությունների զարգացմանը, ըստ կիրառելիության. արդյոք գործունեությունը խարսխված է ազգային ռազմավարության և/կամ ԱՍԳ-ի հիմքերի վրա. ակնկալվող օգտագործումը, ազդեցությունը և գնահատված արդյունքները:

d. Մեղման առնչությամբ

Արտանետումների գնահատման մեթոդաբանություն, ելակետի սահմանում, մոնիտորինգի պլան, տարեկան և ծրագրի ողջ արդյունքներով ակնկալվող կրճատումներ, արձանագրված կրճատումներ:

e. Արտանետումների հավաստագրում

Տրամադրել տեղեկատվություն հավաստագրման գործընթացների վերաբերյալ, որոնց համար ներկայացվել է ծրագիրը՝ գրառելով առնվազն հավաստագրող մարմնի անվանումը, հավաստագրման ամսաթիվը, անհամապատասխանությունները, էականությունը և հավաստագրված կրճատումները:

Անհրաժեշտ է, որ Շրջակա միջավայրի նախարարությունը որոշի այն մեթոդաբանությունները, որոնց համաձայն մեղման ծրագրերը կարող են գրանցվել ԿՓԶՀ հարթակում: Հնարավոր համապատասխան մեթոդաբանությունների նախնական ցանկը ներկայացված է Աղյուսակ 13-ում. Աղյուսակը նաև ցույց է տալիս, թե արդյոք գոյություն ունի համապատասխան մեթոդաբանություն ՄԱԿԿՓՇԿ-ի Մաքուր զարգացման մեխանիզմի (ՄՁՄ) շրջանակներում: Գործող միջազգային վարկային ստանդարտների ՉՀՀ մեթոդաբանությունների վրա հիմնվելը կարող է հեշտացնել ՉՀՀ համակարգի մեղման գործողությունների բաղադրիչի օգտագործումը միջազգային փոխանցումներին օժանդակելու նպատակով, քանի որ պոտենցիալ գնորդները կարող են ավելի մեծ վստահություն ունենալ գործող միջազգային ստանդարտների օգտագործմամբ հավաստագրված և վավերացված մեղման արդյունքների նկատմամբ, անկախ նրանից, թե արդյոք այդ մեթոդաբանությունները (այսինքն՝ ՄՁՄ մեթոդաբանությունները) պաշտոնապես ներառված են 6-րդ հոդվածի չափորոշիչների մեջ: Թեև 6-րդ հոդվածով սահմանված վարկավորման նոր մեխանիզմի ուղեցույցը ներառում է մեթոդաբանության նախագծման և ելակետերի սահմանման ավելի հավակնոտ պահանջներ, քան ՄՁՄ-ի դեպքում, ակնկալվում է, որ գործող ՄՁՄ մեթոդաբանությունները հիմք կծառայեն ցանկացած նոր մեթոդաբանության համար: Դա հաստատվում է այն փաստով, որ ԿՀ26-ում կառավարությունները համաձայնել են, որ ծրագրերը ՄՁՄ-ից կարող են փոխանցվել նոր Հոդված 6.4 մեխանիզմին՝ հիմնվելով դրա ներկայիս ՄՁՄ մեթոդաբանության կիրառման վրա: Չնայած ՄՁՄ-ի համապատասխան մեթոդաբանությունը չի կարող օգտագործվել կամ անփոփոխ ներառվել ՉՀՀ համակարգի մեղման գործողությունների բաղադրիչում, այն կարող է հիմք հանդիսանալ Հայաստանում կիրառվող հնարավոր պարզեցված մեթոդաբանությունների համար:

Աղյուսակ 13 Հայաստանում մեղման ծրագրերի հնարավոր մեթոդաբանությունները

Ոլորտ	Ծրագրի տեսակը/մեթոդաբանությունը	ՄՁՄ-ի կիրառելի մեթոդաբանությունները
-------	---------------------------------	-------------------------------------

Էներգիա	Վերականգնվող Էներգիայի նոր հզորություն – ցանցին միացված	AMS-I. D - Ցանցին միացված վերականգնվող Էներգիայի արտադրություն (փոքր մասշտաբով) ACM0002. Ցանցին միացված Էլեկտրաէներգիայի արտադրություն վերականգնվող աղբյուրներից (լայնածավալ)
	Վերականգնվող Էներգիայի նոր հզորություն՝ ցանցից դուրս	AM0103. Էներգիայի արտադրություն վերականգնվող աղբյուրներից՝ մեկուսացված ցանցերում
	Էներգաարդյունավետության պահանջարկի կողմը (բնակելի և առևտրային հատված)	AMS-II.J.: Արդյունավետ լուսավորության տեխնոլոգիաների ուղղությամբ գործողությունների պահանջարկի կողմը
		AMS-II.L.: Արդյունավետ արտաքին լուսավորության և փողոցների լուսավորության տեխնոլոգիաների ուղղությամբ գործողությունների պահանջարկի կողմը
		AM0120. Էներգաարդյունավետ սառնարաններ և օդորակիչներ
	Էներգաարդյունավետության պահանջարկի կողմը (արդյունաբերական ոլորտ)	AMS-II.C.: Կոնկրետ տեխնոլոգիաների համար Էներգաարդյունավետության գործողությունների պահանջարկի կողմը
Վառելիքի անցում	ACM0011. Գոյություն ունեցող Էլեկտրակայաններում ածխահենք վառելիքից և/կամ նավթային վառելիքից անցում բնական գազի:	
Տրանսպորտ	Էլեկտրական մեքենաների օգտագործման խթանում	Անհասանելի է
Ոլորտ	Հոմբլի փոփոխություն ցեմենտի արտադրության մեջ	ACM0005. Ցեմենտի խառնուրդային արտադրության ավելացում
Թափոններ/ Գյուղատնտեսություն	Մեթանի վերականգնում գոմաղբի կառավարման համակարգերում	AM0073. ՋԳ արտանետումների կրճատում գոմաղբի հավաքման և մշակման միջոցով կենտրոնական գործարանում
	Աղբավայրերում գազերի արտանետումներից խուսափում	ACM0022. Թափոնների վերամշակման այլընտրանքային գործընթացներ
	Մեթանի վերականգնում աղբավայրերում	ACM0001. Աղբավայրային գազերի այրում կամ օգտագործում
	Թափոնների կառավարման այլընտրանքային գործելակերպեր	AMS III.F Մեթանի արտանետումներից խուսափում կոմպոստացման միջոցով
Անտառային տնտեսություն	Հողատարածքի Ա/Յ	AR-ACM0003. Անտառաբուծություն և հողերի անտառվերականգնում, բացառությամբ ջրաճահճային տարածքների

Նշում. ՄՉՄ մեթոդաբանությունները միայն անգլերեն են, տե՛ս ստորև նշված հղումը https://cdm.unfccc.int/methodologies/documentation/meth_booklet.pdf

Հարկ է նշել, որ Հայաստանը գրանցել է ցանցային արտանետումների գործակցի ստանդարտացված ելակետ՝ հիմնված ՄՉՄ մեթոդաբանության v5 գործիքի հիման վրա՝ այն մեղմման ազդեցության գնահատման համար որպես ազգային վավերական գործակից օգտագործելու նպատակով, որը հաստատվել է ՄՉՄ խորհրդի կողմից, ինչը կօգնի պարզեցնել էներգետիկ ծրագրերին առնչվող մեթոդաբանությունները:

4) Ծրագրի առաջընթաց

Հարկ է նշել, որ վերը նշվածը պետք է հաստատվի իրավական ակտով, որը կիրառելի է իրենց ծրագրերը ՉՀՀ համակարգում գրանցելու նպատակ ունեցող՝ մեղմման ծրագրեր մշակող և իրականացնող անձանց կամ ընկերությունների համար, սահմանելով գրանցման պահանջները և գրանցման գործընթացը:

Այս իրավական ակտի կազմը ցույց է տրված Աղյուսակ14-ում. Այսուամենայնիվ, Հայաստանի կառավարությունը պետք է մի քանի որոշումներ ընդունի նախքան ՉՀՀ-ում մեղմման գործողությունների ռեեստրի ներդրումը:

Աղյուսակ14 ՉՀՀ-ում մեղմման գործողությունների արձանագրման կանոնակարգումն ապահովող նվազագույն պահանջներ

Բաղադրիչներ	Նկարագրություն	Որոշման կայացում
Շրջանակ և կիրառելիություն	<p>Սահմանել Հայաստանում իրականացվող մեղմման միջոցառումների ոլորտները, որոնք պետք է գրանցվեն ՉՀՀ համակարգում:</p> <p>Սահմանել նաև ծրագրի մշակողներին ներկայացվող նվազագույն պահանջները՝ մեղմման գործողությունները գրանցելու համար:</p>	<p>Սահմանել, թե արդյոք մեղմման ռեեստրը կլինի «բաց» գրանցամատյան բոլոր տեսակի ծրագրերի համար, թե անհրաժեշտ է սահմանափակել շրջանակը, օրինակ՝ էներգետիկայի ոլորտ: Դա կախված է ռեեստրի նպատակից:</p> <p>Ծրագրեր արտաքին հավաստագրողի կարծիքով:</p>
Ռեեստրի նպատակը	<p>Սահմանել մեղմման ռեեստրի նպատակը կամ նպատակները՝ ըստ կարիքների:</p> <p>Ռեեստրը կարող է ծառայել տարբեր նպատակների: Կարևոր այդ նպատակը որոշել, քանի որ դրա</p>	<p>Ինչ նպատակի է ծառայում այս ռեեստրը: օրինակ՝ տեղեկատվության շտեմարան, երկրում իրականացվող մեղմման գործողությունների տեղեկատվական բազա, թե այն նաև նպատակ ունի հաշվառել կրճատումները</p>

	իրականացման տեխնիկական և տեխնոլոգիական պահանջները տարբեր կլինեն՝ կախված նպատակից:	(այս դեպքում՝ միայն հաշվառել, թե նաև հավաստագրել և/կամ կատարել գործարքներ):
Օգտագործողի տեսակները	Կախված ռեեստրի նպատակներից, այն կարող է ունենալ տարբեր տեսակի օգտատերեր՝ յուրաքանչյուրը սահմանափակ գործառույթներով: Օրինակ՝ ՇՄՆ-ը որպես ՉՀՀ-ի համակարգող կառույց՝ պետք է ունենա անսահմանափակ հասանելիություն. ծրագրի հեղինակները, հավաստագրողները՝ սահմանափակ հասանելիություն, և այլն:	Մեղմման ռեեստրի հիմնական օգտագործողները. <ul style="list-style-type: none"> • Համակարգող (այս դեպքում ՇՄՆ) • Այլ համապատասխան մարմիններ • Հավաստագրող մարմիններ • Ծրագրի կողմնակիցներ • Դոնորներ
Ծրագրերի տեսակները	Սահմանել Հայաստանին առնչվող ծրագրերի տեսակները, որոնք պետք է դիտարկվեն որպես մեղմման միջոցառումներ: Դիտարկել մեղմման ազգային քաղաքականությունը և, անհրաժեշտության դեպքում, ծրագրերը, որոնք իրենցից ներկայացնում են ֆինանսավորման ծրագրեր կոնկրետ ոլորտներում:	Ինչպիսի՞ ծրագրերն են ընդունելի՝ որպես երկրում իրականացվող մեղմման միջոցառումներ:
Տեղեկատվության պահանջներ	Որոշել ծրագրի մասին տեղեկատվությունը, որը պետք է տրամադրվի համակարգում գրանցվելու համար:	Այս տեղեկատվության օրինակն է. ծրագրի մշակողի տվյալները, ծրագրի նկարագրությունը, ֆինանսական տեղեկատվություն, մեթոդաբանություն, մոնիտորինգի պլան, տեղեկատվություն

		մեղման, հավաստագրման վերաբերյալ:
Ընդունված ծրագրեր/շրջանակներ	Սահմանել, թե արդյոք պետական մարմինների շահերից բխում է ծրագրերի ռեեստրում այն ծրագրերի ինտեգրումը, որոնք իրականացվել են Հայաստանում պարտադիր հիմունքներով (այսինքն՝ ՄՁՄ) թե կամավոր հիմունքներով (VCS/ԱՀՍ, GS/ՈՍ), թեև դրանց գծով կրճատումները կարող են հանձնառված լինել այդպիսի սխեմաների ներքո: Դիտարկել REDD+ ծրագրերը անտառային տնտեսության ոլորտում:	Ռեեստրի նպատակից ելնելով՝ որոշել, թե արդյոք արտանետումների նվազեցման այլ հիմունքների ներքո ծրագրերը պետք է ընդգրկվեն:
Կրճատումների օգտագործումը	Կարևոր է, որ որպես մեղման միջոցառումներ գրանցված բոլոր ծրագրերի գծով որոշվեն կրճատումների օգտագործումը (նպատակակետը)՝ կրճատումների կրկնակի հաշվառումից խուսափելու նպատակով:	Առաջարկվում է, որ կրճատումների վերջնական օգտագործումը թույլատրվի գրանցել՝ որպես միայն հաշվառում, որպես ներդրում ԱՍԳ-ների իրագործման ուղղությամբ կամ՝ որպես գործարքներ միջազգային շուկաներում:
ՉՀՀ պահանջներ	Սահմանել պլանի մոնիտորինգի բովանդակությունը, ինչպես նաև պահանջվող հավաստագրման բնութագրերն ու հաճախականությունը:	Քննարկել՝ ըստ ռեեստրի նպատակի: Խորհուրդ է տրվում երկարաժամկետ հեռանկարում ձևավորել ազգային հավաստագրման կարողություններ:
Մեթոդաբանություններ	Սահմանել գնահատման մեթոդաբանություններ ելակետային արտանետումների և կանխատեսվող և փաստացի	Առաջարկվում է հիմք ընդունել հաստատված մեթոդաբանությունները՝ անհրաժեշտության դեպքում երկարաժամկետ հեռանկարում ստեղծելով

	<p>կրճատումների համար, որոնք առաջանում են մեղմման միջոցառումների իրականացման արդյունքում: Այս մեթոդաբանությունները կարող են ստանդարտացված լինել և հիմնվել հաստատված սխեմաների վրա, ինչպիսին է ՄՉՄ-ն, կամ կարող են ստեղծվել նաև պետական մարմինների կողմից:</p>	<p>սեփական մեթոդաբանությունները մշակելու կարողություններ: Հնարավոր է ընդունել պարզեցված մեթոդաբանական մոտեցում, որը կհեշտացնի այս մեթոդաբանությունների կիրառումը ծրագրի հեղինակների կողմից (օրինակ՝ ցանցի արտանետումների գործակցի ստանդարտացում):</p>
<p>Ծրագրի փուլ</p>	<p>Ռեեստրում գրանցման համար մեղմման գործողությունները կարող են ընդունվել բոլոր փուլերում, կամ կարող են սահմանափակվել միայն իրականացվածներով: Մեղմման գործողությունները գրանցելիս, պետք է նշվի ծրագրի այն փուլը, որում այն գտնվում է՝ նախագծում, իրականացում, գործարկում: Մեղմման միջոցառումները, որոնք գտնվում են նախագծման փուլում, կարող են հաշվարկվել որպես պոտենցիալ կրճատումներ:</p>	<p>Խորհուրդ է տրվում պահանջել վավերացման կարծիք, նույնիսկ եթե նախագծման փուլում գործողություններն ընդունելի են:</p> <p>Նմանապես, պետք է հստակեցվի ծրագրի իրականացման ժամկետը և ավարտի ամսաթիվը՝ արտանետումների կրճատման գերազնահատումից խուսափելու համար:</p>
<p>Արդյունքներ (հաշվետվությունների տեսակները)</p>	<p>Նշել հաշվետվությունների տեսակները, որոնք պահանջվում է ստեղծել համակարգի միջոցով՝ ըստ օգտագործողի տեսակի:</p>	<p>Հաշվետվությունների օրինակներն են.</p> <ul style="list-style-type: none"> • Ծրագրերի քանակն ըստ տեսակների և ոլորտների • Հնարավոր կրճատումներ • Հավաստագրված կրճատումներ

		<ul style="list-style-type: none"> • Մեղմման գործողությունների ներդրումը ԱՍԳ նպատակներին հասնելու ուղղությամբ • Ներդրումներ մեղմման միջոցառումներում
<p>Գործարքներ՝ ր. - միավորների չեղարկում</p>	<p>Որոշել, թե արդյոք երկարաժամկետ հեռանկարում մեղմման գործողությունների գրանցման հեռանկարը կարող է առաջացնել կրճատումներ, որոնք կարող են փոխանակվել ածխածնի շուկաների կամ նույնիսկ երկրների միջև (այսինքն՝ ITMO-երը՝ միջազգային մակարդակում փոխարկելի մեղմման արդյունքները):</p>	<p>Ածխածնի շուկաներում Հայաստանի մասնակցության ներուժը պետք է վերլուծվի: Այս պահին խորհուրդ է տրվում, որ համապատասխան կարգավորումը և հարթակը ունենան ճկունություն, որը թույլ կտա հետագայում միանալ ածխածնի շուկաներին:</p>

Առաջարկվում է սահմանել այս ռեեստրի առանձնահատկությունները և կանոնները իրավական փաստաթղթում, օրինակ՝ որոշմամբ: Ընդհանուր առմամբ, այս որոշումը պետք է ներառի.

- Ռեեստրի նպատակը և շրջանակը
- Համակարգումը և այլ համապատասխան դերերը
- Ծրագրի հեղինակներին ներկայացվող պահանջները ռեեստրում ծրագրեր գրանցելու համար
- Գրանցման հայտի ընթացակարգը
- Ծրագրի գրանցման գործընթացը
- Տեղեկատվության օգտագործումը (ներառյալ կրճատումների օգտագործումը, երբ կիրառելի է)
- ՉՀՀ պարտավորությունները ծրագրի հեղինակների համար (օրինակ՝ մոնիտորինգի պլան, հավաստագրման հաշվետվություն)
- Կոնկրետ տեղեկատվություն, որը պետք է տրամադրվի ռեեստրի միջոցով (քայլ 3 Գծապատկեր 26):

6.3.2. Ա3.2 Մանրամասն վերլուծել քաղաքականությունների և դրանց նպատակների ներկառուցումը համակարգում (գրանցամատյանում)

Որպեսզի հնարավոր լինի հետևել վերը նշված տարբեր քաղաքականություններում հաստատված նպատակներին (և ապագայում ներառվելիք այլ նպատակներին), խորհուրդ է տրվում գրանցել դրանք համակարգում (ոլորտ, քաղաքականության անվանում, նպատակներ և հատուկ թիրախներ և ժամկետներ), որպեսզի այս կոնկրետ քաղաքականությունից բխող ծրագրերը հնարավոր լինի «պիտակավորել»: Այսպիսով, ծրագրերը կկապվեն քաղաքականության հետ, և նպատակների իրականացման կարգավիճակը հնարավոր կլինի ցանկացած պահի դիտել «իրական ժամանակում»:

Հարկ է նշել, որ մեղմման և հարմարվողականության ծրագրերը կարող են իրականացվել պետական մարմինների, ծրագրերի մասնավոր մշակողների կամ այլ տեսակի կազմակերպությունների/ընկերությունների միջոցով (ըստ իրավական ակտով սահմանված թույլատրելի շրջանակի)²⁰ համակարգում վարելով գրառումներ ծրագրի գրանցման պահից մինչև դրա ավարտը:

Պարտադիր չէ, որ բոլոր ծրագրերը կապված լինեն քաղաքականության հետ (կարող են լինել անկախ ծրագրեր, որոնք ծառայում են կրճատումների ազգային հաշվառման կամ ածխածնի շուկայում առևտրային նպատակներին, քանի որ համակարգը զարգացման միտում ունի Հայաստանում), բայց այս ռեեստրը կարող է կենտրոնացնել բոլոր գործողությունները՝ անկախ նրանից, թե արդյոք դրանք բխում են կոնկրետ քաղաքականությունից:

Քաղաքականությունների ներկառուցումը համակարգում խնդիր է, որը պետք է իրականացվի առկա քաղաքականությունների թարմացման, և կլիմայի փոփոխության հետ կապված նոր քաղաքականությունների առաջացման հետ զուգընթաց: Վերը նշվածը տեղի կունենա այն դեպքում, եթե Հայաստանի շահերից բխում է ապահովել այս բոլոր գործողությունների վերահսկողությունը²⁰ (խորհուրդ է տրվում, որ այդ գործունեությունը նախանշվի Կլիմայի փոփոխության մասին օրենքով): Այդ իսկ պատճառով, տեղին կլինի այս բոլոր քաղաքականությունները կենտրոնացնել ԵԺ-ՑԱԶՌ միջոցով, որը պետք է արդիականացվի առնվազն 5 տարին մեկ պարբերականությամբ, ինչպես առաջարկվում է Ա1.2-ում:

6.4. Ա4 - Հավաստագրման համակարգի ներդրում մեղմման ծրագրերի արդյունքում արտանետումների կրճատումները և մասնավոր հատվածի ՋԳ արտանետումները հավաստագրելու նպատակով.

6.4.1. Ա4.1 Հավատարմագրման համակարգի մշակում

Շրջակա միջավայրի նախարարությանը առաջարկվում է կառուցել ազգային հավաստագրման կարողություններ՝ ՉՀՀ համակարգի ներդրման նպատակով: Սա պետք է տեղի ունենա հավատարմագրման համակարգի միջոցով, որտեղ հավաստագրման/վավերացման գործընթացներում ներգրավված են համապատասխան վերապատրաստում և հավաստագիր ստացած անձինք:

²⁰ Սա սկզբում կնշանակի մեծ ջանքեր՝ քաղաքականությունները համախմբելու և տարբեր մասնակիցների (օրինակ՝ այդ քաղաքականության համար պատասխանատուներին) ներգրավելու առումով, սակայն երկարաժամկետ հեռանկարում դա կհեշտացնի գործունեությունը և ավելի ճշգրիտ արդյունքներ կապահովի համակարգում:

Հավատարմագրման համակարգը կարող է օգտակար լինել ՉՀՀ համակարգի բոլոր բաղադրիչների համար, հատկապես մեղմման ծրագրերի ռեեստրի (ԾՊՀ), նվազեցնելով ծախսերը արտանետումները և (կամ) մեղմման գործողություններ գրանցող անձանց համար՝ և երաշխավորելով հաղորդված տեղեկատվության հավաստիությունը և հուսալիությունը: Արտաքին հավաստագրման պահանջի պայմաններում ՉՀՀ-ն ավելի կամրապնդվի, քանի որ արտաքին հավաստագրումը թույլ է տալիս երաշխավորել հավաստագրման մակարդակը և գործընթացի անաչառությունը՝ միջազգային չափանիշներին համապատասխան, մասնավորապես՝ ԵՄ և ԱՄՆ:

- ISO 14064-1:2018 Ձերմոցային գազեր - Մաս 1. Կազմակերպական մակարդակի մասնագիր և ուղեցույց ջերմոցային գազերի արտանետումների և կլանումների քանակային որոշման և ներկայացման համար
- ISO 14064-2:2019 Ձերմոցային գազեր — Մաս 2. Ծրագրային մակարդակի մասնագիր և ուղեցույց ջերմոցային գազերի արտանետումների կրճատման կամ բարելավված կլանումների քանակային որոշման, մշտադիտարկման և ներկայացման համար
- ISO 14064-3:2019 Ձերմոցային գազեր — Մաս 3. Մասնագիր և ուղեցույց ջերմոցային գազերի հաշվետվությունների հավաստագրման և վավերացման համար
- ISO 14065:2020 Ընդհանուր սկզբունքներ և պահանջներ շրջակա միջավայրի մասին տեղեկատվությունը վավերացնող և հավաստագրող մարմինների համար:

Երկրի կարողության բացի պայմաններում, օտարերկրյա հավաստագրողների ներգրավման ծախսերը մեծ կլինեն անհատների (ծրագրի հեղինակների) համար, ովքեր ունեն ծրագրերի կամ դրանց արդյունքում կրճատումների հավատարմագրման կամ հավաստագրման կարիք, ինչի արդյունքում նրանք չեն կարողանա կամավոր կերպով ապահովել այդ գործընթացների հետ համապատասխանություն:

Բացի այդ, համարվում է, որ ՄԳՀԽ-ի համար շատ մեծ մարտահրավեր կլինի հավաստագրման գործողությունների ստանձնումը, և երկարաժամկետ հեռանկարում շահավետ կլինի ունենալ ազգային կարողություններ, որոնք համապատասխան փորձի առկայության դեպքում, նույնպես կկարողանան տեխնիկական աջակցություն ցուցաբերել Խորհրդին:

Հարկ է նշել, որ եթե ընկերությունների համար սահմանվեն ՉՀՀ պարտավորություններ (Ա1.5), ապա հավաստագրողները կօգնեն նաև ներկայացված արտանետումների հավաստագրման առաջադրանքների գծով՝ երաշխավորելով բարձր մակարդակի հավաստիացում:

6.4.2. Ա4.2 Հավաստագրման ազգային կարողությունների զարգացում

Ազգային ստուգման կարողությունների ձևավորումը պահանջում է հավատարմագրման և/կամ հաստատման համակարգի ընդունում, ինչպիսին նպատակահարմար կդիտվի ՇՄՆ կողմից: Առաջարկվում է, որ այս գործընթացը ընդունվի կամ համապատասխանի ISO 14064 և 14065 միջազգային ստանդարտներին; Այնուամենայնիվ, այս ստանդարտներին համապատասխանեցումը, թեև դա լավ մեկնարկային կետ է, համարվում է անբավարար երկարաժամկետ հեռանկարում, քանի որ այս ստանդարտները հիմքեր են ձևավորում հավաստագրման գործընթացին, սակայն որոշ առումներով թույլ են, ուստի պահանջվում է ավելի մանրամասն բնութագրերի

սահմանում, օրինակ, մասնավորապես, թույլատրելի էականության աստիճանի և հավաստագրման հավաստիության մակարդակի, և այլ առումներով:

- Հավաստագրման այս գործընթացը պետք է հաստատվի միջազգային ստանդարտին համապատասխան, սակայն Հայաստանի կարիքներին համապատասխանող բնութագրերով:
- Այս սխեման պետք է ստեղծվի ազգային հավատարմագրման կազմակերպության հետ համատեղ, որն անմիջականորեն պատասխանատու կլինի այդ մարմինների հավատարմագրման համար: Հայաստանի ՇՄՆ-ը կարող է նաև թողարկել հավաստագրման ուղեցույցներ ԿՓՉՀՀ-ում գրանցված մեղմման գործողությունների կոնկրետ արտանետումների հավաստագրման գործընթացի համար:
- Տեխնիկական պայմանները կարող են ներառել, բայց չեն սահմանափակվում հետևյալով.
 - Հավաստագրման էականությունը և հավաստիության մակարդակը
 - Հավաստագրման խմբի համար պահանջվող իրավասությունները (կարող է հիմնված լինել ISO 14066:2011 Ջերմոցային զագեր - ջերմոցային զագերի հավատարմագրում և հավաստագրում իրականացնող աշխատախմբերի մասնագիտական կարողություններին ներկայացվող պահանջները ստանդարտի վրա)
 - Անաչառության չափանիշներ (ապահովում է հավաստագրողի և հավաստագրվողի միջև շահերի բախման բացառումը)
 - Հավաստագրման պլանի և նմուշառման պլանի բնութագրերը
 - Հավաստագրման հաշվետվության բովանդակությունը
 - Հավաստագրման արդյունքների փաստաթղթավորում (տվյալների աուդիտ և տեղայցեր)
 - Հավաստագրման եզրակացության թողարկում
- Համապատասխան ձևանմուշների և ձևաչափերի մշակում՝ գործընթացը փաստաթղթավորելու համար
- Ներդնել կլիմայի փոփոխության մեղմման ոլորտում աշխատող մասնագետների հավատարմագրման սխեմա
- Տեղում վերապատրաստումների իրականացում

Այս սխեմայի կառուցման համար կպահանջվի մի քանի տարի, քանի որ այն նաև կախված է անհատների՝ որպես հավաստագրող մարմին հավատարմագրվելու հետաքրքրվածությունից: Այնուամենայնիվ, դա կմեծացնի համակարգի հուսալիությունը և կթեթևացնի ՇՄՆ աշխատանքի ծանրաբեռնվածությունը:

Ցանկալի կլինի, որ հավաստագրող մարմինների ներկայացուցիչը ապագայում միանա ՄԳՀԽ-ին:


Հարկ է նշել, որ ՉՀՀ համակարգի ամբողջ իրավական դաշտը, եթե ընտրվի արտաքին հավաստագրման տարբերակը, կլինի այնպիսին, ինչպես ցույց է տրված Գծապատկեր 27-ում:

Համարվում է, որ այս կառուցվածքը բավարար է երկարաժամկետ հեռանկարում արդյունավետ ՉՀՀ համակարգ ունենալու համար: Կլիմայի փոփոխության մասին

օրենքը (Ա1.1) ներկայացնում է համակարգի մշակման և ներդրման իրավական հիմքը և այդ հարցի վերաբերյալ որոշումներ կայացնելու իրավասություն է տալիս ՇՄՆ-ին: ԵԺ-ՑԱԶՈ-ը (Ա1.2) հիմք կհանդիսանա մեղմման և հարմարվողականության քաղաքականության մշակման և ներդրման, հետևաբար՝ նաև կոնկրետ գործողությունների իրականացման համար, որի արդյունքում կձևավորվի ծրագրերի ռեեստրը, որը պետք է օժանդակվի արտաքին հավաստագրման համակարգի միջոցով (Ա4):

Մյուս կողմից, եթե մասնավոր հատվածի համար սահմանվի հաշվետվողականության (ցանկալի է՝ նաև հավաստագրման) պարտավորություն՝ արտանետումների վերաբերյալ ավելի ընդգրկուն տեղեկատվություն ստանալու նպատակով, ապա նպատակահարմար է ունենալ հաշվետվողական պարտականությունների մեխանիզմները մանրամասն սահմանող որոշում, թեև նման պարտավորությունը որպես այդպիսին պետք է սահմանվի Ա1.1-ի շրջանակներում: Արդյունքում կձևավորվի արտանետումների էլեկտրոնային ռեեստր, և հավաստագրման հնարավորությունները կարող են օգտագործվել հավաստագրված արտանետումները հաշվառելու համար՝ հանրային քաղաքականության մեջ օգտագործելու նպատակով:

Գծապատկեր 27 ՉՀՀ համակարգի իրավական շրջանակը



6.4.3. Ա4.3 Հավաստագրման գործողությունների համար անհրաժեշտ գործիքների և մեխանիզմների մշակում

Համաձայն հավաստագրման ուղեցույցների, որոնք նպատակ կունենան ուղղորդել հավաստագրողների գործունեությունը, անհրաժեշտ գործիքները կմշակվեն այնպես, որ բոլոր հավաստագրողներն աշխատելիս առաջնորդվեն նույն չափորոշիչներով և

կատարեն հաստատված գործողություններ: Խորհուրդ է տրվում մշակել հետևյալ գործիքները.

- Շահերի բախման բացակայության վերաբերյալ սամակի ձևանմուշ
 - Հավաստագրման պլանի ձևանմուշ
 - Վերանայման ենթակա արտանետումների աղբյուրները և կիրառվելիք մեթոդները՝ տեղայցերի ժամանակացույցի ներառմամբ:
- Հավաստագրման հաշվետվության ձևանմուշ
 - Կատարված վերանայումներ, բացահայտումներ, Էականություն (տարբերություն հավաստագրված և ներկայացված արտանետումների միջև)
- Հավաստագրման կարծիքի ձևանմուշ
 - Հավաստագրման եզրակացություն.

Առաջարկվում է, որ այս գործիքները լինեն համակարգի մի մասը, և հավաստագրողն ունենա ռեեստրի կոնկրետ հասանելիություն՝ արտանետումների գրանցումը հարթակում հավաստելու համար, ինչը թույլ կտա խուսափել տեղեկատվություն հավաքելու և այն համակարգ մուտքագրելու համար նախարարության կողմից լրացուցիչ ջանքերի գործադրումից: Այլ կերպ ասած, Խորհուրդ է տրվում, որ հավաստագրման այս բոլոր գործընթացները լինեն ավտոմատացված՝ ավելի արդյունավետ աշխատանքի համար:

6.5. Ա5 - Տվյալների որակի բարելավում

Ծրագրի ընթացքում բացահայտվել են կոնկրետ ոլորտներ, որտեղ դիտվում է տվյալների բարելավման կարիք ՋԳ կադաստրի համար, որը համակարգի միակ, ներկայումս գոյություն ունեցող բաղադրիչն է: Համարվում է, որ աստիճանաբար կարող են աշխատանքներ տարվել այս տեղեկատվության որակը բարելավելու ուղղությամբ, ինչը կպահանջի մատակարարների համագործակցությունը, իսկ որոշ դեպքերում կարող է պահանջվել նաև որոշակի իրավական ակտերում փոփոխություններ:

Հարկ է նշել, որ գրասենյակային դիտարկման շրջանակներում կատարված վերջին վերլուծությունների արդյունքում տրվել են համապատասխան առաջարկություններ այս կապակցությամբ, որոնք կարևոր է հաշվի առնել երկարաժամկետ հեռանկարում համակարգի գործունեության և արդյունավետության համար:

Համակարգի մուտքային տվյալների որակը պետք է լինի մշտական և համակարգված խնդիր և լինի շարունակական բարելավման գործընթացի մաս, ինչպես ցանկացած կառավարման համակարգ: Այդ իսկ պատճառով, ընդգծվում է, որ այս առաջարկությունները համահունչ են այս ծրագրի միջոցով բացահայտված առաջարկություններին, սակայն տեղեկատվության որակի պատասխանատուն հանդիսանալու է համակարգի համակարգողը (ՇՄՆ-ն՝ ըստ առաջարկվող ինստիտուցիոնալ քարտեզագրման):

6.5.1. Ա5.1 Շարունակել Հայաստանում անտառների հաշվառման համակարգի զարգացման ճանապարհային քարտեզի ներդրումը.

Փաստաթուղթը ներկայացնում է մի շարք բացահայտումներ և առաջարկություններ՝ երկրում անտառների մոնիտորինգի համակարգի բարելավման և ստանդարտացման ուղղությամբ: Համարվում է, որ այս առաջարկությունների իրականացումը պետք է դիտարկվի որպես առաջնահերթություն՝ ԳԱՏԱՀՕ հատվածի ավելի որակյալ

կադաստրի կազմման համար՝ այդպիսով նպաստելով ազգային կադաստրի ճշգրտության մեծացմանը:

1. Անտառների կադաստրի ազգային վիճակագրական համակարգի ստեղծում (13 գործողություն)
2. Ազգային անտառների կադաստրի համակարգի արդիականացում (20 գործողություն)
3. Անտառի պետական կադաստրի ազգային համակարգի և անտառի պետական հաշվառման արդիականացում (4 գործողություն)
4. Անտառների մոնիտորինգի ազգային համակարգի արդիականացում (1 գործողություն)
5. Անտառների կառավարման համակարգչային հիմունքով ազգային համակարգի՝ «Հայաստանի անտառային ռեսուրսներ» ՏԲԿՀ-ի ստեղծում կամ հարմարեցում (5 գործողություն)

Սա կհանգեցնի մոնիտորինգի համակարգի կապակցմանը ԿՓԶՀ հարթակին՝ ՋԳ կադաստրի բաղադրիչի շրջանակներում: Այս համակարգի արդյունքները կհանդիսանան ԿՓԶՀ-ի համար ելակետային տվյալներ, որոնք կօգնեն ԳԱՏԱՅՕ-ի կադաստրի գնահատումներն իրականացնելիս:

6.5.2. Ա5.2 Հայաստանի ՀՕՀՕՓԱՏ ոլորտի համար 26 մեղմման գործողությունների իրականացում:

«Հողօգտագործման, հողօգտագործման փոփոխության և անտառային տնտեսության ոլորտի ներուժի գնահատումը Հայաստանում կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման նպատակների իրագործման առումով» տեխնիկական հաշվետվության 4-րդ բաժինը ներկայացնում է Հայաստանի ՀՕՀՕՓԱՏ ոլորտի 26 հնարավոր մեղմման գործողությունների ընդհանուր պատկերը՝ բաժանված 4 հիմնական ենթաօլորտների՝ հողօգտագործման փոփոխություն՝ 3 գործողությամբ, անտառներ՝ 9 գործողությամբ, գյուղատնտեսություն՝ 13 գործողությամբ, տորֆի արդյունահանում՝ 1 գործողությամբ: Հայաստանի ՉՀՀ համակարգի համար խորհուրդ է տրվում ներառել այս 26 կատեգորիաները 4 հիմնական ենթաօլորտներում՝ հաշվետվայնության, հաշվառման և արձանագրման հարթակներում և առաջնահերթություն տա մեղմման առավելագույն ներուժ ունեցող գործողություններին:

Աղյուսակ 15 ՀՕՀՕՓԱՏ ոլորտի մեղմման նախատեսվող գործողություններ

Հողօգտագործման փոփոխության գործողություններ	Այլ գործողություններ
Հողի վերին շերտի քարացման կանխարգելում Խոտածածկ տարածքների փոխարկման կանխարգելում,	Տորֆի արդյունահանման սահմանափակում

<p>Անտառահատումների կանխարգելում</p>	
<p>Մեղմման ներուժ՝ 504 տCO₂ համ/հա</p>	<p>Մեղմման ներուժ՝ 552 տCO₂ համ/հա</p>
<p>Գյուղատնտեսական գործողություններ</p> <p>Բազմամյա մշակաբույսերի տնկում Ագրոանտառային տնտեսության և ցանկապատերի զարգացում Օրգանական հողերի չմշակում Մշակաբույսերից կենսազանգվածի արտահանման սահմանափակում Առանց հերկման գյուղատնտեսության տեխնոլոգիաների զարգացում, Մշակաբույսերի կենսազանգվածի արտադրողականության բարձրացում, Մշակվող տեսակների ընտրության ճշգրտում, Ավելի շատ միջանկյալ մշակաբույսերի, միջմշակաբույսերի, խոտածածկ շերտերի ներդրում, Գոմաղբի կիրառման ավելացում Ջրային ռեսուրսների կառավարման օպտիմալացում Խոտհարքների կառավարման օպտիմալացում Զայքայված (թթվացված, էրոզիայի ենթարկված, աղակալած) հողերի վերականգնում. «Իներտ» ածխածնի (օր. կենսածուխի) տարածում</p>	<p>Անտառային գործողություններ</p> <p>Անտառապատում կամ անտառվերականգնում Դեգրադացված անտառների վերականգնում Անտառների կառավարման գործելակերպերի օպտիմալացում Սղոցված փայտի արդյունահանման կարգավորում Վառելիքափայտի արդյունահանման կարգավորում Արդյունահանվող փայտանյութի կյանքի տևողության մեծացում Արդյունահանման ընթացքում փայտի կորուստների սահմանափակում Անտառային հրդեհների կանխարգելում Բնական այլ աղետների կանխարգելում (հեղեղներ, ձնահյուսեր)</p>
<p>Մեղմման ներուժ՝ 114 տCO₂ համ/հա</p>	<p>Մեղմման ներուժ՝ 332 տCO₂ համ/հա</p>

Համաձայն ուսումնասիրության՝ 2018-2050 թվականներին կա 1502 տCO₂ համ/հա մեղմման ներուժ:

Այս միջոցառումները պետք է «վերբեռնվեն» (գրանցվեն) համակարգում «մեղմման և հարմարվողականության գործողություններ» բաղադրիչի (ծրագրերի ռեեստրում), և դրանց կարգավիճակը պետք է արձանագրվի մինչև ավարտի պահը: Այսպիսով, համակարգի ներսում դրանք կհաշվառվեն որպես կրճատումներ, եթե հաստատվի, որ գործողությունները կատարվել են պատշաճ կերպով (յուրաքանչյուր գործողություն պետք է գրանցվի որպես մեկ առանձին ծրագիր, և ծրագրի առաջադրող կարող են հանդես գալ այն գերատեսչությունները, որոնք զբաղվում են դրա իրականացմամբ):

6.5.3. Ա5.3 Ածխածնի պաշարների չափման ուղեցույցների գործադրում:

Առաջարկվում է ՋԳ կադաստրի կանոնակարգի կամ ուղեցույցների մեջ ներառել այս ուղեցույցների գործադրումը՝ ԳԱՏԱՅՕ հատվածի ՋԳ ազգային և տեղական կադաստրի մշակման համար (Ա1.3):

Անտառներում ածխածնի պաշարները և ժամանակի ընթացքում դրանց փոփոխությունները գնահատելու համար օգտագործվող մեթոդաբանությունը և ընթացակարգերը պարզ քայլ առ քայլ ընթացակարգեր են, որոնք օգտագործում են ածխածնի պաշարների կադաստրի ստանդարտ սկզբունքները և մեխանիզմները:

Անտառներում ածխածնի պաշարների գնահատման փուլերը ներառում են.

1. Սահմանների գծանշում
2. Շերտավորում և շերտերի սահմանների քարտեզագրում
3. Փորձնական գույքագրում
4. Դաշտային թիմերի կարողությունների զարգացում և մասնագիտական կողմնորոշում
5. Դաշտային չափումների իրականացում հողակտորների վրա
6. Տվյալների վերլուծություն
7. Հաշվետվության պատրաստում

Առաջարկվում է, որ օրենքի միջոցով (Ա1.1.) ՇՄՆ-ին տրվի լիազորություն՝ որոշելու լավագույն առկա փորձը և տեղեկատվության աղբյուրները, որոնք կօգտագործվեն կադաստրի և ՉՀՀ համակարգի բոլոր բաղադրիչների մեջ և սահմանվի, որ ազգային ԳԱՏԱՅՕ հատվածի կադաստրի կազմման համար կգործադրվի մոնիտորինգի միջազգային լավագույն փորձը, հաշվի առնելով երկրի պայմաններին համապատասխան անհրաժեշտ ճշգրտումները: Մյուս կողմից, կադաստրի կանոնակարգում (Ա1.3) խորհուրդ է տրվում հստակ սահմանել, որ այդ ուղեցույցները կօգտագործվեն որպես անտառային ածխածնի չափման մեթոդաբանություն, ըստ կիրառելիության:

Դա նշանակում է, որ եթե Հայաստանը որոշի պատրաստվել այս ուղեցույցի կիրառմանը, դրանք հետագայում կարող են օգտագործվել ածխածնի պաշարների մոնիտորինգի համար: Պահանջվող նախապատրաստական աշխատանքները առնչվում են համապատասխան տեխնիկական փորձագիտական գիտելիքների ձեռքբերմանը (անձնակազմի վերապատրաստում), ինչպես նաև սարքավորումների ձեռքբերմանը, հետևաբար այս գործողությունը կարճաժամկետ հեռանկարում կարող է իրագործելի չլինել:

Այնուամենայնիվ, այս ուղեցույցները առանցքային են ԱԿՀ-ում ներկայացված՝ ազգային ՋԳ-ների կլանիչների և հեռացումների գնահատումների ճշգրտությունը մեծացնելու համար, քանի որ դրանք ուղեցույց են հանդիսանում Կլիմայի Փոփոխության Փորձագետների Միջկառավարական խմբի (ԿՓՓՄԽ) կողմից սահմանված պահանջներին և դրույթներին համապատասխան կարգով ածխածնի պաշարների գնահատման համար: Այսպիսով, կարևոր է երկարաժամկետ հեռանկարում դիտարկել դրա իրականացումը:

6.5.4. Ա5.4 Թափոնների հատվածի արտանետումների գնահատման տվյալների որակի բարելավում՝ թափոնների գոյացման կադաստրային տվյալների գեներացման միջոցով.

Նշվում է, որ գոյություն ունի «Թափոնների մասին» օրենք, որով սահմանված է թափոնների գոյացման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման պահանջ: Թափոնների պետական կադաստրը ներառում է թափոնների դասակարգումը, թափոնների արտադրության, վերամշակման և օգտահանման կառուցվածքների ցանկերը, ինչպես նաև թափոնների օգտագործման և աղտազերծման տեխնոլոգիաների տվյալների բազան և վարվում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի պետական լիազոր մարմնի կողմից:

Սույն օրենքը նաև սահմանում է, որ ռեեստրը վարում է այն պետական մարմինը, որը լիազորված է ստանալ, մշակել, պահել և վերլուծել թափոնների արտադրության, վերամշակման և օգտահանման վերաբերյալ տեղեկատվություն, որը մասնավորապես, ներառում է թափոնների արտադրության ծավալները, որակական և քանակական բնութագրերը, տեղեկատվություն թափոնների աղտազերծման վերաբերյալ, ընդ որում՝ վերը նշված ողջ տեղեկատվությունը պետք է հիմնված լինի թափոն արտադրողների կողմից ներկայացված տվյալների վրա: Այս տեղեկատվությունը ենթակա է տարեկան վերանայման:

Խորհուրդ է տրվում այս կադաստրը դիտարկել որպես թափոնների կադաստրի գործողության առաջնային տվյալների աղբյուր, քանի որ տեղեկատվության ընթացիկ աղբյուրները փոփոխական են և ոչ միշտ են արդիական: Այս տեղեկատվությունը կարող է օգտագործվել նաև թափոնների ոլորտում արտանետումների նվազեցման քաղաքականության խթանման համար:

Յուրաքանչյուր ոլորտին համապատասխան տեխնիկական թիմը պետք է իրականացնի անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման իրագործելիության մանրամասն վերլուծություն տեղեկատվության հավաքագրումն իրականացնող ՇՄՆ ոլորտի հետ համատեղ: Համապատասխան ասպեկտները, որոնք պետք է հաշվի առնել, հետևյալն են.

- Արդյո՞ք թափոնների մասին օրենքը գործնականում կիրառվող իրավական ակտ է:
- Կա՞ր արդյոք թափոնների վերաբերյալ արդիականացված ռեեստր (ըստ համապատասխան լիազորությունների):
- Եթե այո, արդյոք ստացված տեղեկատվությունը օգտակար է որպես կադաստրի մուտքային տվյալ, կամ՝ որքանո՞վ է այդ տեղեկատվությունը ենթակա վերամշակման/ճշգրտման:
- Արդյո՞ք այդ տեղեկությունները հավաստի են:
- Ինչպիսի՞ն է թափոնների ռեեստրի ծածկույթը՝ դրանց առաջացման աղբյուրների առումով:
- Համարվում է, որ այս տեղեկատվությունը կարող է փոխարինել ներկայումս օգտագործվող տեղեկատվությանը, և որ այս փոխարինումը ենթադրում է տվյալների որակի էական բարելավում:

Եթե օրենքով այդ պարտադիր ռեեստրը դեռևս գոյություն չունի, դրա միավորումը կամ միաձուլումը ԿՓԶՀ հարթակի հետ կարող է պլանավորվել միջնաժամկետ կամ

երկարաժամկետ հեռանկարում՝ թափոնների առաջացման վերաբերյալ հավաստի տեղեկատվության ձեռքբերումն ապահովելուց հետո:

Այն դեպքում, երբ որոշվում է այս տեղեկատվությունը օգտագործել ջերմոցային գազերի գնահատման համար, այն պետք է սահմանվի կադաստրի վերաբերյալ որոշման և թափոնների ոլորտի վերաբերյալ հարակից ուղեցույցների միջոցով (Ա1.3):

6.5.5. (Ա5.5) Վիճակագրական տվյալների որակի բարելավման պահանջը ներառել կանոնակարգերում (Ա1, Ա3):

Վիճակագրական տվյալները կադաստրի գնահատումների տվյալների հիմնական աղբյուրներից են, ուստի չափազանց կարևոր է ապահովել դրանց ժամանակին արդիականացումը և ճշգրտությունը:

Ծրագրի ընթացքում բացահայտվել են հնարավոր բարելավումները՝ գրասենյակային ուսումնասիրության և շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների հիման վրա: Այնուամենայնիվ, տվյալների որակի առումով կարևոր է կատարել համակարգում յուրաքանչյուր մուտքային (ելակետային) տեղեկության մանրամասն վերլուծություն, ինչը չի ներառված այս ծրագրի շրջանակում:

Խորհրդատվական խումբը նշում է որ առկա է արտանետումների գնահատումներ կատարելու համար անհրաժեշտ տեղեկատվության համարժեք քարտեզագրում: Վիճակագրական տվյալների առումով կա նույնիսկ «Կլիմայի փոփոխության հետ կապված վիճակագրության զարգացման ճանապարհային քարտեզ», որը պատրաստվել է Վիճակագրական կոմիտեի կողմից 2020թ. ճանապարհային քարտեզի միջոցով բացահայտվել են և որպես առաջնահերթություն է սահմանվել ՋԳ կադաստրի համար անհրաժեշտ տեղեկատվության ստեղծումը, հավաքագրումը և կառավարումը բարելավելու անհրաժեշտությունը՝ շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների հիման վրա: Որպես այս վերլուծության մաս՝ բացահայտվել են առկա բացթողումները և առաջարկվել են լուծումներ՝ պահանջվող գործողությունների իրականացման համար պատասխանատուների սահմանամաբ, ընդ որում յուրաքանչյուր առաջարկության համար սահմանվել են գործողությունները, պատասխանատուները և համապատասխանատուները, իրականացման ժամկետները և պահանջվող հաճախականությունը: Տես հաշվետվության Աղյուսակ 2, որտեղ ներկայացված է այդ առաջնահերթությունների ամփոփ նկարագիրը:

Համարվում է, որ արժեքավոր աշխատանք է իրականացվել, հետևաբար առաջարկվում է այս 9 առաջնահերթությունները դիտարկել կլիմայի փոփոխության վիճակագրական տեղեկատվության ստեղծման և բարելավման համար, որը թեև ներկայումս օգտագործվում է միայն կադաստրի նպատակներով, սակայն ապագայում դրա օգտակարությունը կարող է մեծանալ՝ օգտագործվելով ինչպես մեղմման, այնպես էլ հարմարվողականության ցուցանիշների տեսքով, որն արտացոլում է քաղաքականության առաջընթացը և նպաստում ձեռքբերումների պահպանմանը, ինչպես նաև օգնում է բացահայտել հնարավորությունների ոլորտները:

Բացահայտումների հիման վրա ներկայացվել են հետևյալ առաջարկությունները.

1. Մշակել ՎԿ-ից ստացվող ելակետային տվյալների ցանկը և սահմանել արդիականացման համար պատշաճ պարբերականություն: Ելնելով կարիքներից՝ սահմանել այն մարդահամարները/գույքագրումները, որոնք

պետք է առաջնահերթ համարվեն, համաձայն Վիճակագրության մասին օրենքի:

Խորհրդատվական խումբը նշում է որ առկա է արտանետումների գնահատումներ կատարելու համար անհրաժեշտ ելակետային տեղեկատվության համարժեք քարտեզագրում: Վիճակագրական տվյալների առումով կա նույնիսկ «Կլիմայի փոփոխության հետ կապված վիճակագրության զարգացման ճանապարհային քարտեզ», որը պատրաստվել է Վիճակագրական կոմիտեի կողմից 2020թ.՝ տվյալների որակի բարելավմանն ուղղված կոնկրետ առաջարկություններով:

Որպես առաջին քայլ անհրաժեշտ է պատրաստել տվյալների ցանկ՝ պատկերացնելու համար, թե որ տվյալներն են բացակայում գնահատումների համար, որ տվյալներն են ենթակա բարելավման, և ովքեր են պատասխանատուները:

Դրա հիման վրա պետք է որոշվի նաև, թե ինչպիսի հաճախականությամբ պետք է թարմացվի տեղեկատվությունը՝ հաշվի առնելով, որ գույքագրումն իրականացվում է երկու տարին մեկ պարբերականությամբ: Այս առումով պետք է խրախուսել, որ հնարավորության սահմաններում որոշակի տեղեկատվություն արդիականացվի մինևույն պարբերականությամբ: Այնուամենայնիվ, երբ դա իրագործելի չէ, յուրաքանչյուր տվյալների շարքի համար կորոշվի արդիականացման ժամանակացույց, որը կքննարկվի Վիճակագրական կոմիտեի համապատասխան աշխատակազմի հետ: Առաջարկվում է կադաստրի համար անհրաժեշտ ելակետային տվյալների արդիականացումն իրականացնել առնվազն 5 տարին մեկ պարբերականությամբ, հնարավորության դեպքում 2 տարին մեկ:

Պետք է հաշվի առնել, որ կարող է պահանջվել փոփոխությունների իրականացում վիճակագրության մասին օրենքում՝ հատկապես կոնկրետ հաշվառումների և դրանց պարբերականության վերաբերյալ: Նմանապես, պետք է ապահովել, որ համապատասխան հաշվառումներն արտացոլեն Հայաստանի պայմանները:

2. Ընդունել Ա. 1.1 օրենքը (և անհրաժեշտ ուրյուն դեպքում փոփոխել վիճակագրության օրենքը)՝ պաշտոնական հիմքերով որպես ՉՀՀ համակարգի համար ելակետային տվյալների աղբյուր ընդունելով վիճակագրական տվյալների օգտագործումը, սահմանել տվյալների արդիականացման պարբերականությունը, ինչպես նաև ՎԿ-ի համար (ինչպես նաև մնացած տվյալների մատակարարների համար) հաշվետվողական պարտավորությունները:
3. Ներդնել կադաստրի մշակման վերաբերյալ կանոնակարգը (Ա1.3), որտեղ սահմանված կլինեն. տեղեկատվության աղբյուրները՝ բացահայտելով վիճակագրության տվյալների տեսակները, հարցումների հաճախականությունը՝ ըստ կիրառելիության, ներկայացուցչականությունը և այլն:
4. Ստորագրել համագործակցության համաձայնագրեր ՇՄՆ-ի և վիճակագրական կոմիտեի միջև (Ա1.4)՝ տվյալների տրամադրման մեխանիզմի արդյունավետությունը երաշխավորելու համար:

